

ԱԲԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Դ - ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԹՈՎԱՄԱՐ ԱԲԵՏԱՐԱՆ



ԱԲԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Դ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԹՈՎԱՄԱՐ ԱԲԵՏԱՐԱՆ

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՄԻ
- 2020 -

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivaciyan
sivaciyan@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին դրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրովթինը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոյս 'ի Լուսոյ (Ա)	2013
Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք	2015
Լոյս 'ի Լուսոյ «Գ» - Տիեզերական Օրէնքները	2017
Խոկում	2017
Աւետարանի խորհուրդները - հատոր Ա. Յիսուսի կեանքէն դրուագներ	2018
Աւետարանի խորհուրդները - հատոր Բ. Յիսուսի առականները	2018
Աւետարանի խորհուրդները - հատոր Գ. Յիսուս Քրիստոսի խօսքերը	2020
Աւետարանի խորհուրդները - հատոր Դ. Յովհաննու և Թովմասի Աւետարանները	2020
Խորհրդածութիւններ	2019

ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ

Կենցաղալոյս	2014
Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)	2019

Հեղինակին բոլոր հրատարակութիւնները
մատչելի են համացանցային դրութեամբ:

Զանոնք ներբերման հասցէ.

<http://www.luysiluso.ca>

Հեղինակին ե-փոստի հասցէն.

sivacian@sympatico.ca



ՀՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԻՒՆ

*Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս
նաեւ երախտագիտութեան զգացումները
կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան
ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
մի քանի բարեկամներու:*

*Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ
առողջութիւն եւ արեւշատութիւն:*

*

*Շնորհակալութիւն կը յայտնեմ՝ նաեւ բոլոր անոնց,
որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները
Հայթայթած են:*

*Աղօթարար եմ,
որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:*



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները առնուած են
հետեւեալ աղբիւրներէ.

ԱՍՏՈՒՎՈՒՇՈՒՆՆԵՐ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

ՃՇԳԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԵԱՅ ՄԵՐՈՑ Դ ՀԱՅԵՆԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐԱՐԱՅԻՆ ԲԱԳԻՔ Դ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ ՈՒՄԾԴ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ



ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՍՏՈՒՎՈՒՇՈՒՆՆԵՐ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՐԱՄՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ-Ե
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ-Ե
ՇԱՐԱԿԱՆ-Ե

ԱՂՕԹ-Ե

ՏԱՂ-Ե

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՍԿԱՆՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929


Էջ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
3-	Հեղինակին Հրատարակությունները
4-	Շտրհակարություն
5-	Ծանոթություն
6-	Բովանդակություն
7-	Կենսագրական
8-	Ծնողացս
9-	Զօն Այտային
11-	- Յառաջաբան
23- Ա	- Յովհաննու Աւետարան
25-	- Ի Հօրէ Լուսոյ
31-	- Յովհաննէս Մկրտիչին Վկայութիւնը «Ա»
33-	- Յովհաննէս Մկրտիչին Վկայութիւնը «Բ»
38-	- Յիսուս - Աստուծոյ Գառը
40-	- Յիսուս Քրիստոս կը Ճանչնայ Ամէն Մարդ-
42-	- Մարդուն Կարողութիւնը եւ Կեանքին Նպատակը
45-	- Ան որ Կու Գայ Երկինքէն
47-	- Աստուած Որո՞ւ կը Լսէ
49- Բ	- Բացառիկ Համայնքներ
61- Գ	- Թովմասի Աւետարանը
263- Դ	- Աւետարանի Ամփոփում
304-	- Յարաբերութիւն - ոտանաւոր
305-	- Փոխան Վերջաբանի՝ Խորհրդածութիւններ - Յափառական Կեանքի Արժանանալ - Գիտութիւնը, Աստուծոյ Կամքը եւ Աղօթքը
315-	- Հետաքրքրական Կայաթիւ
317- Ե	- Յաւերժական
319-	- Նախ եւ Առաջ Մարդ Եղիր,
321-	- Հողէն Անուեցար..., Հողին Նայէ
322-	- Աղքատ Կինն ու Աթէիստը
323-	- Աստուած Կայ
324-	- Ոչ Ոք Չաստուած կը Ծաղրէ
325-	- Հիւանդին Զղջումին Արժէքը
328-	- Գիտութիւն եւ Կրօնք
329-	- Բնազդ-
330-	- Միտիժար Հերացիի Կեանքէն
334-	- Հմարտութեան Տէնչը
337-	- Աստուած եւ Մարդը
339-	- Վախը
340-	- Բարձրացում- Վաճան Թեքէեան -ոտանաւոր
343-	- Հրեշտակ մը Պայման չէ, որ Թեւեր Ունենայ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ, Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**-ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**-ին ալ դասագիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրեւր իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնթ Գաթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մին ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր շահագները իբրև աղբուրդ նետեր
դուրս արձակուե՛լան»:

Աղեղնախորը անշուքի ճամբուհն իր թիրախը ԿԸ ՏԵՍՆԷ ԵՒ Աղեղն
Ձորախոր ԿԵՐՊՈՒԿ ԿԸ ԴՈՐԿԷ, ՈՐՊԷՆՉԻ ԻՐ ՆԵՏԸ ԱՐԱԳ ԵՒ ՀԵՊՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղեղնախորի Ձեռքին՝ Ձեր ԴՈՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄԸ Եղա՛
Որքան ուր Ան սլաճուրդ նետը ԿԸ ՍԻՐԷ, ՆՈՂԵՐԱՆ ԱՂ ՀԱՍՏԱՏ Աղեղն»:

(յարասուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գիրքէն)



1955-2010



**ՍՈՅՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԸ ԶՈՒՆԱ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՈՂԱԿԻՅԻՄ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**





**Երբ մեր միջնապլուր չափելի է,
այդ յաջողութիւնն Կը Կոչենք:**

**Երբ ֆիզիքսական մարմինը չափելի է,
այդ առողջութիւնն Կը Կոչենք,
Երբ առ շահ չափելի է՝ չափոյք:**

**Երբ մտային «մարմին»-ը չափելի է,
այդ հաղորդութիւնն Կը Կոչենք,
Երբ առ շահ չափելի է՝ երջանկութիւն:**

**Երբ օգնչական «մարմին»-ը չափելի է,
այդ սէր Կը Կոչենք,
Երբ առ շահ չափելի է՝ արգաստեսք:**

**Երբ շօրոհեան «մարմին»-ը չափելի է,
այդ երանութիւնն Կը Կոչենք,
Երբ առ շահ չափելի է՝ յաժճեսկութիւն:**

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա

Ի՞նչ է նպատակը Աւետարանին:

Աւետարանը կը ներկայացնէ Յիսուսի կեանքը եւ Անոր սորվեցուցածները: Ուրեմն Յիսուս ի՞նչ սորվեցուց իր կենցաղով, իր արարքներով եւ իր խօսքերով:

Յիսուս, որ ինք յայտնաբերած էր Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին իր մէջ, մեզի սորվեցուց «Իրեն նմանիլ» եւ «երկնաւոր Հօր նման կատարեալ ըլլալ», այսինքն յայտնաբերել Քրիստոս մեր մէջ, որ կը կոչենք անձին մէջ Աստուածայայտնութիւն:

Նախ քան Քրիստոս յայտնաբերել, մարդ պէտք է հասկնայ՝ ճանչնայ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին: Ի՞նչպէս ճանչնալ Քրիստոս: Ահա՛, աս էր, որ Յիսուս սորվեցուց: Բնութեան մէջ ամէն բանի օրինակը մեզի տրուած է: Եթէ ուշիմ ըլլանք եւ տեսնենք հոն թաղնուած իմաստասիրութիւնները, կարող կ'ըլլանք շատ մը հարցումներու պատասխանը գտնել:

Ըսուած է, թէ մարդ ունի Փիզիքական մարմին մը, միտք մը՝ մտային «մարմին» մը, որ միջոցն է խորհուրդներու, զգացումներու եւ իմացականութեան եւ մարդ նաեւ ունի զօրութեան «մարմին» մը, որ նաեւ կը կոչենք մարդուն ոգին: Մարդ նաեւ ունի Հոգի մը, որ այս երեք մարմինները կը կենդանացնէ: Նաեւ կ'ըսենք, թէ մարդուն հոգին Քրիստոսի՝ Աստուծոյ Որդւոյն ներկայութիւնն է մարդուն մէջ: Այս հիման վրայ ալ Աւետարանին մէջ գրուած է. «Զեր մարմինները Աստուծոյ տաճարներն են», ինչպէս նաեւ. «Դուք բոլորդ Աստուծոյ որդիներ էք»: Այս բոլորը շատ լաւ, բայց ինչպէս ճանչնալ, գիտնալ ու գտնել Աստուծոյ Որդին՝ Քրիստոս: Ան մարդուն ճշմարիտ էութիւնն է:

Ճիշտ ասոր համար ալ ըստած է. «Ծանիր գքեզ»:

Նկատողութեան առնենք թէ՛ բնութեան եւ թէ՛ ալ Յիսուսի մեզի սորվեցուցածները: «Լոյս ի Լուսոյ Բ. – Զարթօնք» գիրքիս «Կրօնքը եւ Գիտութիւնը» խորագրեալ Ա. գլխուն վերջաւորութեան (էջ 80) «Մարդկային Բնութիւնը» վերնագիրով գրութեամբ մարդուն կազմուածքը ներկայացուցած էի: (Տես նաեւ «Լոյս ի Լուսոյ Գ. – Տիեզերական Օրէնքները» գիրքիս «Մարդակազմութիւն – Մարմին եւ Հոգի» խորագրեալ Ա. գլխիւն:) Զարթօնք գիրքին մէջ ներկայացուած էր, թէ մարդ 24 տարրերէ յառաջ եկած է բայց ասոնց առաջին հինգ տարրերը հիմնականներն են. Նիւթ, Զուր, Օդ, Կրակ (Չերմուսութիւն) եւ Եթեր (միջոց):

Հետեւաբար ուսումնասիրենք, թէ գիտութիւնը՝ բնութիւնը մեզի ի՞նչ կը սորվեցնէ եւ զայն բախտատենք Յիսուսի սորվեցուցածներուն հետ: Նախ նկատողութեան առնենք բնութիւնը: Գիտութիւնը մեզի կ'ըսէ, թէ մարդ գոյատեւելու համար պէտք ունի գոնէ չորս հիմնական տարրերու: Ասոնք են ջուր, օդ, հաց՝ ուտեստեղէն եւ լոյս: Առանց ջուրի մարդ երեք օրէն իր բոլոր կարողութիւնները կը կորսնցնէ, իր երիկամունքները կը վնասուին եւ մէկ շաբթուայ մէջ ալ կը մահանայ: Հետեւաբար ջուրը անհրաժեշտ է, որ Փիզիքական մարմինը առողջ կեանք մը ապրի: Իսկ Քրիստոս ի՞նչ ըսած է:

«... Լմենայն որ ըմպէ՝ ՚ի Զրոյ յայդմանէ, միտանա-
գամ Ժարաւէ՛. Բայց որ ըմպէ ՚ի Զրոյն զոր ես
իւրացնեմ, մի՛ Ժարաւեացէ յաւիտեան: Եւ ջուրն
զոր ես իւրացնեմ, եղիցի նմա աղբէր Զրոյ Բոլորե-
լոյ ՚ի կեանսն յաւիտեանսն»: (Յովհաննէս Դ:13-14)
«Ո՛վ որ խմէ այս ջուրէն՝ դարձեալ պիտի ծաղաւնայ,
բայց ո՛վ որ խմէ այն ջուրէն՝ որ ես պիտի տամ անոր,
յաւիտեան պիտի չծաղաւնայ: Հապա այն ջուրը՝ որ ես

պիտի տամ անոր, պիտի ըլլայ անոր մէջ ջուրի աղբիւր
մը որ կը բխի յաւիտենական կեանքի համար»:

«Եւ ասէ ցիս. Եղէ՛ ես Ալֆա՛ եւ Ռէ՛, «Կի՛ւքն
եւ հադարա՞, եւ Ժարաւելոցն ցա՛մ յաղէբերէ
ջրոյ կենաց շրի» : (Յայրենաշինն Յովհաննոս ԻԷ:6)
«Նաեւ ըսաւ ինծի. «Եղա՛ւ. ե՛ս եմ Ալֆան եւ Օմեղան,
Սկիզբն ու վախճանը. ես ծարաւին ձրի՛ պիտի տամ
կեանքի ջուրին աղբիւրէն»»:

*Մարդուն Ֆիզիքական մարմինն կեանք տուողը
իր զօրութեան մարմինն է, որ Ս. Հոգիէն եկած կենսա-
տու զօրութիւնն է: Զուրին փոխաբերական իմաստնե-
րէն մին ալ Ս. Հոգիի զօրութիւնն է: Ահա՛, աս է
մկրտութեան ջուրով ըլլալուն իմաստը:*

Քրիստոս նաեւ ըսաւ.

«Ես եմ Դոստոս. ընդ իս լիւ ո՞վ միանիցէ.
կիցցէ՛. միցէ. եւ ելցէ. եւ ճարա՛կ Գրիցէ» :
(Յովհաննոս Ժ:9)

«Ես եմ դուռը. եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի
փրկուի. պիտի մտնէ ու ելլէ, եւ արօտ գտնէ»:

*Ինչպէս ջուրը մեր Ֆիզիքական մարմինն կեանք
կու տայ, նմանապէս Քրիստոս ալ «կեանքի ջուրին
աղբիւր»-ն «դուռ»-ն է, ուրկէ մեզի կու գայ յաւիտենա-
կան կեանքի «ջուր»-ը՝ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը:*

*Ֆիզիքական կեանքի գոյատեւման համար անհրա-
ժեշտ է նաեւ օդը: Առանց օդին շնորհած թթուածինին
(oxygen) մարդ հեղձամահ կ'ըլլայ:*

*Մարդու հոգին՝ Քրիստոս ալ անհրաժեշտ է մար-
դուն գոյատեւման համար: Ս. Գիրքին մէջ յաճախ «հո-
գի» եւ «շունչ» բառերը գործածուած են փոխաբերաբար:
Ասոնց օրինակներէն մին Մենդոց Գիրքի Բ. գլխուն մէջ
մարդու անհատականութեան ստեղծագործումն է:*

«Եւ սրիղձ Տէր Ասրոսա՞ զմարդն Ըող յերկրէ,
եւ փշեաց յերէս» նորա շոնչ կենդանի, եւ

Եղեա՝ մարդն յոգի կենդանի» : (Ծննդոց Բ:7)

«Տէր Աստուած գեանի Հոգին ձեռակերպեց մարդը՝ անոր
ուռնգերէն կեանքի շունչ փչեց՝ եւ մարդը ապրող անձ
եղաւ»:

*Մարդուն մարմինը հողէ՝ նիւթէ կազմուած է, բայց
իր անհատականութիւնը Աստուծոյ տուած շունչէն:
Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, մարդուն հոգին է: Ան նաեւ
մարդուն ոգիին մաս կը կազմէ: Մարդու ոգին իր մէջ
պարունակած տեղեկութեան համաձայն կ'որոշէ մար-
դուն անհատականութիւնը: Հետեւաբար հոգին՝ Քրիս-
տոս մարդուն ճշմարիտ էութիւնն է եւ միջոցը իր
ոգիին:*

*Հետեւեալ մէջբերումը կը ներկայացնէ վերակեն-
դանացումը Աստուծոյ երկու վկաներուն, որոնք սպան-
նուած էին գազանին՝ սատանային կողմէ: Անոնց դիակ-
ները երեք օր քաղաքին մէջ մնալէ յետոյ Աստուծոյ
շունչով կը վերակենդանանան: (Որոշ թարգմանութիւն-
ներու մէջ «շունչ» բառը օգտագործուած է, բայց ոչ հոս):*

«Եւ յետ երեց ասորց եւ կիսոյ՝ Հոգի կենդանի
յԼսորոշոյ մօցե 'ի նոսա եւ յարեցեն կացցեն 'ի
վերայ որեց իրեանց եւ ա'ւ եւ երկեւջ մեծ
անկա' - 'ի վերայ ամենեցոն՝ որ ապանինն
սնոսա» : (Յայտնութիւն Յովհաննոս ԺԷ:11)

«... Աստուծմէ եկող կեանքի Հոգի մտաւ անոնց մէջ,
կայնեցան իրենց ոտքերուն վրայ, ու մեծ վախ համակեց
գիրենք տեսողները»:

«But after the three and a half days, the breath of life from
God entered the witnesses. They both stood up. Terror
struck those who saw them.»

«Եւ զայս իբրեւ ասաց, փշեաց 'ի նոսա՝ եւ
ասէ. Լաւ' է Հոգի Սորբ» : (Յովհաննոս Ի:22)

«Ասիկա ըսելով՝ փչեց անոնց վրայ եւ ըսաւ անոնց.
«Ընդունեցէք Սուրբ Հոգին»»:

«Լադոնա՜ ... նա՛ Կայ ամենայնի կեանս եւ շոնշ՝

եւ զամենայն ինչ» : (Գործք Լուսինոյ ԺԷ : 24-25)

«Աստուած ... ինք կու տայ բոլորին կեանք՝ շունչ՝ եւ ամէն ինչ» :

Այս հիման վրայ Քրիստոս կը թուի նաեւ մարդուն շունչը ըլլալ :

Դարձեալ Ֆիզիքական մարմնի գոյատեւման համար անհրաժեշտ է հացը՝ նիւթական սնունդը : Մարդ առանց ուտելու՝ ծովապահուծեամբ կարող է որոշ ժամանակ մը՝ կարճ, ապրիլ : Բայց առանց սնունդի մէկ շաբաթ յետոյ ինք զգալիօրէն կը տկարանայ եւ մէկ ամիսէն ալ կը մահանայ : Մարդ որոշ չափով իր կենսատու զօրութիւնը կը ստանայ քիմիական բաղադրութիւններու մէջ գոյացած զօրութիւններէն, որովհետեւ ինք անկարող է Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը ուղղակի ստանալ իր ներքին Քրիստոսէն, որովհետեւ Քրիստոս իր մէջ ներկայ ըլլալով հանդերձ կը քնանայ : Մարդ չ'արտօներ որ Ան արթննայ : Յիսուս անապատին մէջ 40 օր կարողացաւ ապրիլ, որովհետեւ ան իր մէջ Քրիստոսը յայտնաբերած ըլլալով, իր կենսատու զօրութիւնը իր ներքին Քրիստոսէն կը ստանար : Հետեւաբար Քրիստոս նաեւ մեր «հաց»-ն է : Միթէ Քրիստոս չէ՞ ըսած :

«Ես եմ Հացն կենաց որ Գայ աս իս՝ ո՛չ

վաղցիցե եւ որ Հաւարայ յիս՝ ո՛չ երբե՜

Ժարաւետցի» : (Յովհաննոս . 9 : 35)

«Ես եմ կեանքի հացը. ան որ կու գայ ինծի՝ երբե՛ք պիտի չանօթենայ, եւ ան որ Հաւատայ ինծի՝ պիտի չծարաւնայ» :

«Ես եմ Հացն կենաց : Հարէն յեր կերան

զմանանայն յանապոհին՝ եւ մեռան : Ե՛յս է

Հացն, որ յերկնիցն իջեալ զի որ ուրիցե ո՛վ ի

«մանէ՛ մի՛ մեռանիցի: Ե՛ս եմ Հայն կենդանի,

որ յերկնից իջեալ»: (ՅովՀաննէս .Գ:48-51)

«Ե՛ս եմ կեանքի Հայր: Ձեր Հայրերը կերան մանանան անապատին մէջ, բայց մեռան: Ա՛յս է այն Հայրը՝ որ կ'իջնէ երկինքէն՝ որպէսզի եթէ մէկը ուտէ ասկէ՝ չմեռնի: Ե՛ս եմ կենաբար Հայրը՝ որ իջայ երկինքէն»:

Մարդ արարած ալ իր հոգեւոր կեանքին նկատմամբ կ'ապրի «կարճ» կեանք մը եւ վերջապէս հոգեպէս «սովամահ» կ'ըլլայ, որովհետեւ Քրիստոսի շնորհած «Հաց»-ը կարող չէ ստանալ եւ չ'արժանանար յաւիտենական կեանքի:

Լաւ գիտցուած իրողութիւն մըն է, որ առանց արեւուն շնորհած լոյսին աշխարհի վրայ կեանք գոյութիւն պիտի չունենար: Արեւը, իր արձակած լոյսին միջոցաւ, Ս. Հոգիի կենսատու գորութիւնը աշխարհին փոխանցող միջնորդն է, ապահովելով կեանքին գոյատեւումը: Հետեւաբար կեանքի գոյատեւման համար լոյսի գոյութիւնը անհրաժեշտ է: Լոյսը փոխաբերաբար նաեւ կը ներկայացնէ գիտութիւն եւ իմաստութիւն: Իսկ առանց մարդու գիտակցութեան (consciousness) մարդ ոչ գիտութիւն կ'ունենայ ոչ ալ իմաստութիւն, որով իր մտային մարմինը կը կարօտի գիտակցութեան, որպէսզի ան կարենայ գործել: Թմբիրի մէջ եղող մէկը ոչ մէկ բանէ գիտակից կրնայ ըլլալ: Ան ոչ գիտութիւն, ոչ տրամաբանութիւն, ոչ խորհուրդ եւ ոչ ալ զգացում կ'ունենայ: Մարդուն գիտակցութիւնը իր ներքին Քրիստոսի ներկայութեան շնորհքն է: Ընդհանուր տիեզերքի մէջ միայն մէկ գիտակցութիւն կայ, ան ալ Աստուծոյ գիտակցութիւնն է: Ամէն անհատի ունեցած գիտակցութիւնը Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի ներկայութեան փաստն է, որով ամէն անհատի գիտակցութիւնը Աստուծոյ գիտակցութեան փոքր մէկ մասնիկն է: Մարդ կարողութիւնը ունի Քրիստոս իր մէջ յայտնաբերելով արժանանալ բարձր գիտակցութեան մակարդակի, ո-

ըստ միջոցաւ կը հասկնայ եւ կը գիտակցի ձգտարտութեան միականութեան, քան թէ կարծէ թէ զանազանութիւնը՝ իրարմէ անջատութիւնը, ճշմարտութիւն մըն է: Որովհետեւ միականութիւնը ճշմարտութիւն է: Քրիստոս ըսաւ.

«Եւ եմ լոյս աշխարհի որ Գայ պնի իմ՝ ընդ խաւար մի՝ Գնապէ, այլ ընկալի՝ պնյա՝ կէնայ»: (Յովհաննէս Ը:12)

«Եւ եմ աշխարհի լոյսը. ա՛ն որ կը հետեւի ինծի՝ պիտի չքալէ խաւարի մէջ, հապա պիտի ունենայ կեանքի լոյսը»:

Ինչպէս թմբիրի մէջ եղող անձ մը աշխարհիկ կեանքին մէջ ոչ մէկ բանէ գիտակից է, մենք ալ, հոգեւոր կեանքի նկատմամբ, նոյնպէս թմբիրի մէջ ենք եւ ոչինչ գիտենք ճշմարտութեան մասին: Հիւանդ պարկող մարմինը տակաւին կ'ապրի, բայց թմբիրի մէջ եղող անձը նոյնիսկ իր մարմնի գոյութեան գիտակցութիւնը չունի: Հոգեւոր գետնի վրայ, մեր արթուն կոչած այս կեանքն ալ կը նմանի հիւանդ պառկող անգիտակից մարմնին: Մենք ալ ոչինչ գիտենք մեր հոգիին եւ մեր զօրութեան մարմնին մասին, որովհետեւ մեր գիտակցութեան ցած մակարդակին հետեւանք կարող չենք անոնց փորձառութիւնը ունենալ: Հետեւաբար կը կարօտինք աւելի բարձր գիտակցութեան՝ Քրիստոսի «լոյս»-ին:

Եթէ վերեւ ներկայացուած բոլոր կէտերը նկատողութեան առնենք յայտնի կ'ըլլայ թէ Քրիստոս ամէն ինչի գոյութեան ու գոյատեւման պատճառն է եւ ամէն ինչ է: Քրիստոս նաեւ ընդհանուր տիեզերքի կեանքն է: Տիեզերքի մէջ ամէն ինչ կեանք ունի յայտնաբերուած զանազան մակարդակներով: Նոյնիսկ անզգամ նիւթը, որ հիւլէներէ կազմուած է, իր մէջ կեանք ունի, որովհետեւ զայն կազմող մասնիկները միշտ շարժման մէջ

են եւ գիտակցութիւն ունին: Ելեկտրոնները գիտեն
կորիզին շուրջ շրջիլ, հետեւաբար կեանք ունին: Կեանքը
բնորոշուած է շարժման կարողութեամբ: Քրիստոս
ալ ըսած է.

«Եւ եմ յարոյթիւն եւ կեանք, որ Հասարակ յիս,

դէպէտ եւ մեռնի՝ կեցցէ՛» : (Յովհաննոս ԺԷ:25)

«Ես եմ յարութիւնն ու կեանքը: Ան որ կը Հաւատայ
ինձի, թէեւ մեռնի՝ պիտի ապրի»:

«Եւ եմ ճանապարհն՝ եւ ճշմարտութիւն եւ

կեանք՝ ո՛չ ո՛ր Գայ աս Հայր՝ եթէ ոչ ինքեւ» :

(Յովհաննոս ԺԴ:6)

«Ես եմ ճամբան, ճշմարտութիւնն ու կեանքը. ո՛չ մէկը
կու գայ Հօրը քով՝ բաց միայն ինձով»:

Վերեւ նշուած էր, թէ մարդ հինգ հիմնական տարրերէ
կազմուած էր. ջուր, հող՝ նիւթ, օդ, ջերմութիւն՝
լոյս եւ եթեր: Կեանքը ինքնաշարժման կարողութիւնն
է: Մասնիկները (molecules) որքան արագ շարժին այնքան
աւելի ջերմութիւն յառաջ կը բերեն: Եւ յառաջ եկած
ջերմութիւնն ալ ենթակարմիր «լոյս» է: Հետեւաբար
Քրիստոսի ըսած թէ՛ «կեանք»-ը եւ թէ՛ ալ «լոյս»-ը կը
համապատասխանէ չորրորդ տարրին՝ ջերմութեան:

Հետեւաբար Քրիստոս մեր կեանքը ապահովող
«ջուր» տարրին ակն է: Ան նաեւ նիւթ՝ «հաց»-ն է որ կը
կերակրէ մեր նիւթական մարմինը: Քրիստոս նաեւ Աս-
տուծոյ «շունչ»-ն է որ կ'ապահովէ մեր կեանքը, հետե-
ւաբար Ան նաեւ «օդ»-ն է: Քրիստոս նաեւ մեր «կեանք»-
ն է եւ մեզի կարողութիւնը կու տայ շարժելու ու գոր-
ծելու, հետեւաբար Ան մեր մարմինն «ջերմութիւն»-ն
է: Իսկ Քրիստոս իբրեւ աշխարհի «լոյս»-ը մեր գիտակ-
ցութիւնն է, որ կը լուսաւորէ եւ կարելի կ'ընէ միւս
չորսը, հետեւաբար ան միջոցն է մեր գոյութեան: Քրիս-
տոսի Լոյսը՝ գիտակցութիւնը նաեւ կը «լուսաւորէ»
մեր մտային «մարմին»-ը: Միթէ ճիշտ չէ՞ թէ ամէն

ստեղծուած բան միջոցին մէջ կը գոյատեւէ եւ առանց միջոցի (space) ոչինչ կրնար գոյութիւն ունենալ: Հետաքրքրական է հայերէն լեզուի մէջ «միջոց» բառը, որով ան երկու իմաստ ունի. մին «space» եւ միւսն ալ «means»: Միջոցը (space) մեր գոյատեւման միջոցն (means) է: Քրիստոս ալ մեր գոյատեւման միջոցն է:

Այս հիման վրայ պէտք է Քրիստոս «տեսնենք» ամէն ինչի մէջ: Եթէ չենք «տեսներ», յանցանքը մեր կենցաղը՝ խորհուրդ, խօսք ու արարքները, եւ այս հիման վրայ ալ՝ մեր կերտած ցած գիտակցութեան մակարդակն է: Վերելի վերջին մէջբերումին մէջ Քրիստոս նաեւ կ'ըսէ. «Ես եմ ճշմարտութիւնը»: Միթէ մարդիկ յաճախ չե՞ն ըսեր. «միակ ճշմարտութիւնը Աստուած է»: Այս հիման վրայ կամ մեր ճշմարտութիւն կարծած զանազանութիւնները միայն պատրանքային են եւ ոչ ճշմարիտ, կամ անոնք բոլորն ալ՝ Քրիստոսի զանազան արտայայտութիւնները: Իսկ եթէ այս հայեացքը ճիշդ է, պէտք չէ՞ ամէն ինչի հետ վարուինք այնպէս ինչպէս պիտի վարուէինք եթէ Յիսուս Քրիստոս մեր առջեւ ներկայ ըլլար: Այս հիման վրայ ո՞ւր կը մնայ բարկութիւն, ատելութիւն, նախանձ, վրդովում, վրէժխնդրութիւն ...: Աւետարանին մէջ Յիսուս իր կենցաղով, իր արարքներով եւ իր խօսքերով ճիշդ աս էր, որ մեզի սորվեցունց՝ ճիշդ կենցաղը եւ կատարելութեան ուղին: Մարդ Աստուած կը փնտռէ ամենուրեք եւ տակաւին չէ հասկցած, թէ իր ճշմարիտ էութիւնը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Հետեւաբար գտնելիք բան մը չկայ այլ՝ միայն անդրադարձ մը: Այս անդրադարձը կարելի է միայն փորձառական գիտութեամբ եւ ոչ իմացական գիտութեամբ:

ՈՂՈՐԴԵԱ ԻՆՁ ԱՍՏՈՒԾ, ըՍՏ ՄԵԾԻ ՈՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԸՈՒՄ.

ըՍՏ ԲԱՉՈՒՄ ԳԹՈՒԹԵԱՆ ԸՈՒՄ ԲԱԻՆ ԶԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՄ

ԻՄ:

* * *

Բ

Այս գիրքին մէջ կան չորս գլուխներ:

Առաջին գլուխին մէջիները Յովհաննու Աւետարանէն որոշ համարներու մեկնաբանութիւններն են: Անոնք Յիսուսի խօսքերը չեն, այլ՝ աւետարանիչին հասկացողութիւնները եւ գրածները, ինչպէս նաեւ Յովհաննէս մկրտիչի եւ ուրիշներու խօսքերը:

Երկրորդ գլուխին մէջ ալ ներկայացուած է խորհրդածութիւններ բացառիկ համարներու նկատմամբ, որոնք մակերեսայնօրէն կը թուին իրար հակասել կամ հակասել ընդհանուր Աւետարանին տուած բարի լուրին եւ Յիսուսի առաքելութեան նկատմամբ ընդհանուրին հասկացողութեան:

Երրորդ գլուխին մէջ ներկայացուած է Թովմասի Աւետարանի համարները որ թարգմանած եմ Անգլերէնէ: Թովմասի Աւետարանը հազար ինը հարիւր քառասուններուն Եգիպտոսի մէջ գտնուած է թէ՛ Յունարէն եւ թէ՛ Ղպտիերէն օրինակներով: Ան պաշտօնական եկեղեցիներու կողմէ ընդունուած կանոնական (canonical) Աւետարաններուն մաս չի կազմեր: Թովմասի Աւետարանին մէջ Յիսուսի կեանքին նկատմամբ ոչ մէկ պատմուածք կայ, այլ միայն հարիւր տասնըչորս (ոմանք մի քանի համարները երկուքի բաժնած ըլլալով 118 համար կ'ըսեն: Այս մի քանի համարները հոս ներկայացուած են իբրեւ Ա եւ Բ մասեր:) համարներ՝ բոլորն ալ Յիսուս Քրիստոսի խօսքերը: Անտարակոյս անոնց մէկ մասը նոյնանման են միւս չորս Աւետարաններու մէջի Յիսուսի խօսքերուն: Այդ հասարակաց համարներուն մեկնաբանութիւնները այս գիրքին մէջ պիտի չկրկնուին եթէ անոնք արդէն ներկայացուած են այս գիրքերու շարքաւորումին առաջին երեք հատորներուն մէջ:

Չորրորդ գլուխին մէջ ներկայացուած է Աւետարաններէն՝ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներէն իմ սորվածներուս ամփոփումը:

Գ

Այս գիրքիս բովանդակութիւնը կը ներկայացնէ իմ այսօրուայ խորհելակերպը, մտածելակերպը: Նկատի ունենալով որ ամէն ինչ հիմնուած է օրուայ փորձառութիւններու վրայ, կարելի է յառաջիկային տարբեր ձեւով ալ արտայայտուիմ:

Այսքան էջերուն մէջ եթէ կան ուշադրութենէ վրիպած սխալներ, ընթերցողին ներողամտութեան կ'ապաւինիմ:

* * *

Դ

Գլուխ Ե – «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադրուած գրութիւնները իմս չեն, համացանցէն առնուած եւ իմ կողմէ հայերէնի թարգմանուած գրութիւններ են, որոնց մէկ մասին հեղինակները յայտնի չեն:



Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւ ր ինձ իմաստութիւն՝
զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն
ժամ: Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա՛ զիս.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

* * *



ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

**ՆԵՐԷ ՏԵՐ
ԱՄՐԻԿԱՅԻՆ ՏԿԱՐՈՒԹԵԱՆԱ ՀԵՏԵԱՆՔ
ԳՈՐԾԱԾ ԵՐԵՔ ՄԵԴՔԵՐԱ:**

**ԴՈՒՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ ԵՍ,
ԲԱՅՉ ԵՍ ՔԵՉ ՄԻԱՅՆ «ՀՈՍ» ԿՐ ՊԱՇՏԵՄ:**

**ԴՈՒՆ ՈՐԵԷ ԿԵՐՊԱՐԱՆՔ ՉՈՒՆԱ,
ԲԱՅՉ ԵՍ ՄԻԱՅՆ ՔՈՒ ԱՅՈ ԿԵՐՊՊ ԿՐ ՊԱՇՏԵՄ:**

**ԴՈՒՆ ՓԱՌԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՊԷՏՔ ՉՈՒՆԱ, ԲԱՅՉ
ԵՍ ՔԵՉԻ յԱՃԱՆԽ Կ'ԱՂՕԹԵՄ ԵՒ ՔԵՉ ԿՐ ՓԱՌԱՐԱՆԵՄ:**

ԹաՐԳ. Վ. Ս.



-Ա-

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ



ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆ

Ի Հօրէ Լոխոյ

«Ի սկզբանէ ի՛ր Բանն, եւ Բանն ի՛ր առ Լսոր-
ոսած եւ Լսորոսած էր Բանն. Սա՛ ի՛ր ՚ի
սկզբանէ առ Լսորոսած: Լմենայն ինչ՝ նոզաւ-
եղէ, եւ առանց նորա եղէ եւ ո՛չ ինչ՝ որ ինչ
եղէն: Սովաւ կեանի էր, եւ կեանիէ՛ն էր լոյս
մարդկան եւ լոյսն՝ ՚ի խաւարի անդ՝ լոսաւո՛ր-
րէր եւ խաւար՝ մնա ո՛չ եղէ Ըստոս. Եղէ-
այր մի առաիկալ յԼսորոսոյ անոն նմա Յով-
Հաննէա: Սա՛ ի՛կն ՚ի վկայութիւնս զի վկայեցէ՛
վասն լոսոյն. զի ամենեկին Ըստարացէն նոզաւ:
Ո՛չ էր նա լոյսն, այլ զի վկայեցէ վասն լոս-
ոյն: Ի՛ր լոյսն ճշմարիտ որ լոսաւո՛ր առնէ
զամենայն մարդ՝ որ Գալոց է յաշխարհ, Յաշխար-
հի՛ էր, եւ աշխարհ նոզաւ եղէ. եւ աշխարհ
զնա ո՛չ ծանեա: Յիւրան եկն, եւ իւրիւն զնա
ո՛չ ընկալան: Իսկ որի ընկալան զնա, ի՛ր նոցա
իշխանութիւնս որդիս Լսորոսոյ լինել որոց
Ըստարացէն յանոն նորա: Ոյի ո՛չ յարենէ, եւ
ո՛չ ՚ի կամաց մարմնոյ, եւ ո՛չ ՚ի կամաց առն,
այլ յԼսորոսոյ ծնան: Եւ Բանն մարմին եղէ,
եւ բնակեաց ՚ի մէջ եւ Տեսա՛ի զհաւա նորա,
զհաւա իբրեւ զմիածնի առ ՚ի Հօրէ, լի՛
շնորհօի եւ ճշմարտութեան»: (ՅովՀաննոս Լ: Ի-Դ)
«Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բա-
նը Աստուծոյ էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր:
Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝

Ինչ որ եղաւ: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զանիկա չհասկըցաւ: Աստուծոյն զրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա վկայութեան համար եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնքը անոր միջոցով հաւատան: Ինք չէր այն Լոյսը, հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ: Ճշմարիտ Լոյսը ան է, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չհասկըցաւ: Իրեններու եկաւ, սակայն իրենները չընդունեցին զինք: Բայց անոնց՝ որ ընդունեցին զինք, անոնց՝ որ կը հաւատան իր անունին, իրաւասութիւն տուաւ Աստուծոյ գաւակներ ըլլալու: Անոնք ո՛չ արեւնէն եւ ո՛չ մարմինի կամքէն ծնան, ո՛չ ալ մարդու կամքէն, հապա՝ Աստուծոյն: Եւ Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ անոր փառքը տեսանք, չօրմէն միածնի փառքին պէս, շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն»:

Յովհաննէսի Աւետարանին այս առաջին գլուխը կը կարգացուի Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, ամէն Ս. պատարագի աւարտին, հաւատացեալներու արձակումէն առաջ: Այս համարներուն մէջ ներկայացուած է համայն ստեղծագործութեան միջոցառումը եւ այդ ստեղծագործութեան մէջ ալ մարդուն իր կեանքի պարտականութիւնը: Հոն նաեւ նկարագրուած է Աստուծոյ Երրորդութեան գաղափարը: «Բան»-ը Յունարէն «logos» բառն է, որ կը թարգմանուի որպէս «խօսք» (Տես նաեւ «Լոյս Ի Լուսոյ» գիրքին մէջ էջեր 87-88): Ճիշդ ասոր համար ալ Անգլերէնի մէջ թարգմանուած է, որպէս «word»: Հայերէն գրաբարի մէջ ալ «բան» բառը կը նշանակէ «խօսք»: Յունարէն «logos» բառէն նաեւ կը սերի «logic» բառը, որ կը նշանակէ տրամաբանութիւն: Հետեւաբար ստեղծագործութիւնը յառաջ եկած է Աստուծոյ «խօսք»-ով եւ տրամաբանութեամբ եւ պատահական չէ: Ի՞նչ է իմաստը Աստուծոյ «խօսք»-ին: Շատ հաւանական է, որ Աստուած մարդու կերպարանքով Փիզիքական էութիւն մը չէ, որ մեզի պէս յօդակապ բառերով խօսի: Նախ

Հասկանանք թէ ի՞նչ է խօսքը: Երբ կը խօսինք գաղափար մըն է որ կը յայտնենք ու զայն կ'ընենք որոշ թրթռացում մը յառաջ բերելով: Այդ թրթռացումը ձայն կը կոչենք: Ձայնը իր մէջ թէ՛ տեղեկութիւն, թէ՛ ալ որոշ չափով զօրութիւն կը պարունակէ: Բարձր որակով ձայնը, ոչ միայն օգին թրթռալուն պատճառ կ'ըլլայ այլ նաեւ հաստատուն մարմիններն ալ կը թրթռացնէ: Այս հիման վրայ Աստուծոյ «Բան»-ը Աստուծոյ զօրութիւնն է, որ Ս. Հոգի կը կոչենք: Ս. Հոգին միշտ Աստուծոյ հետ միասին եղած է: «Աստուած էր Բանն» կը նշանակէ թէ Աստուած Ֆիզիքական էութիւն մը չէ այլ միայն «Հոգի»՝ Զօրութիւն: «Ամենայն ինչ նովաւ եղել, եւ առանց նորա եղել եւ ոչինչ որ ինչ եղեն»-ին իմաստը այն է, որ ընդհանուր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութեամբ յառաջ եկած է: Այսօր նոյնիսկ գիտնականները կ'ըսեն թէ նիւթը «մութ զօրութենէն» յառաջ եկած է: Այս տեսակէտը նաեւ հաստատօրէն ներկայացուած է թէ՛ Հին եւ թէ՛ ալ Նոր Կտակարաններուն մէջ:

«Եւ Բանիւ՝ Տեառն երկինքի Լաստատեցան, Եւ Լոգ-
ւով Բերանոյ նորա ամենայն ստեղծութեան նոցա» :
(Սաղմոս ԼԲ:6)

«Տէրո՛ջ խօսքով ստեղծուեցաւ երկինքը, եւ իր բերանին
չունչով՝ անոր ամբողջ զօրքը»: (Սաղմոս ԼԳ:6)

«Հաստատ' զի իմանամք Լաստատեալ սլաստեանն
Բանիւ՝ Լաստատ' յաներեւո՛թից սէրէ-եղեալ եղեալ» :
(Եբրայեցի՝ ԺԸ:3)

«Հաւատքով՝ կ'ըմբռնենք թէ տիեզերքը կազմուեցաւ
Աստուծոյ խօսքով, այնպէս որ տեսանելի բաները
գոյացան աներեւոյթ բաներէն»:

«Նովաւ կեանք էր եւ կեանքն էր լոյս մարդկան եւ լոյսն՝ ի
խաւարի անդ լուսաւորէ եւ խաւար մնա ոչ եղել Հաստ»
նախադասութիւնը ցոյց կու տայ թէ մարդուն ունեցած

կեանքը Ս. Հոգիի զօրութեան իր մէջ ներկայութիւնն է: Ժիշդ ասոր համար կ'ըսենք Ս. Հոգիի «կենսատու զօրութիւն»-ը: Այդ զօրութիւնն է, որ մեր կեանքը մեզի կու տայ: Նոյն ժամանակ Ս. Հոգիի գիտակցութիւնն է, որ կը գործէ որպէս մեր գիտակցութիւնը: Ահա', աս է իմաստը «լոյս մարդկան»-ին: Ինչպէս բնութեան մէջ լոյսը ամէն ինչ տեսանելի կ'ընէ, Ս. Հոգիի Լոյսն ալ մեզի ամէն ինչի գիտակից կ'ընէ: Առանց գիտակցութեան մարդ ոչ ինք իրմէ եւ ոչ ալ իր միջավայրէն տեղեակ կ'ըլլայ: Երբ աւետարանիչը կ'ըսէ. «Եւ խաւարը զանիկա չհասկցաւ», կը յայտարարէ թէ մարդ իր խաւարամտութեամբ չհասկցաւ թէ Աստուծոյ գիտակցութիւնն է որ իր մէջ կը գործէ եւ կարծեց թէ այդ գիտակցութիւնը իր ուրոյն գիտակցութիւնն է՝ իր ուղեղին մէկ ստեղծագործութիւնը: Մարդուն կեանքը եւ իր գիտակցութիւնը, իր մէջ Աստուծոյ ներկայութեան փաստերն են: Յովհաննէս Մկրտիչ այդ Լոյսին՝ Աստուծոյ վկայութիւնը կ'ընէր, որպէսզի մարդիկ «հաւատան»՝ հասկացողութիւն ունենան: Մարդուն հաւատքը ծագում կ'առնէ իր գիտակցութեան իրեն տուած գիտութենէն եւ հասկացողութենէն: Բայց երբ մարդ խաւարամիտ է եւ չի հասկնար թէ իր գիտակցութիւնը Աստուծոյ գիտակցութեան փոքր մէկ մասնիկն է եւ կը հաւատայ թէ այդ գիտակցութիւնը իրն է եւ սահմանափակ, աւելի բարձր գիտակցութիւն մը կերտելու չի ձգտիր: Յովհաննէս ինք այդ Լոյսը չէր, որովհետեւ ան չէր յաջողած իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել մինչեւ Քրիստոսի գիտակցութեան մակարդակին, որ լրիւ յայտնաբերեր Աստուծոյ Լոյսը՝ Գիտակցութիւնը: Յովհաննէս աւետարանիչ նաեւ կ'ըսէ. «Էր լոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոյց է յաշխարհ»: Միակ ճշմարտութիւնը Աստուած է, հետեւաբար ճշմարիտ Լոյսն ալ

Աստուծոյ գիտակցութիւնն է: Ամէն մի մարդու գիտակցութիւնը այդ Ս. Հոգիին Լոյսն է: Աւետարանիչը դարձեալ կ'ըսէ. «Յաշխարհի էր եւ աշխարհ նովաւ եղել եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ»: Աստուած աշխարհի մէջ է եւ աշխարհ Ս. Հոգիի զօրութեամբ կազմուած է: Հոս երբ աշխարհ կ'ըսուի, պէտք է հասկնալ թէ ակնարկումը ընդհանուր տիեզերքի մասին է: Միթէ չենք ըսեր. «Ընդհանուր տիեզերքը Աստուծոյ մարմինը կը ներկայացնէ» կամ «Աստուած ամենուրեք է»: Բայց «աշխարհ»՝ համայն մարդկութիւնը այս ճշմարտութիւնը «չճանչցան»՝ չհասկցան: Երբ կը կարդանք հետեւեալ նախադասութիւնը. «Եւ Բանն մարմին եղել եւ բնակեաց 'ի մեզ եւ տեսաք զփառս նորա» կը հասկնանք թէ բոլոր տեսանելի եւ շօշափելի ստեղծագործութիւնը այդ զօրութեան մարմնացումն է: Բնագիտութիւնն ալ այսօր նոյնը փաստած է, թէ նիւթը զօրութենէ յառաջ եկած է: Աստուծոյ զօրութեան մարմնացումը Աստուծոյ Որդին Քրիստոսն է: Հետեւաբար Քրիստոս ամէն անձի մէջ ներկայ է. «բնակեաց 'ի մեզ», մեր մէջ կը բնակի: Ժիշդ ասոր համար ալ Աւետարանը կ'ըսէ. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»: Այս մէջբերումին վերջին մասը ակնարկութիւն մըն է Յիսուսի, որ իր մէջ Քրիստոսի յայտնութեամբ յայտնաբերեց եւ մեզի ցոյց տուաւ Քրիստոսի փառքը, ճշմարտութիւնը՝ Աստուած եւ Աստուծոյ բոլոր շնորհները, որոնք իր ունեցած, կամ աւելի ճիշդ է ըսել, յայտնաբերած բոլոր կարողութիւններն էին: Յիսուս այս բոլորը ըրաւ որպէսզի գիտակցինք ճշմարտութեան եւ մենք ալ ընենք նոյնը: Միթէ չէ՞ ըսած. «Աչակերտը պէտք է իր վարդապետին պէս ըլլայ» եւ նաեւ «կատարեալ եղէք ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»: Յիսուս ինք «կատարեալ» եղաւ որպէսզի մեզի ալ սորվեցնէ «կատարեալ» ըլլալ՝ Քրիստոս մեր մէջ յայտնաբերել:

Յիսուս Քրիստոսի համար կ'ըսենք Աստուծոյ Որդի, որովհետեւ Ան յաջողեցաւ իր կեանքի պարտականութիւնը կատարել եւ Հայր Աստուծոյ փառքը յայտնաբերել: Միթէ աւետարանիչէն առնուած վերելի մէջբերումին մէջ չէ՞ գրուած. «Իսկ որք ընկալան զնա, ե՛տ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել որոց հաւատասցեն յանուն նորա»: Իսկ հետեւեալ համարն ալ «Ոյք ո՛չ յարենէ, եւ ո՛չ ՚ի կամաց մարմնոյ, եւ ո՛չ ՚ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան» կը յայտնէ թէ մարդ իր ուզելով չի կրնար Աստուծոյ Որդի կոչուելու մակարդակին հասնիլ. Ան կ'ըլլայ միայն Աստուծոյ կամքով՝ Քրիստոսի յայտնութեամբ անձին մէջ: Համայն մարդկութիւնը Աստուծոյ որդիները (փոքր «ո»-ով) կարող չենք Աստուծոյ հաճելի Որդիները (գլխագիր «Ո»-ով) ըլլալ:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՉԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ «Ա»

«Յովհաննէս զկայէ՛ զասն նորա. աղաղակեա՛ց է-
ասէ. Սա՛ է՛ ցորմէ ասէի, որ ցէնի իմ Գալուցն
էր, առաջի իմ եղեւ, ցի նա՛խ խան ցիս էր: Զի
՛ի լըռ-թեմէ անոր նորա մե՛կ ամենեւին առա՛ւ
շնորհա փոխանակ շնորհաց: Զի օրենէն ՛ի յեռն
Մովսիսի Կոռն շնորհէն էւ ճշմարտութիւնն ՛ի
յեռն Յիսուսի՝ Քրիստոսի եղեն: ԶԱսորաւ յա՛շ
ո՛ւ է երես երբէկ, Բայց միաժինն որդի՛ որ է ՛ի
Ժո՛ց Ըօ՛ր՝ նա՛ պարեաց»: (Յովհաննէս Ե:15-18)

«Յովհաննէս վկայեց անոր մասին, եւ աղաղակեց.
«Ասիկա՛ է ան՝ որուն մասին կ'ըսէի. Ան որ իմ ետեւէս
կու գայ՝ իմ առջեւ եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ էր:
Եւ անոր լիութենէն մենք բոլորս ստացանք շնորհք
շնորհքի վրայ: Որովհետեւ Օրէնքը տրուեցաւ Մովսէսի
միջոցով՝ բայց շնորհքն ու ճշմարտութիւնը եղան
Յիսուս Քրիստոսի միջոցով: Ո՛չ մէկը երբեք տեսած է
Աստուած. բայց միածին Որդին՝ որ Հօրը ծոցն է, ի՛նք
պատմեց անոր մասին»»:

Այս համարները Յովհաննէս Մկրտիչին Յիսուս
Քրիստոսի նկատմամբ տուած վկայութիւնը կը ներկա-
յացնեն: Յովհաննէս իր մէջ Քրիստոսը չէր յաջողած
յայտնաբերել: Բայց, որովհետեւ ան ընդհանուրին ունե-
ցած գիտակցութեան մակարդակէն քիչ մը աւելի բար-
ձր գիտակցութեան մակարդակ մը կերտած էր, անմի-
ջապէս ճանչցաւ Յիսուսի մէջ Քրիստոսի յայտնու-
թիւնը: Երբ ան կ'ըսէ «զի նա՛խ քան զիս էր» կ'ակնարկէ
Քրիստոսը, որ ի սկզբանէ ընդհանուր ստեղծագործու-
թիւնը կը ներկայացնէ եւ ամէն անհատի էութիւնն է:
Վերելի մէջբերումին մէջի Յովհաննէսի ըսած «շնորհքն
եւ ճշմարտութիւնն ՛ի ձեռն Յիսուսի՝ Քրիստոսի եղեն»-ը
կարելի է երկու տարբեր ձեւերով վերլուծել: Առաջին
վերլուծումը այն է, թէ Քրիստոս ամէն անհատի էութե-

Թիւնն է եւ Ս. Հոգիի շնորհքները ստանալու «դուռ»-ը: Իսկ երկրորդը՝ Յովհաննէս կ'ականարկէ Յիսուսը, որ Քրիստոս իր մէջ յայտնաբերելով գերազանցեց Մովսիսական օրէնքները եւ համայն մարդկութեան սորվեցուց Աստուծոյ սէրը եւ շնորհքները: Յովհաննէս նաեւ կ'ըսէ. «ՉԱստուած ո՛չ ոք ետես երբեք, բայց միաձինն որդի՝ որ է 'ի ծոց Տօ՛ր՝ նա՛ պատեաց»: Յովհաննէս կ'ուզէ ըսել, թէ ոչ ոք կարող է Աստուած տեսնել առանց Քրիստոս իր մէջ յայտնաբերելու: Այն ատեն ան կը միանայ՝ կը լուծուի Քրիստոսի մէջ, ու կ'ըլլայ Աստուծոյ Որդիին հետ մէկ: Աստուծոյ Որդին Աստուծոյ արտայայտութիւնն է: Այն ատեն անհատն ալ կը տեսնէ ամէն ինչի միականութիւնը, հետեւաբար նաեւ «տեսած» կ'ըլլայ «Աստուած»: Միայն Որդին է, որ Աստուած «տեսնելու» փորձառութիւնը կ'ունենայ:



ՅՈՎՀԱՆՆԵԱ ՄԱՐՏԻՉԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ «Բ»

«Եւ ա՛յս է վկայութիւնն Յովհաննէս յորժամ
առաջեցին առ նա Հրեայէն յԵրոսաղէմէ խաւա-
նայս եւ ղեհարայնս զի Հարցցեն ցնա՛ թէ. Դո-
ո՛ւ ես: Եւ խոստովան եղէւ՝ եւ ո՛չ ուրացաւ եւ
խոստովան եղէւ եթէ ես՝ ո՛չ եմ Քրիստոսն: Եւ
Հարցին ցնա. Իսկ՝ ո՛վ ես դո՛ւ Եղիա՞ս ես: Եւ
ասէ. Ո՛չ եմ: Իսկ մարգարէն՝ ես դո՛ւ:
Պարասխանի եր, թէ. Ո՛չ: Իսկ ասա՛ մեզ, դո՛ւ
ո՞վ ես, զի պարասխանի՞ր ցարցո՛ւղ որոց առաջե-
ցինն զմեզ. զի՞ ասեա զասն ին: Ըսէ. Ես՝ Յայն
Բարբառոյ յանապարի. ուղի՛ղ արարէի՛ զճանա-
պարհն Տեառն որդէս ասա՛ց Եսայի մարգարէ:
Եւ որդի առաջեցանն՝ ՚ի փարիսէցո՛ւց անորի երն:
Հարցին ցնա՛ եւ ասէն. Իսկ՝ զի՞ մկրդեա՛ն եթէ
դո՛ւ չե՛ս Քրիստոսն եւ ո՛չ Եղիա, եւ ո՛չ
մարգարէն: Պարասխանի եր նոցա Յովհաննէս՝ եւ
ասէ. Ես՝ մկրդեմ զՅէզ Զրո՛վ ՚ի միջի Յերոսմ կայ
զոր դո՛ւնն ո՛չ Գիտէի: Որ զկնի իմ Գալոցն է,
որո՛ւմ չե՛մ արժանի՛ եթէ լուծից զխրացս կօշ-
կաց նորա: Ըյս՝ ՚ի Բեթաբթա՛ւ եղէւ յայնկոյս Յոր-
դանանո՛ւ ուր երն Յովհաննէս՝ եւ մկրդէր»:
(Յովհաննէս Ը:19-28)

«Սա՛ է Յովհաննէսի վկայութիւնը, երբ Հրեաները
Երուսաղէմէն զրկեցին քահանաներ ու Ղեւտացիներ, որ-
պէսզի Հարցնեն անոր. «Դուն ո՞վ ես»: Ան խոստովանե-
ցաւ ու հուրացաւ, Հապա յայտարարեց. «Ես Քրիստոսը
չեմ»: Հարցուցին անոր. «Հապա ո՞վ. Եղիա՞ն ես»: Ըսաւ.
«Զեմ»: Հարցուցին. «Այն մարգարէն ես»: Պատասխանեց.

«Ո՛չ»: Ուրեմն ըսին անոր. «Դու ըստ քո՞ւմ ես ըստ՝ մեզի, որպէսզի պատասխան մը տանինք մեզ ղրկողներուն. ի՞նչ կ'ըսես քու մասիդ»: Ըսաւ. «Ես անոր ձայնն եմ՝ որ կը գոչէ անապատին մէջ. Շտկեցէ՛ք Տէրոջ ճամբան, ինչպէս Եսայի մարգարէն ըսաւ»: Այդ ղրկուածները Փարիսեցիներէն էին, ու Հարցուցին իրեն. «Հապա ինչո՞ւ կը մկրտես, եթէ դու ըստ քո՞ւմ Բրիստոսն ես, ո՛չ Եղիան, ո՛չ ալ մարգարէն»: Յովհաննէս պատասխանեց անոնց. «Ես ջուրով կը մկրտեմ, բայց մէկը կայ ձեր մէջ՝ որ դուք չէք ճանչնար. ի՛նք է իմ ետեւէս եկողը՝ որ իմ առջեւս եղաւ, որուն կօշիկին կապը քակելու արժանի չեմ»: Այս բաները պատահեցան Բեթաբարայի մէջ՝ Յորդանանի միւս կողմը, ուր Յովհաննէս կը կենար ու կը մկրտէր»:

(Տես նաեւ Մատթէոս Գ:1-12, Ղուկաս Գ:1-18 եւ Մարկոս Ա:1-8)

Յովհաննէս Մկրտիչ Հրեաներուն հարցումները կը պատասխանէ եւ իր մասին տեղեկութիւն կու տայ: Յովհաննէս բացայայտ կ'ընէ որ ինք մարգարէ չէ, Եղիան չէ, ոչ ալ՝ Բրիստոսը: Հետաքրքրական են Յովհաննէսի տուած պատասխանները, որոնց մէջ նկատողութեան առնուելիք մի քանի կէտեր կան:

Առաջինը պարզ է եւ վերեւ անոր մասին արդէն գրուած է: Ան կ'ըսէ. «Ես՝ ո՛չ եմ Քրիստոսն»: Յովհաննէս այդպէս կ'ըսէ որովհետեւ ան Բրիստոս իր մէջ չէր յայտնաբերած, հետեւաբար Աստուածային բնոյթ չունէր:

Աւելի հետաքրքրական է անոր տուած երկրորդ պատասխանը եւ անոր պատասխաններուն վերլուծման երկրորդ կէտը: Ակնարկութիւնը Եղիայի մասին է եւ հետեւեալ մէջբերումը կը ներկայացնէ այդ հարցումն ու պատասխանը. «Իսկ ո՞վ ես դու Եղիա՞՛ ես: Եւ ասէ. Ո՛չ եմ»: Հետաքրքրական կէտը այն է, թէ Յովհաննէս Եղիայի վերամարմնացումն էր: Կարելի է նման հայեացք մը շատերը խրտչեցնէ կամ գոնէ անոնց զարմանք պատճառէ: Բայց աս պարզ եզրակացութիւն մը չէ, այլ Ս. Գրային հանգամանք ունի:

«Եւ ելեալ Յիսուս ի Կոզման Փիլիպպէայ

Ալեասրեայն, Հարցանէր ցաշակերդան՝ է- ասէր-
սէն ո՞վ ասէն սինէն մարդիկն՝ թէ իցէ որդի
մարդոյ: Եւ նո՞վա ասէն, ոհն՝ սօվհաննէս
մկրդիշ, է- այլէ՛ սէղիս, է- կէսէ՛ սէրեմիս, կամ
սմի ո՞վ ՚ի մարգարէիցն:» (Մատթէոսի ԺԶ:13-14)

«Յիսուս Փիլիպպոսի Կեսարիայի կողմերը երթալով՝ իր
աշակերտներուն Հարցուց ու ըսաւ. «մարդիկ ո՞վ կ'ըսեն
թէ եմ ես Որդին մարդոյ»: Անոնք ըսին. «Ոմանք կ'ըսեն
թէ Յովհաննէս Մկրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան,
ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»:»

«այլ ասեմ յեզ՝ սի Եղիս էկէալ իսկ է. է- ոշ
Ժանէասն սնա, այլ արարին ընդ նա՛ սոր ինշ
կամեցան. նոյնպէս է- որդի մար- Դոյ
շարշարելոց է ՚ի նոցանէ: Յայնժամ ՚ի միտ
առին աշակերդիքն, թէ զասն Յովհաննէս մկրդշի՝
ասաց ցնոսա:» (Մատթէոսի ԺԷ:12-13)

«Բայց ձեզի կ'ըսեմ թէ Եղիան արդէն եկած է եւ
զանիկա չճանչցան, Հապա ինչ որ ուզեցին ըրին անոր-
նոյնպէս ալ Որդին մարդոյ անոնցմէ պիտի չարչարուի:»
Այն ատեն Հասկցան աշակերտները թէ Յովհաննէս
Մկրտչին Համար ըսաւ անոնց:»

**Հետեւաբար Յովհաննէս Եղիայի վերամարմնա-
ցումը ըլլալով հանդերձ, ինք տեղեակ չէր այդ իրողու-
թեան: Նմանապէս մեր հոգիներն ալ վերամարմնացած
ըլլալով հանդերձ տեղեակ չենք մեր անցեալի կեանքե-
րէն եւ չենք հասկնար թէ ինչու կ'ենթարկուինք որոշ
պատահարներու, որոնք մեր «պարտք»-երն են որ
պարտ ենք վճարել: Ամէն անհատ իր կեանքի ընթաց-
քին իր կերտած կենցաղով՝ խորհուրդ, խօսք ու արարք-
ներով կը ճշդէ՝ կ'որոշէ իր զօրութեան մարմնին
յաճախականութիւնը: Այդ տեղեկութիւնը կը մնայ
զօրութեան մարմնին մէջ եւ հոգին ըստ այնմ կը
վերամարմնանայ՝ համապատասխան զօրութեան մէջի**

տեղեկութեան: Յիշողութիւնը ուղեղային գործառնութիւն մըն է եւ մարմինն մահուան հետ ուղեղն ալ կ'անհետանայ, հետեւաբար՝ յիշողութիւնն ալ: Ճիշդ այս է պատճառը տարբերական ծնունդներու՝ մին կաղ կամ կոյր կը ծնի, իսկ ուրիշ մը՝ առողջ ու հանճար: Ապա թէ ոչ Աստուած անարդար կ'ըլլար: Քաւ լիցի: Եղիա կը քարոզէր կատարելութեան ուղին: Յովհաննէս Մկրտիչըն ալ քարոզեց կատարելութեան ուղին, որովհետեւ իբրեւ Եղիա այդ տեղեկութիւնը դրած էր իր զօրութեան մարմնին մէջ եւ իբրեւ Յովհաննէս նոյնը կատարեց ըստ իր զօրութեան մարմնին մէջի տեղեկութեան:

Յովհաննէսի երրորդ պատասխանը դարձեալ ժըխտումն է: Ան կ'ըսէ թէ ինք մարգարէ մըն ալ չէ: Երբ Փարիսեցիները անոր կը հարցնեն, թէ ո՞վ է, ան հետեւեալ պատասխանը կու տայ. «Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ուղի՛ղ արարէք զճանապարհն Տեառն»: Յովհաննէս կ'ըսէ, թէ ինք անապատին մէջ ձայն մըն է, որ կը յանձնարարէ հետեւիլ Տիրոջ հաճելի կատարելութեան ուղիին: Որովհետեւ մարդուն ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, անձին մէջ կը մնայ որպէս «հունտ», որովհետեւ մարդն ալ հոգեպէս «անապատ» մըն է, ուր որեւէ «բոյս» գոյութիւն չունի: Կատարելութեան ուղին հետապնդել կը նշանակէ «հունտ»-ը խնամել, որպէսզի ան ծլի: Այդ ծլիւն ալ անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնն է:

Յովհաննէսի իր մասին տուած տեղեկութեան մէջ նկատողութեան առնուելիք վերջին կէտը հետեւեալն է. «Ես՝ մկրտեմ զձեզ ջրո՞վ՝ ի միջի ձերում՝ կայ զոր դուքն ո՛չ գիտէք»: Յովհաննէս կ'ըսէ, թէ ինք ջուրով կը մկրտէ եւ իր ակնարկութիւնը այն է, որ Քրիստոս զիրենք՝ համայն մարդկութիւնը, Ս. Հոգիով պիտի մկրտէ: Երբ ան կ'ըսէ. «մէկը կայ ձեր մէջ» ակնարկութիւնը ամէն անհատի ներքին Քրիստոսին համար է եւ ոչ թէ միայն

Յիսուս Քրիստոսին: Անտարակոյս Յիսուս Քրիստոս ալ շատեր «մկրտեց» Ս. Հոգիի զօրութիւնով երբ հիւանդները բժշկեց եւ մեռելները յարուց: Աս Յիսուսի ողորմածութեան արդիւնքն էր: Կարեւորը Քրիստոսի մեր մէջ յայտնութեամբ մկրտուիլն է, որ կը ներկայացնէ մեր էութեան մէջ բարձր որակի Ս. Հոգիի ներգործումը:



ՅԻՄՈՒԲԱ - ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱՐԸ

«Ի վաղիւ անդր Կեանքն զՅիսոսս զի Գա՛յր առնաւ եւ ասէ. Ընաւասիկ Գա՛ռն Լսարո՞ւն՝ որ Բառնայ զմեղս աշխարհի: Սա՛ է՝ վասն որոյ եանասի, զկնի իմ Գայ, այո՛ր որ առաջի իմ եղեւ, զի յառա՛ջ իսկ եր քան զիս: Եւ ես՝ ո՛չ Գիտէի զնա. այլ զի յայդնի լինիցի Իսրայէլի, վասն ա՛յնորիկ եկի ես ջրով մկրտել: Վկայեաց ՅովՀաննէս՝ եւ ասէ. Եւ Կեանքն զՀոգին՝ զի իջանէր ի քրեւ զաղաւնի յերկնից եւ ՀանԳմէ՛ր ՚ի վերայ նորա: Եւ ես՝ ո՛չ Գիտէի զնա. այլ որ առա՛վեացն զիս մկրտել ջրով նա՛ ասաց ցիս. Յոյր վերայ Կեանքիցեա զՀոգին, զի իջանիցեւ եւ ՀանԳչիցի ՚ի վերայ նորա, նա՛ է՝ որ մկրտէ Հոգո՞ւն Սրբո՛վ: Եւ ես՝ Կեսի, եւ վկայեցի՝ ելել աս՛ է որդին Լսարո՞ւն: (ՅովՀաննոս Ը:29-34)

«Հետեւեալ օրը ՅովՀաննէս տեսաւ Յիսուսը՝ որ իրեն կու գար, եւ ըսաւ. «Ահա՛ Աստուծոյ Գառը՝ որ կը քաւէ աշխարհի մեղքը: Ասիկա՛ է ան՝ որուն մասին կ'ըսէի. Իմ հետեւս մարդ մը կու գայ՝ որ իմ առջեւ եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ էր: Ես չէի ճանչնար զայն. բայց եկայ ջուրով մկրտելու, որպէսզի ան յայտնուի Իսրայէլի»: Ու ՅովՀաննէս վկայելով ըսաւ. «Տեսայ Հոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր երկինքէն եւ կը մնար անոր վրայ: Ես չէի ճանչնար զայն, բայց ա՛ն որ զրկեց զիս ջուրով մկրտելու, ի՛նք ըսաւ ինձի. Որո՛ւն վրայ որ տեսնես թէ Հոգին կ'իջնէ ու կը մնայ, անիկա՛ է՝ որ Սուրբ Հոգիով կը մկրտէ: Ես ալ տեսայ, եւ վկայեցի թէ ա՛յս է Աստուծոյ Որդին»»:

ՅովՀաննէս իր այս խօսքով Յիսուսը կը ներկայացնէ իբրեւ Աստուծոյ գառնուկը: Գառնուկը բոլոր կենդանիներուն մէջ ամենահեզ եւ ամենախոնարհն է

Եւ միշտ հնազանդ իր տիրոջ՝ հովիւին: Յիսուս ալ հեզ եւ խոնարհ էր ու հնազանդ Հայր Աստուծոյ կամքին: Ս. Հոգիի զօրութեան Յիսուսի հոգեւոր մէջ բարձր որակով հոսքը որպէս «աղաւնակերպ» Յովհաննէսին տեսանելի եղաւ: Նոյն զօրութիւնը, Յիսուսի այլակերպութեան ատեն, տեսանելի եղած էր Անոր երեք աշակերտներուն: Յիսուս Քրիստոսի ստացած Ս. Հոգիի զօրութիւնը տեսնելու կարողութիւնը Յովհաննէսին Աստուծոյ տրուած էր: Նախորդ մէջբերումին մէջ Յովհաննէս Քրիստոսին Ս. Հոգիի զօրութեամբ մկրտելուն մասին յստակ բան մը չէր ըսած, բայց իր այս խօսքով՝ «որ մկրտէ Հոգւովն Սրբով», այդ ճշմարտութիւնը յստակօրէն կը բացայայտէ: Պէտք չէ մոռնալ, թէ անհատին մէջ Ս. Հոգիին կենսատու զօրութեան հոսքին «դուռ»-ը Քրիստոսն է:

Յովհաննէս նաեւ ըսած է. «Եւ ես՝ տեսի, եւ վկայեցի՝ եթէ սա՛ է որդին Աստուծոյ»: Յովհաննէս Յիսուսի մէջ տեսաւ Քրիստոսի՝ Աստուծոյ որդւոյն յայտնութիւնը եւ ճանչցաւ Յիսուս Քրիստոս որպէս Աստուծոյ մարդեղութիւնը:



ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍ ԿԸ ՃԱՆՉԱՅ ԱՄԷՆ ՄԱՐԴ

«Եւ իբրեւ էր յերոսաղէմ 'ի Զապէին 'ի Գօնի
Բապտիզմէ Լաւարացին յանուն նորա զի Կեսանէին
յնշանան՝ զոր առնէր: Բայց ինչն Յիսուս ո՛չ
Լաւարայր զանչն նոցա. խնայի ինչն Գերբեր
զամենայն: Եւ զի ո՛չ էր պիտոյ՝ եթէ ո՛վ
վկայեսցէ վասն մարդոյ զի ինչն իսկ՝ Գերբեր
յինչ կրէր 'ի մարդն»: (Յովհաննոս Բ: 23-25)

«Երբ Զատիկի տօնին ատենը Երուսաղէմ էր, չատ
մարդիկ Հաւատացին անոր անունին՝ տեսնելով անոր
ըրած նշանները: Բայց ինք՝ Յիսուս՝ չէր Հաւատար
անոնց, որովհետեւ կը ճանչնար ամէն մարդ. պէտք
չունէր՝ որ մէկը ուրիշ մարդու մասին վկայէր իրեն,
քանի որ ինք գիտէր թէ ի՛նչ կայ մարդուն մէջ»:

Յովհաննոս աւետարանիչի այս գրութեամբ՝ վկա-
յութեամբ յայտնի կ'ըլլայ թէ Յիսուս Քրիստոս կարող
էր ամէն մարդու միտքը գիտնալ: Աս կարելի է,
որովհետեւ Քրիստոս ամէն մարդու հոգին՝ իութիւնն է,
հետեւաբար տեղեակ ամէն մարդու խորհուրդներուն,
զգացումներուն եւ արարքներուն: Քրիստոս ամէն մար-
դու կեանքն է ինչպէս նաեւ ամէն մարդու գիտակցու-
թիւնը: Ճիշդ ասոր համար կ'ըսենք Աստուած ամենա-
գէտ է եւ ամենուրեք: Ընդհանուր տիեզերքի մէջ
միայն մէկ գիտակցութիւն կայ: Ան ալ Աստուծոյ
գիտակցութիւնն է, որ ամէն անհատ իր կեանքի ըն-
թացքին կարող է անոր մէկ փոքր մասը իր մէջ
յայտնաբերել: Թէ ինչ աստիճանի գիտակցութեան
մակարդակ մը կը կարողանանք մեր մէջ կերտել
կախեալ է ինչ աստիճանով կը կարողանանք մեր մէջ
Քրիստոս յայտնաբերել: Ինչ աստիճանով Քրիստոս
կը յայտնուի անհատին մէջ կ'որոշէ ինչ աստիճանով
«տեսանելի»՝ զգալի կ'ըլլայ իր զօրութեան մարմինը
ուրիշներուն: Ինչ որ տեսանելի է փառապսակ (aura) կը

կոչուի, որ կը շրջապատէ անհատին ֆիզիքական մարմինը: Ան մարդուն զօրութեան մարմնին մաս կը կազմէ: Յստակատեսը անհատին փառապսակի փայլէն եւ գոյնէն կը հասկնայ խնդրոյ առարկայ անհատին հասած մակարդակը: Յիսուս Քրիստոս Իր այս կարողութեամբն էր որ կը բուժէր անոնք որոնք կը տառապէին իրենց կեանքի անբաղձալի պատահարներով՝ հիւանդութիւններով: Ան կարող էր տեսնել անոնց զօրութեան մարմինը եւ հասկնալ թէ այդ պատահարներէն սորված էին իրենց դասերը, թէ ոչ: Անոնք, որոնք սորված էին կը բուժէր:



ՄԱՐԴՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԵԱՆՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ

«Պատասխանի եր ԶովՀաննէս՝ եւ ասէ. Ո՛չ կարէ մարդ առնուլ յանձնէ՝ եւ ո՛չ ինչ ելէ ե ո՛չ իցէ որոտալ նմա յերկնից ՚ի վերոտոյ: Դո՛ւք յէպէ՛ն վկայէ՛ն ինչ, զի ասացի յէպէ՛ն թէ շէ՛մ եւ Բրիստոսն, այլ թէ առաջեալ եմ առաջի նորա: Որ ունի Հարսն, նա՛ է փեսայ, իսկ Բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, որախոտեամբ որախ լինի վասն յայնի փեսային: Ըրդ՝ այս որախոտեանն որ իմա է լցեալ է: Նմա պարդ է ածել, եւ ինչ մեղմանալ»: (ԶովՀաննէս Գ:27-30)

«ՅովՀաննէս պատասխանեց. «Մարդ մը ոչինչ կրնայ ստանալ՝ եթէ երկիրքէն տրուած չըլլայ իրեն: Դո՛ւք ձեզմէ կը վկայէք ինծի Համար՝ թէ ըսի. Ես Քրիստոսը չեմ, Հապա զրկուած եմ անոր առջեւէն: Ա՛ն որ ունի Հարսը՝ անիկա՛ է փեսան. բայց փեսային բարեկամը, որ կը կենայ եւ կը լսէ զայն, մեծապէս կ'ուրախանայ փեսային ձայնին Համար: Ուրեմն ահա՛ լիացած է իմ ուրախութիւնս: Պէտք է որ ան մեծնայ, իսկ ես՝ պզտիկնամ»»:

Ընդհանուր առմամբ նման համարներ մեկնաբանուած են իրենց բառացի իմաստներով: Այդ հիման վրայ ՅովՀաննէս Մկրտիչ սկսաւ իր քարոզչութիւնը Յիսուսէ առաջ եւ յետոյ Յիսուս եկաւ եւ ՅովՀաննէսի քարոզչութիւնը «մեղմացաւ»՝ «անհետացաւ» եւ Յիսուս սկսաւ իր առաքելութեանը: Ճշմարտութիւնը այն է թէ ՅովՀաննէս Մկրտիչի այս պարզ խօսքերուն կարեւորութիւնը եւ բուն սորվեցողացածները անոնց վերացական իմաստին մէջն են: ՅովՀաննէս Մկրտիչ «Ո՛չ կարէ մարդ առնուլ յանձնէ՛ եւ ո՛չ ինչ ելէ՛ ո՛չ իցէ՛ սուեալ նմա

յերկնից 'ի վերուստ» խօսքով կը յայտարարէ թէ մարդու մը բոլոր կարողութիւնները եւ իր կեանքին պատահարները անհատին զօրութեան մարմնոյն որակէն եւ զօրութեան մէջի տեղեկութեան համաձայն են: «Երկինք»-ը Ս. Հոգիի զօրութեան ազդավայրն է:

Յովհաննէսի «զի ասացի ձեզ թէ չէ՛մ եւ Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա» ըսած այս խօսքը կը ներկայացնէ այն իրողութիւնը, որ ամէն անհատ իր մէջ Քրիստոսի ներկայութիւնը ունենալով հանդերձ ինք Քրիստոսը չէ, որով Քրիստոս իր հոգին ըլլալով հանդերձ Ան իր մէջ լրիւ չէ յայտնուած եւ անհատը Յիսուսի նման Աստուածային բնոյթ չէ յայտնաբերած: Նախ յայտնուած է մարդուն անհատականութիւնը եւ իր մարդկային բնոյթը: Մարդ երկու տարեկանին՝ իր մանկութեան, կը տեղեկանայ՝ կը գտնէ իր «Ես»-ը եւ կը փարի անոր: Ան տակաւին իմացականութիւն չունի, որով դատելու եւ զատելու կարողութիւնն ալ չունի: Քսանմէկ տարեկանէն վերջ անհատը լրիւ կազմուած ուղեղ մը, միտք մը եւ իմացականութիւն մը կ'ունենայ, ինչպէս նաեւ տրամաբանելու, դատելու եւ զատելու կարողութիւնները: Այլեւս ինք պատասխանատու է իր ապագայ կենցաղին, ինչպէս նաեւ իր կեանքի ընթացքին բոլոր պատահարներուն: Դժբախտաբար մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը մինչեւ խոր ծերութիւն, նման երկու տարու մանուկի մը, կը մնայ իր «Ես»-ին ազդեցութեան տակ: Այս հիման վրայ հոգեկան կեանքի նկատմամբ մենք տակաւին մանուկներ ենք: Իսկ Յովհաննէս Մկրտիչի ըսածը մեզի կը սորվեցնէ մեր կեանքին նպատակը: Մարդ իր կեանքը կը սկսի իր մարդկային բնոյթով, իր անհատականութեամբ եւ իր մարդկային գիտակցութեան մակարդակով: Յովհաննէս Մկրտիչ փոխաբերաբար աս էր, որ կը ներկայացներ: Ան վերացաբար կ'ըսէ,

Թէ մարդուն կեանքին նպատակը Քրիստոսը իր մէջ
յայտնաբերելն է: Ան իր մարդկային միջոցները պարտ
է օգտագործել իրականացնելու համար իր կեանքին
նպատակը: Մարդ արարած իր դատողութեամբ եւ
զատելու կարողութեամբ պարտ է յարիւ դէպի իր
ներքին Քրիստոսին եւ ինքզինք ձերբազատել իր
«Ես»-էն: Մարդուն մէջ Քրիստոսի յայտնութեան կը
յաջորդէ Աստուածային բնոյթին յայտնութիւնը: Աս է
Յովհաննէսին ըսած. «Նմա պարտ է աճել, եւ ինձ
մեղմանա՛լ»-ին իմաստը՝ Քրիստոսի յայտնութիւնը եւ
«Ես»-ին ազդեցութեան անհետացումը: Ըստ Յովհան-
նէսի ըսածին «փեսան» Քրիստոսն է եւ մենք Քրիստոսի
«հարսը»: Սովորաբար հարսը պէտք է իր հաւանու-
թիւնը տայ փեսացուին հետ ամուսնանալու եւ պսակի
խորհուրդով հարս ու փեսայ կը միանան: Մարդուն
ընտրած կենցաղը կը ներկայացնէ իր որոշումը նկատ-
մամբ «փեսացուին»: Այն անձը որ կը հետապնդէ
կատարելութեան ուղին կը հաւանի այդ միութեան եւ
մարդուն անհատականութիւնը եւ Քրիստոս կ'ըլլան
մէկ «մարմին» եւ մէկ «հոգի»՝ «հարս ու փեսայ»:
«Փեսայ»-ին բարեկամը Աստուածահաճոյ կենցաղ ունե-
ցող մարդուն անհատականութիւնն է, որ «եւ լսէ նմա,
ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային»,
այսինքն՝ Քրիստոսի յայտնութեամբ ինք երանու-
թեան մէջ կ'ըլլայ: Այնուհետեւ մարդուն «Ես»-ը իր
անհատին վրայ ունեցած բոլոր ազդեցութիւնը կը
կորսնցնէ եւ միայն Քրիստոս կը գործէ անձին մէջ եւ
ամէն ինչ կ'ըլլայ ըստ Աստուծոյ՝ Քրիստոսի կամքին:
Ահա՛, աս է իմաստը «Նմա պարտ է աճել, եւ ինձ
մեղմանա՛լ»-ին:



Ան որ Կո՛ւ Գալ Երուսաղէմ

«Որ 'ի վերոսացն Գալ, 'ի վերոյ է ինչ
սամեանյն, որ յերկրէ ասորի է. յերկրէ՛ է՛ ե-
րկրէրէ՛ խօսի: Որ յերկնիցն Գալ, սոր ինչ երես
է- սոր լուս-ս, վկայէ՛. է- սվկայո-թիւն նորա
ո՛չ ո՛վ ընդո-նի: Որ ընդո-նի սվկայո-թիւն
նորա՝ կնեաց թէ Լսորո-ած ճշմարիտ է: Գի սոր
Լսորո-ածն առաքեաց՝ սքան Լսորո-ծոյ խօսի սի
ո՛չ եթէ շափով ցոյ Լսորո-ած սհոգիին: Հայր
սիրէ՛ սորդի, է- սամեանյն ինչ՝ է՛ր 'ի յե-ն
նորա: Որ Հա-սարայ յորդի, ընդո-նի՝ սկեանն
յա-իցեանական. է- որ ո՛չ Հնասանդի որդոյ,
ո՛չ ցեոցէ սկեանն. այլ Բարկո-թիւն Լսորո-ծոյ
մնայ 'ի վերայ նորա»: (Յովհաննոս Գ:31-36)

«Ա՛ն որ կու գալ վերէն՝ բոլորէն վեր է: Ա՛ն որ երկրէն
է՛ երկրաւոր է, ու կը խօսի երկրէն. ա՛ն որ կու գալ
երկինքէն՝ բոլորէն վեր է, եւ ինչ որ տեսաւ ու լսեց՝ կը
վկայէ անոնց մասին, եւ ո՛չ մէկը կ'ընդունի անոր
վկայութիւնը: Ա՛ն որ կ'ընդունի անոր վկայութիւնը,
կը կ'նքէ թէ Աստուած ճշմարտախօս է. որովհետեւ ա՛ն
որ Աստուած զրկեց՝ կը քարոզէ Աստուծոյ խօսքերը,
քանի որ Աստուած անոր չափով չի տար Հոգին: Հայրը
կը սիրէ Որդին, եւ ամէն բան տուած է անոր ձեռքը:
Ա՛ն որ կը Հաւատայ Որդիին՝ ունի յաւիտեանական կեան-
քը. իսկ ա՛ն որ չ'անսար Որդիին՝ պիտի չտեսնէ կեանքը,
Հապա Աստուծոյ բարկութիւնը կը մնայ անոր վրայ»:

*Այս համարները բացառիկ տեղեկութիւններ կու
տան մարդկային կեանքին մասին: «Վերէն» եկողը
անտարակոյս Քրիստոսն է, որ ամէն անհատի հոգին եւ
ճշմարիտ իսկութիւնը՝ կեանքը եւ գիտակցութիւնն է:
Հետեւաբար Քրիստոսն է, որ կը վկայէ մեր գործած
բոլոր մեղքերը ինչպէս նաեւ մեր կերտած առաքինու-*



Թիւնները: Հետեւաբար գրուած է. «Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես եւ զոր լուաւ, վկայէ՛. եւ զվկայութիւն նորա ո՛չ որ ընդունի»: Իր վկայութիւնը՝ գիտակցիլը նաեւ պատճառն է մեր կեանքի բոլոր հաճելի եւ անբաղձալի պատահարներուն: Բայց մարդ կարող չէ այս իրողութիւնը հասկնալ, եւ չ'ընդունիր թէ իր կեանքի բոլոր պատահարներուն ճարտարապետը ինքն է եւ անոնք բոլորն ալ իր ցանած «հունտ»-երուն հունձքերն են. այս պատճառով ալ գրուած է. «Եւ զվկայութիւն նորա ո՛չ որ ընդունի»: Անհատին մէջ միայն Քրիստոսն է որ Աստուծոյ կամքը անոր կողմ տայ: Ըստ «Ձի զոր Աստուածն առաքեաց՝ զբա՛նս Աստուծոյ խօսի զի ո՛չ եթէ չափով տայ Աստուած զհոգին» նախադասութեան պարզած գաղափարին, մեզի Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը սահմանափակ չափով տրուած է, իսկ Քրիստոսին անհունօրէն: Անհատին մէջ Քրիստոսի ներկայութիւնը Աստուծոյ ներկայութիւնը, հետեւաբար Աստուածային բոլոր կարողութիւններն ալ Քրիստոսի միջոցով մեզի տրուած կ'ըլլայ: Եթէ մարդ «հաւատայ» Քրիստոսին, այսինքն գործէ ըստ Անոր կամքին եւ իր կեանքին մէջ կիրարկէ Անոր բոլոր սորվեցուցածները, կ'ունենայ յաւիտենական կեանք: Յաւիտենական կեանքըն ալ ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է: Իսկ անոնք, որոնք չեն հնազանդիր Քրիստոսի կը մնան ժամանակի դրութեան մէջ, որ կը ներկայացնէ վերամարմնացումը: Հետեւեալ նախադասութեան՝ «ո՛չ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ՝ ի վերայ նորա» իմաստն ալ կը նշանակէ յաւիտենական կեանքի կորուստը եւ մեր գործած մեղքերուն համար ալ այն «պարտք»-երը որոնց կ'ենթարկուինք: Այդ «պարտք»-երը՝ մեր կեանքի պատահարները ներկայացուած են իբրեւ Աստուծոյ բարկութիւնը:

ԱՍՏՈՒԱԾ ՈՐՈՂԻ ԿՈ ԼԱԷ

«Պատասխանի եր այրն՝ է- ասէ ցնոսա. Ըյդ
իսկ էն սէանշելիէ՛լ գի դո-ւ՛ ո՛չ Գիբէ՛լ ուսոր՛
իցէ է- գիմ գաշա՛ եթա՛ց: Գիբէ՛մէ՛լ գի Լսորո-ւս՛
մեղաւորաց ո՛չ լսէ թայց թէ ասորո-ւս՛ ապա՛շտ
իցէ, է- գլխամ նորա առնիցէ. նմա՛ լսէ: Ի յա-ի-
րենից ո՛չ ու-ա-՛ եթէ եթա՛ց ո՛չ գաշա՛ կո-րի
'ի Ժնէ՛ կոյր Ժնէլոյ: Եթէ ոչ յԼսորո-ւս՛ եր այրն
այն ո՛չ կարէր առնել ինչ»: (Յովհաննոս Թ:30-33)
«Մարդը պատասխանեց անոնց. «Այդ է զարմանալին,
որ դուք չէք գիտեր թէ ուրկէ՛ է ան, թէպէտ ի՛նք
բացաւ իմ աչքերս: Գիտենք թէ Աստուած մտիկ չ'ընէր
մեղաւորներուն. բայց եթէ մէկը աստուածապաշտ ըլլայ
եւ անոր կամքը գործադրէ՛ մտիկ կ'ընէ անոր: Դարերու
սկիզբէն ի վեր լսուած չէ, որ բացած ըլլայ ծնունդով
կոյրի մը աչքերը: Եթէ անիկա Աստուծմէ՛ չըլլար,
ոչ ի՛նչ կրնար ընել»»:

Այս խօսքերը ի ծնէ կոյր մարդու մը իր աչքերուն
Յիսուսի կողմէ՛ բուժումէն յետոյ ըսածներն են:
Հետաքրքրական մասը հետեւեալն է. «Գիտեմք զի
Աստուած՝ մեղաւորաց ո՛չ լսէ բայց թէ աստուածապաշտ
որ իցէ, եւ զկամս նորա առնիցէ. նմա՛ լսէ»: Յամայն
մարդկութիւնը առտու-գիշեր Աստուծոյ կ'աղօթէ եւ
Աստուծմէ՛ կը խնդրէ զանազան «բաներ»՝ առողջութիւն,
հարստութիւն, երջանկութիւն ... եւայլն: Եւ չատ անգամ
մարդոց այս փափագները չեն իրականանար: Երբ մարդ
խակական Աստուածապաշտ է եւ իր կեանքին մէջ կը
կիրարկէ Քրիստոսի բոլոր սորվեցուցածները, այն
ատեն Աստուած կը լսէ անոր բոլոր խնդրանքները:
Պէտք է հասկնանք թէ ճշմարիտ Աստուածապաշտը իր
«Ես»-ը եւ իր «Ես»-էն եկած բոլոր ցանկութիւնները
բոլորովին անտեսողն է: Հետեւաբար ինք իր անհատա-
կանութեան դրական բեւեռին յառած կը փափագի

*միայն իր ներքին Քրիստոսէն եկած յորդորները եւ
ցանկութիւնները գործադրել: Երբ անոնք Քրիստոսի՝
Աստուծոյ կամքն են, արդեօք կարելի է՞, որ չիրակա-
նանան:*





-Բ-

ԲԱՅԱՌԻԿ ՀԱՄԱՐՆԵՐ



ԲԱՅԱՌԻԿ ՀԱՄԱՐՆԵՐ

Աւետարաններուն մէջ կան մի քանի բացառիկ համարներ, որոնք կը կարօտին մասնաւոր վերլուծման:

Ընդհանուր առմամբ բացառութիւնները միշտ աւելի կարեւոր են եւ աւելի լաւ կը սորվեցնեն՝ հասկացողութիւն կու տան, քան թէ հասարակ տեղեկութիւնները:

Այս բացառութիւններէն մին Յովհաննու Աւետարանէն առնուած հետեւեալ երկու համարներն են, որոնք իրարու հակասական ըլլալ կը թուին:

«Եւ ասէ Յիսուս. Ի դադարս Եկի յաշխարհս յայս, զի որ ոչն պէտքնէն՝ պէտքէն եւ որչափ պէտքնէն՝ կոտորացի՛ն»: (Յովհաննու Թ:39)

«Յիսուս ըսաւ. «Ես այս աշխարհը եկայ՝ դատաստանի համար, որպէսզի չտեսնողները՝ տեսնեն, իսկ տեսնողները՝ կուրանան»»:

«Զի ո՛չ ասալեաց Լադրաւ զորդի իւր յաշխարհ՝ Դէ դադարս զաշխարհ. այլ զի փրկեացի աշխարհ նո՛ւա»»: (Յովհաննու Գ:17)

«Քանի որ Աստուած աշխարհ զրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՛ որպէսզի աշխարհը փրկուի անով»:

Այս երկու մէջբերումներէն ըստ առաջինին, Յիսուս Քրիստոսի գալուստին նպատակը աշխարհը դատելըն է: Իսկ համարին վերջին մասը կը թուի վրդովիչ ըլլալ: Անտարակոյս Յիսուս սորվեցնելու համար եկած էր, հետեւաբար «զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն»-ը պատշաճ է, բայց «եւ որք տեսանենն՝ կուրացի՛ն»-ն է որ վրդովիչ է: Այս նիւթին նկատմամբ ստորեւ յաւելեալ խորհրդածութիւններ պիտի ներկայացուին: Վերադառնալով վերեւի յիշուած հակասութեան, երկրորդ մէջբերումին մէջ Յիսուս Քրիստոս կ'ըսէ, թէ Աստուած իր

Որդին աշխարհ դրկեց աշխարհը փրկելու համար եւ ոչ թէ դատելու համար:

Ո՞րն է ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոս փրկելու եկած էր, թէ՛ դատելու: Արդեօք կարելի է^օ, որ աւետարանիչը սխալ հասկցած եւ սխալ ալ գրած ըլլայ: Ընդհակառակը, ան նպատակաւոր է, որպէսզի հակայական եւ տարբեր հասկացողութիւն մը տայ: Ընդհանուր առմամբ մենք՝ քրիստոնեաներս, Յիսուս Քրիստոսը կը նկատենք Աստուծոյ միածին Որդին եւ Աստուծոյ մարդեղութիւնը: Ճիշդ է, թէ քրիստոնէութեան սկզբնական շրջանին՝ 451 թուականի Քաղկեդոնի տիեզերական ժողովին եւ անկէ վերջ, Յիսուսի բնութեան նկատմամբ բաւական վիճաբանութիւններ տեղի ունեցած են թէ ան միայն մարդկային բնոյթ ունէր կամ միայն Աստուածային, եւ կամ՝ երկուքն ալ: Արեւելեան եւ արեւմտեան քրիստոնէութեան մէջ այս տարբերութիւնը մօտաւորապէս հարիւր տարի շարունակած է: Ըստ մեր «Հաւատամք»-ին Յիսուս կատարեալ մարդ էր: Հետեւաբար Յիսուս պէտք էր մարդկային բնոյթ ունենար: Ըստ Ս. Գիրքին բոլորս ալ Աստուծոյ որդիներ ենք (որդիները գրուած փոքր «ո»-ով): Քրիստոս՝ Աստուծոյ Որդին ամէն անհատի ճշմարիտ էութիւնը՝ հոգին է, որովհետեւ ըսուած է, թէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներն են: Քրիստոս միայն Աստուածային բնոյթ ունի: Քրիստոս ամէն անհատի մէջ ըլլալով հանդերձ, անհատը իր խորհուրդ, խօսք ու արարքներով, նաեւ միտքը յաճախ զբաղ զանազան ցանկութիւններով եւ խորհուրդներով, չ'արտօնէր Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ: Հետեւաբար Աստուածային՝ Քրիստոսի բնոյթը իր մէջ յայտնաբերելու կարողութիւնը ունենալով հանդերձ, այդ ուղղութեամբ չի յաջողիր: Յիսուս, իր էութիւնը՝ Քրիստոս լրիւ յայտնաբերած ըլլալով նաեւ ունէր իր մէջ յայտնուած Աստուածային բնոյթը: Ճիշդ

ասոր համար է, որ զինք կը պաշտենք եւ երբ զրենք Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդի, «Որդի»-ն կը զրենք գլխագիր «Ո»-ով, որովհետեւ ականարկութիւնը Քրիստոսին է: Այս հիման վրայ Աւետարաններուն մէջ յաճախ «Յիսուս» եւ «Քրիստոս» փոփոխակի գործածուած են: Անտարակոյս Յիսուս Քրիստոսի բոլոր խօսքերը Յիսուս մարդուն կողմէ ըսուած են: Բայց Ան երբեմն խօսած է իր մարդկային բնոյթէն՝ իբրեւ մարդ՝ Յիսուս եւ երբեմն ալ իր Աստուածային բնոյթէն՝ իբրեւ Քրիստոս՝ Աստուած:

Այս հիման վրայ պէտք է վերլուծենք, մեկնաբանենք եւ հասկնանք վերեւի երկու համարներուն իրարու հետ ունեցած երեւութային հակասութիւնը: Քրիստոս մարդուն էութիւնը՝ հոգին է: Հոգին զօրութիւն է եւ իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ: Այդ տեղեկութիւնը հոն դրուած է անհատին կողմէ իր խորհուրդ խօսք ու արարքներով: Անհատը ըստ իր զօրութեան մարմնին թրթռացումի յաճախականութեան կ'ենթարկուի իր զօրութեան յաճախականութեան ներդաշնակ յաճախականութիւն ունեցող զանազան պատահարներու: Այլ խօսքով ան կը «հնձէ» այն ինչ որ ինք «ցանած» է: Այս դատաստանը կ'ըլլայ իր էութեան կողմէ, հետեւաբար ամենաարդարն է: Իր էութիւնը Քրիստոսն է, հետեւաբար Քրիստոս կ'ըսէ. «Ի դատաստանս եկի յաշխարհս յայտ»:

Բայց Յիսուս մարդը նաեւ իր Աստուածային բնոյթով, հետեւաբար Աստուծոյ մարդեղութիւնը եկաւ համայն մարդկութեան իր օրինակով սորվեցնելու կատարելութեան ուղին, որ է փրկութեան ճամբան: Ան մեզի սորվեցուց ողորմածութիւնը, սէրը, ինքնազոհութիւնը: Ան նաեւ մեզի ցոյց տուաւ մարդուն անհուն կարողութիւնները, ինչ որ մենք գերմարդկային կը համարենք, նոյնիսկ մեր մէջ իրականացնել Աստուածա-

յայտնութիւնը եւ տեսնել ամէն ինչի միականութիւնը, հետեւաբար միանալ Աստուծոյ եւ լուծուիլ Իր մէջ:

Այս հիման վրայ վերեւի երկու համարները ամենեւին իրար չեն հակասեր: Ընդհակառակը, անոնք մեզի կ'օգնեն տարբեր ակնոցով «դիտել» եւ լաւագոյնս հասկընալ Աւետարաններուն մէջի գրուածները:

Այս գլուխին մէջ Աւետարաններէն նկատողութեան առնուելիք յաջորդ համարները հետեւեալներն են: Միայն անոնց մէկ հատը պիտի տեղադրուի հոս:

«Եւ իբրեւ եղեւ առանձինն, Հարցին ցնա որ
պնդաւն էին աշակերտօն Հանդերձ՝ պառակսն:
Եւ առ ցնոսա. Ձեզ րոտալ է Գիտէ՛լ պար-
Հորդա արդայոթեան Լարոթոյ: Բայց նոցա
որ արդատինն էն՝ ամենայն ինչ առակօ՛վ լինի:
Զի րեաանելով րեպեն՝ եւ մի՛ րեպեն, եւ
լսելով լոտեպեն՝ եւ մի՛ իմացին. պի մի՛ երբէ՛լ
դարձցին՝ եւ Խոջին նոցա»: (Մարկոս Դ:10-12)

«Երբ առանձին էր, իր շուրջը եղողները՝ տասներկուքին հետ հարցուցին իրեն այս առակին մասին: Եւ ըստ անոնց. «Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թաղաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն են՝ ամէն ինչ առեղծուած կ'ըլլայ. որպէսզի շատ տեսնեն՝ բայց չըմբռնեն, շատ լսեն՝ բայց չհասկնան, ու դարձի չգան եւ իրենց մեղքերը չներուին»»:

(Տես նաեւ Ղուկաս Ը:10, Յովհաննու ԺԲ:40 եւ Մատթէոս ԺԳ:15)

Այս գլուխին առաջին մէջբերումին վերջին խօսքը վրդովիչ էր եւ գրուած էր, թէ ստորեւ պիտի վերլուծուի: Եթէ յաջող կերպով վերլուծենք այս էջին մէջի մէջբերումը, միւսն ալ բացատրուած պիտի ըլլայ, որովհետեւ Յիսուս Քրիստոս նոյն գաղափարը ասոր մէջ ալ կրկնած է: Բազմաթիւ համարներէն շատ լաւ գիտենք թէ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ համայն մարդկութեան փրկութեան ճամբան սորվեցնելու հա-

մար: Յիսուս Քրիստոս նաեւ բացայայտ կ'ընէ թէ ինք
ամէն ինչ թագնուած խօսած է, որպէսզի միայն անոնք,
որոնք արժանի են հասկնալ իր սորվեցուցած փրկու-
թեան ճամբան՝ Աստուծոյ թագաւորութեան արժանա-
նալու գիտութիւնը, անոնց բացայայտ ըլլայ, իսկ
անոնք, որոնք արժանի չեն, հասկնան միայն անոնց
բառացի իմաստները եւ ոչ անոնց մէջ թագնուած
գիտութիւնը կամ գիտութեան տիրանալու միջոցը:

Յիսուս Քրիստոսի այս խօսքին մէջ յատկանշական
մասը վերջին նախադասութիւնն է: Յիսուս Քրիստոս
թագնուած կը խօսի, որպէսզի մարդիկ չհասկնան, բայց
ան նաեւ կ'ըսէ. «դարձի չգան եւ իրենց մեղքերը
չներուին»: Այս վերջին մասն է, որ կը հակասէ Աւետա-
րաններուն բոլոր սորվեցուցածներուն: Բազում քարո-
զիչներ չեն կրցած հաշտեցնել Յիսուս Քրիստոսի առա-
քելութիւնը եւ իր այս խօսքը: Թէ՛ Մատթէոսի եւ թէ՛
ալ Յովհաննու Աւետարաններուն մէջ Յիսուսին այս
խօսքը ներկայացուած է իբրեւ մէջբերում Հին Կտա-
կարանէն Եսայեայ մարգարէի խօսքը եւ ոչ իբրեւ
Յիսուսի խօսքը:

«Եւ ասէ. երբ եւ ասա յԺողովո՞րդն ցայն.
լսելով լո՞ւիջի՞՝ եւ մի իմասջի՞, եւ Կեսանելով
Կեսջի՞՝ եւ մի Գերասայի՞: Զի Եանձրացաւ սիրոյ
Ժողովո՞րդեանո՞ւ աշտորիկ, եւ ակնջօ՞՛ իւրեանց
Ժանոռնա լոռան. եւ զաշա իւրեանց Կափոցին զի
մի երբէ՞՛ Կեսանիցեն աշօ՞՛, եւ լո՞ւիցեն
ակնջօ՞՛, եւ իմանայցեն սրտիւն, եւ դարձցին՝
եւ Բժշկեցից զնոսա»: (Եսայեայ: Զ: 9-10)

«Այն ատեն ըսաւ. «Գնա՛, ըսէ՛ այս Ժողովուրդին. Շատ
պիտի լսէք՝ բայց պիտի չհասկնաք, Շատ պիտի տեսնէք՝
բայց պիտի չզիտնաք: Այս Ժողովուրդին սիրտը ընդար-
մացուր, Անոր ականջները ծանրացուր եւ աչքերը

գոցէ՛, Որպէսզի իր աչքերով չտեսնէ, ականջներով չլսէ,
Սիրտով չհասկնայ, եւ դարձի չգայ ու չբուժուի»:

Եսայեայ մարգարէի այս խօսքին մէջ կը տեսնենք թէ «մեղքերը չներուին»-ին տեղ «չբժշկուի» գրուած է: Այս տարբերութիւնը պէտք է շփոթութեան պատճառ ըլլայ: Երկուքն ալ նոյն իմաստը ունին: Միթէ բոլոր հիւանդութիւններուն պատճառը մեղքը չէ՞: Երբ Յիսուս հիւանդ մը բուժէր, չէ՞ր ըսեր. «մեղքերդ ներուած են»:

Ըստ աստուածաբաններու ամենահին Աւետարանը կը թուի Թովմասի Աւետարանը ըլլալ, բայց ան պաշտօնական ընդունուած Աւետարաններու մաս չի կազմեր: Ընդունուած Աւետարաններու ամենահինը Մարկոսի Աւետարանն է գրուած 60 թուականին: Այդ ժամանակ գոյութիւն ունէր նաեւ ուրիշ Աւետարան մը եւս, որ կորսուած է եւ այսօր ան այլեւս գոյութիւն չունի: Աստուածաբանները գայն կոչած են «Q» («Q» գիրը Գերմաներէն «Quelle» բառին առաջին գիրն է: «Quelle» կը նշանակէ աղբիւր կամ ակ): Թէ՛ Մատթէոսի եւ թէ՛ Ղուկասի Աւետարանները աւելի վերջ գրուած են եւ ընդհանուր առմամբ անոնք ընդօրինակած են Մարկոսի Աւետարանէն: Այդ պատճառաւ ալ նոյնիսկ անոնց որոշ համարները բառ-առ-բառ յար-եւ-նման են Մարկոսի Աւետարանին: Անոնց Աւետարաններուն մէջ ընդօրինակութիւններ կան նաեւ այդ «Q» կորսուած Աւետարանէն: Յովհաննու Աւետարանը շատ տարբեր է միւս երեքէն եւ գրուած է շատ աւելի ուշ, մօտաւորապէս 100 թուականին:

Այս հիման վրայ արդեօք կարելի է որ թէ՛ Մատթէոսի եւ թէ՛ Յովհաննու Աւետարանիչները տեսնելով Մարկոսի Աւետարանին մէջի վերեւ յիշուած Յիսուսի խօսքին վրդովիչ ըլլալը, փոխած են եւ փոխան գայն վերագրելու Յիսուսին ներկայացուցած են որպէս Հին Կտակարանէն մէջբերում: Հին Կտակարանի Մովսիսական կրօնքի համաձայն Աստուած վրէժխնդիր Աստուած մըն էր: Անտարակոյս ոչ թէ Աստուած

վրէժխնդիր էր, այլ մարդոց Աստուծոյ նկատմամբ հասկացողութիւնը սխալ էր: Բայց Յիսուս մեզի ներկայացուց եւ սորվեցուց Աստուծոյ ոչ թէ վրէժխնդիր այլ սիրոյ Աստուած ըլլալը: Աստուծոյ եւ իր բոլոր կրօնքներուն նպատակն է, որ համայն մարդկութիւնը դարձի գայ եւ մեղքերու թողութիւն գտնէ եւ փրկուի: Ուրեմն Եսայեայ մարգարէին ըսածը, որ ինք զայն կը վերագրէ Աստուծոյ «խօսք»-ին եւ Յիսուսի այս խօսքը կը թուին հակասել այս Աստուծոյին փրկութեան նպատակին:

Արդեօք կարելի է՞ որ Մարկոսի Աւետարանը գրողը (Չորս ընդունուած Աւետարաններէն միայն Ղուկասի Աւետարանն է՝ որ կը կարծուի գրուած ըլլալ նոյն ինքն Ղուկասի կողմէ: Միւս երեք Աւետարաններուն գրողները յայտնի չեն որքան որ ալ անոնց առաքեալներու անուններ տրուած են:) հրեայ մը ըլլալով ինք աւելցուցած ըլլայ այդ մասը, այն ինչ որ ինք սորված էր Հին Կտակարանէն եւ իր յաւելուածականը վերագրած ըլլայ Յիսուսի:

Արդեօք կարելի է՞, որ թէ՛ Եսայեայ մարգարէն, իսկապէս ներշնչուած Աստուծմէ, այդ խօսքը ըսած է, թէ՛ ալ Յիսուս նոյնը ինք նպատակաւոր կրկնած է այդ ճշմարտութիւնը: Եթէ այս վերջին հայեացքը ճիշդ է պէտք է ընդհանուր քրիստոնէութիւնը վերաքննութեան ենթարկէ իր Աւետարանի նկատմամբ ունեցած հասկացողութիւնը եւ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներուն բուն իմաստները:

Եթէ Յիսուսի ըսած այս խօսքին ճշգրտութիւնը ընդունինք եւ զայն նկատենք Աստուծոյ կամքին եւ տիեզերական օրէնքներուն հետ ներդաշնակ, ի՞նչ պէտք է հասկնանք: Կը թուի թէ մարդուն համար կարելի է բարձր որակով Ս. Հոգիի զօրութիւն ստանալ առանց արժանի ըլլալու: Այդ զօրութիւնն ալ կը չէզոքացնէ իր ամբարած ցած յաճախականութեամբ զօրութիւնները, որոնք կը կազմեն իր «մեղք»-երը: Անտարակոյս աս կը

կարօտի բարձր գիտութեան նկատմամբ Աստուծոյ թագաւորութեան: Երբ մարդ գիտութիւնը միայն իր իմացականութեամբ կը ստանայ, ան այդ գիտութեան պատրաստ չ'ըլլար, որովհետեւ ան փորձառութեամբ իր դասը չէ սորված ու իր կենցաղը փոխած: Իսկ փորձառութեամբ ստացուած գիտութիւնը նաեւ կը փոխէ՝ կը բարելաւէ անհատը: Երբ անհատը կը շարունակէ եսասէր ըլլալ, իր ստացած գիտութեամբ կը կարողանայ նոյնիսկ գերմարդկային զօրութիւններու տէր ըլլալ, բայց ան աւելի վնաս կը հասցնէ թէ՛ ինք իրեն եւ թէ՛ ուրիշներուն: Մարդիկ այս կացութիւնը սեւ մոգութիւն կոչած են: Իմացական գիտութիւնը նոյնիսկ եթէ մարդուն գերմարդկային կարողութիւններ տայ, ան զայն փրկութեան չ'առաջնորդեր այլ՝ ընդհակառակը կործանման: Մարդ իր գործած մեղքերուն «պարտքերը վճարելով»՝ ցանած հունտերուն հունձքերը քաղելով, փորձառութեամբ կը սորվի: Նման դասերով՝ կեանքի պատահարներով սորվուած գիտութիւններն ալ մեզ հիմնականօրէն կը փոխեն դէպի լաւ եւ մեր քայլերը կ'առաջնորդեն դէպի կատարելութեան ուղին: Ուրեմն Յիսուսի ըսածը բացարձակապէս վրդովիչ չէ այլ մեր օգտին համար է: Ասոր նպատակն ալ Ս. Հոգիի զօրութեան օրէնքները մեզի պատշաճ կերպով սորվեցնելն ու օգտագործելն է, անտարակոյս ընդհանուրի օգտին համար, որպէսզի փրկութեան արժանի ըլլանք:

Յենեւով Յիսուսի այս խօսքին առաքեալները եւ առաքելական եկեղեցիները ունին ձեռնադրութեան խորհուրդը: Հայաստանեայց եկեղեցին ձեռնադրութեան ինը աստիճաններ ունի: Ըստ Յիսուս Քրիստոսի իր աշակերտներուն տուած «մարգարիտները խոգերուն առջեւ մի նետէք» յորդորին, առաքեալներն ալ այդ խորհուրդները՝ գիտութիւնը տուին այն անձերուն, որոնք նկատեցին այդ գիտութիւնը ստանալու արժա-

նի: Եկեղեցւոյ մէջ ալ նոյն սովորութիւնը կը շարունակէ: Ձեռնադրութեան իւրաքանչիւր աստիճանին յատուկ պատասխանատուութիւններ եւ պարտականութիւններ կը տրուին անհատին՝ համապատասխան իր հասկացողութեան մակարդակին: Անտարակոյս ձեռնադրութիւնները կ'ըլլան մարդոց կողմէ, որոնք ենթակայ են մարդկային տկարութիւններու ինչպէս նաեւ սխալմունքներու: Հետեւաբար ժամանակի ընթացքին, ձեռնադրութիւնները կրնան կատարուիլ փոխանակ անհատին արժանելիութիւնը նկատի առնուելու, կրնան նկատի առնուիլ մենաշնորհումի եւ կողմնակցութեան հրապոյրը:

Հոգեւոր ճանապարհին մէջ մարդուն տրուած հասկացողութեան մակարդակի բարձրացումն ալ անհատին իր ներքին Քրիստոսէն իրեն տրուած «ձեռնադրութիւն» մըն է, ինչ որ արդիւնքն է Քրիստոսին անհատին տուած Ս. Հոգիի յաւելեալ զօրութեան: Նման «ձեռնադրութիւն» մը կը գերազանցէ ոեւէ մարդու տուած աստիճանը: Եթէ Աստուծոյ թագաւորութեան թագուն գիտութիւնները անպատրաստից անձերու տրուի, այդ կ'ըլլայ Յիսուս Քրիստոսի հանդէպ անհնազանդութիւն, ինչպէս նաեւ ունենալ յանդգնութիւնը ընել այն, ինչ որ Յիսուս Ինք չէր ըրած եւ մեզի ալ պատուիրած էր չընել:

Եկեղեցւոյ մէջ ձեռնադրութիւնը խորհուրդ մըն է: Եւ այդ խորհուրդին ծէսը արտաքին արարքն է, որ կը ներկայացնէ ներքին Քրիստոսի անձին տուած ձեռնադրութիւնը, անտարակոյս եթէ ձեռնադրողը արժանի է եւ ձեռնադրողն ալ խորհրդապաշտ:



ՍԱՂՄՈՍ ԽԵ: 11

(Սաղմոս ԽԶ: 10)

Կանխեցէ՛լ եւ շաներո՛ւն զի ես եմ Աստուծո՛ւ
Հանդարտեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ ես եմ Աստուծո՛ւ

Be still, and know that I am God



ԿԱՆԽԵՅԷ՛Ք ԵՒ ԾԱՆԵՐՈ՛ՒՔ ՉԻ ԵՍ ԵՄ ԱՍՏՈՒԾՈ՛Ւ

ԿԱՆԽԵՅԷ՛Ք ԵՒ ԾԱՆԵՐՈ՛ՒՔ ՉԻ ԵՍ ԵՄ

ԿԱՆԽԵՅԷ՛Ք ԵՒ ԾԱՆԵՐՈ՛ՒՔ

ԿԱՆԽԵՅԷ՛Ք



- Գ -

ԹՈՎՄԱՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ



ԹՈՎՄԱՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

Այս հատորին յառաջաբանին Բ. մասին մէջ որոշ տեղեկութիւն մը տրուած է Թովմասի Աւետարանի մասին: Այս հանգրուանին պատշաճ է քիչ մը եւս ընդարձակել այդ տրուած տեղեկութիւնը:

Ինչպէս յառաջաբանին մէջ գրուած է Եգիպտոսի Նակ Համմատի (Nag Hammadi) գիւղին մօտ 1945-ին կատարուած պեղումներու ընթացքին գտնուած են կարգ մը գրութիւններ, որոնցմէ մին է Թովմասի Աւետարանը՝ գրուած Ղպտիերէն, ամբողջութեամբ, նաեւ նոյն Աւետարանէն երկու յունարէն տարբերակներ՝ ոչ-ամբողջական վիճակով:

Ըստ աստուածաբաններու ուսումնասիրութեան կը գուշակուի թէ այդ օրինակները ընդօրինակուած ըլլան մօտաւորապէս Ք.Յ. 400-ական թուականներուն: Որքան որ վստահ չեն, անոնք կը կարծեն թէ Թովմասի Աւետարանը գրուած է երկրորդ դարուն, իսկ ոմանք ալ կը կարծեն թէ գոնէ անոր մէկ մասը գրուած է շատ աւելի առաջ, նոյնիսկ միւս չորս կանոնական (canonical) Աւետարաններէն ալ աւելի առաջ՝ Արամերէն (Aramaic) կամ Ասորերէն (Syriac) լեզուով, որոշ մասերը գրուած են նոյնիսկ Յիսուսի ժամանակ: Անտարակոյս, այս ուղղութեամբ փաստեր գոյութիւն չունին:

Այս Աւետարանի հեղինակութիւնը վերագրուած է Թովմասի (Thomas Didymous Judas): Հետաքրքրականը այն է, որ ո՛չ Թովմաս եւ ո՛չ ալ Տիտիմոս անուններ են, այլ՝ միայն մակդիրներ: Հեղինակին անունը Յուդա է: Թովմաս Արամերէն լեզուով եւ Տիտիմոս Յունարէն լեզուով երկուորեակ կը նշանակեն, որով Թովմասը պէտք է երկուորեակներէն մին ըլլայ: Ոմանք ալ կ'ըսեն թէ Թովմաս Ֆիզիքապէս Յիսուսի շատ կը նմանէր, հետեւաբար այդ մակդիրը իրեն տրուած էր: Դարեր վերջ թովմաս մակդիրը սկսուած է որպէս յատուկ անուն գործածուիլ:

ԹՈՎՄԱՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ՀԱՄԱՐ 1

Եւ Ան ըսաւ. «Ան, որ բառերուն մեկնաբանութիւնը կը գտնէ, մահ պիտի չճաշակէ»:

Յիսուս Իր այս նախադասութեամբ բացայայտ կ'ընէ, թէ Իր խօսքերը վերացական են եւ կը կարօտին մեկնաբանութեան: Այս համարը կը համապատասխանէ կանոնական Աւետարաններուն մէջ գրուած Յիսուսի հետեւեալ խօսքին.

«Հարցանէին զնա աշակերտին՝ թէ զի՞նչ իցէ առանձն: Եւ նա՝ ասէ. Ձե՛զ քոռեա՛լ է զխորհրդոս արեւոյթեան Լսարանոյ, բայց այլոցն առանձն է զի քեացեն՝ եւ մի՛ քեացեն, եւ լոռիցեն՝ եւ մի՛ իմասցին:» (Լուկաս Ը:9-10)

«Իր աշակերտները հարցուցին իրեն. «Ի՞նչ է իմաստը այս առակին»: Ան ալ ըսաւ. «Ձեզի՛ տրուած է հասկնալ Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ. որպէսզի նայելով՝ չտեսնեն, ու լսելով՝ չհասկնան»»:

Նոյնիսկ եթէ անձը հասկնայ Յիսուսի ըսած խօսքերուն բուն՝ վերացական, իմաստները, բայց զանոնք միայն մնան որպէս գիտութիւն իր իմացականութեան եւ յիշողութեան մէջ եւ ինք զանոնք չիւրացնէ եւ զանոնք չգործադրէ իր կեանքին մէջ, անոնք իրեն համար անօգուտ կ'ըլլան: Անհատն ալ կարող չ'ըլլար յաւիտենական կեանքի արժանանալ եւ մահ չտեսնել: Յաւիտենական կեանքը մարմնին համար չէ, այլ՝ մարդուն անհատականութեան համար: Ան մարդուն գիտակցութեան մակարդակի բարձրացումի արդիւնքն է: Ան մարդուն մէջ Քրիստոսի յայտնութիւնն է: Ան միայն ներկային մէջ կարելի է, որովհետեւ միայն ներկան յաւիտեան է, թէ՛ անցեալը եւ թէ՛ ապագան երկուքն ալ պատրանքային են:

ՀԱՄԱՐ 2

Յիսուս ըսաւ. «Մեն որ կը փնտռէ, թող չդադրի փնտռելէ մինչեւ որ գտնէ: Երբ գտնէ պիտի խռովի: Իսկ եթէ խռովի պիտի ապշի եւ Բոլորին վրայ պիտի թագաւորէ»:

Այս համարը իսկապէս յատկանշական է: Ասոր իմաստը երկու զատ մակարդակներու վրայ պէտք է նկատողութեան առնուի:

Առաջին հերթին անհատը պէտք չէ դադրի փնտռելէ մինչեւ որ «գտնէ»՝ հասկնայ Յիսուսի ըսածներուն բուն՝ վերացական եւ փոխաբերական, իմաստները: Երբ ան վերջապէս կը հասկնայ այդ իմաստը անտարակոյս պիտի խռովի: Խռովութեան պատճառը իր հոգեւոր ճանապարհին մէջ, իր կեանքին մեծ մասը վատնած ըլլալու անդրադարձումն է: Իսկ ապշիլն ալ իր գտածին՝ հասկցածին իմաստին գեղեցկութեան պատճառովն է: Երբ անհատը նման հասկացողութեան մը հասնի, ինք կը թագաւորէ իր բոլոր առաջուայ հաւատացածներուն վրայ, այսինքն այն հասկացողութիւնները կը վերագրէ ցած գիտակցութեան արդիւնք: Երբ Յիսուսի ըսածներուն բուն իմաստները կը հասկըցուին, անհատն ալ իր այս կեանքի պարտականութեան կը գիտակցի եւ չի դադրիր «փնտռելէ»՝ մինչեւ այդ պարտականութեան յաջողութեամբ պսակաւորումը: Աս ալ կը ներկայացնէ այս համարին երկրորդ մակարդակի վրայի հասկացողութիւնը, որ յաջորդաբար ներկայացուած է:

Բազմաթիւ են այն անձեր, որ կը փնտռեն եւ կը փափաքին ունենալ յաւիտենական կեանքը: Անտարակոյս կան անձեր, որոնք Աստուծոյ գոյութեան եւ յաւիտենական կեանքի գոյութեան չեն հաւատար, հետեւաբար այդ ուղղութեամբ ալ ոչ մէկ ջանք կ'ընեն: Յիսուսին խօսքը անոնց համար է, որոնք կը ձգտին յաւիտե-

նական կեանքին: Շատեր կը կարծեն թէ իրենց հաւատացածով եւ երկրորդ անգամ մկրտուելով կ'ունենան վերստին ծնունդ եւ այդպէսով արժանացած են յաւիտենական կեանքին: Անոնք յաւիտենական կեանքին իրականացումը կ'ակնկալեն իրենց մահէն դարեր վերջ՝ աշխարհի վախճանին, իրենց մահացած՝ փտած եւ անհետացած մարմինն յարութեամբ: Նման հաւատալիքներով եւ յաւիտենականութեան արժանացած ըլլալու գոհունակութեամբ ալ կը դադրին պրպտելէ: Երբ Յիսուս կ'ըսէ. «չդադրի փնտռելէ մինչեւ որ գտնէ» յայտնի կ'ընէ, թէ ոչ թէ յաւիտենական կեանքի արժանեւիութիւնը, այլ փորձառութիւնը պէտք է ըլլայ հիմա՝ այս ներկայ կեանքի ընթացքին եւ ոչ մահէ ետք՝ ապագային: Անտարակոյս յաւիտենական կեանքը կու գայ անհատին իր կերտած բարձր գիտակցութեամբ, որ կը համապատասխանէ Քրիստոսի յաւելեալ յայտնութեան իր մէջ: Քրիստոսի շնորհած բարձր գիտակցութեամբ անհատը աշխարհը կը տեսնէ իր ճշմարտութեամբը: Որովհետեւ անհատին առաջուայ աշխարհի ըմբռնումը պատրանքայինն էր, որ ինք ընդունած էր իբրեւ ճշմարտութիւն: Հետեւաբար անհատը կը խռովի: Անհատի այս փորձառութեան առաջին հանգրուանին խռովութիւնը պէտք չէ զարմանք պատճառէ: Այն ինչ որ անհատը իր ամբողջ կեանքի ընթացքին նկատած էր որպէս ճշմարտութիւն եւ ըստ այնմ ապրած իր կեանքը, յանկարծ ակնթարթի մը մէջ այդ կարծեցեալ «ճշմարտութիւն»-ը փոխուած ու անհետացած էր: Միթէ նման կացութիւն մը խռովութեան տեղի չի՞ տար: Իսկ խռովութենէ վերջ անհատը իր փորձառութեան երկրորդ հանգրուանին ճշմարտութեան գերիրապաշտ կացութիւնը տեսնելով կ'ապշի, որովհետեւ նման փորձառութիւն մը առաջուց իր ենթագիտակցութեան մէջ տեղ չէր գրաւած: Անհատը կ'ապշի անոր անհունութեան,

գեղեցկութեան, միականութեան, պարզութեան եւ սիրոյ փորձառութեամբը: Այդ փորձառութեան երրորդ հանգրուանին, երբ անհատը կ'ըմբռնէ ճշմարտութեան անհունութիւնը, գեղեցկութիւնը, բոլորին միականութիւնը, կարողութիւնը եւ բուն սէրին ինչ ըլլալը, ան կ'իւրացնէ այդ բոլորը, կը լուծուի այդ միականութեան մէջ, կ'ըլլայ Քրիստոսի հետ մէկ: Ահա՛, ճիշդ ասոր համար Յիսուս կ'ըսէ. «Բոլորին վրայ պիտի իշխեմ»: Այդ յաւիտենական կեանքի փորձառութիւնը Աստուծո՛մէ տրուած պարգեւ մըն է բոլորին, որոնք ի գին ամէն բանի բնաւ չեն դադրիր պրպտելէ եւ համբերութեամբ, յարատեւութեամբ, հաւատքով այդ կ'ընեն իրենց կեանքի գլխաւոր նպատակը:



ՔԱՆՁԻ ԱՅՈՒՄԷՆ ԱՍԷ ՏԵՐ .
Ի քաղաքէ յորմէ ԵԼԱՆԷԻՆ ՀԱՁԱՐԸ՝
 ՄԱԱՍՅԷ ՀԱՐԵԻՐ,
 ԵՒ յորմէ ԵԼԱՆԷԻՆ ՀԱՐԵԻՐ՝
 ՄԱԱՍՅԷ ՏԱՍՆ ՏԱՆՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ:
ՔԱՆՁԻ ԱՅՈՒՄԷՆ ԱՍԷ ՏԵՐ . ԱՆ ՏՈՒՆՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ.
ԽԱՌԻԵՅԷՔ ՉԻԱ ԵՒ ԿԵՅՁԻՔ.

(Մարգարէութիւն Ամովսայ Ե: 3-4)

ՀԱՄԱՐ 3ա

Յիսուս ըսաւ. «Անոնք, որոնք քեզ կ'առաջնորդեն քեզի կ'ըսեն. «ԱՀա՛, Թագաւորութիւնը երկինքի մէջն է, որով երկինքի թռչունները քեզմէ առաջ պիտի հասնին: Եթէ անոնք քեզի ըսեն. «Ան ծովուն մէջն է», ծովուն ձուկերը քեզմէ առաջ պիտի հասնին: Բայց, արքայութիւնը քու մէջն է, եւ քեզմէ դուրս:

Յիսուսի այս խօսքը կը համապատասխանէ կանոնական Աւետարաններուն մէջ գրուած հետեւեալ երկու մէջբերումներուն.

«... ոչ Գայ արեւոյտ-իւն Լադո-ժոյ խորանօժ. եւ չափեւն թէ աւա-ասիկ ասպ է՝ կամ անդ, զի աւա արեւոյտ-իւն Լադո-ժոյ 'ի ներէս 'ի յեզ է: (Ղուկասոս ԺԷ:20-21)

«... Աստուծոյ Թագաւորութիւնը դրսէն երեւցած բաներով չի գար: Օր մըն ալ պիտի չըսեն թէ 'ԱՀա հոս է', կամ 'ԱՀա' հոն', վասն զի Աստուծոյ Թագաւորութիւնը ձեր ներսիւին է:»

«Խնդրեցէ՛ք նախ զարեւոյտ-իւն Լադո-ժոյ եւ զարդարոյ-իւն նորա, եւ այդ ամենայն յաւելցի յեզ:» (Մարկէոսի 9:33)

«Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին:»

Յիսուս այս խօսքերով բացայայտ կ'ընէ, որ պէտք է՛ երկինքի՝ Աստուծոյ Թագաւորութիւնը հոս ու հոն փնտռենք: Ան նաեւ բացայայտ կ'ընէ, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը մեր ներսիւին է, այսինքն մեր էութիւնն է: Միթէ Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ էութիւնը՝ հոգին չէ՞: Բայց որովհետեւ ընդհանուր ստեղծագործութիւնը՝ նիւթականը Աստուծոյ Որդին Քրիստոսն է, Յիսուս նաեւ կ'ըսէ. «Եւ քեզմէ դուրսն ալ

է»։ Այս հիման վրայ է, որ կ'ըստի. «ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինը կը ներկայացնէ եւ ամէն անհատ Աստուծոյ մարմինն մէջ բջիջ մըն է եւ մարմինն մաս եւ բաժինը»։

«Որպէս մարմին մի է, է- անդամս Բազումս
ո-նի. է- ամենայն Բազում անդամէ մարմնոյն՝

մի մարմին է. նոյնպէս է- Քրիստոս : (Ն. Կարէֆան ԺԲ:12)

«Քանզի ինչպէս մարմինը մէկ է եւ շատ անդամներ ունի, եւ այն մարմինն բոլոր անդամները, թէեւ շատ են, բայց մէկ մարմին են, նոյնպէս Քրիստոս ալ»։

Եթէ այս հասկացողութեան լոյսին տակ ուսումնասիրենք «Համար 3-ա»-ն, կարելի է հետեւեալ գաղափարին յանդինք։ Նախ պէտք է հասկնալ, թէ ո՛չ թուչունները եւ ո՛չ ալ ձուկերը պէտք է իրենց բառացի իմաստով առնուին։ Վերեւի համարին մէջ գրուած. «Անոնք, որոնք քեզ կ'առաջնորդեն քեզի կ'ըսեն»-ը ակնարկութիւն մըն է անոնց համար, որ Աստուածաբանութիւն ուսանած եւ որոշ գիտութեան տէր եղած, հասարակ ժողովուրդը կ'առաջնորդեն։ Երբ կ'ըսեն «Ահա՛, Թագաւորութիւնը երկինքի մէջն է», ըսել կ'ուզեն թէ ան միայն «ընտրեալներու» կը վերաբերի։ Ընտրեալները հասարակ ժողովուրդի մակարդակէն աւելի բարձր են եւ այդ է իմաստը «երկինքի մէջ»-ի։ Միթէ երկինքն ալ մեզմէ վեր չէ⁶։ «Երկինքի թուչունները քեզմէ առաջ պիտի Համնին»-ին իմաստը այն է թէ այդ ընտրեալները պէտք է հասարակ ժողովուրդէն առաջ «սրբացած» ըլլան եւ Աստուծոյ թագաւորութեան արժանացած։ Իսկ եթէ անոնք «սրբացած» չեն պէտք չէ Աստուծոյ թագաւորութիւնը «հոն», անոնց մօտ փնտռենք։ «Ան ծովուն մէջն է»-ն կը ներկայացնէ Աստուծոյ թագաւորութեան գաղտնիքին մարդկային իմացականութեամբ յառաջ եկած եւ հաւաքուած «ծով»-ու մը պէս անհուն գիտութեան մէջ ըլլալը։ Իսկ «ծովուն ձուկերը քեզմէ առաջ պիտի Համնին»-

ին իմաստն ալ այն է թէ հանրութեան մէջի խելացիները եւ հանճարները՝ գիտունները պէտք է «սրբացած»՝ Աստուծոյ թագաւորութիւնը գտած ըլլան: Եթէ անոնք չեն «սրբացած», ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը գիտուններու մօտ, գիտութեան մէջ ալ մի փընտըռէք: Այս հիման վրայ մարդ իր եւ Աստուծոյ միջեւ միջնորդի պէտք չունի, որովհետեւ Աստուծոյ Արքայութիւնը արդէն մեր մէջն է: Մարդ միայն պէտք է իր կենցաղը շտկելով այդ ճշմարտութեան անդրադառնայ:

ՀԱՄԱՐ 3Բ

Երբ դուք ձեզ ճանչնաք, այն ատեն է, որ դուք պիտի ճանչցուիք եւ պիտի Հասկնաք, թէ դուք կենդանի Հօր որդիներն էք: Բայց եթէ դուք ձեզ չէք ճանչնար, այն ատեն աղքատութեան (կարօտութեան) մէջն էք եւ դուք էք աղքատութիւնը»:

Եթէ մարդուն ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, եւ անհատը այս իրողութեան տեղեակ չէ, կը նշանակէ, թէ մարդ տակաւին անգիտակից է նոյն ինքն իր էութեան նկատմամբ: Այս տգիտութիւնը յայտնի կ'ըլլայ անոր վարած կենցաղէն: Այդ տգիտութիւնը պատճառն է նաեւ անոր այդ վատ կենցաղին: Եթէ մեր ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, մենք ալ պէտք է Հայր Աստուծոյ որդիները ըլլանք: Բայց աւա՛ղ այս ուղղութեամբ շատ տգէտ ենք: Միթէ չէ՞ գրուած.

«Մի Լսարուս՝ Եւ Հայր ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի, Եւ ընդ ամենեւին, Եւ յամենեւին 'ի մեզ» : (Եփեսայիս Գ:6)

«Մէկ է Աստուած եւ բոլորին Հայրը, որ բոլորէն վեր, բոլորին Հետ եւ ձեր բոլորին մէջն է»:

«Պատարանի եր նոցա Յիսուս . Ո՞չ յօրէնսն յեր Գըր-

Էալ Ես ասացի ըն ասորու՝ Ժ՛կ իցէ՛վ» : (Յովհաննէս Ժ:34)

«Յիսուս պատասխանեց անոնց. «Միթէ ձեր Օրէնքին մէջ գրուած չէ՞. Ես ըսի. Դուք աստուածներ էք»»:

«Ե. ասացի թե ասոր-աշտ իցէի, Կամ որդիի

ቶማስ ማርቲን ማርቲን» : (ሀገራዊ 2፪:6)

«Ես ըսի. «Դուք աստուածներ էք. Դուք բոլորդ
Ամենաբարձրին որդիներն էք»»: (Սաղմոս 2Բ:6)

[illegible]

ኩላሊት ጥጥቶች • ማሳሰቢያ ኩላሊት • ጥጥቶች ለጥጥቶች

«*Ժողովուրդի Բարեկամություն*» : (Հունվ. Ը : 16-17)

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին
Հետ՝ թէ մենք Աստուծոյ գաւակներն ենք. եւ եթէ
գաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառան-
գորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

«Տեւէ՛՛ն՝ որպիսի՛ աէր շնորհեաց Բեշ Լայր, զի

«የጥቅም ሲሆን ሁሉም የሕይወት ደካማነት» : (፪. ፩፡፭፻፶፯፡፬)

«Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ գաւակներ կոչուինք. ...»:

«በፍጥነት የሚፈጸም የፍትሕ ሥርዓት» ተብሎ ሚኒስቴሩ አስታውቋል፡፡

ጥሪ ሊጠቅም-ልኝ ይኖራለችና ትፋስ ነው» : (ሊ.ዘንጉልጤጤ ጥ:16)

«Չէ՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

Միթէ հին յոյն փիլիսոփայ մըն ալ չէ՞ ըսած. «Մանիր գգեգ»: Որովհետեւ տակաւին մենք զմեզ չենք ճանչնար, Աստուծոյ որդիներ ըլլալով հանդերձ այդ գիտակցութիւնը չունինք, այսինքն Աստուծոյ որդի ըլլալու փորձառութիւնը չունինք: Բայց երբ մարդ կը կարողանայ «ինքզինք» իսկապէս ճանչնալ եւ ոչ իր պատրանքային երեւոյթը, կ'ըլլայ Քրիստոսի հետ մէկ եւ կը գիտնայ թէ կենդանի Հօր Որդին է: Այս գիտակցութեամբ ան նաեւ տէր կ'ըլլայ ընդհանուր ստեղծագործութեան, որովհետեւ ան մէկ եղած կ'ըլլայ ամէն ինչի հետ: Եթէ անհատը ընդհանուր ստեղծագործութեան «տէր» ըլլայ, արդեօք կարելի է՞, որ այլեւս աղքատ ըլլայ: Միթէ չէ՞ գրուած.

«የግንባታው የፍጥነት ምርመራው የግንባታው ፍጥነት

այն յաւելցի չեզ:» (Ղաւակառ- ժԲ:31)

«Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք եւ այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին:»

Հակառակ պարագային, եթէ աշխարհի վրայ նոյնիսկ մեծահարուստ ըլլայ, հոգեւոր գետնի վրայ ամենա- աղքատն է: Երբ Յիսուս կ'ըսէ. «Դուք ձեզ չէք ճանչնար, այն աստեւ աղքատութեան (կարօտութեան) մէջն էք եւ դուք էք աղքատութիւնը» բացայայտ կ'ընէ թէ իր ըսած աղքատութիւնը մեր ճշմարիտ էութեան՝ մեր ներքին Քրիստոսի, փորձառութիւնը չունենալն է եւ մեր կեանքն ալ կ'ըլլայ «աղքատութեան» կեանք մը:

Այս համարին մէջի Յիսուսի խօսքէն կարող ենք հետեւցնել թագնուած իմաստասիրութիւն մը եւս: Մարդուն հետապնդած կենցաղն է, որ զինք Աստուծմէ՝ յաւիտենական կեանքէ եւ փրկութենէ կը հեռացնէ, որով այդ հասկացողութիւնն ալ պէտք է ըլլայ այդ կացութեան պատճառը: Այդ պատճառն ալ պարտ է ըլլալ աշխարհի վրայ ամենամեծ չարը: Մարդ արարած կը կարծէ թէ իրմէ դուրս «սատանա» մը կայ, որ իրեն կը պարտադրէ իր կամքը եւ ինք զայն կը նկատէ ամենամեծ չարագործը: Նման հայեացք մը շատ հրապուրիչ է, որովհետեւ մարդ նման խորհելակերպով ինքզինք կը ձեւբազատէ իր վատ խորհուրդ, խօսք ու արարքներուն պատասխանատուութենէն: Շատ դիւրին է ըսել. «սատանան ընել տուաւ կամ ըսել տուաւ»:

Անտարակոյս աշխարհի վրայ կայ ահռելի չարա- գործ մը եւ այդ չարը խաւարամտութիւնն է: Մարդը այս խաւարամտութեան հետեւանք պատրանքը կ'ըն- դունի որպէս ճշմարտութիւն: Ան կը կարծէ թէ Աստուած իրմէ դուրս «վերը»՝ «երկինքը» տեղ մըն է, քան թէ իր մէջ: Ան միականութիւնը կը կարծէ զանազանութիւն ըլլալ եւ իր այս հաւատացածներուն հիման վրայ ալ կը յարի իր անհատականութեան ժխտական բեւեռին եւ կը դառնայ եսասէր:

ՀԱՄԱՐ 4

Յիսուս ըսաւ. «Ծերունին, իր օրերուն, պիտի չվարանսի եօթ օրուայ մանուկի մը կեանքին ակը Հարցնել, եւ ան պիտի ապրի: Որովհետեւ բազում առաջիններ վերջիններ պիտի ըլլան իսկ վերջիններ առաջիններ, եւ մէկ պիտի ըլլան»:

Այս համարին մէջ «ծերունի»-ին փոխաբերական իմաստը կարելի է նկատել անհատ մը, որ տարիներով Ս. Գիրք կարդացած է, սակայն որեւէ հոգեկան արթնութեան չէ հասած: Իսկ «եօթ օրուայ մանուկ»-ը՝ նորածինը այն անձն է, որ Ս. Գիրքին մէջ գրուածներուն թագուն իմաստները հասկցած է, որով նորածինը ըլլալը անձին վերստին ծնունդն է:

Նորածին մանուկ մը կը ներկայացնէ կեանքի արտայայտութիւնը եւ յայտնութիւնը աշխարհի վրայ: Այդ տարիքին մանուկը ոչ իր անհատականութիւնը գիտէ, ոչ ալ իր «Ես»-ը: Ան աշխարհէն ալ լուր չունի: Ան ոչ յիշողութիւն ունի, ոչ իմացականութիւն եւ ոչ ալ գիտութիւն: Ան ոչ ստացուածք ունի եւ ոչ ալ կապ-լածութիւն՝ որեւէ բանի: Հետեւաբար ան պարզապէս կը ներկայացնէ «կեանքը»: Ան Աստուծոյ հետ մէկ է, որովհետեւ անոր միտքը տակաւին աշխարհիկ զանազանութեամբ զբաղ չէ: Ան միայն իր Ֆիզիքական մարմնին պահանջներուն համաձայն կ'ապրի: Ան չուտով կը կապուի իր մօր եւ բացարձակ սէր, վստահութիւն եւ հաւատք կ'ունենայ իր մօր հանդէպ: Ճիշդ ասոր համար ալ մօր մը սէրը ու գուրգուրանքը հանդէպ իր զաւկին կը նկատուի Աստուածային շնորհք: Այդ կապը կը ներկայացնէ նաեւ անհատի մը եւ Աստուծոյ միջեւ եղած կապը: Անտարակոյս եթէ անձը կերտէ բարձր գիտակցութիւն եւ գիտակցի այդ փոխ-յարաբերութեան:

Իսկ ծերունին տարիներու աշխարհիկ փորձառու-

Թիւններէ վերջ գիտակից իր «Ես»ին եւ նոյնացած իր անհատականութեան հետ, միտքը զբաղ զանազան յուշերով, խորհուրդներով եւ զգացումներով կապը խզած է իր ճշմարիտ էութեան, իր ներքին Քրիստոսին հետ: Նաեւ շատ լաւ գիտէ թէ մարդ արարած մահկանացու է եւ իր յառաջացած տարիքին ալ մահը իրեն մօտեցած: Վերջապէս կ'անդրադառնայ այս իրողութեան եւ կը սկսի մտածել յաւիտենական կեանքի մասին: Յիսուս կ'ըսէ. «պիտի չվարանի եօթ օրուայ մննուկի մը կեանքին ակը հարցնել»: Ասոր իմաստը այն է, թէ անհատը պէտք է նմանի այդ մանուկին, որպէսզի արժանանայ յաւիտենական կեանքին: Այս վերջինը շեշտուած է «եւ ան պիտի ապրի» խօսքով: Միթէ Յիսուս նաեւ չէ՞ ըսած.

«... ամէն ամէն ասեմ յեւ, եթէ ոչ Դարձնի՛,

եւ լինի՞նք իբրեւ զմանկոր, ոչ միանիցե՛լ

յարժայո-րիւն երկնից»: (Մարքէոսի ԺԸ:2-3)

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ դարձի չգաք եւ սղոց պէս չըլլաք, երկնքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք»:

«Եւ Յիսուս. Դոյլ Կո-լ մանկա-ոյդ՝ եւ մի

արժեւո-լ զոոս Գալ առ իս, զի այդպիսեացդ

է արժայո-րիւն երկնից»: (Մարքէոսի ԺԹ:14)

«Յիսուս ըսաւ. «Թո՛ղ տուէք այդ մանր սղոցը եւ մի արգիլէք անոնք ինծի գալէն, վասն զի երկնքի թագաւորութիւնը այդպիսիներունն է»»:

Ի՞նչ կը նշանակէ մանուկի նմանիլ: Վերեւ մանուկին յատկութիւնները նշուած էր, հետեւաբար անհատը իր տարիներու աշխարհիկ փորձառութեամբ եւ կապուած իր «Ես»-ին, ինչպէս նաեւ զանազան ստացուածքներու, հաւատալիքներու, գաղափարներու, անհատներու եւ ցանկութիւններու անկարող է իր մտքի զբաղմունքները դադրեցնել: Միթէ Յիսուս չէ՞ ըսած.

«Երանի այնոցն՝ որ առ-բէ են արդի-լ, զի նո՛ւ

«Լ՝ադո-աժ ԳԵՊԵՆ : » (Մարգեհոն Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք
պիտի տեսնեն Աստուած:»

«Սուրբ սիրտ»-ը խորհուրդներէ, զգացումներէ եւ յուզումներէ սրբուած մաքրուած միտքն է, ճիշդ մանուկի մը նման: Հասուն մարդուն պարտականութիւնը իր կեանքը անընդհատ աղօթքի մը վերածել է եւ աղօթքին ալ ամենավե՛հ ձեւը՝ խոկումը: «Առաջինները» մարդոց ծնունդն է որ կը համարուի իրենց աշխարհիկ պարտականութեան սկիզբը, իսկ «վերջիններն» ալ անոնք են, որոնք կը յաջողին իրենց տրուած այդ պարտականութիւնը աւարտին բերել: Այդ պարտականութիւնն ալ Աստուածայայտնութիւնը՝ Քրիստոսի յայտնութիւնը իրենց մէջ իրականացնելն է: Այն ատեն անոնք մէկ կ'ըլլան Քրիստոսի հետ եւ ընդհանուր միականութեան հետ: Ահա՛, աս է իմաստը «եւ մէկ պիտի ըլլան»-ին:



ԼՈՒՐ ՈՐԴԵԱՎ ԽՐԱՏՈՒ ՀՕՐ ՔՈՅ,

ԵՒ

ՄԻ ՎԵՐԺԵՐ ԶՕՐԷԱ ՎՕՐ ՔՈՅ

(Առակք Սողոմոնի Ա:8)

ՀԱՄԱՐ 5

Յիսուս ըսաւ. «Գիտցիր այն ինչ որ կը տեսնես (կամքու առջեւդ է) եւ այն ինչ որ թագնուած է, քեզի պիտի բացայայտուի: Որովհետեւ չկայ թագնուած բան մը որ յայտնի պիտի չդառնայ»:

Այս համարը կարելի է երկու մակարդակի վրայ մեկնաբանել: Երկրորդը առաջինն արդիւնքն է: Նախ պէտք է հասկնանք այն ինչ որ մեզի տրուած է. այդ՝ Աստուծոյ խօսքն է: Բայց ոչ անոր բառացի իմաստը, այլ անոր փոխաբերական՝ վերացական իմաստը, որ թագնուած է բառացիին մէջ: Ահա՛, աս է այդ հրամայական «Գիտցիր»-ին իմաստը: Երբ անհատը կը գիտնայ անոնց մէջ թագնուած իմաստասիրութիւնները, ինք նաեւ կը գտնէ Աստուծոյ թագաւորութեան «բանալիները»: Երբ անձը բառերուն մէջի թագնուած ճշմարտութիւնները կը հասկնայ, ժամանակը կու գայ նաեւ հասկնալու ստեղծագործութեան մէջ թագնուած ճշմարտութեանը:

Յիսուսի այս խօսքը յայտնի կ'ընէ թէ ընդհանուր ստեղծագործութեան պատրանքային երեւոյթին մէջ թագնուած ճշմարտութիւն մը կայ եւ օր մը այդ ճշմարտութիւնը մարդկութեան պիտի յայտնուի: Այդ ճշմարտութիւնը Աստուած Ինքն է: Միթէ չե՞նք ըսեր. «միակ ճշմարտութիւնը Աստուած է»: Այս հիման վրայ ալ ընդհանուր ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է: Հրամայականը մարդուն տրուած է. «Գիտցիր այն ինչ որ կը տեսնես (կամքու առջեւդ է) եւ այն ինչ որ թագնուած է, քեզի պիտի բացայայտուի», հետեւաբար կը թուի թէ մարդը Աստուածայայտնութիւնը իրականացնելու միջոցն է: «Գիտցիր» հրամայականէն պէտք է հասկնանք թէ մարդուն համար այդ իրականացումը կարելի պիտի ըլլայ իր կերտած բարձր գիտակցութեան մակարդակով: Մար-

դուռն գիտակցութիւնը որքան բարձր ըլլայ անոր գիտնալու՝ տեսնելու՝ հասկնալու կարողութիւնն ալ այդ աստիճան կ'աւելնայ: Ի՞նչ է, որ ան պիտի տեսնէ, գիտնայ կամ հասկնայ: Ան պիտի գիտնայ ճշմարտութիւնը: Ներկայիս համայն մարդկութիւնը իր գիտակցութեան ցած մակարդակին հետեւանք կը կարծէ թէ զանազանութիւնը՝ պատրանքը ճշմարտութիւն մըն է: Յիսուսի հետեւեալ խօսքը. «Որովհետեւ չկայ թագնուած բան մը որ յայտնի պիտի չգտնայ» յայտնի կ'ընէ թէ օր մը ճշմարտութիւնը պիտի յայտնուի բոլորին, այսինքն Աստուածայայտնութիւնը լրիւ պիտի իրականանայ: Մարդ կը տեսնէ զանազանութիւն եւ զայն կը նկատէ որպէս ճշմարտութիւն: Ան չի տեսներ այդ կարծեցեալ զանազանութեան միականութիւնը: Ասոր պատճառը մարդուն խաւարամտութիւնն է: Հետեւաբար «Գիտցիր» հրամայականը մարդուն տրուած է որպէսզի ան բարձր գիտակցութիւն կերտելով աւելի բարձր գիտութեան տէր ըլլայ եւ այդ միականութեան փորձառութիւնը ունենայ: «Թագնուած բան»-ն ալ այդ զանազանութեան պարզապէս Աստուծոյ զանազան արտայայտութիւնները ըլլալն է: Կարելի է մարդ արարած այս գաղափարը իմացականօրէն լաւ մը ըմբռնէ եւ հասկընայ, բայց մինչեւ որ ան այդ ճշմարտութեան իր անձնական փորձառութիւնը չունենայ, ան կը մնայ միայն իբրեւ գաղափար: Այս գաղափարը լաւ հասկնալու համար նկատողութեան առնենք մեր փորձառութեան մէջ գտնուող հետեւեալ կացութիւնը: Մայր մը իր մանուկ տղուն հետ ամաններու վաճառատուն մը կ'երթան: Երկար ժամանակ զանազան ամանները քննելէ վերջ տուն կը վերադառնան: Երբ կնոջ ամուսինը կը հարցնէ թէ ինչեր տեսան, կիներ կը նկարագրէ տեսակ-տեսակ ամանները: Իսկ տղուն պատասխանն ալ «զանազան գոյներու ներկուած կաւ տեսանք» կ'ըլլայ: Բոլոր

ամանները կաւէ շինուած են՝ զանազան կերպարանք-
ներով եւ գոյներով: Տղան, որովհետեւ ամաններու
գործածութեամբ եւ ձեւերով չէր հետաքրքրուեր, ան
միայն տեսաւ անոնց բուն ինքնութիւնը՝ ճշմարտու-
թիւնը՝ զանազան գոյներու ներկուած կաւը: Կացու-
թիւնն ալ նոյնն է ստեղծագործութեան նկատմամբ:
Ամէն ինչ Քրիստոսն է՝ զանազան ձեւերով եւ «գոյնե-
րով»: Յիսուսին ըսածը այն է, թէ մենք ալ պարտ ենք
տղուն նման տեսնել միայն «կաւ»-ը՝ Քրիստոսը, եւ ոչ
մօր նման զանազանութիւնը: Այն ինչ որ պէտք է
տեսնենք զանազանութեան մէջ թազնուած Քրիստոսն
է, ինչպէս կաւը թազնուած է ամաններուն մէջ:



ՃԱՆԱՉԵՂ ՉԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԽՐԱՏ՝
ԻՄԱՆԱՂ ՉԲԱՆԱ ՀԱՆՃԱՐՈՅ:
ԸՆԴՈՒՄԵՂ ՉԴԱՐՉՈՒԹՅՈՒ ԲԱՆԻՅ:
Ի ՄԻՏ ԱՐԱՆՈՂ ՉԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐԻՏ,
ԵՒ ՈՒՂԴԵՂ ՉԻՐԱՒՈՒՄ:
ԶԻ ՏԱՅԷ ԱՆԱԵՂԱՅ ՉԽՈՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ,
ՄԱՆԿԱՆՅ ՏՊԱՅՈՅ ՉՄԻՏԱ ԵՒ ՉՀԱՆՃԱՐ:

(Առակք Սողոմոնի Ա:2-4)

ՀԱՄԱՐ 6

Աշակերտները Իրեն Հարցուցին ու ըսին. «Դուն կը փափաքի՞ս որ ծով պահենք: Ինչպէ՞ս պետք է աղօթենք: Ողորմութիւն տա՛նք: Եւ ուտելու նկատմամբ, ո՞ր օրէնքները պահենք»: Յիսուս ըսաւ. «Սուտ մի խօսիք եւ այն բանը, որ դուք կ'ատէք, մի ընէք: Որով ամէն ինչ երկինքի մէջ կը յայտնուի: Չկայ բան մը որ գաղտնի մնայ եւ չհայտնուի եւ չկայ բան մը, որ ծածկուած է, ծածկուած մնայ»:

Յիսուսին տուած պատասխանը, մակերեսային-օրէն կը թուի հարցումներուն հետ որեւէ կապակցութիւն չունենալ: Ընդհակառակը Իր տուած պատասխանով մեզի կը հասկցնէ ճշմարիտ ծոմապահութեան, պահքին եւ աղօթքին ինչ ըլլալը: Յիսուս ուրիշ խօսքերով ալ նոյն գաղափարները տուած է.

«Եւ որպէս կամի՞լ թէ արապէն յեշ մարդիկ, ա՛յնպէս արաջի՞լ է- դու- ձեռք» : (Ղուկաս 9:31)

«Ի՛նչպէս կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նո՛յնպէս ալ դուք ըրէք անոնց»:

«... առ- այն՝ թէ պա՛րոյ է յամենայն ժամ կա՛լ ձեռք յաղօթա՛լ է- մի՛ շանցրանալ» : (Ղուկաս 10:1)
«... որ գիտնան թէ պետք է ամէ՛ն ատեն աղօթել՝ առանց ձանցրանալու»:

Ընդհանուր առմամբ մարդիկ կը կարծեն թէ պահք բռնելով՝ մսեղէն չուտելով, կամ ծոմ պահելով՝ անօթի մնալով եւ անընդատ աղօթելով՝ Աստուծոյ փառաբանելով եւ Աստուծոյ զանազան խնդրանքներ ներկայացնելով, մեղքերու թողութեան եւ ցանկութիւններու իրականացման կ'արժանանան: Յիսուս Իր այս պատասխանով կը հաստատէ այն ինչ որ Եսայեայ

մարդարէ ըսած էր ծոմապահութեան նկատմամբ:

«Շ ԿԱՅԻՆՆԵՐԻ ԿԱԼԱ ընտրեցի՝ ասէ Տէր: Այլ լո՛յժ
 ԿԷԼՆԻՆ՝ անիրաւո՛ր-ԷԼԻԱՆ. խա՛կեա՛կ ԿԷԼԱՐԿԱՐԱՐՈՒԹԻՆ՝
 ԲՈՒՆՈՒԹԻԱՆ զԱՃԱՌԱՅ խոց: ԱՐՅԱԿԷԱ՛ ԿԷԼՂԷԱԼԱ
 ԲՈՂՈՒԹԻԱՄԲ, Է՛ ԿԱԷԼՆԱՅՆ ՎՈՐԸԱԿԱ անիրաւո՛ր-ԷԼԻԱՆ
 ԿԱԿԱՌԷԱ՛: ԻՅՐԵԱ՛ խաղցելոց ԿԼԱՅ խո, Է՛
 ԿԱՂԷԱԿԱՆ անյարկա՛ ԿԱ՛Ր ՚ի ԿՈՒՆ խո. ԷԷԷ ԿԷԼԱՆԻՅԷԱ
 ԿԱԷԼԿԱ՛ ԿԲԷԿՈՅԱՆԻԶ՚Ր, Է՛ յընԿԱՆԷԱՅ ԿԱՄԱԿԻ խո՛,
 ԿԱԿԷՆ ՎԻ՛ արկանի՛- ցէա: ՅԱՅԺԱՄԸ ԺԱՄԱԼԷԱՅԻ ԿԱՆՈՒԽ
 ԼՈՅԱ խո, Է՛ ԲԺԶԿՈՒԹԻՆ խե՛ղ զԿԱՂԱՂԱԿԻ ԸԱԱՅԷ. Է՛
 ԲՆԱԱՅԷ ԿՈՒԱԶԻ խո արԿԱՐՈՒԹԻՆ՝ խո, Է՛ ՎԱ՛Ռ՝ Է՛
 ԱԿՈՐԺՈՅ ԿԲԷ՛ ՎԱԿԷԱՅԻՆ»: (Եսայիայ՝ ԾԸ: 6-8)

«Եւ յորժամ պահիցէ՛լ՝ մի՛ լինի՛լ իբրեւ
պէղծաւոր՝ ինչ որ արարեալ է. որ ապականեն պերեաս
իւրեանց, որպէս պի երեւեացին մարդկան թիւ
պահիցեն: Ըմեն ասե՛մ չեմ, այն իսկ եւ վարձի
նոցա: Ըյլ դո՛ւ՝ յորժամ պահիցես, ո՛ր պիտի
է՞լ եւ լուս՝ պերեաս է՞, պի մի՛ երեւեացիս
մարդկան իբրեւ պաշտօն. այլ Հօր է՞նք ի
Ժաշո՛ւն. եւ Հայրն է՞ որ քեզանէ ի Ժաշո՛ւն,
Հայրսոցէ՛լ է՛կ»: (Սարգիս 9:16-18)

«Երբ ծով պահէք, տրտումներս մի՛ ըլլաք՝ կեղծաւոր-
ներուն պէս. որովհետեւ իրենց երեսները կը խաթարեն,
որպէսզի երեւնան մարդոց՝ թէ ծով կը պահեն: Ճշմար-
տապէս կը յայտարարեմ ձեզի. Անոնք ունեցած կ'ըլլան
իրենց վարձատրութիւնը: Բայց դո՛ւն՝ երբ ծով պահես՝
օծէ՛ գլուխդ ու լուս՝ երեսդ, որպէսզի չերեւնաս մարդոց՝
ծով պահողի պէս, Հապա քու Հօրդ՝ որ գաղտնի տեղ
կը գտնուի: Եւ քու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը,
պիտի Հատուցանէ քեզի»:

*Բայց եթէ անոնք միայն կատարենք առ ի սովորու-
թիւն կամ մեղքի թողութեան արժանանալու համար եւ
մեր կենցաղին մէջ որեւէ փոփոխութիւն տեղի չունե-
նայ, անոնց բոլորն ալ ապարդիւն կ'ըլլան: Անոնք կարե-
ւի է պարզապէս ինքնազսպումի մարզանքներ համա-
րել: Իսկ մարդուն կենցաղն ալ պէտք է անընդհատ
աղօթք մը ըլլայ:*

*Յիսուսի տուած պատասխանը կը յայտնէ անոնց
ինչ ըլլալը: Անոնք բոլորն ալ կը ներկայացնեն կատա-
րելութեան ուղին եւ անհատին ալ կը վիճակի այդ
ուղիէն ընթանալ: Անոնք կենցաղային փոփոխութիւն
կը ներկայացնեն: Մարդ արարած իր կենցաղով՝ խոր-
հուրդ, խօսք ու արարքներով, կը կերտէ իր ճակատա-
գիրը: Հետեւաբար իր կենցաղին յառաջ բերած իր
կեանքի լաւ ու վատ պատահարները կը համապատաս-*

խանեն Յիսուսի ըսած խօսքին. «Չկայ բան մը որ գաղտի մնայ եւ չյայտնուի եւ չկայ բան մը, որ ծածկուած է, ծածկուած մնայ»: Ամէն անհատ իր կենցաղին համաձայն կ'որոշէ իր զօրութեան «մարմինն» թրթռացումի յաճախականութիւնը: Իր կերտած այդ յաճախականութիւնը տեղեկութիւն կը պարունակէ եւ կը մնայ անհատին հետ եւ կ'ըլլայ անոր ճակատագիրը: Յիսուսին հետեւեալ խօսքը այս է, որ կը շեշտէ. «Որով ամէն ինչ երկինքի մէջ կը յայտնուի»: Երկինքը Աստուծոյ զօրութեան ազդեալայրն է՝ Ս. Հոգիի ներկայութիւնը: Մարդուն զօրութեան մարմինն ալ Ս. Հոգիի զօրութենէն եկած է: Ընդհանուր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութեան արդիւնքն է: Այս գաղափարը Յիսուս նաեւ տարբեր ձեւով ալ ըսած է.

«Մի՛ խաբի՛, Լսարանա՛ն ո՛չ արհամարհի: Զի՛ պոր ինչ սերմանէ մարդ պնոյն եւ Ընչեպէ՛»: (Գաղաթաղա Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ զա՛յն ալ պիտի հնձէ»:

«Լմէն ասեմ չեպ, պի մմենայն Խոջցի որդեայ մարդկան մեղէ՛ եւ ԼայԼոյո-Բիւնէ՛ որչափ եւ ԼայԼոյեպեն, Բայց որ ԼայԼոյեպէ պԼոգին առեբ, ոչ ունիցի Խոջո-Բիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենիցն մեղայ»: (Մարկոս Գ:28-29)
«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի մարդոց որդիներուն եւ ՀայԼոյութիւնները՝ որչափ որ ՀայԼոյեն. Բայց ով որ Սուրբ Հոգիին դմ ՀայԼոյէ՛ յաւիտեան թողութիւն պիտի չունենայ՝ Հապա յաւիտենական դատաստանին պարտաւոր պիտի ըլլայ»:



ՀԱՄԱՐ 7

Յիսուս ըսաւ. «Օրհնեալ է առիւծը, որ մարդը
զայն կ'ուտէ եւ առիւծը մարդ կը դառնայ:
Անիծեալ այն մարդը, որուն առիւծը կ'ուտէ եւ
առիւծը մարդ կը դառնայ»:

Դարձեալ խոր լուսաբանութիւն եւ հասկացողու-
թիւն տուող խօսք մը մարդուն դատողութեան եւ զա-
տողութեան կարողութեան նկատմամբ, ինչպէս նաեւ՝
իր կենցաղին: Անտարակոյս այս խօսքը իր բառացի
իմաստով անիմաստ կը թուի ըլլալ: Առաջին հերթին
կարելի է առիւծը մարդը ուտէ, բայց մարդ առիւծ
չ'ուտեր: Ուրեմն այս խօսքը պէտք է վերացական
իմաստ մը ունենայ, ինչպէս են Յիսուսի բոլոր ըսած-
ները: Այս վերացական իմաստը շատ դիւրութեամբ
կարելի է հասկնալ հետեւեալ համարի պարունակու-
թեան:

«Լըթո՛ւն լերո՛ւ՜ն Լսէցէ՛՜ն պի հոսն յեր սարա-
նայ իջրէ- սառէ-ծ Գոշէ շրջի ե- խնդրէ՛ թէ սո՛վ
էլանիցէ: Որո՛ւմ 'ի դիմի՛ Լարկանիցի՜ն Լասարա-
ւալէ Լա-ասարո՛վէ ...» : (Լ. Թո-ղը Պեդրոսի Լ: 8-9)
«Զգա՛ստ եղէք, արթո՛ւն կեցէք. որովհետեւ ձեր ոտիւր՝
Զարախօսը՝ կը շրջի մունչող առիւծի պէս, փնտռելով
թէ ո՛վ կ'լի: Դիմադրեցէ՛ք անոր՝ ամուր հաւատքով ...»:

Նախ նկատողութեան առնենք ուտելու գաղափա-
րը, թէ Յիսուս ինչո՞ւ ուտելը օգտագործեց շատ
անհրաժեշտ կէտ մը սորվեցնելու համար: Երբ որեւէ
արարած բան մը ուտէ կարճ ժամանակ վերջ ան
կերածը կը մարսէ, եւ կերածը կը տարրափոխուի իր
հիմնական քիմիական բաղադրութիւններուն, որոնք
մեր աղիքներէն կ'անցնին արեան մէջ ու շրջելով մար-
մնին մէջ կ'երթան զանազան բջիջներու եւ մաս եւ
բաժինը կ'ըլլան այդ բջիջներուն: Երբ հացի կտոր մը
ուտենք, մի քանի ժամ վերջ այդ հացի կտորը կը

դարձրի հաց ըլլալէ եւ մեր մարմինն մաս կը կազմէ՝
կ'ըլլայ մեր մարմինը: Հացը կ'անհետանայ եւ մարմին-
նը կ'ածի: Յիսուսի ըսածը այս հիման վրայ ուսումնա-
սիրենք:

Առիժը կը ներկայացնէ մարդուն «Ես»-ը՝ չարա-
խօսը՝ սատանան, իսկ Յիսուսին ըսած «մարդ»-ն ալ՝
մարդուն անհատականութիւնը: Երբ մարդ «կ'ուտէ
առիժը», այսինքն մարդուն անհատականութիւնը
կ'անտեսէ իր «Ես»-ը եւ զայն կը չէզոքացնէ՝ անոր
ազդեցութիւնը կ'անհետացնէ, որով այդ անհատը
օրհնեալ կ'ըլլայ, ան այլեւս չի կառավարուիր իր
«Ես»-էն: Բայց երբ «առիժը կ'ուտէ մարդը», կը
նշանակէ թէ մարդուն «Ես»-ը մարդը կուլ տուած է,
այսինքն մարդուն ճշմարիտ էութիւնը, որ Քրիստոսն
է, անոր կեանքին մաս չի կազմեր: Այդ մարդը որ
նոյնացած է իր «Ես»-ին հետ «անիծեալ» է: Յիսուս այս
նոյն գաղափարը տարբեր բառերով եւս շեշտած է.

Որ սիրէ պանշն իւր՝ արշակէ պնա. եւ որ արեայ
պանշն իւր յաշխարհիս յայտնի, 'ի կէանսն յա-
ւիտեանհանս պաւեացէ պնա»: (Յովհաննոս ԺԲ: 23)
«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ
ա՛ն որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝
յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն»:

«Զի որ կամիցի պանշն իւր կեցոյցանէլ,
կորոսցէ՝ պնա. եւ որ կորոսցէ պանշն իւր
վաան իմ՝ կեցոյցէ՝ պնա»: (Ղուկաս Թ: 24)
«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի
համար, պիտի փրկէ զայն»:



ՀԱՄԱՐ 8

Եւ Ան ըսաւ. «Մարդը իմաստունն ձկնորսի մը կը նմանի, ան իր ուռկանը ծով կը նետէ եւ դուրս կը քաշէ փոքր ձուկերով լեցուն: Անոնց մէջ իմաստունն ձկնորսը գտաւ աղուոր մեծ ձուկ մը: Ինք բոլոր պղտիկ ձուկերը ծով կը նետէ եւ առանց դժուարութեան կ'ընտրէ մեծը: Ան որ ականջ ունի լսելու, թող լսէ»:

Զարմանալիօրէն Յիսուս նոյն պատգամը զանազան օրինակներով բազմիցս տուած է, որովհետեւ կատարելութեան ուղին եւ փրկութեան միջոցը, այսինքն ընդհանուր կրօնքին սորվեցուցածներն ալ շատ պարզ են, բայց դժբախտաբար ոչ ոք զանոնք կը գործադրէ:

Ինչպէս Յիսուսի բոլոր խօսքերը, այս խօսքը եւս պէտք է վերլուծենք անոր փոխաբերական իմաստով: Նոյնիսկ այս համարին մեկնաբանութիւնն ալ կարելի է երկու զատ մակարդակներու վրայ ընել: Հետեւեալ առաջին մեկնաբանութիւնը տեղի կու տայ երկրորդ մեկնաբանութեան:

Առաջին մեկնաբանութիւնը այն է, թէ ծովը կը ներկայացնէ Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները: Եւ ձկնորսին ուռկանին ծով նետելն ալ կը ներկայացնէ Յիսուսի սորվեցուցածներուն նկատմամբ մարդկութեան հասկացողութիւնը: Շատ մը փոքր ձուկերը կը ներկայացնեն բազմաթիւ հասկացողութիւններ եւ այդ հասկացողութիւններու վրայ հիմնուած բազմաթիւ յարանուանութիւնները: Ծջմարտապէս փնտռողը կ'անտեսէ այդ բոլոր յարանուանութիւններուն ըրած քարոզչութիւնները եւ հաւատալիքները ու կը փնտռէ Յիսուսի սորվեցուցածներուն մէջ թաքնուած ճշմարտութիւնը՝ մեծ ձուկը: Երբ զայն կը գտնէ միւս բոլոր հասկացողութիւնները «կը նետէ»՝ կ'անտեսէ: Այս հիման վրայ ալ կը կարողանանք

երկրորդ մակարդակի մեկնաբանութիւնը կատարել:

Ձկնորսը մարդն է եւ ուռկանը որ ծով կը նետէ իր կեանքն է: Մարդ իր կեանքի ընթացքին շատ մը բաներու փորձառութիւնը կ'ունենայ: Աշխարհի զանազանութիւնը անոր վրայ կը հեղեղէ: Ահա՛, աս է իմաստը «փոքր ձուկերով լեցուն»-ին: «Իմաստուն ձկնորս»-ը այն մարդն է, որ կ'անտեսէ այդ պատրանքային զանազանութիւնը եւ կը փնտռէ ու կը գտնէ «մեծ ձուկ մը»: Այդ «մեծ ձուկ»-ը իր ներքին Քրիստոսն է: «Ինք բոլոր պզտիկ ձուկերը ծով կը նետէ»-ին իմաստը այն է, թէ անհատը կ'անտեսէ աշխարհի շլացուցիչ զանազանութիւնը: Առանց այս աշխարհէ ձերբազատման կարելի չէ Քրիստոս գտնել: Յիսուս այս գաղափարը կը յայտնէ իր յաջորդ խօսքով. «Եւ առանց դժուարութեան կ'ընտրէ մեծը»: Եթէ մենք զմեզ չձերբազատենք աշխարհիկ ցանկութիւններէն, ահռելի դժուար եւ անկարելի կ'ըլլայ «մեծ ձուկը»՝ Քրիստոս գտնել:



ԵՒ ԵԹԷ ԽՆԴԻՆԱԾԵԱ ՉՆԱ ԻՐԵՒ ԶԱՐԾԱԹ ԸՆՏԻՐ
ԵՒ ԻՐԵՒ ԶԳԱՆՁԱ ՔՆՆԵԱԾԵԱ ՉՆԱ:
ՅԱՅՆԺԱՄ 'Ի ՄԻՏ ԱՌԾԵԱ ՉԵՐԿԵԻՊ ՏԵԱՌՆ,
ԵՒ ՉԲԱՐՈՒԹԻՒՄ ԱՍՏՈՒԾՈՅ ԳՏԾԵԱ:

(Առակք Սողոմոնի Բ:4-5)

ՀԱՄԱՐ 9

Յիսուս ըսաւ. «Ահա՛, սերմնացանը գնաց, ձեռքը
լեցուն սերմերը ցանեց: Ոմանք ճամբուն վրայ
ինկան եւ թռչունները եկան եւ կերան: Ուրիշներ
ժայռի վրայ ինկան եւ հողին արմատ չկրցան
արձակել եւ ոչ ալ ծիլ տուին, որ դէպի երկինք
բարձրանան: Դարձեալ ուրիշներ փուշերու մէջ
ինկան եւ անոնք սերմերը խեղդեցին եւ որդերը
զանոնք կերան: Եւ ուրիշներ պարարտ հողի մէջ
ինկան եւ դէպի երկինք բարձրացող լաւ պտուղ
տուին, ոմանք վախժսուն՝ ոմանք հարիւր քսան»:

Ինչպէս յառաջաբանին մէջ գրուած է, այն համար-
ները, որոնք կանոնական Աւետարաններուն մէջ ալ
գրուած են եւ իմ գիրքերուն նախկին հատորներուն
մէջ ներկայացուած են, հոս պիտի չկրկնուին: Հետեւա-
բար տեսնել «Աւետարանի Խորհուրդները Բ. - Յիսուսի
Առակները» հատորին մէջ «Սերմնացանին Առակը» էջեր
89-92:

ՀԱՄԱՐ 10

Յիսուս ըսաւ. «Ես աշխարհի վրայ կրակ
վառեցի, ահա՛ կը հսկեմ մինչեւ որ բոցավառի»:

Յիսուս դարձեալ փոխաբերական իմաստ ունեցող
նախադասութիւն մը ըսած է: Նախ հասկնանք, թէ ի՞նչ
է «կրակ»-ին փոխաբերական իմաստը: Կրակը զօրու-
թիւն (energy) կը ներկայացնէ: Միանգամայն կրակը թէ՛
լոյս կ'արձակէ, թէ՛ ալ տաքութիւն կու տայ: Տաքու-
թիւնը մասնիկներուն (molecules) արագ շարժման ար-
դիւնքն է: Նաեւ պէտք է մոռնալ, թէ առանց արտաքին
ոյժի շարժելու կարողութիւնն ալ կը ներկայացնէ
կեանքը: Դարձեալ նկատողութեան պէտք է առնենք, թէ
տաքութիւնն ալ լոյս է: Ան ենթակարմիր (infrared)
շողացումն է, որ մարդկային աչքերուն համար անտե-
սանելի է: Կրակը նաեւ «հին»-ը կ'այրէ կ'անհետացնէ,

որպէսզի անոր տեղ նորը գայ: Անտառի հին ծառերը հրդեհով կ'անհետանան եւ յետոյ նոր ծիլեր կը գոյանան եւ նոր ծառեր հասակ կը նետեն:

Այս հիման վրայ հասկնանք թէ «կրակ» ըսելով Յիսուս Քրիստոս ի՞նչ ըսել կ'ուզէ: Միթէ ապրող կեանք ունեցող մարմինը որոշ տաքութիւն մը չ'ընենար, ընդհանուր առմամբ եթէ անհատը հիւանդ չէ այդ տաքութիւնը պէտք է ըլլայ մօտաւորապէս 37°C: Երբ հոգին կը թողու մարմինը, մարդուն դիակը հետզհետէ իր տաքութիւնը կը կորսնցնէ եւ կը պաղի: Այս հիման վրայ «կրակ»-ը՝ տաքութիւնը մարդուն մէջ անոր կեանքը կը ներկայացնէ:

Ինչպէս վերեւ գրուած է կրակը տաքութիւն ներկայացնելէ զատ նաեւ լոյս կ'արձակէ: Լոյսին փոխաբերական իմաստն ալ մարդուն գիտակցութիւնն է (consciousness):

Նկատողութեան առնենք Յիսուս Քրիստոսի ըսած ուրիշ մի քանի խօսքերը, ինչպէս նաեւ թէ՛ Յովհաննու Աւետարանէն, ինչպէս նաեւ իր նամակներէն թէ՛ ալ Հին Կտակարանէն եօթը համարներ:

«...Ե՛ս եմ լո՛յս աշխարհի. որ Գայ գնի իմ՝ ընդ խաւար մի՛ Գնացէ. այլ ընկալցի գլո՛յսն կենաց» :
(Յովհաննոս Ը:12)

«Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կու գայ, խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց լոյսը պիտի ունենայ»:

«Դո՛ւմէ ե՛լ լոյս աշխարհի. ... եւ ո՛չ լուսանէն ճրագ՝ եւ դնէն ընդ Գրոհանաւ, այլ ՚ի վերայ աշրանակի. եւ լոյս Կայ ամենեցուն՝ որ ՚ի Կանն իցեն: Եյնպէս լուսաւորեացէ լոյս Յեր առաջի մարդկան, որպէսպի որեացեն գործս Յեր Բարին, եւ փառաւորեցեն գւարջ Յեր որ յերկնս է» :
(Մատթէոսի Ե:14-16)

«Դո՛ք էք աշխարհի լոյսը. ... Ու ճրագը չեն վառեր եւ դներ գրուանի տակ, Հապա աշտանակի վրայ որ լոյս տայ բոլոր տանը մէջ եղողներուն: Այնպէս թող լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»:

«Նո՛ւա՛ւ՝ կէանի էր, եւ կէանի՛ն էր լո՛յս մարդկան» : (Յովհաննոս Ը:4)

«Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր»:

«Լսո՞րո՞ւսք լո՛յս է» : (Լ. Թո՛ղք Յովհաննոս Ը:5)

«Աստուած լո՛յս է»:

«Լոյս Տէարն շո՛նշ մարդկան, ...» : (Լուսնայ Ի:27)

«Մարդուն Հոգին Տէրոջը լոյսն է»:

«Լա՛ւ ցնա Յիսոս. Ե՛ւ եմ յարո՞ւթիւն եւ կէանի՛ որ Հաւատաց յիս, Դէպէտք եւ մեռանի՛ կէցցէ՛» : (Յովհաննոս ԺԸ:25)

«Յիսուս ըսաւ անոր. «Ե՛ս եմ յարութիւնն ու կեանքը: Ա՛ն որ կը Հաւատայ ինծի, թէեւ մեռնի՛ պիտի ապրի»»:

«Լա՛ւ ցնա Յիսոս. Ե՛ւ ճանապարհն՝ եւ ճշմարտո՞րութիւն եւ կէանի՛ ո՛չ ո՛ր Գայ առ Հայր՝ երբ ոչ ինե՛ւ» : (Յովհաննոս ԺԴ:6)

«Յիսուս ըսաւ անոր. «Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնն ու կեանքը. ո՛չ մէկը կու գայ Հօրը քով՝ բացի միայն ինձմով»»:

Այս մէջըրբումներուն մէջի Յիսուս Քրիստոսի ըսած խօսքերուն հիման վրայ «կրակ»-ը կը ներկայացնէ մարդուն ներքին Քրիստոսը: Քրիստոս թէ՛ մարդուն կեանքն է եւ թէ՛ անոր գիտակցութիւնը: Քրիստոսի հետեւեալ խօսքը «Ես աշխարհի վրայ կրակ վառեցի»-ն կը ներկայացնէ մարդը, որ ունի Քրիստոսի շնորհած կեանքը եւ գիտակցութիւնը: Դժբախտաբար այդ կեանքը եւ այդ գիտակցութիւնը լրիւ չեն յայտնուիր: Մարդը ինքն է պատճառը, որ կը խափանէ անոնց լրիւ յայտնութիւնը: Հետեւաբար այդ «կրակ»-ը կը նմանի միայն փոքր մոմի մը բոցին: Դարձեալ մեծ

դժբախտութիւն, որ մարդ այդ փոքր բոցով կը գոհանայ այս աշխարհիկ ճղճիմ ժամանակաւոր կեանքը ապրելով եւ պատրանքը ճշմարտութիւն կարծելով: Ըշմարտութիւնը այն է թէ մարդ կարողութիւնը ունի Քրիստոսի անհուն գիտակցութեան տիրանալու եւ ճշմարտութիւնը՝ Աստուած տեսնելու եւ յաւիտենական կեանքը ունենալու: Հակառակ մարդուն խաւարամտութեան Քրիստոս կ'ըսէ. «ահա՛ կը հսկեմ» այն յոյսով, որ մարդ ապաշխարէ եւ գտնէ կատարելութեան ուղին անտեսէ իր «Ես»-ը, ինքզինք ձերբազատէ աշխարհիկ հետապնդումներէն՝ պատրանքէն եւ լրիւ յայտնաբերէ Քրիստոս իր մէջ: Ահա՛, աս է մարդկային կեանքին նպատակը: Քրիստոսի այդ յայտնութիւնը նկարագրուած է «մինչեւ որ բոցավառի»-ով: Մարդուն ներքին բոցը ոչ թէ սփռէ մոմի մը ճղճիմ լոյսը, այլ ան պէտք է աճի եւ սփռէ արեւին պայծառ լոյսը: Մարդուն այս ուղղութեամբ յաջողութեան միջոցն ալ իր ընտրած՝ զատած կենցաղն է: Աս ալ շեշտուած է նոյնիսկ Հին Կտակարանի մէջ եւս.

«Օսգէայ 'ի խաւարի լոյս ուղղոց», (Սաղմոսաց ճԺԸ:4)

«Խաւարին մէջ լոյս կը ծագի ուղիղներուն»: (ՃԺԲ:4)

«Ճանապարհէ արդարոց որպէս լոյս թագէն առաջնորդէն էւ լոսաւորէն, մինչեւ Գիւն լոսաւորեացէ»: (Նաւկայ Դ:18)

«Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսի պէս է, Որ երթալով կը լուսաւորուի, մինչեւ կատարեալ օր ըլլայ»:

Իսկ Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ, այն կրակն է, որ կ'այրէ եւ կ'անհետացնէ հին մարդը եւ կը «ծլի»՝ ծնի նոր մարդը: Ահա՛, աս է վերստին ծնունդը: Վերեւի վերջին մէջբերումին մէջի «կատարեալ օր»-ը կը նշանակէ անձին մէջ Քրիստոսի լրիւ յայտնութիւնը:

ՀԱՄԱՐ 11»

Յիսուս ըսաւ. «Այս երկիրքը պիտի անցնի եւ անկէ վերինն ալ պիտի անցնի եւ անոնք որոնք մեռած են ու չեն ապրիր եւ անոնք որ կ'ապրին պիտի չմեռնին:

Այս համարը մեկնաբանելու համար նախ պարտ ենք նկատողութեան առնել, թէ ի՞նչ կը հասկնանք երբ «երկիրք» կ'ըսենք: Անտարակոյս գիտակցութեան զանազան մակարդակներուն «երկիրք» բառն ալ պիտի տայ զանազան կամ տարբեր հասկացողութիւններ:

Ասոնց առաջինը հետեւեալն է: Խաւարամիտ մարդը ընդհանուր Ս. Գիրքին մէջ գրուածներուն բառացի իմաստին համաձայն կը կարծէ թէ երկիրքը ամպերէն վեր տեղ մը՝ վայր մըն է, ուր փրկուած մարդիկ երջանիկ կապրին անվերջ ժամանակ: Անոնց համար երկիրքը նաեւ Աստուծոյ գտնուած տեղն է: Այս հիման վրայ ալ այդ «յաւիտենական կեանքը» անոնք կ'ակընկալեն անցընել նաեւ Աստուծոյ ներկայութեան: Շատ անգամ անոնք «երկիրք» եւ «դրախտ» բառերը իրարու հետ կը փոխանակեն: Բայց անոնք նաեւ կը հաւատան «դժոխք»-ի գոյութեան, ուր հոգեկան մահուան դատապարտուած չար՝ մեղաւոր մարդիկ կ'երթան անվերջ ժամանակ կրակին մէջ այրելու եւ տառապելու համար: Նախ ուսումնասիրենք այս երեւոյթը: Նման «երկիրք» եւ նման «դժոխք» կը ներկայացնեն կացութեան մը երկու բեւեռները. դրական եւ ժխտական: Աս կացութիւնը կը ներկայացնէ երկուութիւն: Միթէ ստեղծագործութեան մէջ ալ ամէն ինչ չէ՞ հիմնուած երկուութեան վրայ: Օրինակները բացայայտ են. Արու եւ էգ, բարի եւ չար, մեծ եւ պզտիկ, ուսեալ եւ անուս, երկար եւ կարճ, առողջ եւ հիւանդ ..., ինչ որ ըսենք կարելի է նաեւ անոր հակառակը գտնել: Ուրեմն եթէ «երկիրք» եւ «դժոխք» ալ երկուութիւն կը ներկայացնեն, պէտք է

հոս՝ աշխարհի վրայ ըլլան: Անոնք վայրեր չեն, այլ մեր կեանքի պայմանները եւ պատահարներն են, որոնք կարող են մարդու աշխարհիկ կեանքը դարձնել «երկինք»-ի՝ դրախտի կամ «դժոխք»-ի: Լաւ կամ վատ բոլոր պատահարներուն ճարտարապետն ալ անհատը ինքն է, որովհետեւ անհատը իր ճակատագիրը ինք կը կերտէ: Նաեւ կ'ըսենք թէ Աստուած ամենուրեք է: Եւ եթէ Աստուած իսկապէս ամենուրեք է, պէտք է ըլլայ թէ՛ խաւարամիտ մարդուն կարծեցեալ «երկինք»-ին մէջ, թէ՛ ալ անոր կարծեցեալ «դժոխք»-ին մէջ: Եթէ ըսենք, թէ Ան «դժոխք»-ին մէջ չէ, Աստուծոյ գոյութիւնը սահմանափակած կ'ըլլանք: Աստուած երկուութեան ենթակայ չէ, այլ Ան ամէն ինչի միականութիւնն է: Կան անձեր, որոնք դժոխքին համար կ'ըսեն. «Աստուած հոն չէ»: Վստահաբար անոնց ըսել ուզածը այն է, թէ մարդուն միտքը որքան կը հեռանայ Աստուծմէ ինք ալ այն աստիճանով կը կերտէ դժոխային ճակատագիր մը իր աշխարհիկ կեանքին համար: Ս. Գիրքին մէջ ակնարկութիւն կայ եօթ «երկինք»-ներու մասին: Ասոր բառացի իմաստին համաձայն խաւարամիտ մարդը նաեւ կը կարծէ, թէ եօթ զանազան վայրեր կան ամպերէն վեր:

«Երկինք»-ի մասին երկրորդ նկատողութեան առնուելիք հասկացողութիւնը, իմաստուն մարդուն հասկացողութիւնն է: Իմաստուն մարդը որոշ չափով կը հասկնայ թէ «երկինք»-ը վայր մը չէ այլ վիճակ մըն է, գիտակցութեան մակարդակ մըն է: Հետեւաբար վերոյիշեալ եօթ «երկինք»-ներն ալ եօթ զանազան վայրեր չեն, այլ եօթ զատ վիճակներ: Մարդ արարած ունի եօթ զօրութեան կեդրոններ՝ խակրաներ (chakras): Ասոնց մասին աւելի մանրամասն տեղեկութիւն տրուած է նախկին գիրքերու մէջ: Անոնք հոս պիտի չկրկնուին: (Տես «Լոյս Ի Լուսոյ» գիրքի մէջ ԺԵ. Գլուխին մէջ «Ի՞նչ են Խակրաները» եւ «Ի՞նչ է Գունապլինին» խորագրեալ երկու

յօդուածները - էջեր 439-462, ինչպէս նաեւ «Լոյս Ի Լուսոյ «Բ» - Զարթօնք» գիրքի մէջ «Եօթը» խորագրեալ Բ. Գլուխին մէջ «Զօրութեան Կեդրոններ» մասը - էջեր 100-105): Յարմար կը նկատուի հոս միայն կարճ տեղեկութիւն մը տալ: Մ. Հոգիի կենսատու զօրութիւնը մեր մէջ կը ներգործէ այդ խակրաներէն, եթէ անոնք բաց են եւ ընդունակ: Մարդ նաեւ կարող է իր ամբարած զօրութիւնը չվատնել անպէտ հետապնդումներով եւ այդ զօրութիւնը բարձրացնել ամէնէն ցածէն՝ առաջին խակրայէն մինչեւ եօթերորդը՝ գանկի վերեւի խակրան: Առաջին երեք խակրաները կը պատկանին մարդուն անասնական բնոյթին: Զորորդէն մինչեւ վեցերորդը կը պատկանին մարդուն մարդկային բնոյթին: Եօթերորդը մարդուն կու տայ Քրիստոսի յայտնութիւնը անհատին մէջ, որ է Աստուածային բնոյթ: Պօղոս յաջողեցաւ այդ զօրութիւնը բարձրացնել մինչեւ երրորդ խակրան:

«... Եթէ մարմնով՝ ո՛չ Գիտեմ եւ եթէ աստ՝ նոյն մարմնոյ՝ ո՛չ Գիտեմ Լսոյս առ Գիտեմ. յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից»: (Բ. Աորնթացիա ԺԲ:2)

«... արդեօք մարմինով էր, չեմ գիտեր. արդեօք մարմինէն դուրս էր, չեմ գիտեր. Աստուած գիտէ, այդպիսի մէկը յափշտակուեցաւ մինչեւ երրորդ երկնիքը»:

Որովհետեւ այդ եօթը զօրութեան կեդրոններէն ամէն մէկ հանգրուանը կը ներկայացնէ գիտակցութեան մակարդակի բարձրացում, Պօղոս զայն կոչած է «յափշտակութիւն»: Յիսուս իր աշակերպութեան ատեն զօրութիւնը բարձրացուց մինչեւ եօթերորդ խակրան եւ իր Աստուածային բնոյթը երեւելի ըրաւ հոն ներկայ եղող իր աշակերտներուն: Այս հիման վրայ իմաստուն մարդուն համար «երկինք»-ը կը ներկայացնէ Քրիստոսի յայտնութիւնը անհատին մէջ նաեւ բարձր՝ Քրիստոսի գիտակցութեան մակարդակ:

«Երկիրնք»-ի նկատմամբ վերելի երկու հասկացողութիւնները կը ներկայացնեն այն հասկացողութիւնը որ մարդկային տեսանկիւնէն է: Բայց Իր մարդկային բնոյթին հետ նաեւ Աստուածային բնոյթ ունեցող Յիսուս Քրիստոսի տեսանկիւնէ «Երկիրնք»-ը պարտ է ամբողջովին տարբեր իմաստ մը ունենայ: Այս ներկայ մեկնաբանութիւնը անտարակոյս հիմնուած է իմացական հասկացողութեան մը վրայ եւ ոչ փորձառական: Բայց Յիսուս կը խօսէր փորձառական հասկացողութեամբ: Եթէ Աստուծոյ ամենուրեք ըլլալը ճիշդ է եւ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնն է, ինչպէս նաեւ «Երկիրնք»-ը Աստուծոյ գըտնուած տեղը, պէտք չէ՞ որ երկիրնքն ալ հոս՝ ստեղծագործութեան մէջ ըլլայ: Նոյնիսկ «մէջ» ըսելը սխալ է, այլ պէտք է ըսուի ստեղծագործութեան մաս կը կազմէ: Կը թուի, թէ Յիսուս Քրիստոս երկու «երկիրնք»-ներու մասին կը խօսի՝ «այս երկիրնք»-ը եւ «վերին երկիրնք»-ը: Ըստ ամբողջական բնագիտութեան (quantum physics) նիւթը զօրութենէ յառաջ եկած է, որով զօրութեան մէկ արտայայտութիւնն է: Գիտունները այդ զօրութիւնը «մութ զօրութիւն» (dark energy) կոչած են, որովհետեւ անոր բնոյթը չեն գիտեր: Յիսուս մեզի այդ զօրութեան մասին խօսեցաւ՝ սորվեցուց, ան Հայր Աստուծմէ բղխած Ս. Հոգիի զօրութիւնն է: Ֆիզիքական աշխարհը, ուր Յիսուս կը գտնուէր, այդ զօրութեան արտայայտութիւնն էր եւ Յիսուս զայն կոչեց «այս երկիրնք»-ը: Իսկ Ս. Հոգիի անյայտ զօրութեան դաշտն ալ կը ներկայացնէ «վերին երկիրնք»-ը: Ըստ տիեզերաբաններու նոյնիսկ այս ֆիզիքական աշխարհը, որ մենք հաստատուն եւ մնայուն կը կարծենք, մէկ երկվայրկեանի մէջ հազար անգամ կը գոյանայ եւ կ'անհետանայ: Հետեւաբար կարելի է, որ օր մը ամբողջովին անհետանայ եւ ետ զօրութեան վերածուի:

Ահա՛, աս է Յիսուսի ըսած «Այս երկինքը պիտի անցնի»-նը: Մենք զայն կը նկատենք «աշխարհի վերջը»: Եթէ միակ ձգմարտութիւնը Աստուած է, արդեօք աշխարհը գոյութիւն ունի՞: Միթէ պէտք չէ՞ ան միայն պատրանք մը՝ երազ մը ըլլայ: Նոյնիսկ գիտունները ըսած են, թէ տեսանելի ստեղծագործութիւնը միայն ողջագիր (hologram) մըն է:

Որոշ չափով հասկնալի է նիւթին զօրութեան փոխուելով «այս երկինք»-ին «անցնիլ»-ը: Բայց ինչպէս կարելի է «վերի երկինք»-ին «անցնիլ»-ը: Այսօր տիեզերաբանները կ'ըսեն թէ տիեզերքը շարունակ կ'ընթլայնի ու կը մեծնայ: Այս հիման վրայ Ս. Հոգիի զօրութիւնը, որ Հայր Աստուծոյ «Բան»-ն է եւ Հայր Աստուծմէ բղխած, կը շարունակէ բղխիլ: Ըստ Յիսուսի ըսածին շատ հաւանական է, որ Ս. Հոգիի զօրութիւնը, որ Հօրմէն բղխած է, «օր» մը ետ Հայր Աստուծոյ վերադառնայ եւ զօրութեան ազդավայրն ալ, որ «վերին» երկինքն էր, անհետանայ:

Յիսուսի այս խօսքին վերջին մասը ակնարկութիւն մըն է բոլոր անոնց, որ աշխարհի վրայ կ'ապրին, բայց առանց իրենց պարտականութիւնը լրացնելու կը մեռնին: Անոնց մարմնին մահուան հետ անոնց անհատականութիւնն ալ կը մեռնի, կ'երթայ: Բայց անոնք, որոնք կը յաջողին իրենց պարտականութեան մէջ, որ Քրիստոսի գիտակցութիւնը՝ Աստուածայայտնութիւնը իրենց մէջ իրականացնելն է, անոնց մարմնին մահուան ատեն Քրիստոս անոնց անհատականութեան յարութիւն կը պարգեւէ եւ անոնք զօրութեան դաշտավայրին մէջ կը գոյատեւեն եւ երբ «վերի երկինք»-ն ալ «անցնի», անոնք կը ձուլուին Աստուծոյ մէջ եւ կ'ըլլան Անոր մաս եւ բաժինը: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը», հետեւաբար Աստուած ինք կեանքն է: Անոնք ալ Աստուծոյ մէջ յաւիտեան կեանք

կ'ունենան: Ահա՛, աս է իմաստը «պիտի չմեռնին»-ին: Պէտք չէ մոռնալ թէ յաւիտենականութիւնն ալ միայն ներկան է, ժամանակի դրութենէ դուրս ըլլալը եւ ոչ անվերջ ժամանակ:

Հատար 11բ

Այն օրերուն երբ դուք մեռածը կ'ուսէիք, զայն կը կենդանացնէիք: Երբ լոյսին գաք ի՞նչ պիտի ընէք: Այն օրը երբ մէկ էիք, երկու եղաք: Բայց երբ երկու եղաք ի՞նչ պիտի ընէք»:

Յիսուս Քրիստոսի այս խօսքը շատ հաւանական է նախորդին շարունակութիւնը ըլլայ: Յիսուսին առաջին նախադասութիւնը մարդկային կեանքն է, որ կը նկարագրէ: Մարդ իր կեանքի ընթացքին ապրելու համար՝ կեանքը շարունակելու համար, իր սնունդը կ'առնէ կերած կերակուրներէն, որոնք կամ մեռած՝ զոհուած կենդանիի միսն է, կամ ալ արմատէն բրցուած եւ մեռած բոյսը: Երբ անոնք կը մարսուին եւ իր մարմնին մաս կը կազմեն, անոնք դարձեալ իրենց մէջ կեանքի եկած կ'ըլլան, որով իրենց մարմնին մէջ կ'ապրին, ոչ իբրեւ անասուն կամ բոյս այլ իբրեւ մարդ: «Երբ լոյսին գաք ի՞նչ պիտի ընէք»-ին իմաստը հետաքրքրական է: «Լոյս»-ը Քրիստոսն է: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞^o ըսած. «Ես եմ աշխարհի լոյսը»: «Լոյսին գալը»-ը Քրիստոսը մեր մէջ յայտնաբերելն է: Քրիստոսի մէջ լուծուիլն է: Այն ատեն մարդ պիտի հասկնայ, թէ ամէն ինչի կեանքը Քրիստոսն է եւ «ի՞նչ պիտի ընէք» հարցումը ակնարկութիւն մըն է անողզակի ըսելու թէ Քրիստոսի հետ մէկ ըլլալով դուք անոնց՝ անասուններուն եւ բոյսերուն, կեանք պիտի տաք:

Երբ Յիսուս կ'ըսէ. «Այն օրը երբ մէկ էիք, երկու եղաք» կ'ուզէ մատնանշել թէ ամէն ինչ, ինչպէս նաեւ ամէն մարդ, աշխարհ գալէ առաջ, Աստուծոյ հետ մէկ

էին եւ միականութեան մասը եւ բաժինը: Ինչպէս առաջուց գրուած է, ստեղծագործութիւնը հիմնուած է երկուութեան վրայ: Ահա՛, աս է իմաստը «Երկու եղաք»-ին: Երկուութեան մէջ մարդ ինքզինք անջատ կը կարծէ ուրիշ ամէն ինչէ: Յիսուս Քրիստոսի մարդուն ուղղուած վերջին հարցումը շատ յատկանշական է: Ան մարդուն խորհիլ կու տայ նկատմամբ իր կեանքին նպատակին: Հիմայ որ մարդ ստեղծագործութեան մէջ է եւ այդ երկուութեան ենթակայ, ի՞նչ պիտի ընէ: Այս հարցումը իր մէջ կը պարունակէ լուեւայն իմանալի պատասխանը: Մարդ պարտ է այդ հարցումին պատասխանը գտնել իր այս աշխարհիկ կեանքի ընթացքին եւ պատասխանն ալ շատ պարզ է: Յիսուս աս էր, որ մեզի սորվեցուց իր կեանքով ու խօսքերով: «Մէկ էինք», «Երկու եղանք» եւ հիմակ ալ երբ «Երկու ենք» պէտք է ջանք թափենք, որ դարձեալ «մէկ ըլլանք»: Մէկ ըլլալն ալ Աստուծոյ միանալն է, որ միայն անձին մէջ Քրիստոսի յայտնութեամբ կարելի է: Միականութիւնը տեսնել եւ հասկնալ կը պատահի շնորհիւ Քրիստոսի պարգեւած բարձր գիտակցութեան:



ՀԱՄԱՐ 12

Աշակերտները Յիսուսի ըսին. «Գիտենք թե մեզմէ պիտի երթաս: Ո՛վ մեր վրայ մեծ պիտի ըլլայ»: Յիսուս անոնց ըսաւ. «Ան տեղը ուր որ դուք պիտի գաք, արդար Յակոբոսին պիտի երթաք, որուն Համար երկիր եւ երկինք գոյացան»:

Անկարելի է այս Համարը բառացի իմաստովը հասկնալ: Յակոբոս, որ արժանացած էր «արդար» մականունին Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը եղած է: Ոմանք, ըստ Ս. Գիրքին, զայն կը նկատեն որպէս Յիսուսի խորթ եղբայրը, բայց պէտք է հասկնանք, թէ երբ Ս. Գիրքին մէջ գրուած ըլլայ Յիսուսի եղբայրները, շատ հաւանական է այդ անարկուծիւն մըն է բոլոր անոնց Համար, որոնք կը հաւատային եւ Անոր աշակերտները կ'ըլլային: Յակոբոս սկզբնական շրջաններուն Յիսուսի քարոզչութիւններուն մասին վարանոտ եւ տարակուսող եղած է, իսկ յետոյ ճշմարիտ հաւատացեալ եւ հետեւորդ:

Յակոբոս քարոզած է հրեաներուն եւ ոչ հեթանոսներուն: Ան հրեաներու կողմէ քարկոծուելով նահատակուած է Ք.Յ. 62 թուականին, ըստ ոմանց՝ 69-ին տաճարին տանիքէն վար նետուած է եւ որովհետեւ վիրաւորուած է եւ չէ մեռած, քարկոծելով մեռցուած է: Յակոբոսի գրած «Թուղթ»-ը Նոր Կտակարանին մէջ գոյութիւն ունի «Յակոբոս առաքեալի ընդհանրական նամակը» խորագրեալ՝ հինգ գլուխներով, (Գրաբարով՝ Թուղթ սրբոց առաքելոյն Յակովբայ կաթողիկէ) խորագրով: Եթէ կարգանք Յակոբոսի գրած նամակը պիտի տեսնենք որ ան հոն հրաշալի կերպով ամփոփած է կատարելութեան ուղին, որ ամէն անձ պարտ է հետապնդել Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ իրականացնելու համար:

Երկիր եւ երկինք գոյացան մօտաւորապէս երկու հազար տարի առաջ ապրած Յակոբոսէն շատ աւելի առաջ: Հետեւաբար Յիսուսին ըսածին քոնէ մէկ մասը պէտք է վերացական իմաստ մը ունենայ:

Յիսուս Քրիստոսի այս խօսքը պատասխան մըն էր աշակերտներուն հարցուցած հարցումին: Աշակերտներուն հարցումը այն էր, թէ Յիսուսի մեկնելէն վերջ զիրենք ո՞վ պիտի առաջնորդէր: Յիսուս ալ անոնց կը յանձնարարէ «արդար Յակոբոս»-ին երթալ: Միթէ, երբ թլփատութեան մասին հարց ծագեցաւ Պօղոս եւ Պետրոս Երուսաղէմ չգացի՞ն եւ «հեթանոսներուն համար թլփատուելու պէտք չկայ»՝ վերջնական որոշումը Յակոբոս չտուա՞ւ (Գործք Առաքելոց ԺԵ:13-21): Իսկ եթէ այդ համարներուն մէջ Յակոբոսի ըսածը ուշադրութեամբ կարդանք որոշ չափով պիտի հասկնանք նաեւ Յիսուսի ըսածին իմաստը: Երկինք եւ երկիր գոյացան Յակոբոսի գրած կատարելութեան ուղին զատողներուն համար, որովհետեւ անոր նպատակը մարդու միջոցով Աստուածայայտնութեան իրականացումն է: Ստեղծագործութեան նպատակն ալ Աստուածայայտնութիւնն է:



Ձի եւթ եպեսօէ Իմաստհօիւն 'ի միսս քո,
Եւ ՉԱՆՃԱՐ ԱՆՁԻՆ ՔՈՒՄ
ԲԱՐԻ ՀԱՄԱՐԵԱՅԻԱ ԼԻՆԵԼ:

(Առակք Սողոմոնի Բ:10)

ՀԱՍԱՐ 13

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Քաղաքացիք զիս, թէ Ես որու կը նմանիմ»: Սիմոն Պետրոս ըսաւ. «Դուն արդար Հրեշտակի մը պէս ես»: Մատթէոս իրեն ըսաւ. «Դուն Հասկացողութեան տէր իմաստուն մարդու մը կը նմանիս»: Թովմաս իրեն ըսաւ. «Տէր, անտարակոյս բերանս պիտի տատամնի եթէ փորձեմ ըսել թէ դուն ով ես»: Յիսուս ըսաւ. «Ես քու տէրոյ չեմ, որովհետեւ դուն իմ չափած ու տուած պղպջացող ակէն խմեցիր եւ արբեցար»: Եւ զինք մէկտի տարաւ եւ անոր ականջին երեք բառ ըսաւ: Երբ Թովմաս իր ընկերներուն վերադարձաւ իրեն Հարցուցին. «Յիսուս քեզի ի՞նչ ըսաւ»: Թովմաս անոնց ըսաւ. «Եթէ ձեզի ըսեմ միայն մէկ բառը, որ Ինք ըսաւ, քար կ'առնէք եւ զիս կը քարկոծէք, եւ այդ քարերէն կրակ պիտի ելլէ եւ ձեզ բոլորովին պիտի այրէ:

Յիսուս նման Հարցում մը իր աշակերտներուն հարցուցած էր, որ նկարագրուած է Մատթէոսի Աւետարանին մէջ հետեւեալ կերպով.

«Եւ ելեալ Յիսուս ՚ի Կողմանս Փիլիպպէայ Կեսարէայն, Հարցանէր ցաշակերտսն՝ եւ ասէր. «Դո՞ւ ո՞վ ասէն պինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ: Եւ նո՞վա ասէն, ոմն՝ ԿնովՀաննէա մկրտիչ, եւ այլի՞ պէղիս, եւ կէսի՞ պէրեմիս, կամ Կմի ո՞վ ՚ի մարգարէիցն:» (Մարքէոսի Ժ.Գ:13-14)

«Յիսուս Փիլիպպոսի Կեսարիայի կողմերը երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու ըսաւ. «մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ ես Որդին մարդոյ»: Անոնք ըսին. «Ոմանք կ'ըսեն թէ ՅովՀաննէա Մկրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»:»

Մատթէոսի Աւետարանին մէջ այն ինչ որ Յիսուս հարցուցած իր հոգեւոր մասին հանրութեան կարծիքն էր: Իսկ Թովմասի այս Աւետարանին մէջ Ան իր աշակերտներուն կարծիքը կը հարցնէ: Մատթէոսի Աւետարանին մէջ Պետրոս Յիսուսի համար Աստուծոյ Որդին է ըսած էր, Յիսուս ալ չէր հակասած: Հոս Պետրոս Յիսուսը կը նմանցնէ «արդար Հրեշտակ»-ի մը: Պէտք չէ մոռնալ, թէ Աւետարաններուն մէջ «Հրեշտակ»-ը կը ներկայացնէ Աստուծոյ զօրութիւնը, հետեւաբար Աստուծոյ մարդեղութիւնը: Իսկ Մատթէոս Զինք կը նմանցնէ «Հասկցողութեան տէր իմաստուն մարդու մը»: Միթէ չենք ըսեր, թէ Յիսուս Քրիստոս ունէր թէ՛ մարդկային, թէ՛ ալ Աստուածային բնոյթներ: Թովմաս նախ Յիսուսը Տէր կը կոչէ ու կը տատամսի եւ չի համարձակիր ըսել այն ինչ որ ինք ըսել կ'ուզէ: Յիսուսի առաջին պատասխանը «Ես քու Տէրդ չեմ» կ'ըլլայ: Յիսուսի այս պատասխանին որպէս առաջին մէկ մեկնաբանութիւն կարելի է ըսել թէ Յիսուս կը խօսի որպէս մարդ, հասկցնելու համար թէ ամէն մարդուն Տէրը իր ներքին Քրիստոսը՝ Աստուածն է: Որպէս երկրորդ մեկնաբանութիւն, կարելի է մարդ իր ազատ կամքով որպէս իր տէրը զատէ իր «Ես»-ը, քան թէ Քրիստոս, հետեւաբար Քրիստոս ալ ըսած է «Ես քու Տէրդ չեմ»: Բայց երբ շարունակենք Յիսուս Քրիստոսի տուած պատասխանը, պիտի տեսնենք որ վերելի երկրորդ մեկնաբանութիւնը Թովմասին չի վերաբերիր, որովհետեւ Յիսուս նաեւ կ'ըսէ. «դուն իմ չափած ու տուած պղպջացող ակէն խմեցիր եւ արբեցար»: Այն անձը որ Քրիստոսի ակէն «կը խմէ» ու «կ'արբենայ» անկարելի է, որ իր «Ես»-ը զատած ըլլայ իբրեւ իր Տէրը:

Այս համարին մնացեալ մասը բոլորին համար թագուն կը մնայ, որովհետեւ մեզի չէ տրուած Յիսուսի ըսած այդ երեք բառերը:

ՀԱՄԱՐ 14

Յիսուս անոնց ըսաւ. «Եթէ ծով պահէք, մեղք գործած պիտի ըլլաք: Եթէ աղօթէք, պիտի դատապարտուիք: Եթէ ողորմութիւն տաք ձեր Հոգիներուն պիտի վնասէք: Եթէ որեւէ երկիր մը երթաք եւ Հոն ճամբորդէք, եւ ձեզ ընդունին, կերէք ինչ որ ձեզի հրամյնեն: Անոնց մէջ գտնուող Հիւանդները բժշկեցէք: Որովհետեւ այն ինչ որ բերնէն կը մաննէ ձեզ չի պղծեր, բայց այն ինչ որ ձեր բերնէն կ'ելլէ, ան կրնայ ձեզ պղծել»:

Այս համարը պարտ ենք երկու մասի բաժնել եւ այնպէս մեկնաբանել: «Եթէ»-ներու առաջին երեք նախադասութիւնները առաջին հերթին կը թուին վրդուվիչ ըլլալ, որովհետեւ կը թուին հակասել այն ինչ որ սորված ենք կանոնական (canonical) Աւետարաններէն:

Այդ երեք նախադասութիւնները կարելի է մեկնաբանել անոնց բառացի իմաստին համաձայն: Որովհետեւ գոնէ մակերեսային հասկացողութեամբ կը թուին հակասել այն ինչ որ տրամաբանական է, շատ հաւանական է, որ անոնք նաեւ ունենան փոխաբերական իմաստներ: Ստորեւ նախ անոնց բառացի իմաստին մեկնաբանութիւնը պիտի ներկայացուի եւ յետոյ ալ՝ փոխաբերականը:

Նախ նկատողութեան առնենք Յիսուսի հետեւեալ խօսքը. «Եթէ ծով պահէք, մեղք գործած պիտի ըլլաք»: Յիսուս ինք քառասուն օր ծով պահեց եւ յաճախ լեռ կը բարձրանար, կը մեկուսանար եւ ծոմապահութեամբ կ'աղօթէր: Երբ աշակերտները չկարողացան դիւահարէն դէւը հանել, Յիսուս ըսաւ. «աս կարելի է միայն աղօթքով ու ծոմապահութեամբ»: Հետեւեալ մարդ ինչո՞ւ մեղք գործած կ'ըլլայ երբ ծոմ պահէ: Ծոմապահութիւնը ինքնազսպումի մարզանք կը նկատենք, բայց ծոմապահութիւնը Փիզիքականը եւ աշխարհայինը անտեսել է: Այն անձը որ պատրաստ չէ ծոմա-

պահույթեան, պէտք չէ ծոմ պահէ: Ան կը վնասէ իր մարմնին, որ Աստուծոյ տաճարն է: Միթէ նման արարք մը պէտք չէ՞ մեղք նկատուի: Ան պղծած կ'ըլլայ Աստուծոյ տաճարը: Ճիշդ այս հիման վրայ ալ Յիսուս չյանձնարարեց իր աշակերտներուն ծոմ պահել: Իսկ այն անձը, որ հոգեկան արթնութեամբ որոշ չափով յայտնաբերած է Քրիստոս իր մէջ, կարող է Ս. Հոգիի յաւելեալ կենսատու զօրութիւն ստանալ եւ մարմինը կենսատու զօրութեամբ սնուցանել, քան թէ այդ զօրութիւնը ստանայ քիմիական զօրութենէ: Քիմիական զօրութիւնն ալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնն է, բայց մեզի կը հասնի արեւի, բոյսի եւ կենդանիներու միջոցով: Եթէ մարդ չէ հասած այն հոգեկան մակարդակին, որ կարենայ կենսատու զօրութիւնը ստանալ առանց միջնորդներուն, պէտք չէ ծոմ պահէ: Իսկ եթէ ծոմ պահէ մեղանշած կ'ըլլայ վնասելով իր մարմնոյն՝ Աստուծոյ տաճարին: (Տես նաեւ Հատոր Ա. «Յիսուս անապատին մէջ եւ իր փորձութիւնը» խորագրեալ յօդուածին մէջ «Ծոմապահութիւնը» գրութիւնը՝ էջեր 46-51)

Յիսուսի երկրորդ նախադասութիւնը «Եթէ աղօթեք, պիտի դատապարտուիք» նոյն աստիճանի վրդովիչ ըլլալ կը թուի: Յիսուս ինք յաճախ կ'աղօթէր եւ բազմիցս յանձնարարուած է անընդհատ աղօթել: Հետեւաբար Յիսուսի այս խօսքն ալ առաջին հերթին կը թուի հակասել, այն ինչ որ սորված ենք կանոնական Աւետարաններէն: Յիսուսի այս խօսքէն պէտք է հասկնալ, թէ հսկայ տարբերութիւն մը կայ Յիսուսի այլուր ըսած աղօթքին եւ աղօթքի մասին մեր հասկացողութեան միջեւ: Յիսուսի այս ակնարկութիւնը աղօթքի նկատմամբ մեր հասկացողութեան համար է: Մարդ ընդհանուր առմամբ Աստուծո՞ իր ներքին Քրիստոսը գտնելու համար չ'աղօթեր, այլ՝ կ'աղօթէ իր կեանքի դժուարութիւններէն ազատելու համար: Նման աղօթք մը կը թուի եսասիրութեան արտայայտութիւն մը ըլլալ: Իսկ

եթէ այս է կացութիւնը, չե՞նք խորհիր թէ դատապարտութեան արժանի կ'ըլլանք: Մարդ նաեւ կ'աղօթէ իր «Շն»-էն եկած հազար-ու-մէկ ցանկութիւններու եւ կիրքերու իրականացման համար: Արդեօք կը կարծե՞նք թէ նման աղօթքներ կ'իրականանան: Միթէ Յիսուս այլուր չե՞ ըսած. «Երբ կ'աղօթէք շատախօս մի ըլլաք», նաեւ այլուր «լռութեամբ աղօթել», ինչպէս նաեւ «Խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը եւ ամէն ինչ կը ստանաք», եւ դարձեալ «Ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ ինչ բան պիտոյ է ձեզի»: Յիսուսի այս սորվեցող-ցածներուն հիման վրայ կը թուի թէ մեր աղօթքներուն մեծամասնութիւնը սխալ է: Միթէ չե՞նք դատապարտուիր մեր գործած բոլոր սխալներուն համար: Ճշմարիտ աղօթքը լռելեան աղօթքն է, որ խոկումն է: Նման աղօթք մը միայն մէկ նպատակ ունի, գտնել՝ յայտնաբերել ներքին Քրիստոսը: Ահա՛, աս է մարդուն կեանքին բուն նպատակը եւ աղօթքին ալ բուն նպատակը: Յիսուս մեզի սորվեցուց աղօթել եւ տուաւ Տէրունական աղօթքը, բայց զայն յաճախ կը կրկնենք առանց հասկնալու մեր ըսածներուն իմաստը: Յիսուս ինք բազմիցս աղօթեց Հայր Աստուծոյ, բայց ընդհանուր առմամբ իր աղօթքները խոկում էին: Յովհաննու Աւետարանին մէջ աղօթեց իր աշակերտներուն համար: Յիսուս միայն Գեթսեմանիի պարտէզին մէջ աղօթեց ինք իրեն համար, որովհետեւ իր մարդկային բնոյթը, գիտնալով գալիք Ֆիզիքական չարչարանքները, խռոված էր: Յիսուս իր այդ աղօթքին դրական «պատասխան» մը չստացաւ: Բայց Յիսուս իր այդ աղօթքին վրայ նաեւ անմիջապէս աւելցուց «Քու կամքդ ըլլայ» եւ Աստուծոյ կամքն ալ եղաւ: Հետեւաբար աղօթքին նպատակը պէտք չէ ըլլայ Աստուծոյ ցանկութիւններու ցանկ մը ներկայացնել, այլ պէտք է՝ իր կամքը խնդրել եւ ընդունիլ: Մեր կեանքի բոլոր պատահարները՝ լաւ

ու վատ, Աստուծոյ կամքն են, հետեւաբար առանց տրտնջալու պէտք է բոլորն ալ ընդունինք եւ սորվինք մեր դասերը:

Յիսուսի երրորդ նախադասութիւնը «Եթէ ողորմութիւն տաք ձեր Հոգիներուն պիտի վնասէք» կը թուի նոյն աստիճանով վրդովիչ ըլլալ, որովհետեւ կը թուի հակասել այն ինչ որ մեզի ողորմութեան նկատմամբ ըստեաժ է: Ողորմածութիւնը Աստուածային յատկութիւն մըն է, հետեւաբար ինչո՞ւ մեր Հոգիներուն վնասէ: Ընդհանուր առմամբ մարդիկ երբ ողորմութիւն կու տան զայն կը յայտարարեն հանրութեան: Մեր բարեսիրական կազմակերպութիւնները եւ նոյնիսկ Եկեղեցիները նուիրատուներու ցանկերը չե՞ն հրատարակեր: Նման նուիրատուութիւններ կամ ողորմածութիւն, որոնք կ'արժանանան հանրութեան գնահատանքին, պատճառ կ'ըլլան նուիրատուին մէջ հպարտութեան եւ ողորմած ըլլալու գոհունակութեան, քան թէ եղածը նկատելու Աստուծոյ խնամակալութիւնը եւ իր պարզապէս այդ խնամակալութեան միջնորդը ըլլալը: Ողորմութիւն տուողին ուրախութիւնը պէտք չէ բարելաւութիւն մը ըրած ըլլալու գոհունակութիւնը ըլլայ, այլ՝ միայն Աստուծոյ ծառայած ըլլալու գոհունակութիւնը: Երբ անձը իր ողորմածութեամբ կը հպարտանայ, ինք վնաս կը հասցնէ իր Հոգիին: Պէտք չէ մոռնալ թէ հպարտութիւնը մահացու մեղքերէն մին է:

Այս համարին երկրորդ մասին անցնելէ առաջ նկատողութեան առնենք վերելի երեք նախադասութիւններու փոխաբերական իմաստները եւ ըստ այնմ գանոնք մեկնաբանենք:

Նախ պէտք է հասկնանք, թէ «ծոմ պահել» կը նշանակէ ճաշ չուտել: Բայց ծոմապահութիւնը փոխաբերական առումով ուտեստեղէնէ զատ կրնայ ներկայացնել որեւէ բանէ հեռու մնալ ալ: Բազմիցս կրկնուած

է, թէ մարդ պարտ է ինք զինք ձերբազատէ աշխարհիկ հետապնդումներէ եւ յարի հոգեկանին: Ուրեմն ի՞նչէ հեռանալ մեզի ժխտական արդիւնք կրնայ տալ: Եթէ մարդ հեռանայ կատարելութեան ուղիէն, Աստուծոյ խօսքէն, Յիսուսի սորվեցուցածներէն, անոնցմէ ծոմ պահած կ'ըլլայ: Հարկ չկայ յաւելեալ բացատրականի, թէ այն անձը որ չի կիրարկեր Յիսուսի սորվեցուցածները, մեղք կը գործէ: Ըստ երկրորդ նախադասութեան. «Եթէ աղօթեք, պիտի դատապարտուիք» մարդիկ Աստուծոյ թագաւորութեան գալուստին համար անընդհատ կ'աղօթեն, բայց որեւէ ջանք չեն ըներ զայն իրականացնելու համար: Միթէ մարդը՝ ստեղծագործութեան գազաթնակէտը, Աստուածայայտնութեան միջոցը չէ՞: Պէտք չէ՞ ամէն անհատ իր մէջ Քրիստոս յայտնաբերէ: Մարդիկ աղօթքով շատ բան կը խնդրեն, բայց ճշմարտութիւնը այն է, որ անոնք չեն ուզեր եւ չեն կրնար աշխարհէն բաժնուիլ: Մարդկային «բերնի ծամոց» աղօթքները անտարակոյս պիտի դատապարտուին: Իսկ երրորդ նախադասութիւնը, որ ողորմութիւն տալն է, կը ներկայացնէ ուրիշի մը բարելաման համար օգտակար ըլլալ: Անտարակոյս ողորմութիւնը շատ մը երեւոյթներ ունի եւ մեծամասնութեամբ ֆիզիքականի՝ նիւթականի մասին կը խորհինք: Բայց երբ ողորմութեան փոխաբերական իմաստը նկատի առնենք ան շատ դիւրութեամբ հոգեկան գետնի վրայ օգտակար ըլլալ եւ անձին մէջ հոգեւոր արթնութեան մատակարարումը կրնայ ներկայացնել: Պարզապէս «հաւատա եւ պիտի փրկուիս» ըսել, ողորմութիւն տալ է, որ տուողին վնաս կը հասցնէ: Ասոր օրինակը Յիսուս մեզի տուած է հետեւեալ համարով.

«Վա՛յ չէս օրինականացո՛ւ. սի՛ Խա՛ն-ցանէ՛ք
սի՛ականս Գիթո-թեանն, Դո-ւ՛՝ ո՛չ միսնէ՛ք, է-
որ միսնէլոցն էն՝ արգեւ-ւ՛ք»: (Ղուկաս ԺԼ:52)

«Վա՛յ ձեզի՝ օրինականներուդ, որ վերցուցիք
գլխուլթեան բանալին: Դո՛ւք չմտաք, եւ մտնողներն ալ
արգիլեցիք»:

**Միթէ Յիսուսին տուած «վա՛յ»-ը փաստ չէ, որ նման
սխալ քարոզչութիւններ հոգեկան յառաջացման մէջ
մեծ վնաս կը հասցնեն:**

Այս համարին երկրորդ մասը բացայայտ է եւ կը
ներկայացնէ այն ինչ որ մարդը կը պղծէ: Յիսուսի այս
խօսքը Կանոնական Աւետարաններուն մէջ ալ ներկա-
յացուած է եւ այդ համարին մեկնաբանութիւնը
տրուած է այս գիրքերու շարքաւորումին Գ. հատորին
մէջ «Ի՞նչ Բան Մարդը կը Պղծէ» գրութեամբ (էջեր 148-
150): Հետեւաբար ան հոս պիտի չկրկնուի:



ՅօՐՀՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՈՅ ԲԱՐՁՐԱՍՅԻ ԸՆԴԱՔ.

ԵՒ ԲԵՐԱՆՕՔ ԱՊՊԱՐՇՏԱՅ ԿՈՐԾԱՆԵԱՅԻ:

ԱՐՀԱՄԱՐՇԷ ԶՐԱԿԵՐՍ ԱՅՐ ՊԱԿԱՍԱՄԻՏ,


ԱՅՐ ԻՄԱՍՏՈՒՆ ԶԼՈՒԹԻՒՆ ՍԻՐԷ:

(Առակք Սողոմոնի ԺԱ:11-12)

ՀԱՄԱՐ 15

Յիսուս ըսաւ. «Երբ տեսնէք Ան որ կնոջմէ մը չէ ծնած, մինչեւ գետին ծուլով անոր երկրպագեցէք: Ան ձեր Հայրն է»:

Ո՞վ է Ան, որ կնոջմէ չէ ծնած: Միակ էութիւնը, որ ծնունդ չունի Աստուածն է: Այն որ մօրմէ մը չէ ծնած ընդհանուր ստեղծագործութիւնն է, որ Աստուծոյ արտայայտութիւնն է: Յիսուս Քրիստոսի ըսածը այն է, թէ երբ Աստուած տեսնէք մինչեւ գետին երկրպագութիւն ըրէք: Մարդ ի՞նչպէս Աստուած կը տեսնէ: Այդ կ'ըլլայ միայն բարձր գիտակցութիւն կերտելով եւ պատրանքը փոխանակ ճշմարտութիւն կարծելու, ճշմարտութիւնը տեսնելով եւ ամէն ինչի միակամութիւնը հասկնալով: Այս հիմամբ ալ հասկնալ թէ ամէն ինչ Աստուծոյ մէկ-մէկ արտայայտութիւններն են, հետեւաբար պաշտել համայն ստեղծագործութիւնը: Այս պաշտամունքը եւ երկրպագութիւնը ոչ բացառիկ ծէսեր կատարելն է եւ ոչ ալ ֆիզիքական երկրպագութիւնը: Հոգեկան գետնի վրայ մինչեւ գետին երկրպագել կը նշանակէ «Ես»-ը ամբողջովին նուազեցնել եւ չէզոքացնել: Այս հիման վրայ մարդ կ'ապրի միայն Աստուծոյ ծառայելու համար եւ ոչ եսասիրութեամբ՝ անձնական շահի կամ եսասէր նպատակներու համար: Իսկ Աստուած պաշտելն ալ խնամել է ընդհանուր ստեղծագործութիւնը՝ բնութիւն, բոյս, անասուն կամ ուրիշ մարդիկ՝ ինչպէս մայր մը կը խնամէ իր նորածին զաւակը, քան թէ անոնցմէ օգտուիլ կամ զանոնք շահագործել:



ՀԱՄԱՐ 16

Յիսուս ըսաւ. «Կարելի է, որ մարդիկ խորհին թէ Ես եկած եմ աշխարհի վրայ խաղաղութիւն բերելու եւ չեն գիտեր թէ աշխարհի վրայ բաժանում բերելու եկած եմ, կրակ, սուր եւ պատերազմ: Եթէ Հինգ Հոգի կայ տան մը մէջ, երեքը դէմ պիտի ըլլան երկուքին եւ երկուքն ալ երեքին, Հայրը սղուն դէմ եւ սղան Հօրը դէմ եւ պիտի մնան միայնակ»:

Այս համարին մէջ Յիսուսի խօսքերը կրկնուած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Հետեւաբար հոս յաւելեալ մեկնաբանութիւն պիտի չտրուի: Տես Գ. հատորին մէջ էջեր 227-233:

ՀԱՄԱՐ 17

Յիսուս ըսաւ. «Ես ձեզի պիտի տամ այն ինչ որ աչքը չէ տեսած, ականջը չէ լսած, ձեռքը չէ դպչած եւ ինչ որ մարդու սրտին մէջ չէ մտած»:

Այս համարին մէջ Յիսուս բացայայտ կ'ընէ, թէ այն ինչ որ Ինք մեզի պիտի տայ արտաքին աշխարհի հետ կապ մը չունի: Երբ Ան կ'ըսէ. «աչքը չէ տեսած, ականջը չէ լսած, ձեռքը չէ դպչած» ակնարկութիւնը մարդուն հինգ զգայարաններուն համար է: Հինգ զգայարանները մարդուն միայն արտաքին աշխարհէն տեղեկութիւն կու տան: Հետեւաբար Յիսուսի մեզի տուածը արտաքին աշխարհին չի պատկանիր: Իսկ եթէ ան արտաքին աշխարհին չի պատկանիր պէտք է պատկանի ներքին «աշխարհ»-ին: Մարդուն խորհուրդները եւ զգացումները իր ներքին «աշխարհ»-ին կը պատկանին, որովհետեւ անոնք մտային են: Մտային «մարմին»-ն ալ թափանցած է մարմնին ամէն մէկ բջիջին մէջ, սակայն գլխաւորաբար կը գործէ ուղեղի եւ «սրտի» միջոցով: Յիսուս նաեւ կը յայտարարէ թէ Իր

տուածը մարդուն սիրտին մէջ ալ չէ: Ս. Գիրքին մէջ «սիրտ» բառը եւ «միտք» բառը յաճախ փոփոխակի գործածուած են: Ուրեմն Յիսուս Քրիստոսի մեզի տուածը ի՞նչ է, եթէ ան ոչ արտաքին աշխարհէն է եւ ոչ ալ ներքին՝ միտքէն: Մարդուն ճշմարիտ էութիւնն ալ ներքին է եւ ոչ արտաքին: Ան մտային ալ չէ, այլ ան անհատին հոգին՝ անոր զօրութեան «մարմին»ն է, այն ինչ որ կը կենդանացնէ թէ՛ Փիզիքական մարմինը եւ թէ՛ գիտակցութիւն կու տայ մտային «մարմն»-ին: Մարդուն այդ էութիւնը Քրիստոս ինքն է: Յիսուսի ըսածն ալ այն է, թէ ինք մեզի Քրիստոսը կու տայ, որ բոլոր կեանքերուն ակն է: Աս ալ կը համապատասխանէ Յիսուսի այլուր ըսած յաւիտենական կեանքին: Միթէ ըստ կանոնական Աւետարանին Քրիստոս չէ՞ ըսած. «Ինծի եկէք, ես ձեզի յաւիտենական կեանք պիտի տամ»:



Երանելի է ԿՐ ՈՐ լուիծէ Ինձ,
ԵՒ յԱՐԴ ՈՐ ՁՃԱՆԱՊԱՐՀԱ ԻՄ ՊԱՀԻԾԷ:
ՏԵՐԻԾԻ ԱՊ ԴՐՈՒՄԱ ԻՄ ՀԱՆԱՊԱՁ.
ԵՒ ՊԱՀԻԾԷ ՉԱԵԱՄԱ ՄՏԻԾ ԻՄՈԾ:
ՁԻ ԵԼՔ ԻՄ ԵՆ ԵԼՔ ԿԵՆԱԾ.
ԵՒ ՊԱՏՐԱՍՏԻՆ ԿԱՄՔ ԻՄ 'Ի ՏԵԱՊՆԷ:

(Առակք Սողոմոնի Ը:34-35)

ՀԱՄԱՐ 18

Աշակերտները Յիսուսին ըսին. «Ըսե՛ մեզի մեր վախճանը ի՞նչպես պիտի ըլլայ»: Յիսուս ըսաւ. «Դուք սկիզբը (ակը) գտած էք, որ վախճանը կը փնտռէք: Որով ուր որ սկիզբն է հոն ալ վախճանը պիտի ըլլայ: Օրհնեալ է ան որ սկզբնաւորութեան կանգնած է եւ ան պիտի գիտնայ վախճանը, ան մահ պիտի չհամտեսէ»:

Անտարակոյս, աշակերտները իրենց ֆիզիքական աշխարհիկ կեանքին համար հարցուցին թէ ինչ պիտի ըլլայ իրենց վախճանը: Յիսուսի պատասխանը ամբողջովին տարբեր «մակարդակի» վրայ էր: Յիսուս կը խօսէր հոգիին մասին, ոչ թէ մարմնին: Այսօր նոյնիսկ գիտնականները փաստած են թէ նիւթը՝ բոլոր «մարմին»-ները պատրանքային են: Ան միայն ողջագիր (hologram) մըն է: Նիւթը, որ կը կարծենք թէ մնայուն պինթ մարմին մըն է, մէկ երկվայրկեանի մէջ հազար անգամ կը գոյանայ եւ կ'անհետանայ: Այսինքն մէկ երկվայրկեանի մէջ նիւթը հազար անգամ զօրութեան կը փոխուի եւ զօրութիւնն ալ՝ հազար անգամ նիւթի: Նիւթին ալը զօրութիւնն է: Հետեւաբար, մարմինը պատրանքային է, բայց հոգին ճշմարիտ: Մարմինը մահկանացու է, բայց հոգին անմահ: Մարմինը հողէն եկած է եւ հողին կը վերադառնայ: Հոգին Աստուծոյ զօրութենէն եկած է եւ Անոր «Որդի»-ն է՝ Քրիստոսը: Այս հիման վրայ այն անձը, որ իր ճշմարիտ էութեան ալը գտնէ, այսինքն իր ներքին Քրիստոս իր մէջ յայտնաբերէ, այն ատեն նաեւ պիտի գիտնայ իր վախճանը, որ միանալն է Քրիստոսի՝ Անոր մէջ լուծուիլ: Այս հանգրուանին ան կը գիտնայ թէ՛ ալը, թէ՛ ալ վախճանը: Անհատը նոյնացած կեանքի ալին՝ Քրիստոսի հետ, արդեօք կարելի է⁶, որ մահ տեսնէ: Մարդը մարմինը չէ, այլ զայն գործածողը:

ՀԱՄԱՐ 19Ա

**Յիսուս ըսաւ. «Օրհնեալ է ան որ ծնելէ առաջ
գոյութիւն ունէր:**

Յիսուսին այս խօսքը նախորդին շարունակու-
թիւնն է: Ծնելէ, այսինքն մարմին առնելէ առաջ
մարդուն ոգին «օրհնեալ» է, որովհետեւ ան Քրիստոսի
հետ է: Ոգին մարդուն զօրութեան մարմինն է, որ տեղե-
կութիւն կը պարունակէ անցեալի մարմնացումներէ:
Մարդուն զօրութեան մարմինը իր հոգին Քրիստոսի
ներկայութիւնն է իր մէջ: Ծնելէ վերջ մարդ կը մու-
նայ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Ճիշդ ասոր հա-
մար ծնելէ առաջ անոր ոգին օրհնեալ էր: Ծնելէ առաջ
գոյութիւն ունեցողը մարդուն հոգին՝ Քրիստոսն է:

ՀԱՄԱՐ 19Բ

**Եթէ դուք իմ աշակերտներս ըլլաք եւ խօսքերս
իմանաք, այսքարերը ձեզի պիտի մատակարարեն:**

Յիսուս Քրիստոսի աշակերտ ըլլալ կը նշանակէ
Անոր բոլոր սորվեցուցածները «իմանալ»՝ հասկնալ ու
ինչպէս նաեւ զանոնք բոլորը մեր կեանքի տեւողութեան
կիրարկել: Իսկ եթէ աշակերտը յաջողի իսկապէս հաս-
կընալ եւ կիրարկել, ան կը յաջողի Քրիստոս իր մէջ
յայտնաբերել: Քրիստոսի յայտնութեան շնորհած ան-
հուն գիտակցութեան մակարդակն ալ անհատին կու
տայ Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող Հայր Աստու-
ծոյ դրած տիեզերական օրէնքները, որոնց հետ ներդաշ-
նակ գործունէութեամբ կը կարողանայ Յիսուսի նման
արարքներ ընել, որ մենք հրաշք կը համարենք, որով-
հետեւ այդ օրէնքները մեզմէ թագնուած են: Ահա՛, աս է
իմաստը «քարերը ձեզի պիտի մատակարարեն»-ին:
Միթէ Յիսուս ալ հացը եւ ձուկը չբազմացո՞ւց, ջուրին
վրայ չժալե՞ց:

ՀԱՄԱՐ 19Գ

Դրախտին մէջ կան հինգ ծառեր որոնք ամառն ու ձմեռը անշարժ կը մնան եւ անոնց տերեւները չեն թափիր: Ասոնք որոնք այդ ծառերը կը ճանչնան մահ պիտի չհամոտեսն»:

Եթէ մարդ իր կեանքի ընթացքին կարողանայ Յիսուսի հասած մակարդակին հասնիլ, ինք ալ արդէն անմահ կ'ըլլայ: Նոյնիսկ եթէ Փիզիքական մարմինը մեռնի երեք օրուայ մէջ զօրութեան կը փոխուի: Բայց կարեւորը այն է, թէ մարդուն անհատականութիւնը չի մեռնիր այլ յարութիւն կ'առնէ եւ անմահ կ'ըլլայ: Յիսուս նաեւ կու տայ այս անմահութեան արժանանալու միջոցը: Ան կը խօսի դրախտին մէջ գտնուող հինգ ծառերու մասին: Պէտք է մոռնալ, թէ Մենդոց գիրքին մէջ ալ գրուած է երկու ուրիշ ծառերու մասին եւս: Անոնցմէ մին «գիտութեան» ծառն է, իսկ միւսը՝ «կեանքի» ծառը: Հետեւաբար կը թուի, թէ դրախտին մէջ կան եօթ ծառեր: Դրախտը մարդը ինքն է: Մարդ կարող է իր կեանքը վերածել դրախտի կամ դժոխքի: Անտարակոյս Յիսուսի ըսածը անոնց համար է, որ իր ճշմարիտ աշակերտները եղած են, հասկցած ու կիրարկած իր բոլոր սորվեցուցածները, հետեւաբար անոնք իրենք զիրենք վերածած են դրախտի եւ ոչ դժոխքի: Դրախտին մէջի հինգ ծառերը, որոնք անշարժ են եւ տերեւները չեն թափիր, կը նշանակէ անփոփոխ են եւ չեն ազդուիր ոչ ամառէն եւ ոչ ալ ձմեռէն, այսինքն անհատի կեանքին լաւ՝ հաճելի եւ բաղձալի կամ վատ՝ վրդովիչ ու անբաղձալի պատահարներէն: Այդ ծառերը կը ներկայացնեն մարդուն զօրութեան կեդրոնները՝ խակրաները: Առաջին խակրան կը ծառայէ մարմնին գոյատեւման, իսկ երկրորդը բազմաճառու նպատակին: Ամէն մարդ եւ անասուն շատ լաւ գիտեն օգտագործել եւ «վատնել» առաջին երկու խակրաներուն ներքերած

զօրութիւնը: Երրորդը հասարակաց է թէ՛ անասուններուն, թէ՛ ալ մարդուն եւ կը կառավարէ զգայնութիւնը, հետեւաբար զգացումները պատշաճ կերպով զսպել կամ օգտագործել կարեւոր է կատարելութեան ուղիին մէջ: (Տես «Լոյս Ի Լուսոյ» գիրքի մէջ ԺԵ. Գլուխին մէջ «Ի՞նչ են Խակրաները» եւ «Ի՞նչ է Գունալիւնին» խորագրեալ երկու յօդուածները - էջեր 439-462, ինչպէս նաեւ «Լոյս Ի Լուսոյ «Բ» - Զարթօնք» գիրքի մէջ «Եօթը» խորագրեալ Բ. Գլուխին մէջ «Զօրութեան կեդրոններ» մասը - էջեր 100-105): Այդ «ծառ»-երը «գիտնալ» կը նշանակէ բացարձակ իշխանութիւն ունենալ մտքին՝ խորհուրդներուն եւ զգացումներուն վրայ եւ «Ես»-էն չտարուիլ: Քրիստոս «դուռ»-ն է բանալու այդ զօրութեան կեդրոնները որպէսզի Ս. Հոգիի զօրութիւնը առատ ներգործէ անձին մէջ: Երբ անհատը կը յաջողի Քրիստոս իր մէջ յայտնաբերել, ինք ալ կը գիտակցի այդ «ծառ»-երուն՝ զօրութեան կեդրոններուն: Միայն այն ատեն անհատը կը կարողանայ իր ստացած ներքին զօրութիւնը բարձրացնել ամէն մի զօրութեան կեդրոնէն մինչեւ եօթերորդը եւ արժանանալ Քրիստոսի յայտնութեան իր մէջ: Այն ատեն է որ անհատը այլեւս մահ չի տեսներ:



... Եւ որ ՁԻՍԱՆ ԽՆԴՐԵԱՆ՝ ՊՏՅԵԱՆ ՇԱՌՐՀԱ:

(Առակք Սողոմոնի Ը:17)

ՀԱՄԱՐ 20

Աշակերտները Յիսուսի ըսին. «Ըսէ մեզի ինչպէս է Աստուծոյ թագաւորութիւնը»: Ան ըսաւ անոնց. «Մանանեխի Հատիկի պէս է, բոլոր հոռնտերէն ամենէն պզտիկը: Բայց եթէ Հերկուած Հողի մէջ իյնայ, հսկայ ծառ մը կ'ըլլայ երկինքի թռչուններուն ապաստանարան»:

Աշակերտներու Աստուծոյ թագաւորութեան նկատմամբ հարցուցած հարցումին, Յիսուս մանանեխի հատիկի օրինակը կու տայ: Կանոնական Աւետարաններուն մէջ ալ Յիսուս օգտագործած է մանանեխի հատիկը ցոյց տալու համար հաւատքի ուրակը: Բայց հոս կարեւորը այն է, թէ Յիսուսի այս առակը նոյնութեամբ ներկայացուած է նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Այս առակին մեկնաբանութեան համար տես Բ. Հատոր «Մանանեխին Առակը» խորագրեալ գրութիւնը էջեր 87-88: Հոս յարմար կը նկատեմ կարդացողին ուշադրութեան յանձնել Թովմասի Աւետարանին տասներորդ համարը: Այս երկուքին միջեւ զուգահեռականութիւն մը գոյութիւն ունի: Մանանեխի փոքր հունտը Քրիստոսի վառած փոքր կրակն է, իսկ հսկայ ծառը բոցավառ կրակը: Հետեւաբար յանձնարարելի է նաեւ կարդալ վերեւի տասներորդ համարի մեկնաբանութիւնը: Մանանեխի փոքր հունտը նաեւ Յիսուսի սորվեցուցածները կը ներկայացնէ: Եթէ անոնք «պարարտ հողի մէջ իյնան»՝ ընդունակ միտքի մէջ, եւ անձը սորվածներն ալ կիրարկէ, Քրիստոս իր մէջ կը յայտնուի: Քրիստոսի յայտնութիւնն ալ «հսկայ ծառ»-ն է:



ՀԱՄԱՐ 21Ա

Մարիամ ըսաւ Յիսուսին. «Քու աշակերտներդ որո՞ւ կը նմանին»: Ան ըսաւ. «Անոնք պզտիկ մանուկներու պէս են, որ կը բնակին դաշտի մը մէջ, որ իրենց չի պատկանիր: Երբ դաշտին տէրերը գան պիտի ըսեն. «Թողէ՛ք մեր դաշտը մեզի»: Անոնք անոնց առջեւ անզօր են: Կը թողուն ու դաշտը անոնց կը վերադարձնեն:

Յիսուսի այս խօսքը հասկնալու համար պարտ ենք գալն բաժնել երեք մասերու: Մարիամի հարցումը այն է, թէ Յիսուսի աշակերտ ըլլալու համար մարդ «որո՞ւ» պէտք է «նմանի», այսինքն ինչպէս պէտք է ըլլայ:

Առաջին պատասխանը հետեւեալն է. «Անոնք պզտիկ մանուկներու պէս են»: Յիսուս նման արտայայտութիւններ ունեցած է կանոնական Աւետարաններուն մէջ եւս երբ Ան ըսած է.

«Լաւն ասե՛մ որ ո՛չ ընկալցի պարխայո-թիւն»

Լապո-ժոյ իթրեւ պանուկ, ո՛չ միցե՛ ՚ի նա»:

(Մարկոս Ժ:15)

«Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ո՛վ որ չընդունի Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ մանուկի մը պէս, բնա՛ւ պիտի չմտնէ անոր մէջ»:

Ինչո՞ւ պզտիկ մանուկ մը: Մանուկները տակաւին աշխարհէ լուր չունին եւ աշխարհին չեն կապուած: Ուղեղը եւ միտքը լրիւ կազմուած չէ, հետեւաբար անոնք աշխարհի շլացուցիչ զանազանութենէն լուր չունին եւ երկուութեան ենթակայ չեն: Անոնք, որոնք երկուութեան ենթակայ չեն, անոնք տակաւին միականութեան մաս կը կազմեն: Միականութիւնը Աստուծոյ հետ ըլլալն է, հետեւաբար՝ յաւիտենական կեանքը: Ուրեմն անոնք, որոնք Յիսուսի աշակերտ ըլլալ կը փափաքին, պարտ են իրենք զիրենք աշխարհիկ ցանկութիւններէ եւ հետապնդումներէ ձերբազատել եւ բարձր

գիտակցութիւն կերտելով ամէն ինչի միականութեան փորձառութիւնը ունենալ:

Յիսուսի երկրորդ խօսքը հետեւեալն է. «կը բնակին դաշտի մը մէջ, որ իրենց չի պատկանիր»: Հոս Յիսուս հետաքրքրական նմանութիւն մը կ'օգտագործէ: Ան մարդուն մարմինը կը նմանցնէ օտարի մը պատկանող «դաշտ»-ի մը: Մարդուն ճշմարիտ հոգիները ոչ իր մարմինն է եւ ոչ ալ իր միտքը, այլ ան իր հոգին է, որ անմահ է: Մարդու հոգին Քրիստոսի ներկայութիւնն է իր մէջ: Հետեւաբար «Որ կը բնակին դաշտի մը մէջ»-ը Քրիստոսի մարմնացումն է իբրեւ մարդ: Մարմինը հողէն եկած է եւ հողին ալ ետ կը վերադառնայ: Ուրեմն մարմինը անհատը չէ, անհատին ալ չի պատկանիր, այլ ան մարդուն տրուած է ժամանակաւոր գործածութեան համար: Կարելի է ըսել թէ «դաշտ»-ը կը ներկայացնէ նաեւ աշխարհը՝ ֆիզիքական կեանքը: (Տես նաեւ «Լոյս Ի Լուսոյ «Գ»- Տիեզերական Օրէնքները» Գիրքի մէջ «Մարդակազմութիւն - Մարմին եւ Հոգի խորագրեալ Ա. Գլուխը՝ մասնաւորաբար էջ 36): Ուրեմն ճշմարիտ աշակերտը կը հասկնայ եւ գիտէ, թէ ինք իր մարմինը չէ այլ զայն գործածողն է եւ չի կապուիր մարմնին եւ անոր յառաջ բերած բոլոր ցանկութիւններուն: Մարմինը աշխարհին կը պատկանի:

Յիսուսի երրորդ խօսքը «Երբ դաշտին տերերը գան պիտի ըսեն. «Թողէք մեր դաշտը մեզի»: Անոնք անոնց առջեւ անզօր են: Կը թողուն ու դաշտը անոնց կը վերադարձնեն» եզրափակիչ է եւ կը ներկայացնէ մարդուն ֆիզիքական կեանքի վերջը: Յիսուս դարձեալ փոխաբերաբար կ'օգտագործէ «դաշտին տերերը» ոճը մատնանշելու համար ֆիզիքականին մահը՝ արտին վերադարձը իր տիրոջ՝ հողին: Ահա', աս է իմաստը «Թողէք մեր դաշտը մեզի»-ին: Մարդ մահուան դէմ անզօր է եւ ահա', աս է իմաստը հետեւեալ նախադասութիւններուն.

«Անոնք անոնց առջեւ անգոր են: Կը թողուն ու դաշտը անոնց կը վերադարձնեն»: Ճշմարիտ աշակերտը յօժարաբար կը թողու «դաշտ»-ը՝ իր մարմինը եւ անկէ կը «մեկնի», որովհետեւ ան շատ լաւ գիտէ, թէ ինք մարմինը չէ: Բայց բոլոր անոնք, որոնք իրենց խաւարամտութեան հետեւանք կը կարծեն, թէ իրենք իրենց մարմիններն են, անոնք նոյնացած մարմնին հետ, վախով եւ տառապանքով կը դիմաւորեն մահը:

ՀԱՄԱՐ 21Բ

Հետեւաբար ձեզի կ'ըսեմ, եթէ տանտերը գիտնայ, թէ գող պիտի գայ, արթուն կը հսկէ եւ չի թողլատրեր որ ան իր թագաւորութեան տունը փորէ եւ անօթները գողնայ: Ապա հսկեցէք աշխարհի դէմ: Մեծ ուժով պատրաստուեցէք որպէսզի աւազակները ձեզի չկարենան հասնիլ: Որով այն ինչ որ չես հսկեր անոնք պիտի գտնեն:

Ինչպէս Յիսուս իր բոլոր խօսքերուն մէջ միշտ իր ըսածները վերացական իմաստներով ըսած է, այս անգամ ալ դարձեալ կ'օգտագործէ նման նախադասութիւններ: Անտարակոյս «տան տէրերը» կը ներկայացնեն մարդուն հոգին որ կը բնակի իր տան՝ մարմնին մէջ: Գողը կը ներկայացնէ մահը: Երբ Յիսուս կ'ըսէ. «եթէ տան տէրերը գիտնային» ակնարկութիւն մըն է մարդուն անգիտութեան՝ իր մահուան օրուան եւ ժամուն նկատմամբ: Որովհետեւ մարդ արարած չի գիտեր իր մահուան ժամանակը, հակառակ իր գիտութեան, թէ ինք մահկանացու մըն է, կ'ապրի կարծես յաւիտեան պիտի ապրի: Հետեւաբար ան կ'անտեսէ իր հոգին եւ իր կեանքի բուն նպատակը՝ Աստուածայայտնութիւնը իր մէջ: Ի՞նչ է այն «անօթ»-ը, որ «գող»-ը՝ մահը պիտի յաջողի գողնալ: Ան մարդուն անհատականութիւնն է: Մարդուն հոգին Քրիստոսն է, որ անմահ է: Միթէ Քրիս-

տոս չէր ըսած: «Ինծի եկէք ձեզի յարութիւն պիտի տամ եւ յաւիտենական կեանք»: Յարութիւնը անհատականութեան յարութիւնն է եւ ոչ՝ մարմնին: Յիսուս կ'ըսէ: «Ապա հսկեցէք աշխարհի դէմ»: Դարձեալ ականարկութիւն մըն է աշխարհիկ հետապնդումներէ ձերբազատուելու համար: Իսկ ան որ չենք հսկեր՝ անհատականութիւնը, «գող»-ը՝ մահը զայն պիտի գտնէ: Անհատականութիւնը չհսկելն ալ զայն «Ես»-ին զոհը ընելն է:

ՀԱՄԱՐ 21Գ


Երանի ձեր մէջ հասկցող մը ըլլար: Երբ հունձքը հասուննար, ան մանգաղը ձեռքին շուտով կու գար եւ կը հնձէր: Ան որ ականջ ունի լսելու թող լսէ»:

Յիսուսի այս խօսքին մէջ դարձեալ բառերը գործածուած են անոնց փոխաբերական իմաստներով: Յիսուսի այս խօսքը երկու զատ անկիւններէ կարելի է առնել եւ մեկնաբանել:

Ասոնց առաջինը այն է թէ «հունձք»-ը կը ներկայացնէ մարդուն հոգեկան աճումը, անոր գիտակցութեան մակարդակը: «Հասուն հունձքը» այն մարդն է, որուն մէջ գիտակցութիւնը հասած է բարձր մակարդակի մը եւ Քրիստոս ալ որոշ չափով յայտնուած անձին մէջ: Անձը փորձառութիւնը ունեցած է միականութեան: Այս հանգրուանին այդ «հունձք»-ը կը քաղուի: Այս քաղուիլը կը նշանակէ Քրիստոսի մէջ լուծուիլ եւ այս կեանքէն «քաղուիլ» եւ յաւիտենական կեանքին արժանանալ:

Յիսուսի այս խօսքին նկատմամբ երկրորդ մեկնաբանութիւն մը եւս կարելի է ընել: Այս մեկնաբանութեան մէջ «հունձք»-ը կը ներկայացնէ մարդուն մարմինը: Ուրեմն «հունձքին հասուննալ»-ն ալ կ'ըլլայ մարմնին հասուննալը՝ ծերանալը: Երբ մարմինը յոգ-

նաժ եւ անկարող, այլեւս չի կրնար ծառայել հոգիին,
որով «մանգաղը ձեռքին»-ը կը ներկայացնէ մահը:
Միթէ մահը մանգաղը ձեռքին մարդու կմախք ձեւով
չէ՞ ներկայացուած: «Եւ կը Հնձէր»-ն ալ կը ներկայացնէ
անհատին մահը: Այս մահը կ'ըլլայ մահը իր մարմնին
եւ իր անհատականութեանը:



Ամենայն Ինձ ուրիշ է Իմաստնձ,
Եւ յարմարեալ է պնտօրի
ոյք գտնեն ՉԳԻՏՈՒԹԻՒՆ:
Ընկալարոյք շիրաճ՝ եւ մի շարժաժ,
Եւ ՉԳԻՏՈՒԹԻՒՆ քն շոսսի ընտր:
Լաւ է Իմաստութիւն քն շակաւս ՊԱՏՈՒԱԿԱՆԱ.
Եւ Ամենայն Ինձ ՊԱՏՈՒԱԿԱՆ Չարժէ Չնա:

(Առաւիք Սողոմոնի Ը:9-11)

ՀԱՄԱՐ 22

Յիսուս մնա մը կաթ ծծող երախաներ տեսաւ: Իր աշակերտներուն ըսաւ. «Այս փոքրիկները, որ կաթ կը ծծեն, կը նմանին անոնց, որոնք թագաւորութեան մէջ կը մննեն»: Անոնք Իրեն ըսին. «Ուրեմն եթէ մենք երախայ ըլլանք պիտի կարենա՞նք թագաւորութիւնը մննել»: Յիսուս ըսաւ անոնց. «Երբ երկուքը մէկ կ'ընէք, եւ ներսը կ'ընէք դուրսին պէս եւ դուրսն ալ ներսին պէս, եւ վրան տակին պէս եւ երբ առուն եւ եզը կ'ընէք մէկ ուր առուն առու չէ եւ եզն ալ եզ չէ, աչքի տեղ աչքեր կ'ընէք եւ ձեռքի տեղ ձեռք եւ ոտքի տեղ ոտք, դէմքի տեղ դէմք, այն ատեն կը մննես (թագաւորութիւնը)»:

Այս համարին ամէն մէկ նախադասութիւնը կարելի է երկու զատ անկիւնէ դիտել եւ մեկնաբանել:

Յիսուս անգամ մը եւս կը կրկնէ այն ինչ որ ըսած էր «Համար 21»-ի մէջ: Հետեւեալը, հետեւեալ խօսքին. «Այս փոքրիկները, որ կաթ կը ծծեն կը նմանին անոնց, որ թագաւորութեան մէջ կը մննեն»-ին մեկնաբանութիւնը հոս ամբողջովին կրկնել անտեղի է: Բայց յարմար է շեշտել թէ «կաթ ծծող երախաներ»-ը կը ներկայացնեն անոնք, որոնք տրուած ճշմարիտ գիտութիւնները հասկցած են: Զարմանալին այն է, թէ աշակերտները չհասկցան Յիսուսի ըսածին բուն իմաստը եւ Յիսուս ստիպուեցաւ յաւելեալ բացատրութիւն տալ: Աշակերտները կարծեցին, թէ եթէ իրենք երախաներու պէս վարուին Աստուծոյ թագաւորութեան արժանի պիտի ըլլան: Յիսուսի տուած բացատրութիւնը կը շեշտէր երախայ ըլլալու իմաստը եւ ոչ թէ երախայի պէս վարուիլը: Յիսուսին հետեւեալ խօսքը. «Երբ երկուքը մէկ կ'ընէք»-ն ալ կարելի է երկու զատ անկիւնէ դիտել եւ մեկնաբանել: Նախ կարելի է գրուածը հետեւեալ

ձեռով հասկնալ: Ս. Գիրքին մէջի գրութիւններուն բառացի հասկացողութեան առընթեր երբ անհատին անոնց մէջ թագնուած փոխաբերական հասկացողութիւններն ալ կը յայտնուին, այն ատեն «երկուքը հասկացողութիւնները մէկ կ'ըլլան»: Վերելի գրութեան կարելի է երկրորդ մեկնաբանութիւն մը եւս տալ: Քանի որ երախան ստեղծագործութեան մէջի երկուութեան տակաւին ենթակայ չէ, որով մարդուն համար ալ պարտ է «երախայի» պէս ըլլալ: Աս կը նշանակէ աշխարհիկ հետապնդումներէ ձերբազատուիլ եւ աշխարհի մէջ բազմազանութեան տեղ ամէն ինչի միականութիւնը տեսնել: Ահա՛, աս է իմաստը «Երբ երկուքը մէկ կ'ընէք»-ին: Կարելի է եզրակացնել, թէ այս նոյն գաղափարը երկրորդ անգամ մը եւս Յիսուս շեշտած է այս համարին վերջաւորութեան, երբ Ան կ'ըսէ. «աչքի տեղ աչքեր կ'ընէք եւ ձեռքի տեղ ձեռք եւ ոտքի տեղ ոտք»: Այս մէջբերումին առաջին մասին երկու տարբեր թարգմանութիւններուն հանդիպեցայ: Մին «աչքերու տեղ աչք մը կ'ընէք»-ն էր, որ կը համապատասխանէ ձեռքի եւ ոտքի համար ըսուածներուն: Միւս թարգմանութեան մէջ գրուած էր. «աչքի տեղ աչքեր կ'ընէք»: Հոս եզակին յոգնակիի փոխուած է: Ըստ այս թարգմանութեան անհատին տեսողութիւնը պէտք է փոխուի եւ «երրորդ աչք»-ը բացուի: (Այս ուղղութեամբ Գ. Հատորին մէջ տես «Մարմնին ձրազը» էջեր 82-83): Այս հիման վրայ Յիսուսի ըսած «դէմքի տեղ դէմք մը»-ն ալ կը ներկայացնէ մարդու տեսողութեան փոփոխութիւնը: Մարդուն գիտակցութեան մակարդակը որքան բարձրանայ իր տեսողութիւնն ալ այնքան կը փոխուի: Ամէն մարդ ինչպէս նաեւ անասունները ճշմարտութիւնը կը տեսնեն եւ կ'ըմբռնեն՝ ըստ իրենց գիտակցութեան մակարդակին: Ուրեմն այս հիման վրայ «Աչքի տեղ աչքեր կ'ընէք»-ը կարելի է մեկնաբանել հետեւեալ ձեռով. մարդ ստեղ-

ծագործութիւնը կը տեսնէ իբրեւ Ֆիզիքական՝ կայուն, հաստատուն եւ զայն ճշմարտութիւն կը կարծէ: Այս գաղափարը կը համապատասխանէ մէկ տեսողութեան, հետեւաբար մէկ աչքի: Բայց երբ կը հասկնայ եւ կը «տեսնէ» Ֆիզիքականը կազմող զօրութիւնը՝ հոգեկանը, այս անգամ ան ստեղծագործութիւնը կը տեսնէ երկու զատ հասկացողութեամբ որ կը համապատասխանէ «աչքեր»-ին, յոգնակի ձեւով: Իսկ «եւ ձեռքի տեղ ձեռք եւ ոտքի տեղ ոտք»-ը կարելի է մեկնաբանել նաեւ հետեւեալ ձեւով: (Աջ) ձեռքը գիտէ Քրիստոսի գործունէութեանը անձին մէջ եւ ան իր կեանքի բոլոր պատահարները կ'ընդունի իբրեւ Աստուծոյ կամօք: (Ձախ) ձեռքը այս ճշմարտութիւնը չի տեսներ եւ անհատն ալ իր կեանքի պատահարները կը կարծէ լաւ կամ վատ բախդ ըլլալ: Ահա՛, աս է իմաստը «(ձախ) ձեռքի տեղ (աջ) ձեռք»-ին: Նմանապէս (աջ) ոտքը գիտէ կատարելութեան ուղին եւ զայն կը հետապնդէ: Իսկ (ձախ) ոտքը գիտէ աշխարհիկ հետապնդումները եւ զայն կը հետապնդէ: Հետեւաբար «(ձախ) ոտքի տեղ (աջ) ոտք»-ին իմաստն ալ գիտնալ է ճշմարտութեան ուղին եւ զայն ընտրել՝ աշխարհէ ձերբազատուիլ եւ հոգեկանին ձգտիլ:

Այս համարին մէջ կան նաեւ Յիսուսի ըսած մի քանի խօսքերը, որոնց մասին ալ կ'արժէ բացատրութիւն տալ: Յիսուս այս համարով կը սորվեցնէ մարդուն կատարելութեան ուղին եւ յաւիտենական կեանքի արժանանալու համար կերտուելիք կենցաղը: Յիսուսի ըսած «ներսը կ'ընէք դուրսին պէս եւ դուրսն ալ ներսին պէս»-ը ակնարկութիւն մըն է մարդուն կենցաղին համար: Ասոր իմաստը այն է, թէ մարդուն խօսքը ու արարքները պէտք է ցոլացնեն անոր խորհուրդները: Ինք պէտք է կեղծաւոր ըլլայ, այսինքն ինքզինք հանրութեան տարբեր ձեւով ներկայացնէ, քան թէ այն ինչ որ է: Այս ուղղութեամբ Մէվլանան ալ ըսած է

հետեւեալը. «Երեւցիր այնպէս ինչպէս որ ես, կամ եղիւր այնպէս ինչպէս որ կ'երեւիս»: Այս խօսքը կարելի է երկրորդ ձեւով եւս մեկնաբանել: Մարդ հոգեւոր ճանապարհին մէջ Քրիստոսի յայտնութիւնը կը փնտռէ իր մէջ: Ուրեմն այդ փնտռութեան ներքինն է: Երբ ներքին Քրիստոս ոչ իբրեւ զաղափար այլ յստակ կերպով կը «տեսնենք»՝ փորձառութիւնը կ'ունենանք, այնպէս ինչպէս արտաքին աշխարհի փորձառութիւնը կ'ունենանք, այն ատեն «ներսը կ'ընէք դուրսին պէս»: Երբ այդ ներքին Քրիստոսը կը տեսնենք դուրսը ամենուրեք՝ ամէն ինչի, բոյսի, անասունի եւ անձի մէջ այն ատեն ալ «դուրսն ալ կ'ընէք ներսին պէս»: Յիսուսի ըսած «Վրան տակին պէս»-ին իմաստը շատ աւելի հետաքրքրական է եւ խրթին: Անոր ակնարկութիւնը մարդուն զօրութեան կեդրոններուն՝ խակրաններուն համար է: Անոնց մասին հոս յաւելեալ տեղեկութիւն պիտի չտրուի (Տես վերեւ, Համար 11ա): Մարդ իր ստացած Ս. Հոգիի կենսատու զօրութեան մեծ մասը կը վատնէ առաջին՝ հիմնական խակրայէն, իր Ֆիզիքական գոյատեւումը ապահովելու համար: Ահա՛, աս է «տակին»-ին իմաստը: Այդ խակրան բարձր որակով զօրութիւն կը սպառէ: Իսկ «վրան», որ կը ներկայացնէ գանկի վերեւի խակրան, եթէ յայտնաբերէ նոյն քանակով զօրութիւն, մարդն ալ կը կարողանայ Քրիստոս իր մէջ յայտնաբերել եւ տեսնել ճշմարտութիւնը: Ահա՛, աս է իմաստը «Վրան տակին պէս» ընելուն: Դժբախտաբար մարդ կը սպառէ եւ կը վատնէ իր կենսատու զօրութեան մեծ մասը առաջին երկու խակրաներէն եւ զօրութիւն չի մնար բարձրացնելու եւ արտայայտելու եօթերորդ՝ վերի խակրայէն:

Այս համարին մէջ Յիսուսի մէկ այլ խօսքը եւս կայ, որ տակաւին նկատողութեան չէ առնուած: Այդ խօսքը հետեւեալն է. «Երբ առուն եւ եգը կ'ընէք մէկ ուր

առուն առու չէ եւ եգն ալ եգ չէ»: Ինչպէս վերեւ գրուած է մարդ իր կենսատու զօրութիւնը առաջին երկու խակրաներէն կը սպառէ: Երկրորդ խակրան՝ «ընջակա- յին»-ը կը ծառայէ բազմանալու նպատակին: Մարդ ընդհանուր առմամբ բարձր որակով զօրութիւն կը վատնէ սեռային յարաբերութիւններու հետեւանք: Ան- տարակոյս աս ալ ծագում կ'առնէ մարդուն աշխարհի եւ երկուութեան դրութեան կապուածութենէն: Միթէ առու եւ հգ ալ երկուութեան մաս չե՞ն կազմեր: Երբ մարդ այս երկուքին տարբերութիւնը չի տեսներ, ան կը յայտնէ թէ ինք աշխարհի չէ կապուած եւ միակա- նութեան կը ձգտի: Որով բարձր որակով զօրութիւն չի վատներ երկրորդ խակրայէն: Երկու տարբեր սեռերը կը պատկանին պատրանքին եւ Փիզիքական մարմնին եւ ոչ մարդուն հոգիին: Այս վերջին խօսքին երկրորդ մեկնաբանութիւն մը եւս կարելի է տալ: «Առուն» Քրիստոսն է: Միթէ չենք ըսեր Քրիստոս «փեսան» է՝ հոգեկան գոյութիւն եւ մենք ալ իր «հարսերը»՝ մարմնային գոյութիւն: Ուրեմն երբ Քրիստոս կը յայտնուի անձին մէջ, «հոգին» եւ «մարմինը» կ'ըլլան մէկ, ինչպէս Յիսուս Քրիստոսի մէջ մարդ եւ Աստուած մէկ էին: Ուրեմն այդ հանգրուանին այլեւս «առուն առու չէ եւ եգն ալ եգ չէ» այլ երկուքը մէկ:

Երբ մարդ կը հասկնայ Յիսուսի այս համարին մէջ բոլոր ըսածներուն իմաստը եւ զանոնք կ'իւրացնէ եւ կը գործադրէ իր կեանքին մէջ, ինք ալ արժանի կ'ըլլայ Աստուծոյ թագաւորութեան:



ՀԱՄԱՐ 23

Յիսուս ըսաւ. «Ես ձեզ պիտի ընտրեմ, մէկը
Հազարին մէջէն եւ երկուքը տաս Հազարին
մէջէն եւ անոնք պիտի կանգնին որպէս մէկ»:

Զարմանալին այն է, թէ Յիսուսի բոլոր խօսքերը,
անոնց մակերեսային հասկացողութեամբը եւ բառացի
իմաստներովը կը թուին իրարու հետ ոչ մէկ կապակե-
ցութիւն ունենալ: Սակայն բոլորն ալ կը կրկնեն նոյն
իմաստասիրութիւնը: Այս հիման վրայ Աստուծոյ Թա-
գաւորութեան կամ յաւիտենական կեանքի արժանանալ
շատ պարզ ըլլալ կը թուի, բայց այդ չի նշանակեր թէ
ան շատ դիւրին է:

Քրիստոսի այս խօսքը յայտնի կ'ընէ, թէ մարդ իր
անձնական ջանքերով չի կրնար Աստուծոյ Թագաւորու-
թիւնը ձեռք ձգել: Մարդ կրնայ ինքզինք պատրաստել
եւ արժանի ընել, բայց վերջին ընտրութիւնը Քրիս-
տոսինն է: Քրիստոս է, որ իր գիտակցութիւնը կու տայ
մարդուն եւ ինք կ'որոշէ յայտնուիլ անհատին մէջ,
ապա թէ ոչ մարդուն բոլոր ջանքերը ապարդիւն կը
մնան: Քրիստոսի ըսած «Հազարէն մէկը եւ տաս Հազարէն
երկու»-ն ակնարկութիւն մըն է այս արժանելիութեան
դժուարութեան: Յիսուս տարբեր բառերով ալ նոյն
գաղափարը յայտնած է.

«...Զի բազում են կոշեցեալք՝ եւ սակա՛ւնք են

ընդորեալք»: (Մատթէոս Ի:16)

«...որովհետեւ կանչուածները շատ են՝ բայց
ընտրուածները՝ քիչ»

Իսկ երբ Քրիստոս կ'ըսէ. «անոնք պիտի կանգնին որպէս
մէկ» ակնարկութիւնը անոր համար է, որ զանազանու-
թիւնը՝ երկրորդութիւնը պատրանքային է եւ ամէն ինչ
Քրիստոսի արտայայտութիւնն է: Այս հիման վրայ այդ
ընտրեալները, որոնք փորձառութիւնը ունեցած են
միականութեան, անոնք Քրիստոսով պիտի ըլլան մէկ:

Հետաքրքրական է Հին կտակարանի հետեւեալ համարը.

«Չիա՞րդ Լաւաթիցէ մի պԼապարս, Է- Էրկո- շար- ժիցէն պԼի-րս, Էթէ ոչ Լադո-աթ վաճառ-եաց պնոսս Է- Սէր մադնեաց պնոսս» : (Բ. Օրինաց 1Բ:30)
«Ի՞նչպէս մէկ մարդ Հազարը կը Հալածէր, ու Էրկու մարդ տասը Հազարը կը փախցնէր, Էթէ անոնց Վէմը զանոնք Հծախէր, Էւ Տէրը զանոնք Հմատնէր»:

Ասկէ պէտք է հասկնանք թէ ամէն ինչ Աստուծոյ կամքն է: Քրիստոս կը յայտնուի անձին՝ ըստ Իր կամքին եւ անձը կ'առաջնորդէ անոր կեանքին ընդհանուր ընթացքին՝ ըստ անհատին ընտրութեան: Եթէ ան կ'ընտրէ իր «Ես»-ը, կամ նիւթականին մէջ որեւէ կուռք մը (ինչպէս դրամ) պաշտել, ան մաս կը կազմէ 999-ին, կամ 9998-ին: Իսկ եթէ ան ընտրէ իր ներքին Քրիստոսը, այն ատեն կը նմանի ընտրուող մէկ կամ երկուքին:



**ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՐԴԱՐՈՑ ՈՐՊԷԱ ԼՈՅԱ ԾԱԳԵՆ
ԱՌԱՋԱՌՈՐԴԵՆ ԵՒ ԼՈՒԱԽՈՐԵՆ,
ՄԻՆՉԵՒ ՏԻՒՆ ԼՈՒԱԽՈՐԵԱՅԷ:
ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՊԱՐԵՏԱՅ ԽԱԽՐԻՆՔ,
ԵՒ ՈՉ ԳԻՏԵՆ ՉԻԱՐԴ ԳԱՅԹԱԳՐԻՆ:**

(Առակք Սողոմոնի Դ:18-19)

ՀԱՄԱՐ 24

Աշակերտները ըսին. «Մեզի սորվեցուք Քու գտնուած տեղիդ մասին, անհրաժեշտ է մեզի Համար որպէսզի կարողանանք այդ տեղը գտնել»: Ան ըսաւ անոնց. «Ան որ ականջ ունի թող լսէ: Լուսաւորեալ մարդուն մէջ լոյս մը կայ, որ ամբողջ աշխարհը կը լուսաւորէ: Եթէ չլուսաւորէ, խաւար կ'ըլլայ»:

Աշակերտները Յիսուսի հարցուցին Անոր «գըտնըւած տեղ»-ին մասին: Յայտնի չէ թէ անոնք վայրի մը մասին ակնարկութիւն կ'ընէին թէ ոչ մտային եւ հոգեկան վիճակի մասին: Կարելի է խորհիլ թէ այս երկուքէն վերջինն էր անոնց նպատակը եւ կ'ուզէին իրենք ալ սորվիլ այդ մակարդակին հասնելու միջոցը: Յիսուս շատ պարզ ձեւով կը պատասխանէ անոնց հարցումին եւ միանգամայն կու տայ հսկայական տեղեկութիւն մը: Յիսուս նախ կը յայտնէ, թէ ոչ երթալիք տեղ կայ եւ ոչ ալ ընելիք բան: Այն տեղը ամէն անձի ներսիդին է, հետեւաբար երբ անձը ինք զինք կը ճանչնայ կը ճանչնայ նաեւ Քրիստոս: Քրիստոս ամէն անհատի կեանքը եւ գիտակցութիւնն է, այն «Լոյս»-ն է, որ զետեղուած է «մարդուն մէջ»: Բայց Քրիստոսի ներկայութիւնը եւ արտայայտութիւնը նաեւ ընդհանուր ստեղծագործութիւնն է: Ահա՛, աս է «բոլոր աշխարհի լոյս կու տայ»-ին իմաստը: Եթէ «Լոյս»-ը յայտնուի անձին մէջ, անձն ալ կ'ըլլայ «Լուսաւորեալ մարդ»: «Եթէ չլուսաւորէ, խաւար կ'ըլլայ»-ին իմաստն ալ այն է, թէ առանց Քրիստոսի գիտակցութեան եւ չնորհած կեանքին ոչինչ գոյութիւն կ'ունենայ: Խաւարը մահն է: Երկրորդ մեկնաբանութիւն մը եւս կարելի է ընել. եթէ «Լոյս»-ը ակելիով չյայտնուի անձին մէջ, անձն ալ խաւարամիտ կ'ըլլայ:

ՀԱՄԱՐ 25

Յիսուս ըսաւ. «Սիրէ եղբայրդ քու անձիդ (Հոգիիդ) պէս, եւ աչքիդ բիւրն պէս զայն իննամէ:


Այս համարին մեկնաբանութիւնը պարզ է եւ միւս չորս Աւետարաններուն մէջ ալ Յիսուսի նման արտայայտութիւնները կան: Անտարակոյս Յիսուսի ըսած «եղբայր»-ը նոյն հօրմէն ու մօրմէն ծնած անձը չէ, այլ որեւէ ուրիշ անձ մը: Եթէ բոլորս ալ Հայր Աստուծոյ որդիներն ենք, բոլորս ալ իրարու քոյր եւ եղբայր չե՞նք: Աս նաեւ կը համապատասխանէ Յիսուսի այլուր ըսած ուրիշ մէկ խօսքին. «Սիրէ քու թշնամիդ» ինչպէս նաեւ «սիրէ քու եղբայրդ անձիդ պէս»: Իսկ այս համարին մէջ Յիսուս կ'ըսէ. «սիրէ քու հոգիիդ պէս»: Ինչո՞ւ սիրել ուրիշ անձ մը՝ օտար մը կամ թշնամի մը: Ամէն անհատի հոգին Քրիստոսն է: Երբ անձ մը կ'ընթանայ կատարելութեան ուղիէն եւ կը հասնի որոշ հանգրուանի մը, կը հասկնայ թէ ամէն անհատի հոգին Քրիստոսի ներկայութիւնն է: Արդեօք կարելի է ասել որեւէ անձ երբ գիտենք թէ անոր ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է: Անձ մը իր էութեան նկատմամբ ունեցած խաւարամտութեան եւ տգիտակցութեան հետեւանք եթէ մեզի թշնամութիւն ընէ, մենք պարտ ենք իր մէջ Քրիստոսի ներկայութիւնը տեսնել եւ զայն սիրել ու իննամել: Միթէ Յիսուս խաչին վրայէն չըսաւ. «Ներէ անոնց Հայր, որով չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»: Ինչպէս Քրիստոս բոլորին հոգին է, նոյնպէս մեր ալ հոգին է, հետեւաբար պարտ ենք բոլորն ալ սիրել մեր «հոգիին» պէս: Միթէ մարդ իր «հոգին» չի՞ սիրեր:



ՀԱՄԱՐ 26

Յիսուս ըսաւ. «Եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես, բայց քու աչքին մէջի գերանը չես տեսներ: Նախ դուն քու աչքեդ Հանտ գերանը, անկէ վերջ փորձէ եղբօրդ աչքին շիւղը Հանտը»:

Յիսուսի այս խօսքը գրուած է նաեւ Մատթէոսի Աւետարանին մէջ եւ անոր մեկնաբանութիւնն ալ ներկայացուած է Գ. հատորի «Դատելու Մասին» խորագրեալ գրութեան մէջ՝ էջեր 96-97: Հոս դատելու մասին յաւելեալ մեկնաբանութիւն պիտի չգրուի: Բայց պատշաճ է յաւելեալ տեղեկութիւն տալ թէ ի՞նչեր կը դատենք: Անտարակոյս մարդոց խօսք ու արարքները կը դատենք եւ անոնց մասին պատշաճ տեղեկութիւն տրուած է «Հատոր Գ.»-ին մէջ: Պէտք է նաեւ նկատողութեան առնել զանազան կրօնքները: Շատեր այլ կրօնքները կը նկատեն կռապաշտական, հեթանոսական եւ սատանայական եւ զանոնք կը դատապարտեն, մինչդեռ կը սխալին: Իրենք չեն տեսներ եւ չեն հասկնար թէ իրենք ալ Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները սխալ ըմբռնած են եւ շատ հեռու են ճշմարտութենէն: Անոնք, ոչ թէ ոեւէ մէկը պէտք է կրօնափոխ ընեն կամ կրօնափոխ ընել փորձեն, այլ նախ պէտք է լաւ մը հասկնան իրենց կրօնքը եւ իրենց սխալ ըմբռնումները շտկեն: Այն ատեն պիտի տեսնեն, որ բոլոր կրօնքները նոյն իմաստասիրութիւնները կը սորվեցնեն եւ անկէ ետք է որ ուրիշ կրօնքի պատկանողներ փոխանակ կրօնափոխ ընելու, պէտք է անոնց օգնեն, որպէսզի անոնք ալ իրենց կրօնքին մէջի ճշմարտութիւնները տեսնեն՝ հասկնան:



ՀԱՄԱՐ 27

Յիսուս ըսաւ. «Եթէ աշխարհէն ծով չբռնէք (չձերբազատուիք), թագաւորութիւնը պիտի չգտնէք, եթէ Շաբաթը չպահէք որպէս Հանգստեան օր, Հայրը պիտի չտեսնէք»:

Յիսուս իր այս խօսքով բացայայտ կ'ընէ ծոմապահութեան իմաստը: Ճշմարիտ ծոմապահութիւնը «հաց» չուտելը չէ, այլ ան աշխարհիկ ցանկութիւններէ եւ հետապնդումներէ «ծոմ պահել»-ն է, ձերբազատուիլն է:

Յիսուսի այս խօսքին երկրորդ մասը հետաքրքրական է, այն իմաստով որ Հրեաները Շաբաթ օրը կը պահէին եւ Յիսուս ինք չէր պահեր: Ճիշդ ասոր համար ալ Հրեաները յաճախ Յիսուսը կը յանդիմանէին, նոյնիսկ Շաբաթ օրով հիւանդ բուժած ըլլալուն համար: Յիսուս ինք ըսած է թէ մարդ ինք Շաբաթին տէրն է: Այս խօսքին բառացի իմաստը շատ պարզ ըլլալ կը թուի: Իսկ մեզի Քրիստոնեաներու համար Շաբաթ օրը փոխուած է Կիրակիի, որ կը համապատասխանէ Յիսուսի յարութեանը: Արդեօք կարելի է^o, որ Յիսուս միայն մէկ օրուայ մասին խօսի, հոգ չէ թէ ան ըլլայ Շաբաթ կամ Կիրակի: Մարդ չաբթուան վեց օրը աշխարհիկ ցանկութիւններու հետապնդումով զբաղ, կ'անտեսէ իր հոգեկան աճումը:

Ըստ կրօնքի օրէնքին, շաբաթը մէկ օր ան պարտ է ինքզինք ձերբազատել այդ աշխարհիկ հետապնդումներէն եւ ուշադրութիւնը դարձնել իր հոգեկան աճումին: Միթէ մենք Քրիստոնեաներս ալ նոյնը չե՞նք ընէր: Կիրակի օր եկեղեցի կ'երթանք եւ շաբթուան միւս օրերը հոգեկան կեանքի նկատմամբ ամէն ինչ կը մոռնանք: Այսօր նոյնիսկ ժողովուրդին հազիւ մէկ առ հարիւրը Կիրակի օր եկեղեցի կ'երթայ: Ըստ Յիսուսի սորվեցուցածներուն, մարդուն կենցաղը պէտք է ըլլայ

անընդհատ ազօթք մը: Աս պէտք է ըլլայ շաբաթը միայն մէկ օր, այլ ամէն օր: Հետեւաբար մարդ պարտ է ամէն օր ընել այն ինչ, որ Ուրբաթ, Շաբաթ կամ Կիրակի օր պէտք է ընէ: Զերբազատուիլը չգործել է, այլ մտային վիճակ մըն է: Մարդ իր բոլոր առօրեայ պարտականութիւնները ընելով հանդերձ ան կարող է նաեւ ինքզինք ձերբազատել անոնց արդիւնքներէն: Որովհետեւ արդիւնքները իրեն չեն պատկանիր, այլ՝ Աստուծոյ: Ան զանոնք կ'ընէ իբրեւ Աստուծոյ իրեն տրուած պարտականութիւններ: Երբ անհատը կը գործէ եսասիրութեամբ, ան կապուած կ'ըլլայ արդիւնքին, հետեւաբար «Շաբաթը պահած» չըլլար: Նոյնիսկ եթէ անհատը կապուած չըլլայ արդիւնքին բայց եսասիրութեամբ գործէ, իր գործին արդիւնքն ալ կ'ըլլայ միջակ յաջող: Ընդհակառակը անձը պարտ է միշտ իր լաւագոյնը գործէ, որովհետեւ ան իբրեւ Աստուծոյ ծառայ, Աստուծոյ համար կը գործէ: Ահա՛, աս է Յիսուսի ըսած. «մարդ տէրն է Շաբաթին» իմաստը: Հետեւաբար մարդ պարտ է տէրը ըլլալ, իր խորհուրդներուն, զգացումներուն, յուզումներուն: Աս ալ կարելի է իր «Ես»-ը անտեսելով: Երբ մարդ կը կարողանայ ինքզինք ձերբազատել իր «Ես»-էն, շատ դիւրին կ'ըլլայ աշխարհէն ձերբազատուիլը:



ՄԻ ԵԱԶ ԽՈՏՈՐԻԾՈՒՄ ԵՒ ՄԻ ԵԱՀԵԱԿ

(Առակք Սողոմոնի Դ:27)

ՀԱՄԱՐ 28

Յիսուս ըսաւ. «Ես մարդոց մէջ կանգնեցայ եւ անոնց մարմնաւորուած երեւցայ: Բոլորն ալ արբած գտայ: Անոնց մէջ ծարաւ մը չգտայ եւ մարդու որդիներուն համար հոգիս թախծեցաւ, որովհետեւ անոնք իրենց սիրտերուն մէջ կոյր են եւ չեն տեսներ: Աշխարհ պարապ եկան եւ կ'ուզեն աշխարհէն ալ պարապ հեռանալ: Բայց հիմա անոնք արբած են: Երբ հրաժարին իրենց գինիէն, այն ատեն պիտի ապաշխարահեն»:

Յիսուս այս խօսքերով, համայն մարդկութիւնը կը նմանցնէ գինիով գինովցած մարդոց: Գինով մարդը չի գիտեր թէ ինչ կ'ընէ, որովհետեւ ան իր տրամաբանելու կարողութիւնը կորսնցուցած է: Յիսուս կ'ըսէ թէ նոյնիսկ մէկ ժուժկալ անձ չէ գտած: Գինով մարդը անտարակոյս իր կեանքը կը վատնէ: Այս իրողութիւնը բացայայտ է բոլորին երբ կը նկատենք արբածները: Անոնք, որոնք գինիի տեղ աշխարհի շլացուցիչ «սա», «դա» եւ «նա»-ով արբած են, այդ կացութիւնը բնական կը նկատեն եւ չեն հասկնար թէ հոգեկան կեանքին մէջ այդ ալ արբած մարդուն պէս է, առանց որեւէ տարբերութեան: Այդ արբեցութիւնն ալ մարդուն կու տայ խաւարամտութիւն:

Յիսուսի հետեւեալ խօսքը. «Երբ հրաժարին իրենց գինիէն» ակնարկութիւն մըն է նախորդ համարի մեկնաբանութեան մէջ յիշուած աշխարհիկ շլացուցիչ հետապնդումներէ ձերբազատման: Միայն այն ատեն մարդ պիտի կարողանայ ապաշխարել: Այս համարով Յիսուս նաեւ կը սորվեցնէ, թէ ինչ է ապաշխարելը: Իսկ մենք եկեղեցի կ'երթանք, մեղայ կ'ըսենք, հաղորդութիւն կ'առնենք եւ կը կարծենք թէ սրբացած ենք եւ կը շարունակենք մեր «արբեցութիւնը»:

ՀԱՄԱՐ 29

Յիսուս ըսաւ. «Եթէ մարմինը յառաջ եկած է Հոգիէն, Հրաշք մըն է: Բայց եթէ Հոգին յառաջ եկած է մարմինէն, Հրաշքներուն Հրաշքն է: Բայց ես կը զարմանամ, թէ այս մեծ Հարստութիւնը ինչպէս Հաստատուած է այս չքաւորութեան մէջ»:

Այս համարը կարելի է երկու զատ մակարդակներու վրայ մեկնաբանել: Նախ նկատողութեան առնենք անոր բառացի իմաստը:

Յիսուս Իր այս խօսքով անգամ մը եւս կը հաստատէ թէ նիւթը զօրութենէ յառաջ եկած է: Այսօր գիտնականները այս իրողութիւնը վերջապէս կարողացած են փաստել: Անոնք իրենց կատարած պրպտումներուն հետեւանք հասած են «տեղ» մը, ուրկէ կարող չեն աւելի յառաջանալ եւ շուարած մնացած են: Աս ալ ցոյց կու տայ թէ զօրութեան մարմնացումը Հրաշք մըն է: Նմանապէս մարդուն Հոգին, որ նիւթին կեանք կու տայ եւ այդ Հոգին՝ զօրութիւնը կը մարմնանայ ինքնին Հրաշք մըն է: Գիտնականները այսօր կարողացած են անգգամ նիւթը զօրութեան փոխել: Ասոր օրինակներէն մին հիւլէական ուումքն է: Բայց մարդ տակաւին կարող չէ մարմնացած Հոգին զօրութեան փոխել: Յիսուս այդ ըրաւ: Իր մարմինը երեք օրէն զօրութեան փոխուեցաւ եւ անհետացաւ: Միթէ Յիսուսի յարութիւնը աշխարհի վրայ ամենամեծ Հրաշքը չէ^o: Ըստ Յիսուսի ըսածին մենք ալ պարտ ենք կարողանալ նոյնը ընել, որպէսզի անհատականութիւնը յարութիւն առնէ եւ մարմինը զօրութեան փոխուի, քան թէ փտտի, նեխի եւ նիւթին՝ «Հող»-ին վերադառնայ: Իսկ մարդ ի՞նչ կ'ընէ, փոխանակ իր Հոգին՝ զօրութիւնը իր մէջ յայտնաբերելու, անոր շնորհած կեանքը եւ գիտակցութիւնը վայելելով հանդերձ զայն՝ այդ «Հարստութիւն»ը, կը «բանտարկէ»՝ «կը Հաստատէ» այդ մարմնին՝ «չքաւորութեան» մէջ:

Այս համարը կարելի է նաեւ մեկնաբանել անոր փոխաբերական իմաստովը: Մարմինը կը ներկայացնէ «վար»-ինը եւ հոգին ալ «վեր»-ինը: Բայց ինչի՞ «վար»-ը եւ «վեր»-ը: Անտարակոյս մարդուն հասկացողութիւնը նկատմամբ Ս. Գիրքի մէջի գրութիւններուն «բառացի» իմաստները կարելի է «վարին»-ը նկատել, եւ հոն «թագնուած» իմաստասիրութիւններն ալ՝ «վերին»-ը: Գրուածներուն բառացի իմաստները ինքնին հրաշքներ են, բայց եթէ անհատը այդ բառերուն մէջէն հասկնայ հոն թագնուած իմաստասիրութիւնները, այդ ալ «հրաշքներուն հրաշքն է»: Զարմանալի է թէ այդ թագուն գիտութիւնը՝ «այս մեծ հարստութիւնը», պահուած է բառացի իմաստին մէջ՝ «հաստատուած է այս չքաւորութեան մէջ»:



ՈՐԴԵԱՎ՝ ԻՄՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՆԱՎ,
ԵՒ ԻՄՈՅ ԲԱՆԻՅ ՄԱՏՈ ՉՈՒԱԿՆ ՔՈ:
... ՊԱՀԵԱՅ ՉՆՈՍԱՎ՝ Ի ԱՐՏԻ ՔՈՒՄ.
ՉԻ ԿԵԱՆՔ ԵՆ ՈՐՈՅ ԳՏԱՆԵՆ ՉՆԱ.
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՄԱԵԴԻՈՅ՝ ԲԺՇԿՈՒԹԻՒՄ:

(Առակք Սողոմոնի Դ:20-22)

ՀԱՄԱՐ 30

Յիսուս ըսաւ. «Ուր որ երեք աստուածներ կան,
անոնք աստուած են: Ուր որ երկու կան կամ
մէկ՝ ես անոր հետ եմ»:

Այս համարը իր բառացի իմաստով մեկնաբանել
դժուար է: «Աստուածներ»-ը անգլերէնի մէջ ալ փոքր
«g»-ով գրուած է: Հին Յունական եւ Հրովմէական
կրօնքներուն մէջ ալ, ըստ մարդոց հասկացողութեան,
կային բազմաթիւ չաստուածներ: Արդեօք կարելի է՞,
որ այդ բոլոր չաստուածները ներկայացնէին Աստուծոյ
զանազան յատկութիւնները: Կարելի՞ է, որ Քրիստոսի
վերեւի ըսածը հետեւեալը ըլլայ. «Ուր երրորդութիւն
կայ, Աստուած ալ հոն է»: Եթէ աս է իմաստը, Քրիստոս
բացայայտ կ'ընէ թէ ինք երրորդութեան մաս կը
կազմէ, եւ առանց Երրորդութեան Աստուած գոյութիւն
չ'ունենար: Ընդհանուր առմամբ կ'ըսենք երեք Անձիկ
մէկ Աստուած: Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել մէկ
Աստուած եւ երեք «վիճակ», կամ արտայայտութիւն:

ա- Անյայտ եւ անգիտելի - Հայր Աստուած

բ- Հայր Աստուծմէ բղխած Զօրութիւնը - Ս. Հոգի

գ- Զօրութեան մարմնացումը - Քրիստոս

Մարդ կարողութիւնը չունի Հայր Աստուած
գիտնալու կամ հասկնալու, հետեւաբար պարտ է միայն
Զայն ընդունիլ որպէս ամէն ինչի աղբ:

Մարդ մինչեւ այսօր կարողացած է ընութեան
կարգ մը զօրութիւնները եւ զանոնք կառավարող
օրէնքներուն մէկ մասը հասկնալ եւ զանոնք պատշաճ
կերպով օգտագործել: Բայց մարդ այդ զօրութիւն-
ներուն աղբ «մութ Զօրութիւնը՝ Ս. Հոգին, ոչ ալ Զայն
կառավարող տիեզերական օրէնքները պատշաճ կեր-
պով չէ հասկցած»:

Ընդհանուր ստեղծագործութիւնը մարդուն փոր-
ձառութեանը մէջն է եւ ընդհանուր ստեղծագործու-

Թիւնն ալ Քրիստոսի արտայայտութիւնն է: Այս հիման վրայ մարդ Քրիստոս տեսած է, բայց աւա՛ղ, տեսնելով հանդերձ Զայն չէ ճանչցած: Մօտաւորապէս երկու-հազար տարի առաջ մարդ նաեւ Յիսուսը, որ յայտնաբերած էր Քրիստոս իր մէջ, ճանչնալու բարեբախտութիւնը ունեցած էր: Մարդ ինք ալ կարող է նոյնը ընել եւ Քրիստոս իր մէջ յայտնաբերել: Բայց աւա՛ղ ան այդ ուղղութեամբ չատ անտարբեր է: Երբորդութիւնը անբաժանելի է, որով Քրիստոս կ'ըսէ. «Ուր որ երկու կան կամ մէկ ես անոր Հետ եմ»:

Արդեօք կարելի է, որ այս համարը ունենայ փոխաբերական իմաստ մը եւս: Աստուծոյ նկատմամբ մարդոց հասկացողութիւնը ժամանակի ընթացքին յաճախ փոխուած է: Ըստ Հին Կտակարանի հասկացողութեան Աստուած վրէժխնդիր է: Ըստ Նոր Կտակարանի Աստուած մարդէն դուրս, գերմարդկային զօրութիւններու տէր «մարդու նման» սիրոյ աղբիւր եւ ողորմած էութիւն մըն է: Իսկ երկու Կտակարաններուն մէջ թագնուած իմաստասիրութիւնները գտնող եւ հասկցողին համար ալ Աստուծոյ նկատմամբ իր հասկացողութիւնը ամբողջովին տարբեր է: Ան իր ճշմարիտ էութիւնը՝ իր կեանքը եւ իր գիտակցութիւնն է: Այս հիման վրայ նոյն Աստուածն է, որ մարդ ըմբռնած է իբրեւ երեք զատ հասկացողութեամբ: Ահա՛, աս է իմաստը «Ուր որ երեք աստուածներ կան, անոնք աստուած են»-ին: Յիսուսի վերջին խօսքը «Ուր որ երկու կան կամ մէկ ես անոր Հետ եմ»-ը կը վաւերացնէ երկու զատ իմաստասիրութիւններու ճշգրտութիւնը, որոնք ժամանակի ընթացքին Հին եւ Նոր Կտակարաններու մէջ ներկայացուած են: «Մէկ»-ը, Հրեաներուն կրօնքը՝ «Հին Կտակարանը», իսկ «երկու»-քը Քրիստոնէական կրօնքը՝ «Հին եւ Նոր Կտակարանները» կը պաշտեն նոյն Աստուծոյն: Հետեւաբար. «Ես անոր Հետ եմ»:

ՀԱՄԱՐ 31

Յիսուս ըսաւ. «Ուէ՛ւ մարգարէ իր գիւղին մէջ
ընդունելի չէ: Բժիշկը զինք ճանչցողները (իր
հարազատները) չի բժշկեր»:

Այս համարը մեկնաբանութեան պէտք չունի եւ
բացայայտ է: Զիշդ ասոր համար Հրեաները չընդու-
նեցին Յիսուսի սորվեցուցածները եւ անոնց քարոզչու-
թիւնը եղաւ հեթանոսներուն: Նմանապէս, նոյնիսկ այ-
սօր բժշկութեան մէջ արգիլուած է բժիշկի մը իր
հարազատները խնամել: Պատճառաբանութիւնը այն է,
թէ ան անոնց զգացականօրէն կապուած ըլլալուն կը
կորսնցնէ իր տրամաբանելու կարողութիւնը: Զիշդ
ասոր համար ալ Յիսուս բազմիցս սորվեցուցած է
զգացումներուն վրայ իշխանութիւն կերտել եւ զա-
նոնք զսպել եթէ կը փափաքինք կատարելութեան
ճանապարհին մէջ յառաջանալ:



Երօ առ մրջիւն ու Վաճ,
Եւ Աւսնաճեա ընդ ճաւաղաւրսս տորա.
Եւ լեր հմասնագոյն եմ քան շնա:
Միւճեւ յե՛րբ յորսայսեալ Վաճ ու Վաճ,
Վաճ ե՛րբ 'ի բնոյ շարթիճես:

(Առակք Սողոմոնի 2:6 եւ 9)

ՀԱՄԱՐ 32

Յիսուս ըսաւ. «Քաղաք մը, որ բարձր լերան մը վրայ կառուցուած է եւ ամրացուած, չի կրնար կործանիլ, ոչ ալ կրնայ անցայտ մնալ»:

Ռազմագիտական տեսանկիւնէ Յիսուսին այս համարին մէջի ըսածը շատ տրամաբանական է: Բայց վստահաբար Յիսուսի ըսածը այդ է՝ այլ ան վերաբանութիւն (analogy) մըն է: Շատ հաւանական է, որ «Քաղաք»-ը ներկայացնէ մարդը եւ մարդուն իր կրօնքին նկատմամբ ճիշդ հասկացողութիւնը: «Բարձր լեռան մը վրայ կառուցուած եւ ամրացուած»-ն ալ շատ հաւանաբար ներկայացնէ մարդուն զօրութեան մարմնին բարձր յաճախականութիւնը, որ ինք կը ստանայ իր ներքին Գրիստոսէն, որպէս Ս. Հոգիի շնորհները: Այդ մարդը կարողութիւնը կ'ունենայ տոկալու «Շա»-էն եկած ամէն տեսակի յարձակումներուն: Ան կ'ըլլայ իր «Շա»-ին դէմ պաշտպանուած՝ «ամրացուած» եւ «չի կրնար կործանի»: Նման մարդ մը նաեւ իր ներքին «Լոյս»-ը կը սփռէ բոլորին, հետեւաբար «ոչ ալ կրնայ անյայտ մնալ»:



**ԱՄԵՆԱՅՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՐ
ՊԱՀԵԱ ՉԱՐՐՏ ՔՈ,
ՉԻ՝ Ի ՍՈՓԱՆԷ ԵՆ ԵՐԷ ԿԵՆԱՅ:**

(Առաջ Սողոմոնի Դ:23)

ՀԱՄԱՐ 33

Յիսուս ըսաւ. «Ինչ որ կը լսես մէկ ականջովդ, տանիքներուդ վրայի միւս ականջին ալ տեղեկացուր: Որովհետեւ, ոչ ոք ճրագ կը վառէ եւ զայն ամանի մը տակը կը դնէ, ոչ ալ զայն գաղտնի տեղ մը կը պահէ, այլ զայն կը դնէ աշտանակի վրայ, որպէսզի մանող ու ելողը անոր լոյսը տեսնէ»:

Կանոնական Աւետարաններուն մէջ ալ Յիսուսի այս խօսքերը գրուած են: Այս համարին մէջ Յիսուսին առաջին խօսքը հետեւեալն է. «Ինչ որ կը լսես մէկ ականջովդ, տանիքներուդ վրայի միւս ականջին ալ տեղեկացուր»: Ասոր իմաստը այն է, թէ ինչ որ կը «լսես»՝ կը սորվիս զայն իւրացուր: Անտարակոյս իւրացնելն ալ կը նշանակէ սորվածը գործադրել:

Յիսուսին երկրորդ խօսքը նոյնութեամբ ներկայացուած է Մատթէոսի Աւետարանին մէջ (Գլ. Ե:14-16): Հոն նաեւ գրուած է. «Դուք էք աշխարհի լոյսը»: Հետեւաբար վառուած ճրագը Քրիստոսի Լոյսն է մարդուն մէջ: Ան մարդուն հոգին է: Բայց մարդ, զբաղ արտաքին աշխարհիկ հրապուրիչ եւ շլացուցիչ ցանկութիւններով եւ հետապնդումներով, կ'անտեսէ իր ներքին լոյսը եւ զայն չի յայտնաբերեր: Ահա՛, աս է «ամանի մը տակը կը դնէ, ոչ ալ զայն գաղտնի տեղ մը կը պահէ»-ին իմաստը: Իսկ աշտանակի վրայ դրուած ճրագը կը ներկայացընէ անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը: Քրիստոսի այդ լոյսը անձին միջոցով՝ անոր խորհուրդ, խօսք ու արարքներով, կը յայտնուի հանրութեան: Ահա՛, աս էր, որ Յիսուս իր իսկ օրինակով՝ կենցաղով մեզի ցոյց տուաւ ու սորվեցուց: Եթէ կը փափաքինք մեր ներքին Քրիստոսի Լոյսը աշտանակի վրայ դնել, պարտ ենք մեր մտային ուշադրութեան ուղղութիւնը փոխել արտաքինէն դէպի ներքինին: Եւ աս է «վերստին ծնունդը»:

ՀԱՄԱՐ 34

Յիսուս ըսաւ. «Եթէ կոյրը առաջնորդէ կոյրին,
երկուքն ալ փոսը կ'իյնան»:

Այս համարին իմաստը հասկնալ դիւրին է: Անտա-
րակոյս հոս «կոյր»-ը հոգեկան կուրուլթեան մասին է եւ
ոչ ֆիզիքական: Դժբախտաբար աշխարհի վրայ բոլոր
կրօնքները հանրութեան խեղաթիւրուած կը ներկայաց-
ւին, ոչ թէ զանոնք փրկելու, այլ զանոնք շահագոր-
ծելու համար: Այս պատճառով ալ քարոզչութիւն-
ներուն մեծամասնութիւնը ճշմարտութեան հետ կապ
անգամ չունին: Մարդը, իր եսասիրութեան գերի, կրօն-
քը յարմարցուցած է իրեն վատ կենցաղին, քան թէ
ինքզինք փոխելու ու իր կենցաղը յարմարցնելու
կրօնքին սորվեցուցածներուն: Բայց այս վերջինը շատ
դժուար է եւ չի համապատասխաներ եսասիրութեան:
Շատ մը խեղճեր ալ տարուած այդ խեղաթիւրուած
քարոզչութիւններէն, կարծելով թէ անոնք ճշմարտու-
թիւն են, բացարձակ անկեղծութեամբ, բայց անգիտակ-
ցաբար, իրենք ալ նման քարոզչութիւններ կ'ընեն,
մասնակից կ'ըլլան այդ կոյրերուն եւ խեղճ ժողովուր-
դը դէպի կորուստ կ'առաջնորդեն:

Աւետարաններու սորվեցուցածները խեղաթիւրել
շատ դիւրին է, որովհետեւ հոն շատ քիչ բան իր բառա-
ցի իմաստով գրուած է: Ընդհանուր առմամբ գրութիւն-
ները, նամանաւանդ Յիսուս Քրիստոսի ըսած խօսքերը,
մեծամասնութեամբ փոխաբերական եւ վերացական
իմաստներ ունին եւ պէտք է զանոնք իրենց բառացի
իմաստով հասկնալ: Հետեւաբար Յիսուսի ըսած կուրու-
լթիւնը կը ներկայացնէ մարդուն խաւարամտութիւնը,
իսկ «փոսը իյնալը» ալ՝ Յիսուսի ըսածներուն միայն
անոնց բառացի իմաստովը հասկնալը եւ անոնց մէջի
թաղնուած վերացական իմաստները չտեսնելը: Ահա՛,
աս ալ կ'ըլլայ անոնց անկումը:

ՀԱՄԱՐ 35

«Ուեւ մէկու Համար կարելի չէ զօրաւոր մարդու մը տունը մտնել եւ զինք յաղթել ու տունը թալանել, եթէ անոր ձեռքերը չի կապէ»:

Այս համարին բառացի իմաստը բացայայտ է եւ տրամաբանական: Վստահաբար Յիսուս այս օրինակով եւ անոր փոխաբերական իմաստով, մեզի դաս մը տալ կուզէ եւ չ'ըսեր այն ինչ որ բոլորին արդէն յայտնի է: Անտարակոյս «զօրաւոր մարդ»-ը կը ներկայացնէ բարձր որակով զօրութիւն ունեցող անձ մը, որ կը յառաջանայ կատարելութեան ուղիէն: Ի՞նչ են անոր տան գողցուելիք ինչքերը: Անոր տունը իր մարմինն է եւ գողցուելիք ինչքերն ալ անոր միտքը՝ խորհուրդները եւ զգացումները: Անոր «ձեռքերը» անհատին գիտակցութիւնն է: Երբ անձին գիտակցութիւնը զբաղ է խորհուրդներով եւ զգացումներով, անձն ալ կապուած կ'ըլլայ անոնց եւ հետեւաբար զբաղ՝ անոնցմով կալանաւորուած: Ահա՛, աս է իմաստը «կապուած ձեռքերուն»: Երբ գիտակցութիւնը ազատ չէ, չի կրնար անհատը կապ կապել իր ներքին Քրիստոսին հետ, հետեւաբար չի կրնար յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն ստանալ: «Գող»-ը անհատին «Ես»-ն է, որ միշտ կ'ուզէ գրաւել մարդուն միտքը, զգացումները եւ մարդը անոնցմով միշտ զբաղ պահել: «Ես»-ը եսասէր է: Քրիստոսսի յայտնութիւնը կը նշանակէ «Ես»-ի վախճանը: «Ես»-ը չ'ուզեր անհատին վրայ իր ունեցած իշխանութիւնը կորսնցնել եւ այսպէսով ալ իր վախճանին գալը: Ուրեմն «Ես»-ը իր գոյատեւման՝ եսասիրական նպատակներուն համար, մարդուն «ձեռքերը»՝ գիտակցութիւնը խորհուրդ ու զգացումներով կը «կապէ» եւ «տուն»-ը կը մտնէ եւ մարդուն անհատականութիւնը «կը թալանէ»՝ կը գողնայ:

ՀԱՄԱՐ 36

Յիսուս ըսաւ. «Առաւօտէն մինչեւ երեկոյ եւ երեկոյէն մինչեւ առաւօտ մի մտահոգուիր, թէ ինչ պիտի հագուիս»:

Յիսուսի այս խօսքը ներկայացուած է նաեւ Մատթէոսի Աւետարանին մէջ: Հոս յաւելեալ մեկնաբանութիւն պիտի չգրուի: Տես Գ հատոր «Աստուծոյ Խնամակալութիւնը» խորագրեալ գրութիւնը էջեր 85-95:

ՀԱՄԱՐ 37

Իր աշակերտները ըսին. «Ե՛րբ մեզի պիտի յայտնուիս եւ ե՛րբ Քեզ պիտի տեսնենք»:

Յիսուս ըսաւ. «Երբ դուք ձեր զգեստները հանեք եւ ամօթ չզգաք ու մանուկներու նման անոնք ձեր ոտքերուն տակ առնեք եւ անոնց վրայ քալեք, այն ատեն պիտի տեսնեք Կենդանի Աստուծոյ Որդին եւ պիտի չվախնաք»:

Այս համարը կը թուի Յիսուսի սորվեցուցածներուն ամփոփումը ըլլալ: Աշակերտներուն հարցումը շատ հետաքրքրական է: Անտարակոյս, երբ անոնք այս հարցումը Յիսուսին հարցուցին, Յիսուս ալ իրենց հետ հոն ներկայ էր, որով աշակերտները Ձինք կը տեսնէին: Ուրեմն հարցումը ամբողջովին տարբեր իմաստ մը պէտք է ունենայ: Նկատողութեան առնենք հաւանականութիւն մը: Յիսուսի այլակերպութեան ատենն էր, որ Քրիստոս յայտնուեցաւ երեք աշակերտներուն: Կարելի չէ վստահօրէն գիտնալ, թէ այս հարցումը Յիսուսի հարցուեցաւ այլակերպութենէն առաջ եւ այլակերպութիւնը հարցումին պատասխանն էր, թէ ոչ Յիսուսի այլակերպութեան ներկայ չգտնուող աշակերտները հարցուցին այս հարցումը: Այս հարցումէն եւ Յիսուսի տուած պատասխանէն հասկնալիք եւ սորվելիք մեծ դաս մը կայ: Աշակերտները հարցուցին Յիսուսին՝ մարդուն,

եւ ուզեցին տեսնել Քրիստոսը՝ Աստուած: Պէտք է մոռնալ, թէ Յիսուս իր մէջ Քրիստոսը յայտնաբերած, ունէր թէ՛ մարդկային, թէ՛ ալ՝ Աստուածային բնոյթ:

Այս հանգրուանին նկատողութեան առնենք աշակերտներու հարցումին բուն իմաստը եւ նպատակը: Անտարակոյս Յիսուս իրենց հետ էր եւ անոնք Զինք կը տեսնէին: Անոնցմէ երեքը Յիսուսի այլակերպութեան ներկայ եղած եւ Քրիստոսի յայտնութիւնը Յիսուսի մէջ տեսած էին: Յիսուսի տուած պատասխանէն յայտնի կ'ըլլայ, թէ աշակերտներուն այս հարցումին նպատակը իրենց անձնական փորձառութեան համար է: Այսինքն Քրիստոս իրենց մէջ երբ պիտի յայտնուի եւ իրենք այդ յայտնութեան փորձառութեան երբ պիտի արժանանան: Յիսուսի տուած պատասխանը յատկանշական է: Պէտք է մոռնալ, թէ եթէ մենք զմեզ կը նկատենք Յիսուս Քրիստոսի աշակերտ, Յիսուսի տուած պատասխանը միայն իր տասերկու աշակերտներուն համար չէր, այլ՝ բոլորիս համար:

Վերլուծենք Յիսուսի տուած պատասխանը: Առաջին նախադասութիւնը հետեւեալն է. «Երբ դուք ձեր զգեստները հանէք»: Ինչեր են մեր «զգեստներ»-ը: Անտարակոյս Յիսուսի ակնարկութիւնը մեր հագած հագուստներուն համար չէ: Ինչպէս հագուստներուն նպատակը մարմնին մերկութիւնը ծածկել է, նմանապէս մարդուն խորհուրդները եւ զգացումներն ալ կը ծածկեն անոր գիտակցութիւնը: Հետեւաբար անձն ալ պատշաճ կերպով չի կրնար «տեսնել»՝ ճշմարտութիւնը ըմբռնել: Ուրեմն զգեստները հանել կը նշանակէ գիտակցութեան մակարդակի բարձրացման արգելք եղող խորհուրդ եւ զգացումներու հոսքը դադրեցնել եւ անոնցմէ ձերբազատուիլ: Իրենց կրօնքին նկատմամբ, իրենց ունեցած սխալ հասկացողութիւններէն եւ հաւատալիքներէն ձերբազատուիլ: Ինչպէս որ մարդ զգես-

տով չի ծնիր, բայց յետոյ զգեստ կը հագուի եւ իր մարմինը կը ծածկէ, նմանապէս ալ յուշերով եւ հաւատալիքներով չի ծնիր: Յառաջիկային զանոնք կամաց կամաց իր յիշողութեան եւ ենթագիտակցութեան մէջ կ'ամբարէ: Ընդհանուր խորհուրդներուն եւ զգացումներուն պատճառներն ալ մարդուն յուշերը, ցանկութիւնները եւ իր ամբարած հաւատալիքներն են, որոնց մեծամասնութիւնը ճշմարտութեան հետ որեւէ կապ չունի: Հետեւաբար «զգեստները հանել»-ուն իմաստը ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած եւ անհատին համար անոնց ճշմարտութիւն ըլլալը կարծած հաւատալիքներէն ինչպէս նաեւ աշխարհիկ բոլոր ցանկութիւններէն ձերբազատուիլը կը նշանակէ: Յիսուսի երկրորդ նախադասութիւնը «Էւ ամօթ չզգար»-ն է: Ա'ս ալ զգացումներու զսպումին համար ակնարկութիւն մըն է: Յիսուս կը շեշտէ ըսածին անհրաժեշտութիւնը նոյն գաղափարը հետեւեալ նախադասութեամբ կրկնելով. «անոնք ձեր ոտքերուն տակ առնէք եւ անոնց վրայ քալէք»: Յիսուս անգամ մը եւս կը շեշտէ մանուկներու նմանիլ, երբ կ'ըսէ. «մանուկներու նման»: Յիսուս Քրիստոսի այս խօսքին նման խօսքեր բոլոր Աւետարաններուն մէջ բազմիցս ներկայացուած են՝ այսպէս. «Եթէ մանուկներու պէս չըլլաք երկինքի թագաւորութեան արժանի պիտի չըլլաք»: Ասոր մեկնաբանութիւնը այս գիրքին 73-75 եւ 116-118 էջերուն մէջ տրուած է: Երբ աշակերտները կարողանան յաջողիլ այս բոլորը ընել, միայն «այն ատեն պիտի տեսնէք Կենդանի Աստուծոյ Որդին»: Կենդանի Աստուծոյ Որդին Քրիստոսն է, որ ամէն անհատի հոգին՝ ճշմարիտ էութիւնն է: Յիսուսի ըսածը Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ եւ ահա՛, աս է նպատակը մարդկային կեանքին: Ինչպէս նախորդ համարներէն մէկուն մէջ Յիսուս ըսած էր «նախ պիտի խռովիք, բայց յետոյ պիտի ապշիք» (Համար 2), հոս ալ դարձեալ կը շեշտէ ըսելով. «Էւ պիտի չվախնար»:

ՀԱՄԱՐ 38

Յիսուս ըսաւ. «Շատ անգամ փափաքեցաք լսել այն խօսքերը զորս Ես ձեզի կ'ըսեմ, եւ չունիք ուրիշ մէկը որմէ իմանաք այդ խօսքերը: Օր պիտի գայ որ զիս պիտի փնտուէք եւ պիտի չգտնէք»:

Յիսուս իր յայտնաբերած Քրիստոսի բարձր գիտակցութեամբ կարող էր սորվեցնել կատարելութեան ուղին եւ իրեն նմանելու միջոցը: «Շատ անգամ փափաքեցաք լսել այն խօսքերը զորս Ես ձեզի կ'ըսեմ»-ին իմաստը այն է, թէ մարդ շատ կը փորձէ հասկնալ Յիսուսի սորվեցուցածներուն մէջ թագնուած իմաստասիրութիւնները, բայց որովհետեւ ան տակաւին ինքզինք այդ մակարդակին չէ հասցուցած, կարող չէ ըսուածներուն բուն իմաստը հասկնալ: Ըստ հետեւեալ համարին կը թուի թէ Փարիսեցիներուն եւ դպիրներուն տրուած էր այդ «բանալին»՝ թագուն գիտութիւնը, բայց անոնք պահեցին այդ գիտութիւնը եւ հանրութեան չսորվեցուցին: Շատ հաւանական է, որ ժամանակի ընթացքին իրենք ալ մոռցան այդ գիտութիւնը: Յիսուսի հետեւեալ խօսքը. «Օր պիտի գայ որ զիս պիտի փնտուէք եւ պիտի չգտնէք» ներկայացուած է նաեւ կանոնական Աւետարանին մէջ: Այս նախադասութեան մեկնաբանութիւնը կարելի է գտնել հրատարակած այս գիրքերուս հատոր Գ.-ին 306-308 էջերուն մէջ:



ՀԱՄԱՐ 39

Յիսուս ըսաւ. «Փարիսեցիները եւ դպիրները ստացան գիտութեան բանալին ու պահեցին: Իրենք ներս չմտան եւ մննալ փափաքողներն ալ չթոյլատրեցին: Բայց դուք օձի նման իմաստուն եւ աղանձիի նման անմեղ եղէք»:

Պատշաճ է այս համարը նկատողութեան առնել Համար 38-ի հետ միասին: Իսկ այս համարին երկրորդ մասը. «Բայց դուք օձի նման իմաստուն եւ աղանձիի նման անմեղ եղէք»-ը ինչպէս նաեւ առաջին մասը ներկայացւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Այս նախադասութեան մեկնաբանութիւնը կարելի է գտնել հրատարակած այս գիրքերուս հատոր Գ.-ին 119-122 եւ 198-205 էջերուն մէջ:

ՀԱՄԱՐ 40

Յիսուս ըսաւ. «Որժատունկ մը սնկուած էր Հօրմէն մէկդի, քանի որ չէր զօրացած, արմատախիլ պիտի ըլլայ եւ պիտի բնաջնջուի»:


Տնկուած որժատունկը մարդը ինքն է: Այլուր Քրիստոս նաեւ ըսած է. «Ես եմ որժատունկը»: Միթէ ամէն անհատի հոգին իր մէջ Քրիստոսի ներկայութիւնը չէ՞: Այն անհատը, որ չի ձգտիր Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնել, այսինքն Քրիստոս իր մէջ յայտնաբերել եւ իր կեանքին մէջ այդ ուղղութեամբ չընդհանար կ'ըլլայ «Հօրմէն մէկդի»: Առանց Քրիստոսէ ստացած բարձր որակով Ս. Հոգիի զօրութեան անհատը կը մնայ տկար: Ահա՛, աս է իմաստը «չէր զօրացած»-ին: Միթէ Քրիստոս «դուռ»-ը չէ՞: «Արմատախիլ պիտի ըլլայ եւ պիտի բնաջնջուի»-ն կը ներկայացնէ մահը: Միթէ Աւետարանին մէջ չէ՞ գրուած.

«Զի Խաչակն մեղաց մահ է»: (Հռովմայեցի Զ:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Ինչպէս այս եւ նախորդ հատորներուն մէջ բազմիցս կրկնուած է, թէ մարդուն հոգին անմահ է, բայց անհատականութիւնը մարմնին մահուան հետ կը մեռնի եւ կը «բնաջնջուի»: Եթէ անհատը իր կեանքի ընթացքին կարողացած է Քրիստոս իր մէջ յայտնաբերել, Քրիստոս ալ անոր աշխարհիկ կեանքին վերջին օրը, մարմնին մահացած օրը եւ ոչ թէ դարեր յետոյ, այս մոլորակին՝ աշխարհին վերջին օրը, անոր անհատականութեան յարութիւն եւ յաւիտենական կեանք կը շնորհէ: Այս հիման վրայ, Յիսուսի այս խօսքը ազդարարութիւն մըն է բոլոր անոնց, որոնք կը փափաքին յաւիտենական կեանք ունենալ:

Այս համարը կարելի է տարբեր ձեւով մըն ալ մեկնաբանել: Գուցէ որթատունկը կը ներկայացնէ կրօնական հասկացողութիւն մը, որուն հետեւորդները, ճշմարտութենէն հեռու, կ'ըլլան «Հօրմէն մէկդի»: Նման հաւատալիքներով (belief) մարդ կարող չէ զօրաւոր հաւատք (faith) կերտել: «չէր զօրացած»-ին իմաստն ալ աս է: Ծշմարտութենէ հեռու հաւատալիքներու հետեւողներուն վախճանն ալ կ'ըլլայ «մահ»՝ «արմատախիլ ըլլալ եւ բնաջնջուիլ»:



ՀԱՄԱՐ 41

Յիսուս ըսաւ. «Այն որ իր ձեռքին մէջ ունի, անոր պիտի տրուի եւ ան որ չունի, անկէ պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած քիչը»:

Այս համարին պարունակութիւնը ներկայացուած է նաեւ Մատթէոսի Աւետարանին մէջ:

*«Բանս յեւ Կոռնէալ է Գրիգէլ Կնորհոորաց
արձայոթեանն երկնից, եւ նոցա շէ՛ր Կոռնալ:
Զի ոյր Գոոցէ՝ Կացի՛ նմա եւ յաւելցի, եւ ոյր
ոչն Գոոցէ՝ եւ զոր ունիցին Բարձրի ՚ի նմանէ:*

(Մատթէոս ԺԳ:11-12)

Քանի որ ձեզի՛ տրուած է գիտնալ երկինքի թագաւորութեան խորհուրդները, բայց անոնց տրուած է: Որովհետեւ ո՛վ որ ունի անոր պիտի տրուի ու առատութեան մէջ պիտի ըլլայ. իսկ ո՛վ որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի»:

Ի՞նչ է այդ բանը, որ երբ մարդ ունի, աւելիով պիտի ստանայ, իսկ եթէ չատ քիչ ունի, այդ ալ իրմէ պիտի առնուի: Անտարակոյս, Յիսուսի ըսածը մարդուն ունեցած աշխարհիկ հարստութիւնը չէ, ոչ ալ ընտանեկան անդամները: Յիսուսին ըսածը մարդուն գիտակցութեան մակարդակն է, Քրիստոսի «Լոյս»-ին յայտնութեան պայծառութիւնն է, Ս. Հոգիի կենսատու զօրութեան որակն է, անոնց տուած գիտութիւնը, ըմբռնումը, հասկացողութիւնը եւ ասոնց հետեւանք անհատին կերտած կենցաղն է: Անտարակոյս ամէն անհատի մէջ Քրիստոսի «Լոյս»-ը գոյութիւն ունի, ապա թէ ոչ անձը կեանք չ'ունենար: Բայց երբ ան այդ «Լոյս»-ի յայտնութեան չի ծառայեր, իր մարմնին մահուան հետ անհատն ալ կը մեռնի, ոչ կեանք կ'ունենայ եւ ոչ ալ գիտակցութիւն: Ահա՛, աս է «անկէ պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած քիչ»-ին իմաստը:

ՀԱՄԱՐ 42

Յիսուս ըսաւ. «Անցորդներ եղէք»:

Այս երկու բառերուն մէջ հսկայական իմաստասիրութիւն մը թաղնուած է: Յիսուսի ըսածը ակնարկութիւն մըն է մարդկային կեանքին, որ ժամանակաւոր է: Մարդ արարած, իմացականօրէն գիտնալով հանդերձ, թէ մահկանացու մըն է, կը կերտէ այնպիսի կենցաղ մը եւ կը կապուի աշխարհին որ կը կարծէք թէ յաւիտեան՝ միշտ այս աշխարհին վրայ պիտի ըլլայ: Յիսուսին ըսածը այն է, թէ աշխարհիկ կեանքը պէտք է ապրինք նման անցորդի մը, առանց անոր կապուելու: Հոս, ասոր մասին յաւելեալ մեկնաբանութիւն կամ տեղեկութիւն պիտի չտրուի: Յաւելեալ լուսաբանութեան համար հաճեցէք նայիլ «Լոյս Ի Լուսոյ Գ - Տիեզերական Օրէնքները» գիրքիս մէջ Գլուխ Ը. «Իմաստուն Մարդը...» խորագրեալ գրութեան մէջ կարճ պատմութեամբ մը իմաստը լաւագոյնս ներկայացուած է (էջեր 262-264): Տես նաեւ վերեւ «համար 27»-ը:

ՀԱՄԱՐ 43

Իր աշակերտները իրեն հարցուցին. «Դուն ո՞վ ես, որ այս բաները մեզի կ'ըսես»: Յիսուս անոնց ըսաւ. «Ձեզի ըսածներէս չէք հասկնար թէ ով եմ, դուք ալ Հրեաներուն նմանեցաք, քանզի անոնք ալ ծառը կը սիրեն բայց պտուղը կ'ատեն, կամ պտուղը կը սիրեն եւ ծառը կ'ատեն»:

Աշակերտներուն հարցումը իսկապէս զարմանք կը պատճառէ: Անտարակոյս աշակերտները Յիսուսը լաւ կը ճանչնային: Բայց պէտք է հասկնալ թէ Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր, որովհետեւ Քրիստոս Յիսուսի մէջ յայտնուած էր: Հետեւաբար Յիսուս երբեմն կը խօսէր որպէս մարդ, երբեմն ալ Քրիստոս կը խօսէր՝ Յիսուսի բերնով: Ճիշդ աս էր, որ աշակերտները կը

չփոթեցնէր: Յիսուսի տուած պատասխանն ալ շատ պատշաճ է: Եթէ աշակերտները քիչ մը աւելի բարձր գիտակցութեան մակարդակ ունենային, շատ աւելի դիւրութեամբ պիտի հասկնային թէ խօսողը ով է՝ Յիսուս մարդը, թէ ոչ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին: Յիսուս զանոնք կը նմանցնէ Հրեաներուն, որոնց միտքերը կալանաւորուած իրենց խեղաթիւրուած հաւատալիքներով, խաւարամտութեան ստուերներուն մէջ կը թափառէին: Խաւարամտութիւնը հետեւանքն է ցած գիտակցութեան մակարդակի: Երբ անհատը խաւարամիտ է, չի կրնար ճշմարտութիւնը տեսնել: Ճիշդ ասոր համար Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Ծառը կը սիրեն բայց պտուղը կ'ատեն, կամ պտուղը կը սիրեն եւ ծառը կ'ատեն»: Ան որ «ծառը կը սիրէ» պտուղն ալ պէտք է սիրէ, իսկ ան որ «պտուղը կը սիրէ» ծառն ալ պէտք է սիրէ: Ան որ վարդապետը կը սիրէ, անոր սորվեցուցածն ալ պէտք է սիրէ: Նոյնպէս, ան որ սորվածը կը սիրէ, սորվեցնողն ալ պէտք է սիրէ: Ան որ Յիսուսի խօսքերը կը սիրէ եւ կ'իւրացնէ, պէտք է զանոնք խօսող Քրիստոսն ալ սիրէ: Իսկ եթէ անհատը Քրիստոսը իսկապէս կը սիրէ, Զինք մինչեւ իր մէջ յայտնաբերէ, ամէն ջանք պէտք է թափէ: Նոյնիսկ Քրիստոնեայ աշխարհին մէջ մարդկութեան մեծամասնութիւնը կ'ըսէ թէ Յիսուսի սորվեցուցածները կը սիրէ, բայց ընդհանուր առմամբ զանոնք չ'իւրացներ: Այդ մեծամասնութիւնը նաեւ կ'ըսէ թէ Քրիստոս կը սիրէ, բայց այդ սէրը ցոյց չի տար Զայն իր մէջ յայտնաբերելով: Ոմանք «պտուղ»-ը կը սիրեն եւ ոչ «ծառ»-ը, ոմանք ալ՝ «ծառ»-ը, բայց ոչ «պտուղ»-ը:



ՀԱՄԱՐ 44

Յիսուս ըսաւ. «Ան որ Հօրը կը ՀայՀոյե պիտի ներուի եւ ան որ Որդւոյն կը ՀայՀոյե պիտի ներուի, բայց ան որ Ս. Հոգիին դէմ կը ՀայՀոյե պիտի Հներուի ոչ աշխարհի մէջ եւ ոչ ալ երկինքը»:

Յիսուսի այս խօսքը ներկայացուած է նաեւ Մարկոսի Աւետարանին մէջ: Այս նախադասութեան մեկնաբանութիւնը կարելի է գտնել հրատարակած այս գիրքերուս հատոր Գ.-ին «Աններելի Մեղքը» խորագրեալ գրութեան մէջ (էջեր 138-140): Ինչպէս «Աններելի Մեղքը» գրութեան մէջ գրուած է, Ս. Հոգիի դէմ հայհոյելը Աստուծոյ Չօրութեան տիեզերական օրէնքներուն դէմ գործելն է: Որեւէ զօրութեան մը օրէնքներուն դէմ եթէ գործենք անոր հակազդեցութեան կ'ենթարկուինք: Այդ հակազդեցութիւնները կը համարենք մեր գործած մեղքին պատիժը: Այս հիման վրայ ալ Ս. Հոգիի՝ Աստուծոյ զօրութեան դէմ գործուած մեղքն ալ կ'ըլլայ աններելի: Այդ հակազդեցութիւնները կրնան անձին պատահիլ իր ներկայ կեանքին ընթացքին եւ ահա՛, աս է իմաստը «Հներուի աշխարհի մէջ»-ին: Իսկ եթէ անձը, իր ներկայ կեանքի ընթացքին, իր գործած մեղքին հակազդեցութեան չէ ենթարկուած, այդ մեղքին տեղեկութիւնը կը մնայ իր զօրութեան մարմնին մէջ եւ իր հոգիին վերամարմնացման ժամանակ անոր հակազդեցութիւնը կը յայտնուի: Ահա՛, այս է «Հներուի ոչ ալ երկինքը»-ին իմաստը: Երկինքը զօրութեան վայրն է, Ս. Հոգիի ներկայութիւնը:



ՀԱՄԱՐ 45

Յիսուս ըսաւ. «Միթէ փուշերէն խաղող կը քաղէ՞ն, կամ տատասկէն՝ թուզ, որոնք պտուղ չեն տար: Բարի մարդը իր գանձէն բարի բաներ դուրս կը հանէ, վատ մարդն ալ իր չար գանձէն՝ չար բաներ, որ իր սրտին մէջն է եւ վատ բաներ կը խօսի, ան իր սրտի առատութենէն վատ բաներ դուրս կը հանէ:

Յիսուսի այս խօսքը կը թուի բացայայտ ըլլալ: Յիսուս փոխաբերական իմաստով կ'օգտագործէ զանազան բուսեղէններ ներկայացնելու համար մարդը եւ անոր գործունէութիւնը: Փուշը եւ տատասկը ցանկալի փոյսեր չեն, որովհետեւ անոնք պտուղ չեն տար, անոնք մարդուն օգուտ մը չունին: Անոնք կը ներկայացնեն այն մարդիկը, որոնք եսասէր են եւ պատրաստ չեն ուրիշներու օգնելու՝ «պտղաբեր» ըլլալու: Անտարակոյս թէ՛ խաղողը թէ՛ ալ թուզը ցանկալի պտուղներ են: Մարդուն արարքներն ալ իր պտուղներն են, որոնք պարտ են ցանկալի ըլլալ հանրութեան: Մէր հանդէպ բոլորին, կարեկից ըլլալ, բարեացակամ ըլլալ, ներողամիտ ըլլալ, ողորմած ըլլալ եւ միշտ ուրիշի օգնելու պատրաստ ... կը ներկայացնեն մարդկային լաւ «պտուղ»-ները: Ինչպէս լաւ բաներ նմանապէս վատերը բոլորն ալ ծագում կ'առնեն անձին «սիրտ»-էն՝ միտքէն: Եթէ անձին անհատականութիւնը փարած է իր «Ես»-ին, անձը կ'ըլլայ եսասէր: Եսասէրը ամենեւին աշխատէր չի կրնար ըլլալ, հետեւաբար ամենեւին չի յայտնաբերեր բարի «պտուղ»-ներ՝ անոնք որոնք վերեւ յիշուած են: Իսկ այն անձը որուն անհատականութիւնը անտեսելով իր «Ես»-ը կը փարի ներքին Քրիստոսի, իր բոլոր «պտուղ»ներն ալ կ'ըլլան աշխատէր եւ բարի:

Ի՞նչ են մարդկային կենցաղին մէջ բարի «պտուղ» տալու միջոցները: Անոնք են. ճիշդ՝ բարի հայեացք,

ճիշդ՝ բարի նպատակ, ճիշդ՝ բարի խօսք, ճիշդ՝ բարի
արարք, ճիշդ՝ բարի ապրուստ, ճիշդ՝ բարի ջանք, ճիշդ
բանի՝ բարիի վրայ կեդրոնացում, ճիշդ՝ բարի ակնածու-
թիւն:



Զի խնայ բնդ ամենայն շոր ասեայ Տէր.
Եւ խորհաւի Վասն Դիօռիսեան Անջին Երոյ:
Աջք թշնամանոր՝
Լեշոյ Անիրաւ,
շեռք՝ որ Հեղոհն Չարիւն Արդար:
Սիր՝ որ Երիթ Չխորհորդս Չարոհեան:
Ոսք՝ որ Փոհեան Գործել Չճարիս, Ասնպեսօհն:
Բորբորէ Չստոհիւն ՎԿԱյ Անիրաւ,
Եւ ԱրԿԱԷ Գրգռոհիւն 'ի մէջ Երբարօ:

Զի ճրագ է Պատուիրան ՕրինաՅն՝ Եւ լոյս,
Եւ ճանապարհ ԿենաՅն՝
յանդիմանոհիւն Եւ ԽրաՏ:

(Առակք Սողոմոնի 2:16-19 Եւ 23)

ՀԱՄԱՐ 46

Յիսուս ըսաւ. «Ադամէն մինչեւ Յովհաննէս Մկրտիչ, կիներէ ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծը չկայ, ⁸⁰(այնպէս որ անոր աչքերը չխոնարհին)⁸⁰: Բայց ես ձեզի ըսած եմ, ան որ ձեր մէջէն պզտիկի մը նման պիտի ըլլայ, պիտի ճանչնայ Թագաւորութիւնը եւ Յովհաննէսէն աւելի բարձր պիտի ըլլայ:

Կանոնական Աւետարաններէն Մատթէոսի Աւետարանին մէջ (ԺԲ:11) գրուած է այս համարին մէջ Յովհաննէսի նկատմամբ Յիսուսի ըսած խօսքը: Երբ Յիսուս կ'ըսէ «կիներէ ծնածներուն» ակնարկութիւնը միայն մարդկային բնոյթ յայտնաբերողներուն համար է: Անհատ մը կարող է շատ բարի անձ մը ըլլալ եւ նոյնիսկ իր կենցաղով՝ «սուրբ» մը: Ըստ Յիսուսի ըսածին Յովհաննէս Մկրտիչ մարդկութեան ամենաբարձր «սրբութեան» մակարդակին հասած անձ մըն էր: Յիսուս հոս անգամ մը եւս կը կրկնէ մանուկի նման ըլլալ: Այս ուղղութեամբ կարիքը չկայ կրկնել այն ինչ որ գրուած է Համար 22-ի եւ Համար 37-ի մէջ: Բայց երբ անհատը կը յաջողի ինքզինք ձերբազատել աշխարհէն եւ կը կարողանայ «սուրբ սիրտ» կերտել, այսինքն միտքը բոլոր խորհուրդներէ եւ զգացումներէ մաքրել, այն ատեն կը յաջողի իր ներքին Քրիստոսը տեսնել եւ Զայն յայտնաբերել իր մէջ: Այդ պարագային Քրիստոսի Աստուածային բնոյթը կը յայտնուի իր մէջ եւ Քրիստոսի յայտնութիւնն է, որ Յովհաննէսի «սրբութենէն» «աւելի բարձր պիտի ըլլայ»: Այն անձը, որ կը տեսնէ Քրիստոսը կը ճանչնայ նաեւ Աստուծոյ Թագաւորութիւնը:



ՀԱՄԱՐ 47

Յիսուս ըսաւ. «Անկարելի է մարդու մը Համար նոյն ժամանակ երկու ձի հեծնիլ, կամ երկու աղեղ լարել: Նմանապէս, ո՛չ մէկը կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ պիտի յարգէ մէկը եւ արհամարէ միւսը: Ո՛չ որ Հին գինին խմելէն ետք՝ իսկոյն նորը կ'ուզէ: Ո՛չ որ նոր գինին Հին տիկերու մէջ կը դնէ, որովհետեւ նոր գինին տիկերը կը պայթեցնէ: Ո՛չ ալ Հին գինին կը դնեն նոր տիկերու մէջ, որովհետեւ ան կ'աւրուի: Նոր Հագուստի վրայ Հին կտոր չեն կարկտեր որովհետեւ պատուաւոր յառաջ պիտի գայ»:

Յիսուսի այս խօսքը ներկայացուած է նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Այս համարին առաջին մասին մեկնաբանութիւնը կարելի է գտնել հրատարակած այս գիրքերու հատոր Գ.-ին «Երկու Տիրոջ Ծառայել» խորագրեալ գրութեան մէջ (էջ 84):

Իսկ երկրորդ մասին մեկնաբանութեան համար ալ տես դարձեալ Գ հատորին մէջ էջեր 79-80:



Յոր վալր մՏԱՆԵՆ ԹՇՆԱՄԱՆԲ, ԱՆԴ ԵՆ ԵՒ
ԱՆԱՐԳԱՆԲ:

ԲԵՐԱՆ ԽՈՆԱՐՀԱՅ ԽՈԿԱՂ ՉԻՄԱՍՏՈՒԹԻՒՄ

(Առակք Սողոմոնի ԺԱ:2)

ՀԱՄԱՐ 48

Յիսուս ըսաւ. «Երբ մեր այս տան մէջ երկու հոգի իրարու հետ խաղաղութիւն կնքէ ու լերան ըսեն. «Տեղափոխուէ՛», ան պիտի տեղափոխուի:

Յիսուսի այս խօսքը հետաքրքրական է: Առաջին հերթին ան կը թուի համապատասխանել տիեզերական օրէնքներէն «Ընկերակցութեան Օրէնքին» (տես «Լոյս Ի Լուսոյ Գ. – Տիեզերական Օրէնքները» գիրքին մէջ «Տիեզերական Օրէնքները» խորագրեալ Բ. գլուխին մէջ «Ընկերակցութեան Օրէնքը» գրութիւնը էջ 109): Բայց Յիսուսի ըսածը անտարակոյս տարբեր իմաստ մը պէտք է ունենայ, որովհետեւ որքան ալ ընկերութիւնները համերաշխ ըլլան եւ խաղաղութիւն ցոլացնեն չեն կրնար լերան հրամայել եւ ան ալ հնազանդի: Ուրեմն վերլուծենք, թէ Յիսուս ինչ ըսել ուզած է:

Նախ նկատողութեան առնենք Յիսուսի առաջին խօսքը. «Երբ մեր այս տան մէջ»: Ո՞ր տան մէջ, արդեօք կարելի չէ՞, որ Յիսուս «այս տան մէջ» ըսելով աւնարկութիւն մը կ'ընէ մարդուն Փիզիքական գոյութեան: Ինչպէս այլուր ան մարդուն մարմնին համար ըսած է «Աստուծոյ տաճարը»: Յիսուս նաեւ ըսած է «Հօրս տան մէջ շատ բնակարաններ կան»: Հայր Աստուծոյ տունը ընդհանուր ստեղծագործութիւնն է եւ այդ բնակարաններն ալ ամէն մի անհատ (տես Գ. հատոր «Աստուծոյ տան բնակարանները» խորագրեալ գրութիւնը էջեր 344-350): Եթէ ընդունինք թէ «այս տունը» մարդը ինքն է, ո՞վքեր են երկու հոգիները, որ պէտք է «իրարու հետ խաղաղութիւն կնքեն»: Ամէն անհատ իր մէջ ունի երեք բնոյթներ, անտարակոյս մին իր մարդկային բնոյթն է, երկրորդը իր անասնական բնոյթը եւ երրորդն ալ իր Աստուածային բնոյթը: Դժբախտաբար ընդհանուր առմամբ մարդուն Աստուածային բնոյթը հոն կը մնայ միայն իբրեւ «հոնտ», որովհետեւ մարդ չի «խնամեր հոնտը» եւ չ'արտօներ որ ան «ծլի»՝ աճի եւ յայտնուի

իր մէջ: Մարդուն անասնական բնոյթը, որ իր «Ես»-ին՝ սատանային բնոյթն է յաճախ կը խոտորէ անհատը: Բայց երբ անհատը կը յաջողի չէզոքացնել «Ես»-ին ազդեցութիւնը ինչպէս նաեւ իր անասնական բնոյթը, այն ատեն կարելիութիւնը կ'ունենայ խնամել եւ աճեցնել իր մէջի Աստուածային բնոյթի հունտը: Աս կը համապատասխանէ Քրիստոսի յայտնութեան անձին մէջ: Այս հիման վրայ ինք խաղաղութիւն կնքած կ'ըլլայ իր ներքին Քրիստոսին հետ: Քրիստոս դուռն է Ս. Հոգիի զօրութեան անհատէն ներս ներգործման: Յաւելեալ զօրութեամբ եւ գիտակցութեան մակարդակի բարձրացումով անհատը կը գիտակցի թագուն տիեզերական օրէնքներուն եւ կը կարողանայ արարքներ գործել, որոնք մենք զանոնք հրաշք կը կոչենք: Աս ալ կը համապատասխանէ «լերան տեղափոխուելուն»: Միթէ վերեւ համար 19-ի մէջ ալ չէ՞ գրուած. «Եթէ դուք իմ աշակերտներս ըլլաք եւ խօսքերս իմանաք, այս քարերը ձեզի պիտի մատակարարեն»: Միթէ ըստ Յիսուսի սորվեցուցածին պէտք չէ՞ աշակերտը նմանի իր վարդապետին եւ երկնային Հօր նման կատարեալ ըլլա՞յ:

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ ինչ ան զվարդապետի իւր, ամենայն կադարեալն՝ եղիցի ի՞շրեւ զվարդապետի իւր»: (Ղուկաս 9:40)

«Աշակերտը իր վարդապետէն գերիւեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Լըդ եղերո՛ւմ զո՛ւմ կադարեա՛լն, որպէս եւ Լայրն յեր երկնաւոր կադարեա՛լ է»: (Մարքէոս 16:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Շատ հաւանական է, որ «լեռ»-ը իր բառացի իմաստէն աւելի փոխաբերաբար ներկայացնէ մարդկութեան ճիշդ՝ արդար կառավարչական, ճիշդ կրօնական,

ճիշդ ընկերային փոխյարաբերութեան նկատմամբ իր բոլոր սխալ հասկացողութիւնները: Երբ անհատը իսկապէս կարողանայ իր ներքին Քրիստոսի հետ հաղորդակցիլ, այն ատեն «լերան» կ'ըսէ: «Տեղափոխուէ» եւ ան ալ կը տեղափոխուի, այսինքն անհատը իր բոլոր հին հասկացողութիւնները մէկդի կը դնէ:

ՀԱՄԱՐ 49

Յիսուս ըսաւ. «Երանի անոնց որ մենակեաց են ու ընտրեալ, որովհետեւ դուք պիտի գտնէք թագաւորութիւնը, քանզի անկէ եկած էք եւ հոն ալ պիտի վերադառնաք»:

Յիսուսի այս խօսքը երանի կ'ըսէ անոնց համար, որոնք «մենակեաց են ու ընտրեալ»: Շատ անձեր նման գաղափարներով կը մեկուսանան լերան գագաթը եւ ճգնաւորի կեանք կ'ապրին: Յիսուսի ըսած «մենակեաց»-ը Փիզիքական մեկուսացման համար չէ, այլ՝ մտային: Մարդ կարող է լերան գագաթը Փիզիքապէս մեկուսացած ըլլայ բայց մտային՝ խորհուրդներու եւ զգացումներու բազմութեան ենթակայ: Իսկ ուրիշ մը շուկայի բազմութեան մէջ, իր բոլոր առօրեայ պարտականութիւնները կատարելով հանդերձ կրնայ մտայնօրէն մեկուսացած ըլլալ: Անոր միտքը կեդրոնացած կ'ըլլայ Քրիստոսի վրայ, Զայն կը տեսնէ ամենուրեք, ամէն անհատի մէջ եւ ըստ այնմ կը վարուի բոլորին հետ: «Մենակեաց»-ին երկրորդ մէկը իմաստն ալ այն է, թէ անհատը կրօնքի նկատմամբ մեծամասնութեան հաւատացած մակերեսային հասկացողութեան չի հետեւիր: Հետեւաբար ան անջատ բոլորէն առանցին՝ «մենակեաց» կ'ըլլայ: Երբ Յիսուս կ'ըսէ. «ընտրեալ», ո՞վ է որ անհատը կ'ընտրէ այդ «երանութեան» համար: Անտարակոյս, ընտրողը անձին ներքին Քրիստոսն է: Քրիստոս ալ անհատը կ'ընտրէ միայն ու միայն եթէ անհատը իր

կենցաղով կ'արժանանայ այդ ընտրութեան: Իսկ Յիսուսի ըսած. «Երանի անոնց»-ը կը ներկայացնէ մարդուն արժանացած երանութիւնը, որ կարելի է միայն Աստուծոյ թագաւորութեան մէջ գտնել: Այս համարի խօսքով Յիսուս մեզի անգամ մը եւս կը շեշտէ Աստուծոյ թագաւորութեան արժանանալու միջոցը: Անոնք են կատարելութեան ուղին, այսինքն ընտրուելու համար պատշաճ կենցաղ մը եւ մտային կեդրոնացում, այսինքն «սուրբ սիրտ» կերտել: Եթէ մարդուն ճշմարիտ էութիւնը իր հոգին՝ Քրիստոսն է, ուրեմն պէտք է հասկնանք թէ մարդ աշխարհ եկած է Աստուծոյ թագաւորութենէն: Ժշմարտութիւնը այն է, թէ բոլորս ալ Աստուծոյ թագաւորութեան մէջ ենք, բայց անգիտակից այս իրողութեան: Հետեւաբար մեր այդ խաւարամտութեան հետեւանք ալ կը տառապինք: Աստուծոյ թագաւորութեան համար երթալիք ոչ մէկ տեղ կայ, այլ միայն անդրադարձ մը պէտք է: Այդ անդրադարձն ալ մեր գիտակցութեան մակարդակէն կախեալ է: Ամէն անհատի հոգին Քրիստոսն է, ուրեմն ամէն անհատի հոգին ալ ուշ կամ կանուխ հոն ետ պիտի վերադառնայ:

ՀԱՄԱՐ 50

Յիսուս ըսաւ. «Եթէ ձեզի հարցնեն, թէ ուրկէ եկած էք: Ըսէք, թէ եկած էք Լոյսէն, այն տեղէն ուր Լոյսը ինք մարմնացաւ եւ անոնց նմանութեամբ անոնց յայտնուեցաւ: Եթէ ձեզի ըսեն, թէ դուք ո՞վ էք: Ըսէք, թէ դուք անոր որդիներն էք եւ կենաց Հօր ընտրեալները: Եթէ ձեզի հարցնեն, թէ ի՞նչ է ձեր Հօրը նշանը ձեր մէջ: Անոնց ըսէք, թէ ան թե՛ շարժում է թէ ալ Հանգիստ»:

Այս համարին մէջի խօսքերով Յիսուս կը ներկայացնէ եւ կը բացատրէ ստեղծագործութիւնը, ստեղծա-

գործուժեան մէջ բարեշրջումը եւ մարդուն գոյութեան պատճառը: Աստուծոյ «Լոյս»-ը Աստուծոյ զօրութեան յայտնութիւնը եւ մարմնացումն է: Հետեւաբար «Լոյս»-ը Քրիստոսն է: Միթէ կանոնական Աւետարաններուն մէջ չե՞նք կարդացած Յիսուս Քրիստոսի հետեւալ խօսքը. «Ես եմ աշխարհի լոյսը»:

«...Ե՛ս եմ լո՛յս աշխարհի. որ Գայ պննի իմ՝ ընդ խաւար մի՛ Գննացէ. այլ ընկալցի պլո՛յսն կենաց:»
(Յովհաննոս Ը:12)

« ...Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կու գայ, խաւարի մէջ պիտի չգալէ , հապա կենաց լոյսը պիտի ունենայ:»

Բայց Ան նաեւ ըսած է. «Դուք էք աշխարհի լոյսը»:

«Դո՛ւ էլ ել լոյս աշխարհի»: (Մարգէնոս Ե:14)

«Դո՛ք էք աշխարհի լոյսը»:

Առականի մէջ ալ գրուած է.

«Լոյս Տեարն շոնշ մարդկան, ...» : (Լուսնայ Ի:27)

«Մարդուն հոգին Տէրով լոյսն է»: ²

Հետեւաբար ամէն անհատ Քրիստոսի «Լոյս»-էն եկած է, որովհետեւ իր ճշմարիտ էութիւնը՝ իր հոգին Քրիստոսն է: «Լոյս»-ը զօրութիւն կը ներկայացնէ, այսինքն Ս. Հոգին եւ այդ «Լոյս»-ին մարմնացումն ալ Քրիստոս: Ամէն անհատ որ կը տեսնենք այդ «Լոյս»-ին յայտնութիւնն է, բայց դժբախտաբար ոչ լրիւ յայտնութիւն, որովհետեւ անհատը ինք արգելք կ'ըլլայ այդ լրիւ յայտնութեան: Բայց Յիսուսի մէջ մարդ կարողացաւ այդ «Լոյս»-ին լրիւ յայտնութիւնը տեսնել:

Յիսուս դարձեալ կը շեշտէ, թէ մենք բոլորս Հայր Աստուծոյ որդիներն ենք: Միթէ չե՞նք գրուած.

«Ես ասացի ինչ աստուած էլ իցէ՛լ, եւս որդի՛լ

Բարձրելոյ ամենեւեմն»: (Սաղմոս 2Ը:6)

«Ես ըսի. «Դուք աստուածներ եք. Դուք բոլորդ Ամենաբարձրին որդիներն եք»»: (Սաղմոս 2Ը:6)

«Նոյն ինչն Լոգին վկայէ Լոգոսս մերոսմ,
Եղէ եմէ որդիդ. ապա եւ ժառանգդ. ժառանգդ
Լսարոսայ՝ եւ ժառանգակիցդ Քրիստոսի»:

(Հոգևմայեցիս Ը:16-17)

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին
հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. եւ եթէ
զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ
ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

Մեր երկնաւոր Հայրը ապահոված է մեր աշխարհի
վրայ մարմնացումը: Ըստ Պօղոսին Հռովմայեցիներ-
րուն գրած նամակին պարունակութեան, բոլորս ալ
Քրիստոսի ժառանգակիցներ ենք: Բայց պէտք է մոռ-
նալ թէ ժառանգակից ըլլալը բաւարար չէ, այլ պէտք է
նաեւ ժառանգին արժանի ըլլանք: Այս վերջինը կարելի
կ'ըլլայ երբ մենք Հայր Աստուծոյ ընտրեալները
կ'ըլլանք: Աս ալ մեզմէ եւ մեր կենցաղէն կախեալ է:

Այս համարին վերջին մասը հետաքրքրական է եւ
կը փաստէ Քրիստոսի ներկայութիւնը ամէն անհատին
մէջ: Այդ ճշմարտութեան «նշան»-ը «ան թէ՛ շարժում է
թէ ալ Հանգիստ»: Այս խօսքով Յիսուս Քրիստոս կը
յայտնէ, թէ մարդուն մէջ կեանքի գոյութիւնը անոր
մէջ Աստուծոյ գոյութեան փաստը՝ «նշան»-ն է: Կեանքը
առանց արտաքին զօրութեան շարժելու կարողութիւնն
է: Հետեւեալը «շարժում է»-ով ակնարկութիւնը
կեանքին համար է: Միթէ Քրիստոս նաեւ չէ՞ ըսած.

«Ես եմ ճանապարհն՝ եւ ճշմարտութիւնն եւ
կեանքն»: (Յովհաննոս ԺԴ:6)

«Ես եմ ճամբան, ճշմարտութիւնն ու կեանքը»:



ՀԱՄԱՐ 51

Աշակերտները Իրեն Հարցուցին. «Ո՞ր օրը ննջեցեալները պիտի արթնան: Եւ ո՞ր օրը նոր աշխարհ պիտի ըլլայ»: Ան ըսաւ անոնց. «Այն ինչ, որ կը սպասէք, արդէն եկած է եւ դուք զայն չէք գիտեր՝ ճանչնար»:

Այս համարը կարելի է երկու տարբեր մակարդակներու վրայ մեկնաբանել:

Նախ, այս համարին մէջ Յիսուսի ըսածը շատ հետաքրքրական է եւ կը հակասէ ընդհանուրին հաւատացած աշխարհի վերջաւորութեան մարմիններու յարութեան, ինչ որ սխալ հասկացողութեան արդիւնքն է: Նախ ննջեցեալները Փիզիքապէս մեռնողները չեն: Որովհետեւ մարդուն հոգին անմահ է: Մենք զանոնք ննջեցեալ կը կոչենք, այսինքն քնացող: Վերեւ աշակերտներուն ըսած ննջեցեալները հոգեկան քունի մէջ եղողներուն համար է: Միայն մարդուն հոգեկան արթնութեամբ կարելի է դրախտը աշխարհի վրայ վերակազմել: Ահա՛, աս է «նոր աշխարհ պիտի ըլլայ»-ին իմաստը: Յիսուսի պատասխանը ցոյց կու տայ, թէ դրախտը արդէն հոս է, բայց մարդ իր խաւարամտութեամբ զայն կարող չէ տեսնել, հետեւաբար հոն ապրիլ: Այն ինչ որ մարդ արարած կը սպասէ որպէս յաւիտեանական կեանք, արդէն իր ափին մէջն է, բայց դժբախտաբար ինք իր խաւարամտութեամբ այդ իրողութենէն անտեղեակ է: Մարդուն ներկայ կեանքը երազ մըն է, հետեւաբար իր էութիւնը՝ երազը երազողը, պէտք է ննջեցեալ ըլլայ, այսինքն քնացող, ապա թէ ոչ երազը գոյութիւն չէր ունենար: Երբ գիշերը կը քնանանք մեր գիտակցութեան մակարդակն ալ կը նուազի: Մարդուն խաւարամտութիւնն ալ ցած գիտակցութեան մակարդակի հետեւանքն է:

Եթէ կ'ուզենք ձգձարտութիւնը տեսնել պարտ ենք

մեր ճշմարիտ էութիւնը իր երազէն արթնցնել եւ մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնել: Երբ մարդ արարած իր հոգեկան քունէն արթնայ այն ատեն «նոր աշխարհ»-ն ալ պիտի տեսնէ:

Այս համարին մէջ գրուած բառերուն եթէ փոխաբերական իմաստները նկատողութեան առնենք, կրնանք համարին բոլորովին տարբեր մեկնաբանութիւն մը տալ:

Նախ նկատողութեան առնենք առաջին նախադասութիւնը. «Ո՛ր օրը ննջեցեալները պիտի արթնան»-ը: Անտարակոյս ննջեցեալները անոնք են, որոնք Ս. Գիրքին մէջ գրուածները չեն հասկցած, կամ աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, հոն թագնուած ճշմարտութիւնները չեն տեսած եւ սխալ հասկացողութեան մը հասած են: Աս կը համապատասխանէ անոնց ճշմարտութեան նկատմամբ ննջելուն: Այս ննջելը կը համապատասխանէ ցած գիտակցութեան մակարդակի: Հետեւաբար հարցումին բուն իմաստը կ'ըլլայ, ե՞րբ մարդոց բարձր գիտակցութիւն կերտելու գիտութիւնը պիտի տրուի:

Երկրորդ նախադասութեան՝ «Եւ ո՛ր օրը նոր աշխարհ պիտի ըլլայ»-ին իմաստն ալ այն է, թէ երբ մարդ արարած այդ թագուն գիտութիւնը, կամ ճիշդ հասկացողութիւնը պիտի ունենայ եւ անոր շնորհիւ ալ բարձր գիտակցութիւն պիտի կերտէ: Այդ բարձր գիտակցութեան շնորհիւ ալ մարդ պիտի կարողանայ ստեղծագործութեան մէջ ճշմարտութիւնը՝ միականութիւնը տեսնել:

Յաջորդ նախադասութիւնը բացայայտ կ'ընէ, թէ այդ գիտութիւնը արդէն տրուած է, բայց մարդիկ զայն չեն «տեսներ»՝ հասկնար: Հետեւաբար Յիսուս կ'ըսէ. «Այն ինչ, որ կը սպասէք, արդէն եկած է եւ դուք զայն չէք գիտեր՝ ճանչնար», այսինքն, այն գիտութիւնը որ կը փնտռէք արդէն ձեզի տրուած է:

ՀԱՄԱՐ 52

Աշակերտները Իրեն Հարցուցին. «Իսրայելի մեջ քսանչորս մարգարէներ բոլորն ալ Քու մասիդ խօսեցան»: Ան ըսաւ անոնց. «Դուք կ'անտեսէք Ան որ ձեր առջեւն է եւ ողջ, որ խօսեցաւ մեռեալներու մասին»:

Այս համարն ալ նախորդին նման կարելի է երկու տարբեր մակարդակներու վրայ մեկնաբանել:

Նախ, աշակերտներուն ակնարկութիւնը Հին Կտակարանի մարգարէներուն գուշակած մեսիայի գալուստին համար է: Իսկ Յիսուսի պատասխանը շատ յատկանշական է: Աշակերտները որպէս մարգարէներուն ըսած մեսիան՝ Յիսուսը կը պաշտէին: Անոնք Յիսուսը կը պաշտէին, սակայն Անոր սորվեցուցածները կ'անտեսէին: Ահա՛, աս է «Դուք կ'անտեսէք Ան որ ձեր առջեւն է եւ ողջ»-ին իմաստը: Յիսուս քարոզեց բոլոր անոնց, որոնք հոգեպէս «մեռեալներ» էին եւ կը կարօտէին Քրիստոսի կողմէ յարուցման: Յիսուսի այս խօսքը կը համապատասխանէ կանոնական Աւետարանին մէջ գրուած Իր ուրիշ մէկ խօսքին:

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր,

մոցէ յարձայո-լի-ն երկնից, ալ որ աս-նէ

պէամա Ըօր իմոյ որ յերկնսն է»: (Մատթէոս Է:21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը»:

Անտարակոյս պէտք է Յիսուս Քրիստոս պաշտենք, բայց բուն պաշտելը իր սորվեցուցածները մեր կեանքի ընթացքին կատարելն է, ինչպէս նաեւ Քրիստոս մեր մէջ յայտնաբերելը: Ապա թէ ոչ մեր պաշտամունքն ալ կ'ըլլայ միայն Յիսուսի ըսած «Տէ՛ր, Տէ՛ր»-ին պէս գինք երեւութապէս պաշտել քան, թէ սորվեցուցածները

կիրարկել: Այս պատճառով ալ չենք կրնար մտնել երկինքի թագաւորութիւնը:

Այս համարն ալ կարելի է անոր փոխաբերական իմաստով հասկնալ եւ մեկնաբանել: Քսանչորս մարգարէները կը ներկայացնեն Ս. Գիրքին Աստուծոյ՝ Քրիստոսի նկատմամբ բոլոր սորվեցուցածները: Ահա՛, աս է իմաստը «Իսրայէլի մէջ քսանչորս մարգարէներ բոլորն ալ Քու մասիդ խօսեցան»-ին: Յիսուսին պատասխանը հետեւեալն է. «Դուք կ'անտեսէք Ան որ ձեր առջեւն է եւ ողջ»: Յիսուս՝ մարդն ալ անոնց սորվեցուց Քրիստոսի մասին: Յիսուս անոնց հետ էր, սակայն անոնք կը հետեւէին Հրեաներուն կրօնական օրէնքներուն եւ կը դործէին ըստ իրենց սխալ հասկացողութեան: Կ'անտեսէին Յիսուսի սորվեցուցած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք իրենց հաւատացածներուն չէին համապատասխաներ: «Որ խօսեցաւ մեռեալներու մասին»-ին իմաստն ալ այն է, որ Յիսուս խօսեցաւ անոնց, որոնք իրենց սխալ հասկացողութեան հետեւանք հոգեպէս «մեռեալ» էին եւ անոնց սորվեցուց շտկելու համար այդ բոլոր սխալ հասկացողութիւնները:



ԽՈՐՀՈՐԴԻ ԸՐԴԱՐՈՅ ԻՐԱՒՈՒՄԸ:
ԱՌԱՋԱՆՈՐԴԵ ԵՆ ԱՄՊԱՐԻՇՏԵ ԱՆԱԳՈՒԹԵԱՆՅ:

(Առակք Սողոմոնի ԺԲ:5)

ՀԱՄԱՐ 53

Աշակերտները իրեն հարցուցին. «Թլփատութիւնը օգտակար է՞ թէ ոչ»: Ան ըսաւ անոնց. «Եթէ օգտակար ըլլար, Հայրը զիրենք իրենց մօրմէն թլփատուած կը ծնանէր: Բայց ճշմարիտ թլփատութիւնը հոգեկանն է, որ ամբողջովին օգտակար է»:

Թլփատութեան գաղափարը Աստուծոյ կողմէ նախ Աբրահամին տրուած էր: Ֆիզիքական թլփատութիւնը Մովսէսի օրով ալ կրօնական օրէնքներուն մաս կազմեց:

Անտարակոյս Մովսէսի ժամանակ երբ Հրեաները անապատին մէջ քառասուն տարի կը թափառէին, թլփատութիւնը առողջապահական տեսանկիւնէ շատ կարեւոր էր: Աւագի հատիկներ մորթին տակ մտնելով վէրքի պատճառ կ'ըլլային: Մովսէս թլփատութեան օրէնքը կրօնքին մէջ դրաւ, որպէսզի ստիպողական ըլլայ: Յիսուսի ժամանակ երբ ժողովուրդը մեծամասնութեամբ քաղաքներու մէջ կ'ապրէր, այլեւս Ֆիզիքական թլփատութիւնը աւելորդ արարք մըն էր: Յիսուսի տուած պատասխանը. «Եթէ օգտակար ըլլար, Հայրը զիրենք իրենց մօրմէն թլփատուած կը ծնանէր»-ը կը հաստատէ այլեւս Ֆիզիքական թլփատութեան աւելորդ ըլլալու տեսակէտը:

Ուրեմն ի՞նչ էր Աստուծոյ Աբրահամին ըսած թլփատութիւնը: Յիսուս զայն պատշաճ կերպով կը բացատրէ: Յիսուսի վերջին նախադասութիւնը յատկանշական է: «Հոգեկան թլփատութիւնը» կարեւորն է: Մարդուն անպէտ խորհուրդները իր միտքը զբաղ կը պահեն, որով կը կարօտին թլփատութեան: Ահա՛, աս է «Հոգեկան թլփատութիւնը»: Աս ալ կը համապատասխանէ Յիսուսի լերան քարոզին մէջ ըսածին.

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ էն սրբի-ի, քի նոյնս
չԼսարո-աթդ Կեսցեն»: (Մարթէոսի Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք
պիտի տեսնեն Աստուած»:

Երբ մարդիկ կը կարողանան իրենց խորհուրդները եւ
զգացումները կասեցնել՝ թլփատել, կը կարողանան
նաեւ «սուրբ սիրտ» կերտել եւ Աստուած տեսնել՝ իրենց
մէջ Քրիստոսի յայտնութեան փորձառութիւնը ունե-
նալ: Ս. Գիրքին մէջ «սիրտ»-ը յաճախ փոխաբերաբար
օգտագործուած է ներկայացնելու համար միտքը: Եբ-
րայերէնի մէջ «միտք» բառը գոյութիւն չունի եւ
«սիրտ» բառը երկու իմաստով գործածուած է, թէ՛
«սիրտ» թէ՛ ալ «միտք», հետեւաբար թարգմանութիւն-
ներուն մէջ Եբրայերէն «միտք» իմաստը բառացիօրէն
թարգմանուած է իբրեւ «սիրտ»:

ՀԱՄԱՐ 54

Յիսուս ըսաւ. «Երանի՛ (Հոգւով) աղքատներուն,
վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:

Յիսուսի այս խօսքը «Լեւան Քարոզէն» առնուած
է: Այս համարին մեկնաբանութիւնը կարելի է գտնել
հրատարակած այս գիրքերու հատոր Գ.-ին մէջ եւ հոս
յաւելեալ մեկնաբանութիւն պիտի չտրուի: Տես Հատոր
Գ «Լեւան Քարոզը եւ Ճշմարիտ Երանութիւնը»
խորագրեալ գրութիւնը էջեր 44-46: Տես նաեւ «Լոյս Ի
Լուսոյ (Ա)» Գլուխ Զ. երկրորդ մաս «Լեւան Քարոզը
-Երանինները» խորագրեալ գրութիւնը էջ 131:



ՀԱՄԱՐ 55

Յիսուս ըսաւ. «Ա՛ն, որ չատէ իր Հայրն ու մայրը,
եղբայրներն ու քոյրերը ու չի կրեր իր խաչը
ինծի պէս, չի կրնար ինծի արժանի ըլլալ:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայաց-
ւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Անոնց
բառացի իմաստներուն մեկնաբանութեան համար տես
հրատարակած այս գիրքերու Հատոր Գ էջ 180: Ինչպէս
նաեւ Հատոր Գ «Խաղաղութիւն թէ՞ Սուր ու Բաժանում
եւ Աշակերտ Ըլլալու Գինը» խորագրեալ գրութիւնը
էջեր 227-233 եւ դարձեալ «Փրկութեան Միջոցը»
խորագրեալ գրութիւնը էջեր 157-162:

Յիսուսի վերեւի խօսքերը կարելի է ամբողջովին
վերացական կամ փոխաբերական իմաստով ալ առնել:
Անտարակոյս մարդ պէտք չէ իր հարազատները ատէ:
Հետեւաբար երբ նման արտայայտութիւններու կը
հանդպինք, պէտք է խորհինք, թէ ասոնք պէտք չէ
բառացիօրէն նկատողութեան առնուին: Այս հասկացո-
ղութեամբ նկատողութեան առնենք առաջին նախադա-
սութիւնը: «Ա՛ն, որ չատէ իր Հայրն ու մայրը»: Մարդուն
հոգեկան ծնունդին պատճառը, անոր կրօնքին իրեն
սորվեցուցածներուն իր հասկացողութեան արդիւնքն
է: Հետեւաբար այդ հասկացողութիւնը, որ անհատին
հոգեկան կեանքին ծնունդ կու տայ, կը ներկայացնէ
անոր «Հայրն ու մայրը»: Կան զանազան տարբեր
հասկացողութիւններ որոնք ծագում առած են նոյն
ակէն եւ անոնք պատճառ եղած են զանազան յարան-
ւանութիւններու գոյութեան: Այդ զանազան հասկացո-
ղութիւններն ալ «ծնած» են նոյն ակէն՝ «հօրմէն ու
մօրմէն»: Անոնք կը ներկայացնեն «եղբայրներն ու
քոյրերը»: Յիսուսի պատգամը այն է, թէ այդ բոլոր
հասկացողութիւնները մէկդի ձգենք եւ անտեսենք եւ
ահա՛, աս է իմաստը «ատել»-ուն: Անձը, ոչ թէ ասդիին

Եւ անդիին ըսածները ընդունելով հասկացողութեան մը յանգի, այլ ան իր անձնական ջանքերով եւ անոնց տուած փորձառութեամբ ճշմարիտ հասկացողութեան յանգի: Ահա՛, աս է իմաստը «չի կրեր իր խաչը ինծի պէս»-ին: Միթէ Յիսուս իր խաչը կրելով եւ իր «Ես»-ը խաչին վրայ մեռցնելով չարժանացա՞ւ յարութեան: Մենք ալ պարտ ենք մեր «Ես»-ը խաչը հանել եւ մեռցնել, ապա թէ ոչ Արժանի չենք ըլլար Քրիստոսի յայտնութեան մեր մէջ:



ՃԱՆԱՊԱՐՀՔ ԱՆԱՏԱԾ՝
ՈՒՂԻՂ ԹՈՒՒՆ ԱՊԱԶԻ ԱՌՅԱ:
ՈՒՆԱՂԻՐ ԼԻՆԻ ԽՐԱՏՈՒ ԻՄԱՏՈՒՄԱ:
ԻԱԿ ԱՆՄԻՏԱ ԱՊ ՕՐԻՆ յԱՅՏԷ
ՉԲԱՐԿՈՒԹԻՒՄ ԻՐ:
ԹԱՔՈՒՅԱՆԷ ՉԱՆԱՐԳԱՆԱ ԻՐ
ԱՅՐ ԽՈՐԱԳԷՏ:

(Առակք Սողոմոնի ԺԲ:15-16)

ՀԱՄԱՐ 56

Յիսուս ըսաւ. «Ա՛ն, որ աշխարհը ճանչցած է, դիակ մը գտած է եւ ան որ դիակ մը գտած է աշխարհը անոր արժանի չէ»:

Ինչպէս Յիսուս Քրիստոսի բոլոր խօսքերը հետաքրքրական են եւ բացառիկ դասեր կու տան, այս համարն ալ նմանապէս մարդուն կը սորվեցնէ իր ուշադրութեան ուղղութիւնը: Նախ նկատողութեան առնենք Յիսուսի առաջին նախադասութիւնը. «Ա՛ն, որ աշխարհը ճանչցած է, դիակ մը գտած է»: Ի՞նչ է իմաստը «աշխարհը ճանչնալուն»: Երբ մարդուն միտքը եւ գիտակցութիւնը զբաղ են արտաքին աշխարհի «շլացուցիչ» զանազանութեամբ, մարդ աշխարհը գտած եւ ճանչցած կ'ըլլայ: Բայց մարդ շատ լաւ գիտէ, թէ աշխարհի մէջ ոչինչ յաւիտեան կը գոյատեւէ եւ ուշ ու կանուխ անհետացման՝ մահուան ենթակայ է: Միթէ մեռածը «դիակ» մը չէ՞: Հետեւաբար մարդն ալ իր գտած եւ ճանչցած աշխարհով «դիակ մը գտած» կ'ըլլայ: Զանազանութիւնը չէ աշխարհի կեանքը, այլ ան միայն կեանքին յառաջ բերած երազ՝ պատրանքն է: Հետեւաբար աշխարհի ճշմարտութիւնը զանազանութիւնը չէ այլ այդ զանազանութիւնը երազողն է: Ընդհանուր ստեղծագործութիւնը Հայր Աստուծոյ երազն է եւ այդ ստեղծագործութեան մէջ ի բոլոր զանազանութիւնները Իր Որդւոյն՝ Քրիստոսի զանազան արտայայտութիւններն են: Հետեւաբար ճշմարիտ «աշխարհ»ը Քրիստոսն է: Այս հիման վրայ Յիսուսի երկրորդ նախադասութիւնը «ան որ դիակ մը գտած է աշխարհը անոր արժանի չէ» մեծ հասկացողութիւն մը կու տայ: Այս անգամ «աշխարհ»-ը կը ներկայացնէ աշխարհի ճշմարտութիւնը՝ Քրիստոս: Ուրեմն երբ անհատը կապուած է զանազանութեան, ան արժանի չէ Քրիստոս գտնելու, կամ աւելի յարմար կ'ըլլայ երբ ըսուի արժանի չէ յաւիտեանական կեանքի:

ՀԱՄԱՐ 57

Յիսուս ըսաւ. «Երկնային Հօր Թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ լաւ սերմ ցանեց: Բայց, գիշերը իր թշնամին եկաւ, որոմ ցանեց լաւ սերմին մէջ: Մարդը չարտօնեց որ որոմը քաղէն ու ըսաւ. «Չըլլայ որ երբ որոմը քաղէք՝ ցորենն ալ չփրցնէք անոր հետ: Հունձքի ատենը, որոմը պիտի յայտնուի, այն ատեն պիտի քաղուի եւ այրուի»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայացւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Տես Հատոր Բ «Յիսուսի Առակները - Հոգին Աստուած» Գլուխ Գ.-ին մէջ «Որոմին Առակը» խորագրեալ առակին մեկնաբանութիւնը էջեր 103-109: Ինչպէս Հատոր Բ. ի մէջ պիտի տեսնէք թէ՛ ցորենը եւ թէ՛ որոմը օգտագործուած են իրենց փոխաբերական իմաստներով: Արդեօք կարելի է⁶, որ անոնք ունենան նաեւ նման բայց տարբեր փոխաբերական իմաստ մը եւս: Կարելի է ենթադրել, թէ ցորենը կը ներկայացնէ Յիսուսի սորվեցուցած ճշմարտութիւնները: Անտարակոյս, նախ Յիսուսի սորվեցուցածները մեզի տրուեցան, հետեւաբար «ցորեն»-ը աւելի առաջ Յիսուսի կողմէ ցանուեցաւ: Որոմը մեզի տրուած եւ խեղաթիւրուած քարոզչութիւններն են որ աւելի վերջ մարդոց կողմէ «ցանուեցան»: Աստուած կ'արտօնէ որ այդ սխալ քարոզչութիւններու հետեւանք յառաջ եկած յարանուանութիւնները եւ աղանդները ճշմարտութեան հետ գոյատեւեն մինչեւ հունձքի ատեն: Հունձքը մարդուն մահուան օրն է եւ ան, որ ճշմարտութիւնը չէ հասկցած եւ այդ ուղղութեամբ անձնական ջանքով «պտղաբեր» չէ եղած՝ Քրիստոս իր մէջ չէ յաջողած յայտնաբերել, պիտի «այրուի»՝ անհատականութիւնը պիտի մեռնի, պիտի անհետանայ:

ՀԱՄԱՐ 58

Յիսուս ըսաւ. «Երանի՛ այն մարդուն, որ կը տառապի, ան կեանքը գտած է»:

Ինչպէ՞ս կ'ըլլայ որ տառապանքը երանելի ըլլայ: Ընդհանուր առմամբ ամէն անձ կը ջանայ տառապանքէ խոյս տալ: Միթէ Յիսուս ալ խաչին վրայ չչարչարողեցա՞ւ՝ չտառապեցա՞ւ: Միթէ Յիսուս երանելի չէ՞ր: Ան արժանացաւ յարութեան:

Նախ ուսումնասիրենք, թէ ի՞նչ է տառապանքը: Տառապանքը զանազան երեւոյթներ ունի: Անոնք են. հիւանդութիւն, յուսախաբութիւն, տխրութիւն, անձկութիւն, անհանգստութիւն, տագնապ, յուսահատութիւն, մտային խանգարում, վիշտ, ողբ, ցաւ, վախ...: Անտարակոյս, ամէն անձ իր կեանքի ընթացքին այս տառապանքներէն գոնէ մի քանիին փորձառութիւնը կ'ունենայ: Նոյնիսկ եթէ գտնուին մի քանի հոգիներ, որոնք կարողանան այս տառապանքներուն մեծամասնութենէն խոյս տալ, ամէն աշխարհ եկող մարդ միշտ ենթակայ պիտի ըլլայ յաջորդ երեք տառապանքներուն. հիւանդութիւն, ծերութիւն եւ մահ:

Մարդ արարած կարելիութիւնը ունի նման փորձառութիւններէ հսկայական դասեր սորվիլ: Փոխանակ տառապանքէ բախուստ տալու, եթէ խորաքննութեամբ ուսումնասիրէ տառապանքին պատճառը եւ իր վրայ ունեցած ազդեցութիւնը, անհատը կը կարողանայ ներատեսութեամբ (insight) ոչ միայն իմացական այլ նաեւ փորձառականօրէն հասկնալ կեանքի նկատմամբ, որոշ ճշմարտութիւններ: Ընդհանուր առմամբ հիմնական ճշմարտութիւնները երեք հատ են:

ա- Մարդկային կեանքը վաղանցիկ՝ անցողակի է:

բ- Մարդկային կեանքը անիրական՝ պատրանքային է:

գ- Մարդկային կեանքը տառապանք է:

Երբ անհատը չ'ընդունիր իր տառապանքը եւ իր

բոլոր ուժը կը վատնէ անկէ խոյս տալու, շարունակական տառապանքներ ուշ կամ կանուխ զիրար կը յաջորդեն: Բայց եթէ անձը կարողանայ այդ ուժերը օգտագործել խորաքննութեամբ եւ ներատեսութեամբ մարդկային կեանքի ճշմարտութիւնները հասկնալ, ան կ'ըլլայ երանելի: Ինչո՞ւ ան կը նկատուի երանելի: Որովհետեւ այն անձը որ կը գտնէ որեւէ ճշմարտութիւն, կը փոխուի նաեւ անհատին հայեացքը, խորելակերպը, զգացումները, խօսք ու արարքները:

ա- Եթէ մարդ արարած իսկապէս հասկնայ եւ իւրացնէ մարդկային կեանքի վաղանցիկ՝ անցողակի եւ ժամանակաւոր ըլլալը, արդեօք ան կը վատնէ իր ժամանակը անպէտ հետապնդումներով, քան թէ ջանք ընէ գտնել յաւիտենականութեան գաղտնիքը եւ անոր արժանանալու միջոցները:

բ- Եթէ մարդ արարած իսկապէս հասկնայ եւ իւրացնէ աշխարհի կեանքին անիրական՝ պատրանքային ըլլալը, արդեօք իր կեանքը կը վատնէ պատրանքային ինչքեր հաւաքելով, քան թէ ջանք ընէ գտնել ճշմարտութիւնը եւ Ասոր հասնելու միջոցները:

գ- Եթէ մարդ արարած իսկապէս հասկնայ տառապանքին իրեն շնորհած այդ հասկացողութեան հասնելու առիթը, արդեօք ան ջանք կ'ընէ՞ անկէ խոյս տալու, թէ ոչ զայն կ'օգտագործէ ինքզինք բարելաւելու եւ արժանանալու յաւիտենական կեանքին՝ ճշմարտութեան մէջ լուծուելով մաս եւ բաժին ըլլալու միականութեան:

Ուրեմն եթէ նման հայեացքով ջանանք հասկնալ այս համարին մէջի Յիսուսի ըսածը, պիտի տեսնենք թէ Յիսուս մեզի այդ պարզ բայց վիճելի նախադասութեամբ հսկայական ճշմարտութիւն մը կը սորվեցնէ: Հետեւաբար գիտակցութեան մակարդակի բարձրացման համար տառապանքը կը թուի անհրաժեշտ

ըլլալ: Իսկ բոլոր անոնք, որոնք կը յաջողին արժանանալ բարձր գիտակցութեան երանելի են:

Տառապանքին պատճառը, Յիսուսի սորվեցուցածներուն սխալ հասկացողութեան հետեւանքն է: Տառապանքը ազդարարութիւն մ'ը՝ զարթոնքի միջոց մըն է որպէսզի ձգտինք Յիսուսի սորվեցուցածները ճիշտ հասկնանք եւ զանոնք մեր կեանքին մէջ կիրարկենք:



Սրբոց ուրիշ՝ իսորէ շիմաստութիւն,
եւ բերան անհրաժեշտ՝ Տեղեկանայ ջարեւած:

Յնմենայն ժամանակս աջ ջարեւած՝

սղանքն ջարեւած,

իսկ բարիքն՝ Հանդարտեն յնմենայն ժամ:

Լաւ է փոքր բաժին երպիւրի Տեառն,
բաւ շահնձս մեծամեծս աներպիւրդութեամբ:

Լաւ է Կոջոմբ բանջարեղէն՝

սիրով եւ շնորհի.

բաւ շոխարակ՝ ի մարդ թշնամութեամբ:

(Առակք Սողոմոնի ԺԵ:14-17)

ՀԱՄԱՐ 59Ա

Յիսուս ըսաւ. «Մինչ այդ որ կ'ապրիս կեդրոնացիր Անոր վրայ, որ կեանք է, որպէսզի չմեռնիս եւ Ձինք փնտռես եւ անկարող ըլլաս Ձայն տեսնել»:

Այս համարով Յիսուս Համար 56-ի մէջ ըսածը եւ սորվեցուցածը տարբեր բառերով անգամ մը եւս կը կրկնէ: Ուրեմն, այնքան ատեն որ մարդ կեանք ունի՝ կ'ապրի, պարտ է իր միտքը եւ յայտնաբերած գիտակցութիւնը կեդրոնացնէ «Անոր վրայ, որ կեանք է»: Ան որ կեանք է Քրիստոսն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը»: Իսկ եթէ մարդուն միտքը ու գիտակցութիւնը չէ կեդրոնացած Քրիստոսի վրայ ինք անկարող պիտի ըլլայ Քրիստոս «տեսնել»: Իսկ եթէ անձը չկարողանայ Քրիստոս տեսնել, Ձայն կը փնտռէ ամենուրեք, անգիտակից թէ Ան իր ներսիդին է: Միանգամայն, այն անձը որ իր անձնական փորձառութեամբ Քրիստոս չի գտներ եւ չի տեսներ, օր մը ինք ալ կը մեռնի կ'անհետանայ:

ՀԱՄԱՐ 59Բ

Սամարացի մը տեսան, որ գառնուկ մը կը կրէր ու Հրէաստան կ'երթար: Ան Իր աշակերտներուն ըսաւ. «Գառնուկը ինչո՞ւ կը կրէ»: Իրեն ըսին. «Որպէսզի մեռցնէ եւ ուտէ»: Ան ըսաւ անոնց. «Մինչայդ որ ողջ է պիտի չուտէ, բայց երբ զայն մեռցնէ, դիակի մը պիտի վերածուի»: Անոնք ըսին. «Ապա թէ ոչ պիտի չկարենայ այդ ընել»: Ան ըսաւ անոնց. «Դուք ալ, ձեր ներսիդին խաղաղութեան տեղ մը գտէք, որպէսզի դուք ալ դիակ մը չըլլաք ու ձեզ ալ ուտեն»:

Յիսուսի այս խօսքերուն բառացի իմաստը կը թուի նախորդին (Համար 59ա) շարունակութիւնը ըլլալ եւ նոյն իմաստասիրութիւնը կը սորվեցնէ: Այս անգամ

Յիսուս ոչխարը կը գործածէ իբրեւ օրինակ: Ոչխարը պիտի մեռցուի, դիակ պիտի ըլլայ եւ ուտուի, այսինքն անհետանայ: Նոյնը պիտի ըլլայ մարդուն եւս, եթէ ան իր ներսիդին խաղաղութեան վայր մը չգտնէ: Մարդը ինքն ալ ոչխարին պէս պիտի մեռնի, դիակ մը պիտի ըլլայ եւ ոչինչութիւնը զայն կուլ պիտի տայ եւ անհատն ալ պիտի անհետանայ: Իսկ ո՞ր կամ ի՞նչ է այն ներքին վայրը, որ անոր խաղաղութիւն պիտի տայ որպէսզի անհատն ալ դիակ մը չըլլայ, այսինքն չմեռնի: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ինծի եկէք, Ես ձեզի խաղաղութիւն պիտի տամ, ոչ ինչպէս աշխարհը կու տայ»: Ուրեմն այդ ներքին խաղաղութեան ակը Քրիստոս ինքն է: Հետեւաբար Յիսուսին ըսածը անհատին համար ներքին Քրիստոսը գտնելն է, որպէսզի յաւիտենական կեանք ունենայ եւ մահ «չհամտեսէ»:

Բայց Յիսուս ինչո՞ւ համար «Սամարացի» մը կը զատէ դաս մը տալու համար: Նոյն դասը կարելի էր տալ պարզապէս «մարդ մը» ըսելով: Հետեւաբար պէտք է հետեւեցնենք, թէ այս համարը ունի փոխաբերական իմաստ մը եւս: Նախ նկատողութեան առնենք «Սամարացի»-ն: Սամարացիները օտար ազգ մըն էին, որ կերպով մը Հրեաներուն մովսիսական կրօնքը ընդունեցին, բայց միանգամայն, իրենց նախքին կրօնքն ալ անոր հետ խառնեցին ու զայն խեղաթիւրեցին: Ուրեմն Սամարացին որ ոչխարը կը կրէ, կը ներկայացնէ այն անձը որ Յիսուսի սորվեցուցածները կ'ընդունի, այսինքն ինքզինք քրիստոնեայ կը համարէ: Ոչխարը կը ներկայացնէ քրիստոնէութիւնը: Միթէ Յիսուս Քրիստոսի համար չէ ըսուած «Գառն Աստուծոյ»: Երբ Յիսուս կ'ըսէ. «Որպէսզի մեռնէ եւ ուտէ», ակնարկութիւն մը կ'ընէ իր սորվեցուցածներուն մէջի ճշմարտութիւններուն խեղաթիւրման: Ահա՛, աս է իմաստը «մեռցնէ»-ին: Յիսուսի խօսքերուն «հոգին»՝ հիմնական զաղափարը

մեռցնելն է: Իսկ ուտելն ալ այդ խեղաթիւրուած քարոզչութիւնը՝ կրօնքը ընդունիլ եւ իւրացնելն է: Պէտք է հասկնանք թէ Սամարացին կը ներկայացնէ համայն մարդկութիւնը եւ ոչ միայն այն օրուայ Սամարացի ազգը: «Մինչայդ որ ողջ է պիտի չուտէ»-ին իմաստը այն է, թէ ան Յիսուսի բուն սորվեցուցածները նշուած «ողջ է»-ով, պիտի չընդունի: «Բայց երբ զայն մեռցնէ, դիակի մը պիտի վերածուի»-ին իմաստը այն է, թէ երբ ան Յիսուսի սորվեցուցածները խեղաթիւրէ, այդ քարոզչութիւնը իր մէջ ճշմարտութիւն՝ կեանք պիտի չունենայ եւ «դիակի մը պիտի վերածուի»: Աշակերտներուն յաջորդ խօսքը ցոյց կու տայ համայն մարդկութեան ներկայ վիճակը՝ նկատմամբ իր հոգեկան կեանքին: Մարդ, տակաւին իր հասած մակարդակով կարող չէ ընդունիլ Յիսուսի բուն սորվեցուցածները, որովհետեւ ան տակաւին ինքզինք չէ կարողացած ձերբազատել իր «Ես»-էն եւ աշխարհէն: Աշակերտները կ'ըսեն. «Ապա թէ ոչ պիտի չկարենայ այդ ընել», այսինքն ոչխարը ուտել: Այսօր մարդ միայն «ոչխար»-ը՝ Յիսուսի սորվեցուցածները, «մեռցնելով»՝ խեղաթիւրելով զայն իբրեւ կրօնք կ'ընդունի: Յիսուսի պատգամը իր աշակերտներուն հետեւեալն է. «Դուք ալ, ձեր ներսիդին խաղաղութեան տեղ մը գտէք, որպէսզի դուք ալ դիակ մը չըլլաք ու ձեզ ալ ուտեն»: Ներքին խաղաղութեան տեղը Քրիստոսի ներկայութիւնն է՝ անհատին ներսիդին: Յիսուս կը յանձնարարէ Քրիստոս յայտնաբերել մեր մէջ, որպէսզի մենք ալ չմոռնանք ճշմարտութիւնը: Եթէ հաւատանք խեղաթիւրուած հասկացողութեան այն ատեն մեր հաւատացածն ալ «դիակ» մը կ'ըլլայ, այսինքն առանց «կեանքի», անպէտ հաւատալիքներու հաւաքածոյ կրօնք մը:



ՀԱՄԱՐ 60Ա

**Յիսուս ըսաւ. «Երկու Հոգի անկողինի մը վրայ
պիտի Հանգչին, մին պիտի մեռնի ու միւսը
ապրի»:**

Ըստ որոշ հասկացողութեան մը այս համարը
կարելի է անոր բառացի իմաստովը մեկնաբանել: Այդ
հիման վրայ Յիսուս կ'ուզէ ըսել, թէ մարդոց մէկ մասը
պիտի փրկուին եւ մէկ մասն ալ մահուան պիտի
դատապարտուին: Բայց աւելի պատշաճ կ'ըլլայ անոր
վերացական իմաստը հասկնալ եւ ըստ այնմ մեկնաբա-
նել: «Անկողին»-ը կը ներկայացնէ մարդուն մարմինը:
«Երկու Հոգի»-ն, որ «անկողինին վրայ պիտի Հանգչին» կը
ներկայացնեն մարդուն Հոգին՝ ներքին Քրիստոսը եւ
մարդուն իր «Ես»-ը: Միթէ գիրքերու մէջ չէ՞՞ գրուած
թէ մարդուն անհատականութիւնը երկու բեւեռներ
ունի: Մին ժխտականն է՝ իր «Ես»-ին կապուած, իսկ
միւսն ալ դրականը՝ ներքին Քրիստոսին կապուած: Երբ
մարմինը մեռնի «Ես»-ն ալ պիտի մեռնի, իսկ մարդուն
Հոգին՝ Քրիստոս որ անմահ է պիտի ապրի: Ահա՛, աս է
իմաստը «մին պիտի մեռնի ու միւսը ապրի»-ին: Յիսուս
լռիմացիկ կամ գաղտնիմաստ կ'ուզէ սորվեցնել, թէ
եթէ անհատը յաւիտենական կեանքի կը ձգտի պարտ է
ընտրել իր անհատականութեան դրական բեւեռը եւ
յարիւր դէպի իր ներքին Քրիստոսին եւ անտեսել
ժխտական բեւեռը՝ իր «Ես»-ը: Միթէ Յիսուս ալ
անապատին մէջ նոյնը չըրա՞ւ: Ան իր «Ես»-ին ըսաւ.
«յետիս գնայ սատանա»: Միայն այդ պարագային՝
«Ես»-ին մահուամբ անհատականութիւնը, որ միայն
Քրիստոսի յարած է, յարութիւն կ'առնէ եւ Քրիստոսի
հետ մէկ կ'ըլլայ՝ կ'ապրի:




ՀԱՄԱՐ 60Բ

Սողովմէ ըսաւ. «Ով մարդ, դուն ո՞վ ես: Որո՞ւն որդին ես: Դուն որ իմ անկողինս բարձրացար ու սեղանէս կերար»: Յիսուս անոր ըսաւ. «Ես եմ ան, որ լիութիւն (ամբողջութիւն, մէկ) է: Ինծի տրուած է այն ինչ որ Հօրս կը պատկանի»: Սողովմէ ըսաւ. «Ես քու աշակերտդ եմ»: Յիսուս անոր ըսաւ. «Հետեւաբար քեզի կ'ըսեմ, երբ լիութիւն (ամբողջութիւն, մէկ) է լոյսով պիտի լեցուի, բայց երբ բաժնուած է խաւարով պիտի լեցուի»:

Ասիկա Զեբեդէոսի որդիներուն մայրը Սողովմէի եւ Քրիստոսի միջեւ խօսակցութիւն մըն է, որ իր մէջ կը պարունակէ վերացական իմաստ մը: Եթէ այս հասկացողութեամբ խօսակցութիւնը վերլուծենք, անկողինը եւ սեղանը կը ներկայացնեն մարդուն մարմինը: Մարդ իր տան մէջ կ'ուտէ եւ կը քնանայ: Միթէ չէ՞ գրուած. «Զեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»: Որով Քրիստոս ալ մարդուն՝ իր տաճարին մէջն է: Սողովմէի հարցումը ամէն մարդու հարցնելիք հարցումն է. «Ով մարդ, դուն ո՞վ ես: Որո՞ւն որդին ես»: Ասիկա մարդուն իր ճշմարիտ էութիւնը փնտռելու, հասկնալու եւ գտնելու ձգտումին առաջին քայլն է: Այս պրպտման պատասխանողը Յիսուսի մէջ լրիւ յայտնուած Քրիստոսն է, որ կ'ըսէ. «Ես եմ ան, որ լիութիւն (ամբողջութիւն, մէկ) է: Ինծի տրուած է այն ինչ որ Հօրս կը պատկանի»: Քրիստոս այս նախադասութիւնով իր Հօր մէկ արտայայտութիւնը ըլլալը կը յայտնէ: Ստեղծագործութեան մէջ, մեր կարծեցեալ զանազանութիւնները, բոլորն ալ միայն Քրիստոսին զանազան արտայայտութիւններն են: Հետեւաբար Քրիստոս լիութիւն՝ ամբողջութիւնն է: Ան միականութիւն է: Երբ Սողովմէ կ'ըսէ. «Ես քու աշակերտդ եմ», ակնարկութիւն

կ'ըլլայ ամէն անհատի իր ներքին Քրիստոսին աշակերտ ըլլալու պարտականութեան: Քրիստոսի աշակերտ ըլլալու համար ալ մարդուն անհատականութիւնը պարտ է յարի իր անհատականութեան դրական բեւեռին եւ ապրի ըստ ներքին Քրիստոսի «կամք»-ին: Ան պարտ է բարձրացնել իր գիտակցութեան մակարդակը, որպէսզի կարենայ տեսնել՝ հասկնալ ճշմարտութիւնը: Ան պարտ է Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիիէն ընթանալ: Քրիստոսի տուած պատասխանը հիանալի է եւ կ'ամփոփէ Յիսուսի բոլոր սորվեցուցածներուն նպատակը: Երբ անհատը Քրիստոսի իսկական աշակերտը կ'ըլլայ, այլեւս կը նմանի Անոր եւ իր երկնային Հօր նման կատարեալ կ'ըլլայ: Երբ անհատը նմանի իր վարդապետին՝ Քրիստոսին, զայն կը յայտնաբերէ իր մէջ: Ինք Քրիստոսի հետ մէկ կ'ըլլայ եւ Անոր մէջ կը լուծուի: Ահա՛, աս է իմաստը «երբ լիովին (ամբողջութիւն, մէկ) է լոյսով պիտի լեցուի»-ին: Եւ այդ Լոյսը Քրիստոսի ներկայութիւնն է անձին մէջ, Քրիստոսի գիտակցութիւնը եւ իմաստութիւնը: Բայց եթէ անհատը միայն աշխարհի զանազանութիւնը կը տեսնէ եւ զայն ճշմարտութիւն կը համարէ, այն ատեն Քրիստոսի հետ մէկ չ'ըլլար: Ահա՛, աս է «բայց երբ բաժնուած է»-ին իմաստը: Ինք ալ «խաւարով պիտի լեցուի»: Խաւարով լեցուելուն իմաստն ալ մարդուն խաւարամտութիւնն է, իմաստութեան պակասը, հասկացողութեան անկարողութիւնը, որոնք բոլորն ալ պատճառ կ'ըլլան տառապանքի եւ ի վերջոյ անհատականութեան մահուան:



ՀԱՄԱՐ 61

Յիսուս ըսաւ. «Ես իմ խորհուրդներս միայն արժանի եղողներուն կը յայտնեմ: Ան որ աջ ձեռքդ կ'ընէ, ձախ ձեռքդ չգիտնայ թէ ան ինչ կ'ընէ»:

Կանոնական Աւետարաններուն մէջ ալ Յիսուս այս նոյն գաղափարները յայտնած է տարբեր բառերով: Օրինակներէն մին է հետեւեալը:

«Հարցանէին զնա աշակերդին՝ թէ զինչ իցէ առան: Եւ նա՝ ասէ. Ձե՛զ գոռեա՛լ է զխորհոռոգս արեւոյթեան Լադոնոյ, բայց այլոցն առանկո՛ւ զի զի գեացեն՝ եւ մե՛կ գեացեն, եւ լոռիցեն՝ եւ մե՛կ իմասցին:» (Դ. Լուկա Ը:9-10)

«Իր աշակերտները Հարցուցին իրեն. «Ի՞նչ է իմաստը այս առակին»: Ան ալ ըսաւ. «Ձեզի՛ տրուած է Հասկնալ Աստուծոյ Թաղաւորութեան խորհուրդները, բայց ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ. որպէսզի նայելով՝ չտեսնեն, ու լսելով՝ չհասկնան»:

Այս Համարին մէջի Յիսուսին ըսած առաջին նախադասութեան նկատմամբ տես նաեւ այս գիրքին մէջ «Բացառիկ Համարներ» խորագրեալ Բ. գլուխը: Անտարակոյս, երբ Յիսուս «խորհուրդ» բառը կը գործածէ անոր իմաստը «thought» չէ այլ՝ «mystery»: Այդ «խորհուրդ»-ները ներքին Քրիստոսի կողմէ միայն արժանի եղող անձերուն կը տրուին: Իսկ Յիսուսի երկրորդ նախադասութեան Համար տես Հատոր Գ «Ողորմութեան Մասին» խորագրեալ գրութիւնը էջեր 68-69: Այս նիւթին առնչութեամբ, երկրորդ նախադասութիւնը ունի փոխաբերական իմաստ մը եւս: «Ան որ աջ ձեռքդ կ'ընէ»-ին իմաստը այն է, թէ այն «խորհուրդ»-ները, որ քեզի կը տրուին, «ձախ ձեռքդ չգիտնայ թէ ան ինչ կ'ընէ», այսինքն արժանի չեղող անձերու չյայտնես:

ՀԱՄԱՐ 62

Յիսուս ըսաւ. «Հարուստ մարդ մը կար շատ ստացուածքներով: Ան ըսաւ. «Ունեցածս պիտի օգտագործեմ, ցանեմ, քաղեմ ու տնկեմ եւ շտեմարաններս արգասիքներով պիտի լեցնեմ, որպէսզի ոչինչի պէտք ունենամ»: Ասոնք իր սրտին խորհուրդներն էին: Եւ այդ գիշեր ան մեռաւ: Ան որ ականջ ունի թող լսէ»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայացւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Տես հրատարակած այս գիրքերու Հատոր Բ «Յիսուսի Առակաները - Հոգին Աստուած» Գլուխ Գ.-ին մէջ «Անմիտ Հարուստին Առակը» խորագրեալ առակին մեկնաբանութիւնը էջեր 139-141:

Եթէ այս համարին պարունակութիւնը առնենք որպէս նախորդ համարի շարունակութիւն, այդ պարագային կարելի կ'ըլլայ այս համարը տարբեր ձեւով մը եւս մեկնաբանել: Հարստութիւնը փոխաբերաբար կրօնայ ներկայացնել Յիսուսի սորվեցուցած «խորհուրդ»-ները: Հետեւաբար հարուստ մարդն ալ կը ներկայացնէ այդ «խորհուրդ»-ներուն տեղեակ՝ գիտակից անձը: Յիսուսի առաքեալները միայն Պենտեկոստէի օրը Ս. Հոգիի շնորհքով արժանացան եւ գիտցան այդ «խորհուրդ»-ներուն բուն իմաստները: Ըստ Յիսուսի իրենց տուած յորդորին, անոնք ալ այդ «խորհուրդ»-ները յայտնեցին միայն արժանի եղող անձերու եւ հանրութեան չպարգեցին: Այդ «խորհուրդ»-ները փոխանցուցան ուրիշ արժանիներու: Արդեօք կարելի է⁶, որ անոնցմէ մին իր անձնական նիւթական շահին համար զանոնք օգտագործեց բոլորին վրայ իշխելու համար: «Եւ այդ գիշեր ան մեռաւ»-ին իմաստն ալ այն է, թէ իր այս կեանքի ընթացքին ինք ալ «մեռաւ» այդ «խորհուրդ»-ներուն (mystery) ճշմարտութեան հասկացողութեան:

ՀԱՄԱՐ 63

Յիսուս ըսաւ. «Մարդ մը հիւրեր ունէր եւ երբ ճաշը պատրաստ էր, իր ծառան զրկեց, որպէսզի հիւրերը հրաւիրէ: Երբ առաջինին եկաւ, ըսաւ անոր. «Տէրս ձեզ կը կանչէ»: Ան ըսաւ. «Վաճառականներու հետ դրամի խնդիրներ ունիմ եւ այս երեկոյ անոնք պիտի գան ես պարտ եմ երթալ ապսպրանքներ ընել: Հաճիք զիս ներել պիտի չկարենամ ճաշին մասնակցի»: Ան ուրիշի մը գնաց եւ ըսաւ անոր. «Տէրս ձեզ կը կանչէ»: Ան ըսաւ անոր. «Ես տուն մը գնեցի եւ մէկ օր զբաղ պիտի ըլլամ, ժամանակ պիտի չունենամ»: Ան ուրիշի մը գնաց ու ըսաւ անոր. «Տէրս ձեզ կը կանչէ»: Ան ըսաւ անոր. «Ընկերս շուտով պիտի ամուսնանայ եւ պարտ եմ իրենց ճաշ տալ: Ես պիտի չկարենամ գալ, հաճեցէք զիս ներել»: Ան ուրիշի մը գնաց ու անոր ըսաւ. «Տէրս ձեզ կը կանչէ»: Ան ըսաւ անոր. «Ես գիւղ մը ծախու առած եմ, պարտ եմ երթալ եւ վարձքերը հաւաքել: Ներողամիտ եղէք պիտի չկարենամ գալ»: Ծառան եկաւ ու իր տիրոջ ըսաւ. «Անոնք որոնք դուն ճաշին կանչեցիր ներողութիւն խնդրեցին եւ կարող չէն գալ»: Տէրը ծառային ըսաւ. «Փողոց ելիր: Ու՛ր որ գտնես բեր որպէսզի ճաշեն»: Առեւտուր ընողներ եւ վաճառականներ պիտի չմտնեն իմ Հօրս տունը»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայացւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Տես հրատարակած այս գիրքերուս Հատոր Բ «Յիսուսի Առաւելները - Հոգին Աստուած» Գլուխ Գ.-ին մէջ «Հարսանեկան Կոչունքի Առակը» խորագրեալ առակին մեկնաբանութիւնը էջեր 126-129:

ՀԱՄԱՐ 64

Ան ըսաւ. «Բարի մարդ մը այգի մը ունէր եւ զայն Հողագործներու յանձնեց որպէսզի գործեն եւ ինք պտուղը ստանայ: Ան իր ծառան զրկեց որպէսզի Հողագործները այգիին բերքը անոր յանձնեն: Անոնք բռնեցին ծառան ու մեռցնելու չափ ծեծեցին: Ծառան եկաւ ու իր տիրոջ պատմեց եղածը: Տէրը ըսաւ. «Կարելի է զինք չճանցան»: Ուրիշ ծառայ մըն ալ զրկեց: Հողագործները ան ալ ծեծեցին: Տէրը իր որդին զրկեց ու ըսաւ. «Կարելի է զինք յարգեն»: Այդ Հողագործները, գիտէին թէ ան այգիին ժառանգորդն էր, բռնեցին զինք ու մեռցուցին: Ան որ ականջ ունի, թող լսէ»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայացւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Տես Հրատարակած այս գիրքերուս Հատոր Բ «Յիսուսի Առակները - Հոգին Աստուած» Գլուխ Գ.-ին մէջ «Այգիին Մշակներուն Առակը» խորագրեալ առակին մեկնաբանութիւնը էջեր 123-125:



Լաւ է այր երպայնամիս քան շշշօր: Եւ այր
որ ոխի շիմաստիթիս քան շանդս մեծամեծս:

(Առակք Սողոմոնի ԺԶ:32)

ՀԱՄԱՐ 65

Յիսուս ըսաւ. «Ըսէք ինծի այն քարին մասին,
որ շէնքը շինողները մէկ կողմ՝ նետեցին: Ան
անկիւնաքարն է»:

Անտարակոյս, այս համարը պարտ ենք ամբողջո-
վին փոխաբերական իմաստով մեկնաբանել: «Շէնքը
շինողները» կրօնքին առաջնորդներն են: Իսկ «քար»-ը
Յիսուսի սորվեցուցած յաւիտենական կեանքի արժա-
նանալու «խորհուրդ»-ներն են: «Շէնքը»-ը կը ներկա-
յացնէ կրօնքը: Բայց մեզի հասած կրօնքին մէջ Յի-
սուսի սորվեցուցած այդ «խորհուրդ»-ները գոյութիւն
չունին, որովհետեւ «շէնք»-ը շինողները զանոնք անտե-
սեցին՝ «մէկ կողմ՝ նետեցին»: Ճշմարտութիւնը այն է, թէ
անոնք՝ Յիսուսի բուն սորվեցուցածները, հաւատքին
«անկիւնաքարն»՝ ամենակարեւոր մասն էին:



ՆՈՐՈԳՈՒՄՆ ԵՐԻՏԱՍԱՐՈՒԻ
ՈՍ ՃԱՆԱՊԱՐՀԱԾ ԻՐՈՅ,
ՆԱ՝ ԵՒ յՈՐԺԱՄ ԾԵՐԱՍՅՈ՝
ՈՉ ՄԵՐԺԵԱՅՈ՝ Ի ՆՈՅԱՆԷ:

(Առակք Սողոմոնի ԻԲ:6)

ՀԱՄԱՐ 66

Յիսուս ըսաւ. «Ան որ ամէն ինչ գիտէ, բայց
ինք զինք չի ճանչնար, ամէն ինչէ զուրկ է»:

Այս համարին կարեւորութիւնը այն է, թէ
իմացական հասկացողութիւնը՝ «որ ամէն ինչ գիտէ»,
որքան որ կարեւոր է եւ կատարելութեան ուղիին մէջ
առաջին քայլն է, ան մարդուն վերջնական նպատա-
կակէտը չէ: Միայն իմացական հասկացողութեամբ
մարդ «ամէն ինչէ զուրկ» կը մնայ: Կարեւորը մարդ
նախ պէտք է ինքզինք «ճանչնայ»: Յոյն փիլիսոփան ալ
նոյնը ըսած է. «Ծանիր զքեզ»: Ի՞նչ կը նշանակէ
մարդուն ինքզինք ճանչնալը: Մարդ ոչ իր մարմինն է,
ոչ իր միտքը, ոչ իր զգացումները եւ ոչ ալ իր
իմացականութիւնը, այլ ան զանոնք օգտագործողը եւ
գործածողն է: Իր ճշմարիտ էութիւնը՝ իր կեանքը եւ
իր գիտակցութիւնը իր հոգին՝ Քրիստոսն է: Ինք ալ
Աստուծոյ որդին է, ինչպէս գրուած է Ս. Գիրքին մէջ:
Բայց ինք այդ իրողութեան անգիտակից է: Եթէ անձը
փորձառականօրէն այս իրողութեան տեղեակ չ'ըլլայ,
ինք ալ «ամէն ինչէ զուրկ» կ'ըլլայ:



ՈՐ ՍԵՐՄԱՆԷ ԶԱՆԶԱՄՈՒԹԻՒՄ՝
ՀԱՁԵԱՅԷ ԶՉԱՐԻԱ,
ԵՒ ԶՉԱՐՈՒԹՅԱ ԳՈՐԾՈՅ ԻՒՐՈՅ ԲՈՎԱՆԴԱԿԵԱՅԷ:
(Առակք Սողոմոնի ԻԲ:8)

ՀԱՄԱՐ 67

**Յիսուս ըսաւ. «Օրհնեալ ես դուն երբ քեզ
կ'ատեն եւ կը չարչարեն: Տեղ պիտի չունենան
Հոն ուր քեզ չարչարեցին»:**

**Յիսուսի այս խօսքը կը համապատասխանէ
«Լերան Քարոզ»-ին մէջի հետեւեալ երանիին.**

«Երանի որ Հալաթել իցեն վասն արդարութեան,
չի նոցա է արեւոյութիւն երկնից: Երանի է յեւ
յորժամ նախարիցեն զյեւ է- Հալաթեացեն, է-
ասիցեն զամենայն Բան շար զյեւնջ ուր- Վասն
իմ: ցնծացել է- ուրախ լերու- լ. զի վարչէ յեր
Բաշոմ էն յերկնս. ...» (Մարբէնոյ Ե:10-12)

«Երանի՛ անոնց՝ որ Հալածուած են արդարութեան
Համար, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է:
Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը Հալածեն
եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր
վրայ ինծի Համար: Յնծացէք եւ ուրախ եղէք, վասն զի
ձեր վարձքը շատ է երկինքը. ...»:

**Հետեւաբար տես հրատարակած այս գիրքերու
Հատոր Գ «Լերան Քարոզը եւ Ճշմարիտ Երանութիւն-
ները» խորագրեալ գրութեան մէջ էջ 50:**

Յաւելեալ ըլլալով պարտ ենք նկատողութեան
առնել այս համարին մէջի երկրորդ եւ վերջին
նախադասութիւնը, որ լերան քարոզին վերեւի համա-
րին մէջ չէ գրուած: Կը թուի թէ հալածանքը անհատին
հաւատքին պատճառովն է: Որովհետեւ անոնք, որոնք
նման հաւատք մը կը հալածեն, ամենեւին պիտի
չհասկնան այդ հաւատքին մէջի «խորհուրդ»-ները,
հետեւաբար «Տեղ պիտի չունենան Հոն ուր քեզ
չարչարեցին»:



ՀԱՄԱՐ 68

Յիսուս ըսաւ. «Օրհնեալ են անոնք, որոնք
Հալածուած են իրենց սիրտերուն մէջ: Ասոնք,
անոնք են, որ Հօրը ճշմարտութիւնը գիտեն:
Օրհնեալ են անոնք որոնք անօթի են, որով
անոնք պիտի գոհանան»:

Յիսուսի այս խօսքը կը համապատասխանէ
«Լեւրան Քարոզ»-ին մէջ հետեւեալ երանիին.

«Երանի խաղցելեալ եւ ծարաւի իցեն արդարո՞ւ»-

Եւան, զի նոյա յապէսցին»: (Մարքէոսի Ե:3-12)

«Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան,
վասն զի անոնք պիտի կշտանան»:

Հետեւաբար տես հրատարակած այս գիրքերու
Հատոր Գ «Լեւրան Քարոզը եւ Ճշմարիտ Երանութիւն-
ները» խորագրեալ գրութեան մէջ էջ 47: Հոս յարմար է
փոքր տեղեկութիւն մը տալ «Հալածուած են իրենց
սիրտերուն մէջ»-ի նկատմամբ: Յիսուս Ինք արդէն անոր
իմաստը կ'ըսէ. «անոնք են, որ Հօրը ճշմարտութիւնը
գիտեն»: Բոլոր անոնք, որոնք հասկցած են Յիսուս
Քրիստոսի բոլոր քարոզչութիւնները եւ գիտեն յաւի-
տենական կեանքի արժանանալու բոլոր միջոցները,
բայց իրենք անձնապէս այդ հանգրուանին չեն հասած,
իրենց ցուցաբերած այդ տկարութեան համար իրենք
զիրենք կը հալածեն: Իրենց այդ հալածանքը պիտի
շարունակէ մինչեւ որ իրենք իրենց հոգեկան
ծուլութեան վերջ տան եւ աշխարհիկ, նիւթական,
չլացուցիչ գանազանութենէ ձերբազատուին: Երբ
յաջողին միթէ երանելի եւ օրհնեալ պիտի չըլլա՞ն:



ՀԱՄԱՐ 69

Յիսուս ըսաւ. «Եթէ դուն Ան քու մէջդ յայտնես,
ան ինչ որ ունիս քեզ պիտի փրկէ: Բայց եթէ
դուն Ան չունիս, ան ինչ որ չունիս քեզ պիտի
մեռցնէ»:

Այս համարին ներկայացուցած Յիսուսի խօսքը
կը թուի բացայայտ ըլլալ: Ի՞նչ բան մարդ իր մէջը
ունի՝ իր հոգին՝ Քրիստոսը: Եթէ մարդ այս աշխարհիկ
կեանքի ընթացքին Քրիստոս իր մէջ յայտնաբերէ, այդ
յայտնութիւնը՝ Քրիստոս զինք պիտի փրկէ: Ասկէ
պէտք է հասկնանք, թէ մարդուն կեանքի նպատակը
փրկութիւնը փնտռելը պէտք չէ ըլլայ, այլ Քրիստոսը
իր մէջ յայտնաբերելը: Փրկութիւնը պարզեւ մըն է
մարդուն տրուած՝ իր մէջ յայտնուած Քրիստոսի
կողմէ: «Բայց եթէ դուն Ան չունիս»-ին իմաստը այն է,
թէ եթէ դուն Քրիստոս քու մէջդ չես յայտնաբերած,
այդ պիտի ըլլայ քու մահուանդ պատճառը: Պէտք չէ
մոռնալ թէ մարդուն մարմնին մահուան հետ իր
անհատականութիւնն ալ կը մեռնի կ'անհետանայ: Իսկ
եթէ Քրիստոս իր մէջ յայտնուած է, ըստ Յիսուս
Քրիստոսի սորվեցուցածին, Քրիստոս անհատին անհա-
տականութիւնը պիտի յարուցէ եւ յաւիտենական
կեանք տայ:



ՀԱՄԱՐ 70

Յիսուս ըսաւ. «Ես այս տունը պիտի քանդեմ,
ու ոչ մէկը դարձեալ պիտի կարենայ զայն
կառուցել»:

Այս համարին մէջ Քրիստոս բացայայտ կ'ընէ, թէ
անհատին մէջ իր յայտնութիւնը զայն ամբողջովին
պիտի փոխէ: Մարդ իր խաւարամտութեամբ եւ սխալ
հասկացողութեամբ սուտ եւ սխալ հաւատալիքներու
իւրացումով կը կազմէ իր բնոյթը: Մարդուն այդ բնոյ-
թը փոխաբերաբար ներկայացուած է «տունը» բառով:
Քրիստոսի անձին մէջ յայտնութիւնը անտարակոյս
պիտի քանդէ մարդուն հին բնոյթը: Ահա՛, աս է իմաստը
ճշմարիտ «վերստին ծնունդին»: Այն անձը, որ փորձա-
ռութիւնը ունեցած է Քրիստոս իր մէջ յայտնաբերել
անկարելի է որ անգամ մը եւս առաջուանին նման
բնոյթ մը կերտէ: Հին մարդը՝ բնոյթը սատանային՝
մարդուն «Ես»-ին ճարտարապետութիւնն էր: Այն
անձը, որ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ է «Ես»-ը
այլեւս չի կրնար այդ անձին մէջ նման բնոյթ մը
ստեղծել:



Ո՞ր է ԱՐԴԴՅ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ՝ Ո՞Ր ԱՐՈՒԹԻՒՆ,
ԵՒ Ո՞Ր ԽՈՐՀՈՒՐԴ ԱՌ ԱՍՏՈՒԾ:

(Առակք Սողոմոնի ԻԱ:30)

ՀԱՄԱՐ 71

Մարդ մը Անոր ըսաւ. «Եղբայրներուս Հետ խօսէ, որպէսզի Հօրս ստացուածքը ինծի Հետ բաժնեն»: Ան ըսաւ անոր. «Ո՛վ մարդ, ո՛վ զիս բաժանարար կարգեց»: Դարձաւ իր աշակերտներուն ու ըսաւ. «Ես բաժանարար չեմ, այնպէս չէ»:

Այս նոյն դէպքը նկարագրուած է նաեւ Ղուկասի Աւետարանին մէջ, ուր Յիսուս յաւելեալ նախադասու-
թիւնով մը բացայայտ կ'ընէ դէպքին իմաստը:

«Լաւ ո՞նք 'ի Ժողովրդեանէն ցնաւ. Վա՛րդապետ' ասա ցաղթայր իմ՝ Բաժանել ընդ իս պժառանգութիւնն: Եւ նա՛ ասէ ցնաւ. Ը՛յրդդո՛ւ՝ ո՞ր կացոյց զիս դարսաւոր կամ Բաժանարա՛ր 'ի վերայ յեր: Եւ ասէ ցնաւ. Տե՛ւն՛ի էւ պիտ' յը լերո՛ւ յամենայն ագահութեան, զի ո՛չ եթէ 'ի մեղքից ընշից որո՛ւ իցեն կեանք նորա»: (Ղուկաս ԺԲ:13-15)

«Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապետ, ըսէ՛ եղբօրս՝ որ ինծի Հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՞վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: Ապա ըսաւ անոնց. «Ուշադի՛ր եղէք եւ զգուշացէ՛ք ագահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»:

Յիսուս ամենեւին առիթ չէր բխցնէր դաս մը տալու, կամ ճշմարտութիւն մը յայտնելու համար: Այս համարին մէջ ալ Ան մարդուն ստեղծած առիթէն օգտուելով ճշմարտութիւն մը եւս յայտնած է:

Նախ նկատողութեան առնենք բառացի իմաստը: Մարդուն ճշմարիտ կեանքը իր աշխարհիկ ժամանակաւոր կեանքը չէ, այլ՝ յաւիտենական կեանքը, որ իր մէջ Քրիստոսի ներկայութիւնն է: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը»: Յաւիտենական կեանքն

ալ անձին մէջ Քրիստոսի յայտնութեան հետեւանքն է: Եւ Քրիստոսի յայտնութիւնը եւ յաւիտենական կեանքը կախեալ չեն մարդուն «ստացուածքներուն առատութենէն»՝ նիւթական հարստութենէն: Յիսուս նիւթական հարստութեան կարեւորութիւն չէր տար:

Այս համարին մէջի Յիսուսի հետեւեալ խօսքը. «Մ՛ի մարդ, ո՛վ զիս բաժանարար կարգեց»-ը կարելի է փոխաբերական իմաստով եւս առնել եւ ամբողջովին տարբեր եզրակացութեան մը յանգիլ: Հետեւաբար, այս իմաստովն ալ, Յիսուս Քրիստոս առիթն օգտուելով յայտնած է ճշմարտութիւն մը: Ուրեմն ի՞նչ է այդ ճշմարտութիւնը: Ան կը կայանայ «բաժանարար» բառին վրայ: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ կը թուի երկուութեան վրայ հիմնուած ըլլալ: Այս երկուութիւնը պատճառ կ'ըլլայ զանազանութիւնը տեսնել իրարմէ անջատ եւ անկապակից: Աս ալ կը ներկայացնէ «բաժանումը»: Այս հիման վրայ մարդ կ'ըսէ. «Ես եւ ան» եւ չի տեսներ ամէն ինչի միականութիւնը: Այս հայեացքին պատճառն ալ մարդուն խաւարամտութիւնն է: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Քրիստոսի զանազան արտայայտութիւններէն է, ամէն ինչ կեանք ունի եւ ամէն ինչ Քրիստոսով մէկ է: Քրիստոս «բաժնող» չէ, այլ՝ միացնող: «Ես»-ն է, որ եսասիրութեամբ ամէն ինչ կը բաժնէ՝ ես եւ դուն, իմ եւ քուկդ

....:



ՀԱՄԱՐ 72

Յիսուս ըսաւ. «Հունձքը առատ է, բայց
Հնձողները քիչ են: Աղօթէ Տիրոջ որպէսզի
Հունձքին Հնձողներ զրկէ»:

Հունձքը յաւիտենական կեանքն է եւ յաւիտենա-
կան կեանքն ալ միայն Քրիստոսի յայտնութեամբ
կարելի է: Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ էութիւնն
է: Հետեւաբար «Հունձքը առատ է»-ն կը ներկայացնէ
Քրիստոսի ամէն մարդու մէջ ներկայութիւնը: Հնձող-
ները մարդիկն են, բայց ոչ անոնք, որոնք փարած
իրենց «Ես»-ին, չեն «հնձեր»՝ յայտնաբերեր իրենց ներ-
քին Քրիստոսը: Մարդ պարտ է յաճախ աղօթել եւ
աղօթքին ալ ամենավեհ ձեւովը՝ խոկալով, որպէսզի
ձերբազատուի իր «Ես»-էն եւ յարի իր ներքին Քրիս-
տոսին: Այն ատեն ինք ալ կ'ըլլայ «հնձող»: Աղօթքին
արդիւնքն ալ կ'ըլլայ «Հունձքին Հնձողներ զրկէ»:

Վստահաբար շատեր եթէ գիտնան ճշմարտու-
թիւնը՝ հունձքը եւ հնձելը կարելի է «հնձող»-ներ
ըլլան: Բայց ոչ հունձքին մասին եւ ոչ ալ հնձելու
մասին սորվեցնող կայ:



ՄԻ ՓՈԽԵՐ ԶԱՎԱՄԱՆ յԱԽՏԵՆԱԿԱՆ ՉՈՐ
ԵՊԻՆ ՀԱՐՔ ՔՈ:
(Առակք Սողոմոնի ԻԲ:28)

ՀԱՄԱՐ 73

Ան ըսաւ. «Տէր, աղբիւրին շուրջ շատեր կան,
բայց աղբիւրը ցամաք է»:

Աղբիւրը ի՞նչ կը պարունակէ: Զուր: Իսկ ջուրին
փոխաբերական իմաստը ի՞նչ է: Ս. Հոգիի կենսատու
զօրութիւնը, այսինքն «կեանք»: «աղբիւրին շուրջ շատեր
կան»-ին իմաստը այն է թէ շատեր կուզեն աղբիւրին
ջուրէն խմել՝ օգտուիլ: Ասոնք կը ներկայացնեն բոլոր ի
անուանէ քրիստոնեաները, որ չեն փոխեր իրենց կեն-
ցաղը եւ չեն գործադրեր Յիսուս Քրիստոսի սորվեցու-
ցածները: Կրօնքին նպատակը անհատին բարձր գիտակ-
ցութիւն եւ ճշմարտութեան փորձառութիւնը տալն է:
Երբ անհատը փորձառականօրէն կը հաղորդակցի իր
ներքին Քրիստոսի հետ ինք ալ Քրիստոսէն կը ստանայ
յաւելեալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը՝ «կեանքի
ջուրը»: Բայց երբ անհատը միայն ի անուանէ քրիս-
տոնեայ է եւ ջանք չ'ըներ իր ներքին Քրիստոսը գտնել,
ինք ալ «կեանքի ջուրը»-ը ստանալու արժանի չ'ըլլար:
Անոնց հետապնդած «քրիստոնէութիւնը» դատարկ է:
Ահա՛, աս է իմաստը «բայց աղբիւրը ցամաք է»-ին:



ԵՒ յԱՒՈՒՐ ԱԵՂՈՒԹԵԱՆ՝ ՄԻԱԶԵՒ ԱՍՏԱԿԵԱԾԻ:
(Առակք Սողոմոնի ԻԴ:10)

ՀԱՄԱՐ 74

**Յիսուս ըսաւ. «Շատեր դրան առջեւ
Հաւաքուած են, բայց միակն է ան որ
առաքաստ կը մտնէ»:**

Այս համարին մեկնաբանութիւնն ալ նախորդին
նոյնն է: Այս անգամ Յիսուս տարբեր փոխաբերական
մը օգտագործած է: Հարսանիքի եկողները շատ են,
բայց միայն փեսան է որ առաքաստ կը մտնէ: Այս
հիման վրայ առաքաստը կը ներկայացնէ հարսին եւ
փեսային միութիւնը՝ Քրիստոսի յայտնութիւնը անձին
մէջ եւ «միակն է ան որ առաքաստ կը մտնէ»-ն ալ կը
ներկայացնէ այն անձը որ արժանացած է Քրիստոսի
իր մէջ յայտնութեան: Կը միանայ Քրիստոսի եւ կը
վայելէ յաւիտենական կեանքը: Այս համարը լռելեայն
հասկացողութիւն մը եւս կու տայ, որ ներկայացուած է
Յիսուսի հետեւեալ խօսով, հակառակ որ այս երկու
համարներուն միջեւ որեւէ կապ մը չի թուիր
գոյութիւն ունենալ:

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր,

մոցէ յարձայո-թիւն երկնից, ալ որ ասնէ

պէսմս Ըօր իմոյ որ յերկնան է » : (Մատթէոս Է:21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ
երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ
իմ երկնաւոր Հօրս կամքը»:

«Շատեր դրան առջեւ Հաւաքուած են»-ը անոնք են,
որ **«Տէ՛ր, Տէ՛ր»** ըսելով Աստուած կը պաշտեն եւ
Յիսուսի սորվեցուցած Հայր Աստուծոյ կամքը չեն
կատարեր: Դժբախտութիւնը այն է, թէ մեծամաս-
նութիւնը նոյնիսկ չգիտեր Յիսուսի սորվեցուցածները
որպէսզի կարողանայ զանոնք կատարել, որովհետեւ
անոնք իրեն խեղաթիւրուած ձեւով ներկայացուած են:

ՀԱՄԱՐ 75

Յիսուս ըսաւ. «Հօրը թագաւորութիւնը կը նմանի վաճառականի մը, որ շատ ապրանք ունէր ու մարգարիտ մը գտաւ: Վաճառականը իմաստուն էր: Ան բոլոր ապրանքները ծախեց ու իրեն Համար միայն մարգարիտը գնեց: Դուք ալ՝ փնտռեցէք այն գանձը որ չի փճանար այլ կը տոկայ, ուր ոչ ցեցը կը մաննէ ու կ'ուտէ եւ ոչ ալ որդերը կը փճայնեն»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայացւած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Տես հրատարակած այս գիրքերու Հատոր Բ «Յիսուսի Առակաները - Որդին Աստուծոյ» Գլուխ Գ.-ին մէջ «Մարգարիտին Առակը» խորագրեալ առակին մեկնաբանութիւնը էջեր 85-86:

Ինչպէս Հատոր Բ.-ի մէջ նկարագրուած է «պատւական մարգարիտը» կը ներկայացնէ Քրիստոսի ներկայութիւնը անհատին մէջ: Ան գանձ մըն է, «որ չի փճանար այլ կը տոկայ, ուր ոչ ցեցը կը մաննէ ու կ'ուտէ եւ ոչ ալ որդերը կը փճայնեն»: Մարդուն հաւաքած բոլոր ինչքերը, ստացուածքները բոլորն ալ վաղանցիկ են եւ ոչ մնայուն, դժբախտաբար մարդ անոնց կապուած չի փնտռեր թանկագին գանձը՝ պատուական մարգարիտը:

Այս համարը կարելի է տարբեր փոխաբերական իմաստով մըն ալ մեկնաբանել: Անտարակոյս, վաճառականը կը ներկայացնէ անհատը: Իսկ «շատ ապրանք ունէր»-ը կարելի է, որ ներկայացնէ իր աւանդութիւնները եւ աւանդական կրօնքին տուած հաւատալիքները, իսկ «ու մարգարիտ մը գտաւ»-ն ալ Յիսուսի սորվեցուցած թագուն գիտութիւնը: Այս հիման վրայ «Ան բոլոր ապրանքները ծախեց ու իրեն Համար միայն մարգարիտը գնեց»-ին իմաստն ալ այն է, թէ ան այդ բոլոր աւանդութիւնները կ'անտեսէ եւ թագուն գիտութիւնը

Կ'իւրացնէ: Համարին մնացեալը ազդարարութիւն մըն է բոլորիս, որ մենք ալ այդ մարգարիտը՝ գանձը փնտռենք եւ գտնենք: Ան է ճշմարտութիւնը եւ ամենեւին չի փճանար:



Կեր մեղր որդեակ ջի բարի է,
եւ Խորիսն՝ ջի բաղձրասօթի Կոչորդ բո:

Նոյնդէս եղիօթի

Հանճար Իմաստութեան յանձին բոխ:

Ձի եթէ ջայն գտանիօթս՝

եղիօթի բարեակ՝ վախճան բո.

եւ լոյս բո մի Պապասեսօթ:

Իմաստութեամբ շիւսի տոխ,

եւ Հանճարով Կանգնի:

Որդեակ Իմ՝ մի նախանշիր ընդ ջարս.

եւ մի ծանկանալօթս Կալ ընդ նոսա:

(Առաւիճ Սողոմոնի ԻԴ:13-14, 3 եւ 1)

ՀԱՄԱՐ 76

Յիսուս ըսաւ. «Ես եմ լոյսը, որ կը լուսաւորէ բոլորը: Ես ամէն ինչն եմ: Ամէն ինչ ինձմէ բխած է եւ ամէն ինչ ինծի պիտի վերադառնայ: Կոտորէ փայտի կտոր մը, ես Հոն եմ: Քարը վերցուր, զիս Հոն պիտի գտնես»:

Այս համարը բացառիկ համար մըն է: Քրիստոս այս մէկ խօսքով ընդհանուր կրօնքին ամփոփումը կու տայ: Նախ պէտք է հասկնալ, թէ Քրիստոս, որ Յիսուսի մէջ լրիւ յայտնուած էր, որով կը խօսի Յիսուսի միջոցով: Այսինքն Յիսուս կը խօսի Իր Աստուածային բնոյթով եւ ոչ՝ մարդկային: Առաջին նախադասութիւնը «Ես եմ լոյսը, որ կը լուսաւորէ բոլորը»-ի մասին այս գիրքին Դ. գլխուն մէջ ծաւալուն տեղեկութիւն տրուած է: Լոյսը ամէն ինչ տեսանելի կ'ընէ: Երբ մարդ ամբողջովին մութ սենեակ մը կը մտնէ, ոչինչ կը տեսնէ, Հոն գտնուած ոչ մէկ բանէ տեղեակ կ'ըլլայ: Բայց երբ լոյսը վառէ ամէն ինչ տեսանելի կ'ըլլայ որով ինք ալ ամէն ինչի գոյութեան տեղեակ կ'ըլլայ՝ կը գիտակցի: Ուրեմն լոյսը գիտակցութիւն կու տայ: Հետեւաբար երբ Քրիստոս կ'ըսէ «Ես եմ լոյսը» Ան փոխաբերաբար կ'ըսէ «Ես ձեր գիտակցութիւնն եմ»: Մարդ արարած երբ թմբիւրի մէջ է, ոչինչէ տեղեակ է, որովհետեւ կարող չէ յայտնաբերել իր ներքին Քրիստոսի գիտակցութիւնը (consciousness):

Քրիստոսի երկրորդ նախադասութիւնը իսկապէս կը լուսաբանէ Քրիստոսի «բնոյթ»-ը: Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ Աստուծոյ արտայայտութիւնը: Ճիշդ ասոր համար Քրիստոս կ'ըսէ «Ես ամէն ինչն եմ»: Ուրեմն ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ որդին՝ Քրիստոսի արտայայտութիւնն է: Իսկ մենք կը կարծենք, թէ միայն Յիսուսն է, որ Քրիստոսն է: Որոշ մակարդակի մը վրայ այս վերջին նախադասութիւնը

ճիշդ է, որովհետեւ ամէն ինչ Քրիստոսի զանազան արտայայտութիւնները ըլլալով հանդերձ, մենք չենք յաջողած Զինք լրիւ յայտնաբերել: Բայց Յիսուս յաջողեցաւ եւ մեզի ալ սորվեցուց իրեն նմանիլ եւ իրեն պէս ընել: Իսկ մենք Յիսուսը կը պաշտենք եւ հարկ է որ պաշտենք, բայց իր ըսածները չենք կիրարկել մեր կեանքին մէջ: Անոնք, որոնք տակաւին կարող չեն այս գաղափարին հետ հաշտուիլ, Քրիստոսի այս համարին վերջին երկու նախադասութիւնները կ'ամրապնդեն այդ գաղափարը: Քրիստոս կ'ըսէ. «Կոտրէ փայտի կտոր մը, ես Հոն եմ: Քարը վերցուր, զիս Հոն պիտի գտնես»: Եթէ ամէն ինչ Քրիստոսի արտայայտութիւններն են եւ ըստ Աւետարաններուն Քրիստոս ալ Կեանք է, Լոյս է, հետեւաբար ամէն ինչ պէտք է կեանք ունենայ եւ նաեւ գիտակցութիւն: Մարդիկ կը համարին թէ անզգամ նիւթը գոյութիւն ունի, սակայն կեանք ու գիտակցութիւն չունի: Հաւանական է, որ անզգամ նիւթը զգացում եւ խորհուրդ չունենայ, որովհետեւ ան մտային մարմին չունի, այլ ունի միայն ֆիզիքականը: Քրիստոսի յայտնութեան մակարդակը իր զանազան արտայայտութիւններուն մէջ իրարմէ կը տարբերին: Անըզգամ նիւթին մէջ Քրիստոսի յայտնութեան մակարդակը շատ ցած է, ինչպէս նաեւ կեանքի եւ գիտակցութեան մակարդակները: Կեանքին բացատրականը-վաւերացուցիչը առանց արտաքին ուժի շարժելու կարողութիւնն է, այսինքն ինքնաշարժութեան կարողութիւնը: Գետնի քարը ցկեանս անշարժ կը մնայ, մինչեւ որ արտաքին ուժ մը՝ մարդ մը, ջուրը, հովը... զայն շարժէ: Այս հիման վրայ մարդ կը կարծէ թէ «քար»-ը կեանք չունի: Կեանքի յայտնութիւնը այն աստիճան ցած է եւ մարդու գիտակցութեան մակարդակն ալ բաւականին բարձր չէ, որ ան այդքան ցած կեանքի յայտնութիւնը կարողանայ տեսնել: Միթէ քարը մաս-

նիկներէ (molecules) չէ կազմուած եւ մասնիկներն ալ հիւլէներէ: Ամէն հիւլէ կազմուած է փրօթօն, նիւթրօն եւ ելեկտրոններէ: Միթէ հիւլէի մէջի այս կազմիչները առանց արտաքին ուժի շարժման մէջ չեն: Անտարակոյս յայտնուած կեանքի մակարդակը շատ ցած է, Բայց հոն ալ կեանք կայ, որովհետեւ ան ալ Քրիստոսի արտայայտութիւնն է: Ինչպէս վերեւ գրուած է Քրիստոս նաեւ գիտակցութիւն է: Հիւլէին մէջի ելեկտրոնը տեղեակ է հեւլէին կորիզին (փրօթօն եւ նիւթրօններու զտնուած կեդրոնը) եւ գիտակցօրէն կը շրջի անոր բոլորտիքը քան թէ տարբեր ուղղութեամբ երթայ: Ընդհանուր ստեղծագործութեան մէջ Քրիստոսի գիտակցութեան յայտնութեան ամենաբարձր մակարդակը մարդուն մէջն է: Ամէն մարդ այդ գիտակցութիւնը անոր անհունութեամբ յայտնաբերելու կարողութիւնը ունի եւ այդ է Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ: Բայց աւա՛ղ մարդ իրեն շնորհուած միտքը եւ ուղեղը տակաւին չէ սորված պատշաճօրէն օգտագործել: Ասոր պատճառն ալ իր խաւարամտութեան հետեւանք պատրանքը ընդունիլ է իբրեւ ճշմարտութիւն: Իսկ եթէ ընդհանուր ստեղծագործութիւնը Քրիստոսի զանազան արտայայտութիւններն են եւ մենք կ'ըսենք թէ Քրիստոսը կը սիրենք ու կը պաշտենք, պէտք չէ՞ նման հայեացքով վարուինք ամէն նիւթի, անասունի եւ մարդու հանդէպ: Քրիստոսի այս համարին մէջի յաջորդ նախադասութիւնը «Ամէն ինչ ինձմէ բխած է եւ ամէն ինչ ինձի պիտի վերադառնայ» բացայայտ կ'ընէ ամէն ինչի Քրիստոսի արտայայտութիւնը ըլլալը: Իսկ եթէ մենք ալ Քրիստոս մեր մէջ ունինք եւ իր մէկ արտայայտութիւնն ենք, օր մը ամէն անհատի հոգին իր ակին՝ Քրիստոսի ետ պիտի վերադառնայ: Մենք «Ան» ըլլալով հանդերձ, մեր խաւարամտութեան հետեւանք, գիտակից չենք այդ իրողութեան եւ մեր

այդ տգիտութեան պատճառով պարապ տեղ կը չար-
չարուինք: Այն անձը որ ջանք կ'ընէ եւ Յիսուսի նման
Քրիստոս իր մէջ լրիւ կը յայտնաբերէ ճանչցած
կ'ըլլայ իր ճշմարիտ էութիւնը:

Ահա՛, աս էր հնադարեան Յոյն փիլիսոփային
ըսածը. «Ծանիր զքեզ»:



Այա թէ ասի՞ցես,
թէ ո՞ր ճանա՞ջեմ շնա՝
եւ ո՞ր նա շիս ճանա՞ջէ,
գիտաւ՞որ շի Տէր շարիսս ամենե՞օրն ճանա՞ջէ,
եւ որ ստեղծ շճո՞րն՞ ամենե՞օրն
նա գիտէ շամենա՞յն,
եւ շատե՞օրն էր աբա՞նջի
լուս գործս իր:

(Առաւիճ Սողոմոնի ԻԴ:12)

ՀԱՄԱՐ 77

Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ դաշտ եկաք: Որպէսզի
Հովէն շարժող եղեգը տեսնե՛ք: Եւ նուրբ
Հանդերձ Հագած մարդ տեսնե՛ք: Ահա՛, ձեր
Թագաւորները եւ ձեր աւագները, անոնք են որ
նուրբ Հագուստներ կը Հագուին եւ պիտի
չգիտնան ճշմարտութիւնը»:

Յիսուս Քրիստոսի մեզի սորվեցուցածները շատ
պարզ են: Ամբողջ Ս. Գիրքին մէջ մեզի տրուած դա-
սերը կարելի է միայն մէկ էջի մէջ ամփոփել: Սակայն,
որովհետեւ մարդուն միտքը աշխարհիկ հետապնդում-
ներով փթացած է, կարող չէ անոնց ճշմարտութիւնը
հասկնալ: Ժիշդ այդ պատճառով ալ Յիսուս հազարու-
մէկ օրինակներով եւ առիթներով նոյն իմաստասիրու-
թիւնները կրկնած է: Եթէ վերելի համարը վերլուծենք
պիտի տեսնենք, թէ դաշտը փոխաբերաբար կը ներկա-
յացնէ աշխարհը, «Հովէն շարժող եղեգը»-ն ալ մարդուն
առօրեայ զբաղմունքները եւ մտահոգութիւնները:
Որով Յիսուսի այդ հարցումին փոխաբերական իմաս-
տըն ալ կ'ըլլայ «միթէ աշխարհ եկած էք միա՞յն
առօրեայ զբաղումներուն համար»: Իսկ նուրբ հանդերձ
հագած մարդիկն ալ կը ներկայացնեն մարդոց իրենց
ստացուածքներուն կապուածութիւնը: Յիսուս «պիտի
չգիտնան ճշմարտութիւնը» բառերով ալ բացայայտո-
րէն կ'ըսէ, թէ, մարդկութիւնը իր բռնած այս ընթաց-
քով, պիտի չկարողանայ հասկնալ՝ «տեսնել» ճշմար-
տութիւնը, որով արժանի պիտի չըլլայ յաւիտենական
կեանքի՝ փրկութեան պարգեւին:



ՀԱՄԱՐ 78

Բազմութեան մէջէն կին մը անոր ըսաւ. «Օրհնեալ է այն արգանդը, որ Քեզ ծնանեց եւ երանի այն կուրծքերը որ Քեզ սնուցանեցին»: Ան ըսաւ անոր. «Օրհնեալ են անոնք որոնք Հօր խօսքը կ'իմանան եւ զայն կը պաշէն: Որովհետեւ պիտի գան օրեր երբ պիտի ըսէք. «Օրհնեալ է այն արգանդը, որ չէ յղացած եւ այն կուրծքերը որ չեն ծծուած»»:

Անտարակոյս օրհնեալ է Մարիամ, որ Յիսուսի մայրն էր: Հրեշտակն էր որ Մարիամին ըսաւ. «Դուն կ'իներուն մէջ օրհնեալ ես»: Հրեշտակը նաեւ ըսաւ. «Մի՛ վախնար, Մարիամ, որովհետեւ շնորհք գտար Աստուծոյ քով»: Մարիամ այդ օրհնութեան արժանացաւ, որովհետեւ ան շնորհալի էր, նաեւ իր երկնային Հօր կամքը կը կատարէր: Ճիշդ է թէ կնոջ ըսածը Մարիամի համար էր, բայց անուղղակիօրէն ակնարկութիւնը Յիսուսին էր: Յիսուսի պատասխանը, իրեն եղած գովեստին համար, բացարձակապէս հպարտութիւն ցոյց չէր տար, ինչ որ արդիւնքն է իր հեղութեան եւ խոնարհութեան: Ըստ Յիսուսի պատասխանին՝ «Օրհնեալ են անոնք որոնք Հօր խօսքը կ'իմանան եւ զայն կը պաշէն», եթէ մենք ալ կը փափաքինք «օրհնեալ» ըլլալ, Յիսուսի բոլոր սորվեցուցածները, որոնք Յիսուսի միջոցաւ մեզի տրուած Հայր Աստուծոյ խօսքերն են, պարտ ենք հասկնալ եւ պահել: Իսկ այդ խօսքերը պահել կը նշանակէ զանոնք մեր կեանքի տեւողութեան կիրարկել: Որովհետեւ համայն մարդկութիւնը Յիսուսի սորվեցուցածները իմանալով հանդերձ զանոնք չ'իւրացնեն եւ չ'ի կիրարկեն, որով «օրհնեալ» չէ: Եւ եթէ «օրհնեալ» չէ, չարչարանքի եւ տառապանքի կ'ենթարկուի:

Այս համարին վերջին նախադասութիւնը՝ «Օրհ-

Նեալ է այն արգանդը, որ չէ յղացած եւ այն կուրծքերը որ չեն ծծուած» կը համապատասխանէ Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքին.

«Եւ ահա մէկնեցա՛ն 'ի միմեանց առնակինն եւ կոյսն զի կոյսն Հոգայ զՏէառն զի իցէ «որք մարմնով եւ Հոգւով եւ առնակինն Հոգայ զաշխարհիս՝ թէ ո՛րպէս Հաճոյ լիցի առն իւրո՞մ» : (Լ. Արնշացի Է.34)

«Նոյնպէս տարբերութիւն կայ ամուսնացած կնոջ եւ կոյսին միջեւ. չամուսնացած կինը կը Հոգայ Տէրոջ բաները, որպէսզի ինք սուրբ ԸԼԼայ մարմինով ու Հոգիով իսկ ամուսնացած կինը կը Հոգայ աշխարհի բաները, թի ի՛նչպէս Հաճեցնէ իր ամուսինը»:



ԱՀԱ ԱՐԴ ԶԱՅԱ ԳՏԻ,
ԶՈՐ ԱՐԱՐ ԱՍՏՈՒԱԾ ԶԱՐԴՈՒՆ ՈՒՂԻՂ,
ԵՒ ԱՌՔԱ ԽՆԴՐԵԱԾԻՆ
ԶԽՈՐՀՈՒՐԴԱ ՉԱՐՈՒԹԵԱՆ

(Բանք Ժողովողին է:30)

ՀԱՄԱՐ 79

Յիսուս ըսաւ. «Ան որ աշխարհը գիտէ, մարմինը գտած է, եւ ան որ մարմինը գտած է աշխարհ անոր արժանի չէ»:

Հետաքրքրական են Յիսուսին զանազան օրինակներով ըրած կրկնութիւնները:

Ընդհանուր սեղծագործութիւնը Աստուծոյ «մարմին»-ն է: Աստուծոյ մարմնացումը իր Որդին Քրիստոսն է եւ Անոր զանազան արտայայտութիւնները: Ուրեմն ան որ աշխարհը գիտէ, կը նշանակէ թէ աշխարհի ճշմարտութիւնը գիտէ: Պատրանքային զանազանութեան մէջ ան Աստուածային ճշմարտութիւնը՝ միականութիւնը փորձառականօրէն գիտցած է:

«Աշխարհ անոր արժանի չէ»-ին իմաստն ալ այն է, թէ այդ անձը այլեւս վերամարմնանալու պէտք չունի: Մարդուն կեանքին նպատակը այդ կեանքի ընթացքին, Աստուածայայտնութիւնը իրականացնել է: Ահա՛, աս է ամէն անհատի աշխարհիկ պարտականութիւնը: Երբ անհատը միայն Փիզիքականին կը կապուի եւ իր մէջ Քրիստոսը չի յայտնաբերեր արժանի կ'ըլլայ աշխարհիկ կեանքին, այսինքն կը վերամարմնանայ:

Այս համարը տարբեր փոխաբերականութեամբ մըն ալ կարելի է մեկնաբանել: Եթէ Աւետարաններուն մէջի իմաստասիրութիւններուն նկատմամբ նկատողութեան առնենք անհատին հասկացողութիւնը, կարելի է ըսել թէ «Ան որ աշխարհը գիտէ», իր կրօնքին նկատմամբ իր հասկացողութիւնն ալ «աշխարհիկ» բառացի հասկացողութիւն մըն է: «Մարմինը գտած է»-ն ալ կը նշատակէ «մահուան» դատապարտուած հասկացողութիւններ, որ յաւիտենական չեն: Միթէ մարմինն ալ մահկանացու չէ⁶: Յիսուս օգտագործած է «մարմինը» բառը երկու զատ իմաստներով: Երկրորդ անգամ երբ Յիսուս կ'ըսէ. «Եւ ան որ մարմինը գտած է» ակնար-

կութիւն մըն է կրօնքին մէջ Յիսուսի սորվեցուցած ճշմարտութիւններուն՝ թագնուած իմաստասիրութիւններուն՝ «խորհուրդ»-ներուն (mysteries) որոնք ստեղծուած աւանդութիւններուն մէջ «մեռցուած» եւ անհետացած են: Անոնք որոնք այդ կորսուած ճշմարտութիւնները կը «գտնեն» եւ հարկաւ եթէ զանոնք իւրացնեն, Քրիստոսի կը միանան եւ յօժարաբար աշխարհը կը թողուն եւ կ'ունենան յաւիտենական կեանքը: Ահա՛, աս է իմաստը «աշխարհ անոր արժանի չէ»-ին:



ՈՐՊԷԱ ՅՕՊ ԱՄԱՐԱՅԻ
ԵՒ ԱՆՁՐԵՒ 'Ի ՀՈՒՆՁԱ,
ՆՈՅՆՊԷԱ ՈՉ յԱՐԳՈՅ ԱՆՉԳԱՄԻ ՊԱՏԻ:
ՈՐՊԷԱ ԹՈՉՈՒՄԵ ԵՒ ՃՆՃՊՈՒԿԵ ԹՈՎԱԻՆ,
ՆՈՅՆՊԷԱ ԱՆԷԾԵ ԶՈՒՐ ՈՒՄԷ ՈՉ ԵԼԱՆԵՆ:

ՏԵԱՐ ԱՅՐ յԱՆՁՆ ԻՐ ՊԱՆԾԱՅԵԱԼ
ԹԷ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՅԷ,
ԲԱՅ յՈՅԱ ԳՈՅՐ յԱՆՉԳԱՄԻՆ ՔԱՆ 'Ի ՆԱՄ:

(Առակք Սողոմոնի ԻԶ:1-2 եւ 12)

ՀԱՄԱՐ 80

Յիսուս ըսաւ. «Ան որ կը հարստանայ, թող ան
թագաւոր ըլլայ եւ ան որ զօրութիւն ունի թող
ուրանայ»:

Անգամ մը եւս Յիսուս կը բաղդատէ նիւթական
հարստութիւնը եւ հոգեկան հարստութիւնը: Անոնք,
որոնք նիւթական հարստութիւն ունին, կ'իշխեն
բոլորին վրայ: Ահա՛, աս է իմաստը «թող ան թագաւոր
ըլլայ»-ին: Իսկ անոնք, որոնք հոգեկան հարստութիւն
ունին, թող ուրանան «թագաւորութիւնը»՝ աշխարհիկ
նիւթական հարստութիւնը: Հոգեկան հարուստը իր մէջ
Ս. Հոգիի յաւելեալ կենսատու զօրութիւնը ունի: Ահա՛,
աս է իմաստը «որ զօրութիւն ունի»-ին:

Այս համարը կրնայ վերացական իմաստ մը ունե-
նալ: Վերելի մեկնաբանութիւնը կը վերաբերէր նիւ-
թականին, իսկ յաջորդ մեկնաբանութիւնն ալ մտա-
յինին: Այն անձը որուն միտքը «հարուստ» է բազմա-
թիւ խորհուրդներով եւ զգացումներով այդ միտքը
պիտի իշխէ՝ թագաւորէ, անձին վրայ: Իսկ այն անձը որ
իր ներքին Քրիստոսի միջոցով Ս. Հոգիի յաւելեալ
զօրութիւնը ունի, պիտի ուրանայ բոլոր խորհուրդ-
ները եւ զգացումները եւ կերտէ «սուրբ սիրտ» մը:
Ըստ Յիսուսի սորվեցուցածին այն անձը որ «սուրբ
սիրտ» կը կերտէ Աստուած կը տեսնէ:



ՀԱՄԱՐ 81

Յիսուս ըսաւ. «Ան որ ինծի մօտ է կրակին մօտ է, եւ ան որ ինձմէ հեռու է, հեռու է թագաւորութենէն»:

Քրիստոսի այս խօսքը անգամ մը եւս կը չեչտէ Աստուծոյ թագաւորութեան արժանանալու համար անձին մէջ Քրիստոսի յայտնութեան անհրաժեշտութիւնը: Մարդ տարբեր է միւս բոլոր ստեղծագործութեանէն, որովհետեւ Աստուած միայն մարդուն անհատականութիւն տուած է: Ինչպէս այլուր գրուած է (տես «Լոյս Ի Լուսոյ Գ. - Տիեզերական Օրէնքները» գիրքին մէջ «Անհատականութիւն» խորագրեալ Զ. գլուխը՝ էջեր 193-201) անհատականութիւնն ալ, որովհետեւ ստեղծուած է ու ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան ենթակայ է, որով ինքն ալ ենթակայ է երկուութեան: Այս հիման վրայ մարդուն անհատականութիւնն ալ ունի երկու բեւեռներ՝ դրական եւ ժխտական: Ժխտական բեւեռը մարդուն «Ես»-ին՝ սատանային կը ծառայէ, իսկ դրական բեւեռն ալ՝ ներքին Քրիստոսին: Երբ Քրիստոս կ'ըսէ. «Ան որ ինծի մօտ է կրակին մօտ է» կ'ականարկէ այն անձը, որ անտեսած է իր անհատականութեան ժխտական բեւեռը՝ իր «Ես»-ը: Այդ անհատը Քրիստոսի «կրակին» մօտ է: Քրիստոսի կրակը կ'այրէ ամէն տեսակ ժխտական յատկանշութիւնները եւ անհատը կը սրբացնէ: Իսկ Քրիստոսէ հեռու եզոզը յարած է իր անհատականութեան ժխտական բեւեռին եւ կը ծառայէ իր «Ես»-ին: Նման անձ մը արժանի չէ Աստուծոյ թագաւորութեան եւ չատ հեռու անկէ:



ՀԱՄԱՐ 82

Յիսուս ըսաւ. «Պատկերները յայտնուած են մարդոց, եւ լոյսը որ անոնց մէջն է Հօրը Լոյսին պատկերին մէջ թաղնուած է: Ան պիտի յայտնուի, եւ իր պատկերը ծածկուած է Իր Լոյսով»:

Անգամ մը եւս Յիսուս տեղեկութիւն կու տայ ստեղծագործութեան եւ «Որդւոյն»՝ Քրիստոսի նկատմամբ: «Պատկերները» կը ներկայացնեն ստեղծագործութեան մէջի զանազանութիւնը: Միթէ մարդ տեղեակ չէ՞ աշխարհի վրայի զանազանութեան: Ընդհանուր ստեղծագործութիւնը «Հօրը Լոյսին պատկեր»-ն է: Հայր Աստուծոյ Լոյսը տիեզերքի մէջ Աստուծոյ գիտակցութիւնն է: Ընդհանուր ստեղծագործութիւնը Հայր Աստուծոյ երազն է: Այն Լոյսը որ ընդհանուր զանազանութեան մէջն է, է նաեւ ամէն մի անհատի մէջ՝ «պատկերին մէջ թաղնուած է»: Այդ թաղնուած Լոյսը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Եւ «պատկերին»՝ ստեղծագործութեան նպատակն ալ Աստուծայայտնութիւնն է: Ճիշտ ասոր համար Յիսուս ըսած է. «Ան պիտի յայտնուի»: Ահա՛, աս է ինչ որ Յիսուս մեզի սորվեցուց՝ Քրիստոսի յայտնութիւնը մեր մէջ իրականացնել: Երբ Յիսուս կ'ըսէ. «Եւ իր պատկերը ծածկուած է Իր Լոյսով», ակնարկութիւնը մարդու գիտակցութեան համար է, որ Աստուծոյ Լոյսն է, բայց ընդհանուր առմամբ մարդ չ'արտօնէր որ ան իր մէջ լրիւ յայտնուի: Այդ սահմանափակ յայտնուած գիտակցութեամբ է, որ մարդ արարած կը գիտակցի զանազանութեան եւ կը կապուի անոնց կարծելով թէ «պատկերը»՝ «երազը»՝ պատրանքը ճշմարտութիւն մըն է: Ահա՛, աս է որ պատկերին ճշմարտութիւնը, որ Քրիստոսն է, մեզմէ ծածկուած է:

Անտարակոյս այս համարին մէջի բառերը բոլորն ալ ունին իրենց փոխաբերական իմաստները: Բայց

կարելի է այս համարը շատ աւելի խոր փոխաբերական իմաստով մըն ալ մեկնաբանել: Գուցէ «պատկերները» ներկայացնեն մեր կրօնքին մեզի տուած հաւատալիքները: «Լոյսը»՝ ճշմարիտ գիտութիւնը, որ այդ կրօնքին մէջն է, ան «Հօրը Լոյսին պատկերին մէջ»՝ Քրիստոսի սորվեցուցածներուն մէջ թագնուած է եւ բացայայտ չէ: Միթէ Քրիստոս Հօրը Լոյսը չէ՞: Այդ ճշմարտութիւնները պիտի յայտնուին բոլոր անոնց, որոնք արժանի են այդ յայտնութեան: Ահա՛, աս է իմաստը «Ան պիտի յայտնուի»-ին: Իսկ բոլոր անոնք, որոնք արժանի չեն գիտնալու այդ ճշմարտութիւնը, որ ծածկուած պիտի մնայ անոնց գիտակցութենէն: Որովհետեւ մարդուն գիտակցութեան մակարդակը իր ներքին Քրիստոսէն կախեալ է եւ Քրիստոսն ալ Աստուծոյ Լոյսն է աշխարհի վրայ, Քրիստոս է, որ արժանի չեղողներէն այդ գիտութիւնը թագնուած պիտի պահէ:



Մի ՊԱՐԾԻՐ ԱՊ ՎԱՊԻՒՄ,
ԶԻ ՈՉ ԳԻՏԵԱ ԶԻՆՉ ԾԱԱՆԻՅԻ ԲԵՉ ՎԱՊԻՒՄ:
ԳՈՎԵԱԾԷ ԶԲԵՉ ԸՆԱԿԵՐՆ՝
ԵՒ ՄԻ ՔՈ ԲԵՐԱՆ,
ՕՏԱՐՆ՝ ԵՒ ՄԻ ՔՈ ՇՐԹՈՒՄԸ:

(Առակք Սողոմոնի Իէ:1-2)

ՀԱՄԱՐ 83

Յիսուս ըսաւ. «Երբ դուն կը տեսնես նմանդ, կ'ուրախանաս. բայց երբ կը տեսնես քու պատկերներդ որ քեզի կը յայտնուին - անոնք ոչ կը մենչին եւ ոչ ալ երեւան կու գան - ո՛րքան պիտի հանդուրժես»:

Դարձեալ շատ հետաքրքրական համար մը: Առաջին նախադասութեան՝ «Երբ դուն կը տեսնես նմանդ, կ'ուրախանաս»-ին իմաստը այն է, թէ մարդ իր բռնած ընթացքէն, իր ապրելակերպէն, իր կենցաղէն եւ իր կերտած բնութենէն գոհ է: Անոնք իր դատողութեան եւ զատողութեան հետեւանքն են եւ կը ներկայացնեն անհատին անձնաւորութիւնը ու նկարագիրը: Անոնք կը ներկայացնեն նաեւ իր ամբարած հաւատալիքները, որոնք ինք կը կարծէ թէ ճշմարտութիւն են: Եթէ անհատը անոնցմով ուրախ չէր, ամէն ջանք ի գործ կը դնէր զանոնք փոխելու համար: Մարդուն կերտած այդ անձնաւորութեան մէջ կան թէ՛ լաւ եւ թէ՛ վատ նկարագիրներ: Անոնք, անձին ենթադիտակցութեան մէջ տեղաւորուած, զինք կը կառավարեն՝ առանց անձին գիտակցութեան: Անձին նկարագրին զանազան երեւոյթները կը ներկայացնեն անձին զանազան «պատկերներ»-ը: Պէտք չէ մոռնալ թէ «նկարագիր» բառին մէջ «նկար» բառը կայ, որ պատկեր կը նշանակէ: Յիսուսի խօսքը. «Երբ դուն կը տեսնես նմանդ, կ'ուրախանաս»-ը ակնարկութիւն է թէ անհատը իր նկարագրին եւ հաւատալիքներուն համաձայն կը հասկնայ իր կեանքի պատահարները կամ կարգացած իմաստասիրութիւնները եւ կ'ուրախանայ: Անոնք իրենց ազդեցութիւնը կ'ունենան անհատին «զօրութեան մարմնին» վրայ, կը փոխեն անոր թրթռացումի յաճախականութիւնը: Թրթռացումի փոփոխ յաճախականութիւններ տեղեկութիւն կը պարունակեն: Նման տեղեկութիւններ

ոչ կ'անհետանան՝ «կը մեռնի»-ն, ոչ ալ բացայայտ կը յայտնուին եւ թագուն կը մնան անձին հոգիին մէջ: Ինչպէս այլուր գրուած է, մարդ իր զօրութեան մարմնին թրթռացումի յաճախականութեան ներդաշնակ յաճախականութիւն ունեցող պատահարները իրեն կը քաշէ եւ անոնց կ'ենթարկուի: Ահա՛, աս է իմաստը «Ինչ որ ցանես ան ալ կը հնձես»-ին: Երբ մարդ արարած կը կերտէ վատ նկարագիր մը եւ ըստ այնմ կ'ապրի, անտարակոյս ինք ալ անոնց յառաջ բերած անբաղձալի պատահարներուն պիտի ենթարկուի: Անհատին իր կեանքի ընթացքին տեղի ունեցած բոլոր պատահարները իր կերտածներն են՝ «պատկերները որ իրեն կը յայտնուին»: Երբ անձը Յիսուսի սորվեցուցածներուն նկատմամբ խոր հասկացողութիւն մը կը կերտէ քան թէ՝ մակերեսային, այն ատեն «Պատկերները որ կը յայտնուին»-ը կրնայ ըլլալ իր բնութեան վատ «պատկերները»՝ նկարագիրներուն յայտնութիւնը, որ ինք առաջուց զանոնք բաղձալի կը նկատէր: Անհատը «ո՛րքան պիտի հանդուրժէ» այդ յայտնուած նկարագիրներուն եւ անոնց յառաջ բերած պատահարներուն: Արդեօք ան պիտի կարենայ զանոնք ընդունիլ եւ ջանալ իր դասը սորվիլ եւ իր «պատկերները»՝ նկարագիրը փոխել, թէ ոչ պիտի նստի եւ իր ճակատագրին համար պիտի լայ եւ ուրիշներ պիտի մեղադրէ:



ՀԱՄԱՐ 84

Յիսուս ըսաւ. «Ադամ ստեղծուեցաւ անհուն զօրութենէ եւ հարստութենէ, սակայն ձեզի արժանի չէր: Եթէ ան արժանի ըլլար մահը չի պիտի գիտնար»:

Այս համարին մեկնաբանութիւնը բաւականին խրթին կը թուի: Համարին առաջին մասը որոշ չափով բացայայտ է: Ընդհանուր ստեղծագործութիւնը, ներառեալ մարդը՝ Ադամ, անհուն զօրութենէ ստեղծուեցան: Անհուն զօրութիւնը Աստուծոյ զօրութիւնը՝ Ս. Հոգին է: Հարստութիւնն ալ կը ներկայացնէ ստեղծագործութեան դարերու ընթացքին կուտակած բարեշրջման «գիտութիւնը»: Պէտք չէ մոռնալ, որ մարդը՝ Ադամ, ստեղծագործութեան գազաթնակէտն է եւ ստեղծագործութեան մէջ վերջինը: Հետեւաբար մարդ իր ծիներուն (genes) մէջ կը պարունակէ ընդհանուր ստեղծագործութեան գիտութիւնը: Եթէ մօր մը արգանդին մէջ աճող սաղմը իր աճման զանազան հանգրուաններուն տեսնելու առիթը ունենանք, պիտի նշմարենք որ ան նախ ձուկի կը նմանի, ապա՝ մողէզի, յետոյ ալ թռչունի: Միայն յղութեան երրորդ ամիսէն վերջն է որ սաղմը կամաց կամաց մարդկային ձեւ կը ստանայ: Հետեւաբար Աստուծոյ ստեղծագործութեան՝ բարեշրջման ընդհանուր «հարստութիւն»-ը մարդուն մէջ ամփոփուած է:

Այս համարին երկրորդ մասը հասկնալ կը թուի քիչ մը աւելի դժուար ըլլալ: Երբ Յիսուս կ'ըսէ. «սակայն ձեզի արժանի չէր» առաջին հերթին անիմաստ կը թուի, որովհետեւ Յիսուսի առաքեալները գոյութիւն չունէին Ադամի տեսն: Բայց կարելի է հետեւեալ ձեւով մեկնաբանել. «սակայն ձեզի նման ըլլալու արժանի չէր», որով ընդհանուր համարին իմաստը բացայայտ կ'ըլլայ: Յիսուս Քրիստոս իր առաքեալ-

ները յաւիտենական կեանքին գաղտնիքները տալու արժանի նկատեց: Աղամ անհնազանդ գտնուեցաւ եւ սատանային՝ իր «Շս»-ին փափաքը կատարեց, յաւիտենական կեանքի գաղտնիքը ստանալու արժանի չեղաւ: «Եթէ ան արժանի ըլլար» Աստուած իրեն պիտի տար յաւիտենական կեանքի արժանանալու գաղտնիքները՝ Իսկ եթէ ան այդ գաղտնիքները ստանար «մահը չի պիտի գիտնար»:



Անշն յագեալ՝
ՉԽՈՐԻՍԽ ԵՒ ՉԱԵՈՐ ԱՐՀԱՄԱՐԷ,
ԲԱՅԺ ԱՆՁԻՆ ԿԱՐՕՏԵԼՈՅՐ
ԵՒ ԴԱՁՆ ԻՔՐԵՒ ՉԲԱԴՅՐ ԹՈՒԻ:
ՈՐՊԷԱ ԹՈՉՈՒՆ ՈՐ ԹՈԱՆԻ՝ Ի ԲՈՒՆՈՅ ԻՒՐԱՄԷ,
ՆՈՅՆՊԷԱ ԵՒ ՄԱՐԴ ԱՏՐԿԱՆԱՅ՝
յՈՐԺԱՄ ՕՏԱՐԱՆԱՅ յԻՐԱՄԷ ՏԵՊՈՅ:

(Առակք Սողոմոնի Իհ:7-8)

ՀԱՄԱՐ 85

Յիսուս ըսաւ. «Աղուէսները իրենց որջերը ունին եւ թուշոնները իրենց բոյները, բայց մարդու որդին իր գլուխը դնելու եւ հանգչելու տեղ մը չունի»:

Այս համարին իմաստը հասկնալու համար կարելորդ է գիտնալ թէ Յիսուս ինչ պայմաններու տակ եւ որու ըսաւ այս խօսքը: Բարեբախտաբար Յիսուսի նոյն խօսքը ներկայացուած է թէ՛ Ղուկասի եւ թէ՛ ալ Մատթէոսի Աւետարաններուն մէջ:

«Եւ մինչդեռ երթային նո՛ւա՝ ի ճանապարհի, առեռան ցնաւ. Եկե՛ց պէնի խո՛րհրդայր եւ երթայցեալ: Ըսեց ցնա Յիսուս. Ըղո՛ւտաց՝ ո՛րջի գոն, եւ թուշոնաց երկնից՝ դատարի, եւ որդո՛ւյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր դիցե պիտո՛ւն: Ըսեց ցմեա եւս. Եկ պէնի իմ: Եւ նա՛ առեւ. Տէր՝ Հրաման ցոր ինչ երթալ նախ թաղե՛լ պապ իմ: Ըսեց ցնա Յիսուս. Թո՛ղ պիտո՛ւտան թաղել պիտո՛ւտա իրեանց, եւ դո՛ւ ե՛րթ՝ պարմեա՛ պարկայոթեան Ըսորոջոյ: Ըսեց եւ ա՛յլ ոմն. Եկե՛ց պէնի խո՛րհրդայր, բայց նախ Հրաման ցոր ինչ՝ Հրաժարե՛լ ի ցանե իմմէ: Ըսեց ցնա Յիսուս. Ո՛չ ո՛վ արկանե յեռն պաճառի, եւ Հայիցի յեհոս, երբե յաջողեալ իցե պարկայոթեան Ըսորոջոյ»: (Ղուկաս Թ: 57-62)

«Երբ անոնք ճամբան կ'երթային, մէկը ըսաւ անոր. «Տէր, պիտի հետեւիմ քեզի՝ ո՛ւր որ երթաս»: Յիսուս ըսաւ անոր. «Աղուէսները որջեր ունին, ու երկիրքի թըռչունները՝ բոյներ, բայց մարդու Որդին տեղ մը չունի՝ ուր հանգչեցնէ իր գլուխը»: Ուրիշի մըն ալ ըսաւ. «Հետեւէ՛ ինձի»: Իսկ ան ըսաւ. «Տէր՝ արտօնէ՛ ինձի, որ նախ երթամ՝ թաղեմ հայրս»: Յիսուս ըսաւ անոր. «Թո՛ղ

մեռելներուն՝ թաղել իրենց մեռելները, իսկ դուն գնա՝
ու քարոզէ՝ Աստուծոյ թագաւորութիւնը»։ Ուրիշ մըն ալ
ըսաւ. «Տէ՛ր, պիտի հետեւիմ քեզի. բայց արտօնէ՛ որ նախ
հրաժեշտ առնեմ տանս մէջ եղողներէն»։ Յիսուս ըսաւ
անոր. «Ո՛չ մէկը՝ որ կը դնէ ձեռքը մաճիւն վրայ ու
ետեւ կը նայի՝ յարմար է Աստուծոյ թագաւորութեան»։

(Տես նաեւ Մատթէոս Ը:19-22)

Ըստ Ղուկասի Աւետարանին Յիսուս երեք անձի
հետ կը խօսի, որոնք կը փափաքին Իրեն հետեւիլ։ Յի-
սուս երեքին ալ տարբեր տարբեր պատասխաններ կու
տայ։ Թովմասի Աւետարանին 85-րդ համարին պարու-
նակութիւնն ալ այդ երեք պատասխաններէն մին է։
Ըստ Յիսուսի, հարցը միայն Իրեն հետեւիլը չէր, այլ
Աստուծոյ թագաւորութեան արժանի ըլլալու պատրաս-
տակամութիւնն է։ Ըստ Մատթէոսի Աւետարանին այս
երեք անձերէն առաջինը ունեւոր Հրեայ դպիր մըն է։
Յիսուս շատ լաւ գիտէր թէ այդ անձը իր տունէն,
ստացուածքներէն եւ հանգիստէն բաժնուելու պատրաստ
չէր։ Անոր Համար 85-ի մէջ գրուած պատասխանը
տուաւ։ Ասոր իմաստը աշխարհի բոլոր ինչքերէն ձեր-
բազատուիլ է։ Երկրորդ անձը Յիսուս Ինք Իրեն հետե-
ւելու հրաւիրեց։ Ան ալ նախ երթալ եւ իր հայրը թաղել
փափաքեցաւ։ Միթէ մեր մեռեալները թաղել մեր
պարտականութիւնը չէ՞։ Աշխարհին հանդէպ այդ ան-
հրաժեշտ կապուածութիւնն իսկ Աստուծոյ թագաւորու-
թեան արժանանալու արդելք կը հանդիսանայ։ (տես նաեւ
Հատոր Գ. «Մեռելները Թաղեն Մեռելները» խորագրեալ գրութիւնը՝
էջ 111) Երրորդ անձը պատրաստ էր ամէն ինչ թողուլ եւ
Յիսուսի հետեւիլ, սակայն միայն փափաքեցաւ իր հա-
րազատներէն հրաժեշտ առնել։ Անոր փափաքը շատ
տրամաբանական եւ բնական կը թուի ըլլալ։ Յիսուսի
տուած պատասխանը ցոյց կու տայ թէ Աստուծոյ
թագաւորութեան արժանանալու համար որեւէ զիջում
գոյութիւն չի կրնար ունենալ։ Աս կը յիշեցնէ Հին
Կտակարանի Սոթոմ եւ Քոմորի կործանումը եւ Ղով-

տին ու իր ընտանիքին բախուստը: Ղովտին կինը ետ նայեցաւ ու արձան դառձաւ: Փրկութեան չարժանացաւ: Այս հիման վրայ, եթէ կ'ուզենք Աստուծոյ թագաւորութեան՝ յաւիտենական կեանքի արժանանալ, անհրաժեշտ է որ ձերբազատուինք մեր բոլոր աշխարհիկ կապուածութիւններէն՝ ընտանիք, գործ, տուն-տեղ, ստացուածք ...: Միթէ անոնց բոլորն ալ պատրանքային չե՞ն:

Այս համարին մէջ Յիսուս որպէս օրինակ աղուէսը եւ թռչունները կ'օգտագործէ: Ասոնք ալ իրենց փոխաբերական իմաստները ունին: Աղուէսը անասուններուն մէջ ամենէն խորամանկը կը նկատուի: Հետեւաբար խօսքը իմացական մարդուն համար է, որ իր կեանքի ընթացքին ինք իր իմացականութեան կը վստահի, քան թէ իր ներքին Քրիստոսին: Ան իր իմացականութեամբ իր «որջ»-ը ունի եւ այդ ունեցած «որջ»-ը աշխարհն է ու իր աշխարհիկ կեանքը: Թռչունները իրենց բոյները բարձր տեղեր կը շինեն: Որովհետեւ կը թռչին ամէն ինչ վերէն կը դիտեն: Անոնք, որոնք իրենց գիտութեամբ իրենք զիրենք հասարակ ժողովուրդէն վեր կը նկատեն, բարձր պաշտօններ կը գրաւեն եւ իրենց այդ «բոյն»-երով կը բաւարարուին: Բայց անոնք, որոնք իրենց ներքին Քրիստոսին կը յարին, անոնք մարդոց որդիներն են, որովհետեւ մարդուն բուն նպատակը Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելն է: Անոնք ոչ կը վստահին իրենց իմացականութեան՝ խորամանկութեան, ոչ ալ կապուած են աշխարհիկ կեանքին: Անոնք բարձր պաշտօններ չեն փափաքիր, հետեւաբար անոնք «գլուխը դնելու եւ հանգչելու տեղ մը չունի»-ն:



ՀԱՄԱՐ 86

Յիսուս ըսաւ. «Ողորմելի է այն մարմինը, որ մարմինսն կը վստահի, եւ ողորմելի է այն հոգին որ այս երկուքին կը վստահի»:

Այս համարին պարունակութիւնը կը թուի նախորդին շարունակութիւնը ըլլալ: Նախորդին մէջ Յիսուս իր ըսած երեք խօսքերով Աստուծոյ թագաւորութեան՝ յաւիտենական կեանքի արժանանալու համար աշխարհիկ բոլոր կապուածութիւններէ ձերբազատուելու անհրաժեշտութիւնը յայտնի կ'ընէր: Այս համարին մէջ Յիսուս նաեւ կ'ըսէ ձերբազատուելի մեր մարմինէն: Ան որ մարմինին կապուած է արժանի չըլլար Աստուծոյ թագաւորութեան: Ահա՛, «Ողորմելի է այն մարմինը, որ մարմինսն կը վստահի»-ին իմաստը աս է: Մարդ կը կարծէ թէ ինք իր մարմինն է: Ո՛չ, մարդը այդ մարմինը գործածողն է: Իր մարմինը իրեն կը պատկանի, բայց ինք իր մարմինը չէ: Մարդ թէեւ իր մարմինը կը գործածէ, սակայն անոր կապուած պէտք չէ ըլլայ: Անտարակոյս, զայն պէտք է խնամէ, բայց ոչ «պաշտէ»: Մարդուն ճշմարիտ էութիւնը իր հոգին է: Հոգին անմահ է: Անոնք, որոնք իրենց հոգին՝ անձը իրենց մարմինն կը վստահին, այդ պատճառով ալ յաւիտենական կեանքի համար իրենց մարմինն «յարուրթեան»-ը կը սպասեն: Մինչդեռ յարութիւնը՝ յաւիտենական կեանքը, մարմնային գոյատեւման հետ որեւէ կապ չունի: Ան միայն հոգեկան է: Ահա՛, աս է «ողորմելի է այն հոգին որ այս երկուքին կը վստահի»-ին իմաստը: «Երկուքը» մարդուն անհատականութիւնը եւ իր մարմինը կը ներկայացնէ:

Այս համարին վերեւի մեկնաբանութիւնը մեծամասնութեամբ անոր բառացի իմաստին վրայ հիմնուած է: Արդեօք կարելի⁶ է, որ ան ամբողջովին տարբեր եւ փոխաբերական իմաստ մը եւս ունենայ: Մարմինը

ի՞նչ կրնայ ներկայացնել: Անգլերէն լեզուին մէջ «body of knowledge» ասացուածքը նիւթի մը նկատմամբ գոյութիւն ունեցող բոլոր գիտութիւններուն ամբողջութիւնը կը ներկայացնէ: Նկատի ունենալով որ մեկնաբանութիւններու համար Թովմասի աւետարանին անգլերէն թարգմանութեան մէկ օրինակը հիմք առնուած է, հոն գործածուած «body» բառին հայերէնի մէջ համապատասխանող բառը «մարմին» բառն է:

Յիսուսի սորվեցուցած գիտութիւնը հոգեւոր կեանքի, յաւիտենական կեանքի եւ Աստուծոյ թագաւորութեան արժանանալու գիտութիւնն էր: Հետեւաբար հոգեւոր կեանքի նկատմամբ Յիսուսի տուած գիտութեան ամբողջականութիւնը այս համարին մէջ յիշւած մարմիններէն մին կը ներկայացնէ: Երկրորդ մարմինն ալ կը ներկայացնէ մարդուն հոգեւոր կեանքի նկատմամբ ամբարած հաւատալիքները:

Այս հաւատալիքները ճշմարտութեան հետ որեւէ կապ չունին, որովհետեւ անոնք արդիւնքն են միայն անոնց մակերեսային հասկացողութեան եւ ոչ թէ անոնց վերացական եւ փոխաբերական իմաստներուն: Երբ անհատը իր հոգեկան աճումին համար իր ամբարած հաւատալիքներուն եւ մակերեսային հասկացողութեան կը վստահի, ինքի զուր կը յուսայ յաւիտենական կեանքի արժանանալ: Հետեւաբար այդ անձը «ողորմելի» է: Գրուածներուն խոր իմաստները կարելի է միայն փորձառութեամբ եւ Ս. Հոգիի շնորհած իմաստութեամբ հասկնալ եւ ոչ պարզ մարդկային իմացականութեամբ: Երբ «հոգին»՝ անձը իր իմացականութեամբ «այս երկուքին կը վստահի», այսինքն իր հաւատալիքներուն եւ իր կարծեցեալ ճշմարտութեան՝ ֆիզիքականին, «ողորմելի» է:



ՀԱՄԱՐ 87

Յիսուս ըսաւ. «Հրեշտակները եւ մարգարէները քեզի կու գան եւ քեզի պիտի տան այն ինչ որ քեզի կը պատկանի. եւ դուն ալ կու տաս այն ինչ որ քու ձեռքդ ունիս եւ դուն քեզի կ'ըսես. «Ո՛ր օրը պիտի գան ու առնեն այն ինչ որ իրենցն է»»:

Հրեշտակները եւ մարգարէները կը ներկայացնեն Ս. Հոգիի զօրութիւնը եւ գիտութեան շնորհքը: Անոնք մեզի պիտի տան հասկացողութիւն: Երբ մարդ արարած ձգմարտութեան եւ յաւիտենական կեանքի նկատմամբ խոր հասկացողութեան մը կ'արժանանայ, քան թէ ան Աւետարաններու մէջի Յիսուսի սորվեցուցածներուն միայն մակերեսային հասկացողութեամբը բաւարարւի, ինք ալ պատրաստ կ'ըլլայ ձերբազատուիլ իր բոլոր աշխարհիկ հետապնդումներէն ու հարստութենէն: Ահա՛, վերեւի վերլուծումը «դուն ալ կու տաս այն ինչ որ քու ձեռքդ ունիս»-ին բացատրականը: Այդ հանգրուանին մարդուն կեանքը կ'ըլլայ մաքուր զին մարդասէր, կարեկից եւ ինքնագոհ: Իսկ վերջին նախադասութեան «Ո՛ր օրը պիտի գան ու առնեն այն ինչ որ իրենցն է»-ին իմաստն ալ այն է, թէ անհատը միայն մէկ տենչանք ունի եւ ան ալ Քրիստոսի իր մէջ Յայտնութիւնն է: Այն ատեն անհատը կը միանայ Քրիստոսի եւ կը լուծուի անոր մէջ: Միթէ բոլոր նիւթեղէնները զօրութենէ յառաջ չե՞ն եկած: Հետեւաբար ընդհանուր աշխարհը ամէն ինչ արդէն Քրիստոսի արտայայտութիւններն են, հետեւաբար «իրենցն է»:



ՀԱՄԱՐ 88

Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ գաւաթին դուրսը կը լուսաւ: Չես հասկնար թէ ան որ մէջը շինեց նաեւ դուրսը շինեց»:

Առաջին հերթին այս համարը կը թուի կանոնական Աւետարաններուն մէջ ինչին կրկնութիւնը ըլլալ: (Տես Մատթէոս ԻԳ:25) (Տես նաեւ Հատոր Գ. «Կեղծաւորութեան Դատապարտութիւնը» խորագրեալ գրութիւնը՝ էջեր 198-208 նամանաւանդ էջ 204) Այս համարին մէջ, որքան որ Յիսուս անգամ մը եւս գաւաթը եւ գաւաթին ներսն ու դուրսը որպէս օրինակ կ'օգտագործէ, սակայն երկրորդ նախագասութիւնը կը թուի ամբողջովին տարբեր իմաստ մը տալ եւ համապատասխանել կանոնական Աւետարանին մէջի հասկացողութեան:

Գաւաթին դուրսը խորհուրդին «մակերեսային» մասն է, իսկ անոր մէջն ալ՝ «խոր»-քը: «Ինչո՞ւ գաւաթին դուրսը կը լուսաւ»-ին իմաստն է. ինչո՞ւ ըստածներուն միայն մակերեսայինին արժէք կու տաս եւ անոնց խորքը չես թափանցեր, եւ ջանք ալ չես ըներ որպէսզի անոնց մէջ թազնուած իմաստասիրութիւնները հասկընաս: Ան որ թազնուած իմաստասիրութիւնը տուած է, անոր տուած է նաեւ մակերեսային իմաստ մը, որ ճշմարտութիւնը չի ներկայացներ, պարզապէս քողարկում մըն է: Բոլոր կրօնքներուն մէջ իմաստասիրութիւնները նման ձեւով տրուած են: Մին, մակերեսային հասկացողութիւն, իսկ միւսը՝ փոխաբերական, խոր հասկացողութիւն: Անոնք, որոնք պատրաստ չեն թազուն իմաստները հասկնալ, պէտք չէ հասկնան, մինչեւ որ արժանի ըլլան: Հակառակ այն իրողութեան, թէ բոլոր կրօնքները նոյն իմաստասիրութիւնները կը սորվեցընեն, անոնց մակերեսային հասկացողութեան հետեւանք ունինք բազմաթիւ կրօնքներ, որոնք կը թուին իրարմէ ամբողջովին տարբեր ըլլալ: Խաւարամտութեան պատ-

ճառով ալ կրօնական պատերազմներու պատճառ
կ'ըլլան: Ահա՛, այսօրուայ մարդկութեան ջաջախիչ
մեծամասնութեան իր կրօնքին նկատմամբ հասկացո-
ղութիւնը աս է, միայն մակերեսային, անկախ իր
պատկանած կրօնքին:



Գործք արդարո՞՞ չեանս անեն,
եւ յՏՈՒԴ ամարճՏԱՅ մեղս:
ԶճԱՆՊԱՐԸՍ ԿԵՆԱՅ ԴԱՇԷ ՏԷՐ:
ԽՐԱՏ ԱՌԱՆՅ յԱՆԴԻՄԱՆՈՒԹԵԱՆ՝
մոլար է:

ԾԱԾԿԵՆ ՉԹՇՆԱՄՈՒԹԻՒՄ ՇՐԹՈՒՄ արդարք.
ԻԱԿ ՈՐ 'Ի ՎԵՐ ՀԱՆԵՆ ՉՔԱՄՔԱՍԱՆ՝
անՁԳԱՄՔ ԵՆ:

(Առակք Սողոմոնի Ժ: 16-18)

ՀԱՄԱՐ 89

Յիսուս ըսաւ. «Ինծի եկէք, որովհետեւ լուծու
թեթեւ է եւ իշխանութիւնս հեղահամբոյր, եւ
դուք ձեզի համար Հանգստարան պիտի
գտնէք»:

Յիսուսի այս խօսքերը կանոնական Աւետարան-
ներու մէջ ալ նոյնութեամբ ներկայացուած են: Տես այս
գիրքերուս Հատոր Գ.-ին մէջ «Պարտականութիւն ու
Խնամակալութիւն» խորագրեալ գրութիւնը, էջեր 263-
267 (նամանաւանդ էջեր 266-267):

ՀԱՄԱՐ 90

Անոնք Անոր ըսին. «Ըսէ մեզի թէ դուն ով ես,
որպէսզի քեզի հաւատանք»: Ան ըսաւ անոնց.
«Դուք կը քննէք երկինքը եւ երկիրը եւ չէք
գիտեր թէ ով է ան որ ձեր առջեւն է, եւ չէք
գիտեր քննել այս պահը»:

Շատ հետաքրքրական համար մը, որ հոգեկան
կեանքի նկատմամբ, ընդհանուր մարդկութեան հասկա-
ցողութիւնը կ'ամփոփէ: Մարդիկ իրենց մակերեսային
հասկացողութեամբ կը քննեն՝ կը հասկնան թէ՛ երկնա-
յինը թէ՛ ալ երկրայինը: Միթէ մարդիկ Նիւթոնեան
բնագիտութիւնը (Newtonian physics) որպէս բացարձակ
ճշմարտութիւն չէի՞ն կարծեր: Բայց ամբողջական բնա-
գիտութեան (quantum physics) հետեւանք Նիւթոնեանին
սխալ ըլլալը յայտնի եղաւ եւ այս վերջինին ալ՝
չուարեցուցիչ ըլլալը: Ասիկա երկրայինին քննութեան
մէկ օրինակն է: Նմանապէս մարդ արարած երկնայինի
քննութեան մէջ ալ սխալած է, բայց կը կարծէ թէ ամէն
ինչ որ պիտոյ է, ինք գիտէ: Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Եւ
չէք գիտեր թէ ով է ան որ ձեր առջեւն է»: Եթէ անոնք
իսկապէս հասկցած ըլլային թէ՛ երկնայինը, թէ՛ ալ
երկրայինը, այն ատեն պէտք է հասկնային, թէ Յիսուս

Քրիստոսի ներկայութիւնը կը ներկայացնէր երկնայինին երկրային երեւոյթով, այսինքն Քրիստոսին՝ Աստուծոյն, Յիսուսի միջոցով, մարդու կերպարանքով մարդոց մէջ յայտնութիւնը: Անոնք Յիսուս Քրիստոսի ներկայութեան կարեւորութիւնը չեն հասկնար, ինչպէս նաեւ ներկայ պահուն նշանակութիւնը՝ «եւ չէք գիտեր քննել այս պահը»: Ներկան յաւիտենական է:



Մի շգտի՝ եթէ սնանկ ի՞նչ
ընդ մեծասն,
այլ քո իմաստութեամբդ
մերժեա՛ր նման:

(Առակք Սողոմոնի ԻԳ:4)

ՀԱՄԱՐ 91

Յիսուս ըսաւ. «Փնտուէ եւ պիտի գտնես: Բայց բոլոր այն բաները որոնց մասին անցեալին Հարցուցած էիր, այն ատեն ես չէի ըսած: Հիմա որ կ'ուզեմ ըսել դուն չես փնտուեր»:

Նման գաղափար մը գրուած է նաեւ Յովհաննու Աւետարանին մէջ Գլուխ ԺԶ., համար 16: (Տես նաեւ Հատոր Գ. «Ս. Հոգիի Գործը եւ Տխրութիւն ու Ուրախութիւն» խորագրեալ գրութիւնը էջեր 371-377) Երբ Յիսուս կ'ըսէ. «Փնտուէ եւ պիտի գտնես», մեզի յանձնարարութիւն մը կ'ընէ: Ի՞նչ է այդ յանձնարարութիւնը: Ան փնտուելն է: Ի՞նչ է, որ պէտք է փնտուենք: Մարդ ճշմարտութիւնը պէտք է փնտուէ եւ մինչեւ որ իր անձնական փորձառութեամբը Զայն չգտնէ, փնտուելէ պէտք չէ դադրի: Իսկ մարդ ի՞նչ կ'ընէ: Զբաղ զանազան աշխարհիկ հետապնդումներով, ճշմարտութիւնը փնտուելու ժամանակ չունի: Ան, իր ամբարած զանազան հաւատալիքներով, հանգիստ կ'ապրի: Այն հասկացողութեամբ, թէ Յիսուս Քրիստոս իր մեղքերուն համար մեռաւ, որով ինքզինք կը նկատէ փրկուած եւ յաւիտենական կեանքի արժանացած: Ուստի ճշմարտութիւնը փնտուելու պէտք չունի: Մարդ, որ պէսզի յաւիտենական կեանքի արժանանայ, իր կեանքի ընթացքին, այսինքն երբ տակաւին այս աշխարհէն չէ հեռացած, ճշմարտութիւնը փնտուելէ պէտք չէ դադրի: Մարդ յաւիտենական կեանքի կ'արժանանայ այս կեանքի ընթացքին՝ ներկային մէջ եւ ոչ թէ իր մարմնոյն մահէն դարեր յետոյ:

Յիսուսի վերեւի խօսքին՝ «Բայց բոլոր այն բաները որոնց մասին անցեալին Հարցուցած էիր, այն ատեն ես չէի ըսած»-ին իմաստը հետեւեալն է: Երբ, այն ինչ որ պիտի ըսուի, անձին հասկնալու կարողութենէն՝ գիտակցութեան մակարդակէն բարձր է եւ անհատը այդ ինչ որ պիտի ըսուի, անոր բուն իմաստը հասկնալու պատրաստ

չէ, ատիկա անհատին չտրուիր: Իսկ եթէ տրուի, կը տրուի միայն թագնուած ձեւով, որպէսզի երբ անհատը հոգեկան կեանքի մէջ հասկնալու արժանի մակարդակի հասնի, զանոնք հասկնայ: Իսկ Յիսուսի խօսքին վերջին մասը՝ «Հիմա որ կ'ուզեմ ըսել դուն չես փնտուեր» համայն մարդկութեան ներկայ վիճակը կը ներկայացնէ: Եթէ նոյնիսկ մարդ տրուած թագուն գիտութիւնը հասկընալու արժանելիութեան հասած է կերտելով պատշաճ կենցաղ՝ փոխան եսասիրութեան մարդասիրութիւն, եւայլ-եւայլն, իր միտքը զանազան մակերեսային հաւատալիքներով կալանաւորուած եւ գոցուած է: Ուստի կը կարծէ, թէ ինք արդէն իսկ փրկուած է, որով պատրաստ չէ Յիսուսի սորվեցուցածներուն թագուն իմաստները հասկնալ: Հետեւաբար ան այլեւս չի փնտուեր:

ՀԱՄԱՐ 92

Յիսուս ըսաւ. «Ան որ սուրբ է շուներուն մի տաք, չըլլայ որ աղբի կոյտին վրայ նետէն. մարդարիսները խոզերուն մի նետէք, չըլլայ որ կոխկրտէն եւ զանոնք փշրէն»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ կանոնական Աւետարաններուն մէջ ալ ներկայացուած են: Տես այս գիրքերուս Հատոր Գ.-ի մէջ «Թագուն եւ Սուրբ Գիտութիւն» խորագրեալ գրութիւնը, էջ 98):

Այս համարը Հատոր Գ.-ին մէջ ինէն յաւելեալ մեկնաբանութեան պէտք չունի: Միայն պատշաճ է երկու խօսք գրել Յիսուսի ընտրած երկու բառերուն նկատմամբ՝ «շունները» եւ «խոզերը»: «Շունները» անոնք են, որոնք այդ սուրբ ու թագուն գիտութեան կարեւորութիւն չեն տար եւ մէկդի կը դնեն: Իսկ «խոզերը» անոնք են, որոնք զանոնք կը խեղաթիւրէն, եւ բզիկ-բզիկ կ'ընեն եւ իրենց եսասէր կենցաղին կը յարմարցնեն:

ՀԱՄԱՐ 93

Յիսուս ըսաւ. «Ան որ կը փնտռէ պիտի գտնէ,
եւ ան որ կը բաղիսէ, անոր պիտի բացուի»:

Այս համարին առաջին մասը յար եւ նման է
վերեւի Համար 91-ին, հետեւաբար յաւելեալ բացատ-
րութեան չի կարօտիր: Իսկ երկրորդ մասը կարելի է
հետեւեալ համարին համապատասխան համարել:

«Ես եմ Դուք, ընդ իս թէ ոչ միանիցէ,
կեցցէ՛, միցէ, եւ ելցէ, եւ ճարա՛կ Գրցէ»:
(Յովհաննոս Ժ:9)

«Ես եմ դուռը. եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՝ պիտի
փրկուի. պիտի մտնէ ու ելլէ, եւ արօտ գտնէ»:

Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է:
Ամէն անհատի ներքին Քրիստոսը «դուռ»-ը՝ միջոցն է
յաւիտենական կեանքին: Անտարակոյս, ան, որ յաւիտե-
նական կեանքը կը գտնէ փրկուած կ'ըլլայ, բայց
հետաքրքրական է գրաբարին մէջ կարդալ «կեցցէ»
բառը, որ կը ներկայացնէ կեանքը, այսինքն յաւիտենա-
կան կեանքը: Այլուր Յիսուս ըսած է. «ան որ փրկուիլ
կ'ուզէ պիտի չփրկուի»: Փրկութիւնը պարզեւ մըն է որ
կը տրուի բոլոր անոնց, որոնք կը յաջողին յաւիտենա-
կան կեանքը գտնել: Այդ ալ միայն բարձր գիտակցու-
թիւն կերտելով եւ Քրիստոս մեր մէջ յայտնաբերելով
կ'ըլլայ: Ճիշդ ասոր համար Քրիստոս կ'ըսէ. «Ես եմ
դուռն» եւ «եւ ան որ կը բաղիսէ, անոր պիտի բացուի»:
«Պիտի մտնէ ու ելլէ»-ն աշխարհիկ կեանքը ապրելով
հանդերձ յաւիտենական կեանքի գիտակցելու եւ անոր
փորձառութիւնը ունենալու նկատմամբ ակնարկու-
թիւն մըն է: Յաւիտենական կեանքը եւ անոր տուած
երանութիւնն ալ «արօտ գտնէ»-ին մէջ ամփոփուած է:
Ներքին Քրիստոս, անձէն ներս Ս. Հոգիի կենսատու
զօրութեան հոսքին, «դուռն» է:

ՀԱՄԱՐ 94

Յիսուս ըսաւ. «Եթէ դրամ ունիս, տոկոսով փոխ մի տար, բայց տուր անոր որմէ ետ պիտի չկարենաս առնել»:

Այս համարին մակերեսային պատգամը կը թուի ըսել, ուրիշներ անձնական շահի համար չչահագործել եւ կարեկից ըլլալ անոնց, որոնք կարօտեալ են: «Դրամ ունիս»-ով կը շեշտուի այս բոլորին նիւթականի նպատակով ըսուած ըլլալը: Արդեօք կարելի է, որ «Դրամ»-ը փոխաբերական իմաստ մը եւս ունենայ: Դրամը մարդուն շատ մը բաներ ընելու կարողութիւնը կու տայ: Յիսուսի սորվեցուցած թագուն գիտութիւններն ալ անհատին գերմարդկային բազմաթիւ կարողութիւններ կու տան: Եթէ անձը զանոնք եսասիրութեամբ անձնական շահի համար օգտագործէ «տոկոսով փոխ» տուած կ'ըլլայ: Անոնց նպատակը միայն Աստուածայայտնութեան ծառայելու համար է եւ ոչ անձնական շահի: Ահա՛, «բայց տուր անոր որմէ ետ պիտի չկարենաս առնել»-ին իմաստը աս է:

ՀԱՄԱՐ 95

Յիսուս ըսաւ. «Հօրը թագաւորութիւնը կը նմանի կնոջ մը, որ քիչ մը թթիւմոր առաւ եւ ալիւրին մէջ պահեց. անկէ խոշոր նկանակներ շինեց: Ան որ ականջ ունի, թող լսէ»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ ներկայացուած են նաեւ կանոնական Աւետարաններուն մէջ: Տես Հատոր Բ. «Խմորին Առակը» խորագրեալ գրութիւնը, էջ 95-96):



ՀԱՄԱՐ 96

Յիսուս ըսաւ. «Հօրը թագաւորութիւնը կը նմանի կնոջ մը, որ սափորով ալիւր կը կրէր: Սափորին կոթը կտարեցաւ եւ ալիւրը ճամբուն վրայ իր յետին թափեցաւ: Ան իր կորուստէն անտեղեակ էր: Երբ տուն հասաւ, սափորը վար դրաւ եւ տեսաւ թէ ան պարապ էր»:

Այս համարին իմաստը հասկնալու համար կարելոր է անոր մէջիները փոխաբերաբար վերլուծել: Նոյնիսկ այդ փոխաբերական իմաստը կարելի է երկու տարբեր մակարդակներու վրայ մեկնաբանել:

Առաջինը հետեւեալն է: Սափորը կրող կինը մարդկութիւնը կը ներկայացնէ, իսկ սափորին մէջի ալիւրն ալ՝ մարդուն տրուած կեանքը: Ալիւրը՝ այդ կեանքը, մարդուն պարզեւուած յաւիտենական կեանքի արժանանալու առիթն է: Ճամբորդութիւնը կամ աւելի ճիշդ է ըսել ճամբան մարդուն կեանքին ընթացքը կը ներկայացնէ եւ տուն հասնին ալ՝ ճամբորդութեան վերջաւորութիւնը՝ մարդուն մահուան ժամը: Որովհետեւ սափորը կը կտորի, այսինքն մարդուն կենցաղը «կտորած» է, կատարելութեան ուղիէն շեղած է, մարդն ալ իր ամբողջ կեանքի ընթացքին կամաց-կամաց իրեն տրուած առիթը կը վատնէ եւ երբ մահը վերջապէս գայ, ինք միայն այն ատեն կ'անդրադառնայ՝ կը հասկընայ, թէ ինք այդ «ճամբուն» վրայ իր կեանքը եւ կեանքին իրեն տուած առիթը վատնած էր:

Երկրորդ մեկնաբանութիւնն ալ այն է, թէ Յիսուս մարդկութեան Աստուծոյ թագաւորութեան թագուն գիտութիւնը տուաւ: Սափորով ալիւրը այդ թագուն գիտութիւնը կը ներկայացնէ: Կինը, որ սափորը կը կրէ, կը ներկայացնէ բոլոր անոնք, որոնք պատասխանատուութիւնը ունին այդ գիտութիւնը աժմէական պահել եւ բոլոր անոնք, որոնք արժանի են անոնց տալ, ինչպէս

Յիսուսի առաքեալները առաջին դարու ընթացքին ըրին: Սափորին կոթին կոտրիլը բոլոր Յիսուսի սորվեցուցածներուն նկատմամբ հիմնական սխալ հասկացողութիւնը կը ներկայացնէ: Այսինքն հասկացողութիւնը «կոտրած» է: Ճամբան կը ներկայացնէ ժամանակը: Ժամանակի ընթացքին կամաց-կամաց Յիսուսի սորվեցուցածներուն խեղաթիւրումն ալ ալիւրին ճամբուն վրայ թափելովը ներկայացուած է: Որովհետեւ այդ գիտութեան կորուստը կամաց-կամաց կորսուեցաւ, այդ գիտութեան պահպանիչները այդ կորուստին չանդրադարձան: «Տուն հասնիլ»-ը ներկան է եւ կը տեսնենք թէ բոլոր քարոզչութիւնները դատարկ են Յիսուսի սորվեցուցած իմաստասիրութիւններէն եւ մեզի խեղաթիւրուած քրիստոնէութիւն մը կը քարոզէի, որ շատ հեռու է Յիսուսի սորվեցուցածներէն:



Առաքեալ դու շնչած բո
’ի Վերայ Զրոժ,
Զի ’ի Բաշտութեան Առիթ ընծ
ԳՏՅԵԱ ՉԱՆ:

(Բանք Ժողովողին ԺԱ:1)

ՀԱՄԱՐ 97

Յիսուս ըսաւ. «Հօրը թագաւորութիւնը կը նմանի մարդու մը, որ կ'ուզէր սպաննել երեւելի անձ մը: Ան իր տան մէջ իր սուրը քաշեց եւ պատին մէջ մխրձեց, որպէսզի գիտնայ թէ իր ձեռքը բաւական զօրաւոր է: Յետոյ երեւելի անձը սպաննեց»:

Այս համարին մեկնաբանութիւնն ալ միայն անոր փոխաբերական իմաստով կարելի պիտի ըլլայ: Անտա-րակոյս բառացի իմաստը ոճրագործի մը համար տրա-մաբանական է, բայց ան «Հօրը թագաւորութեան»-ը հետ որեւէ կապակցութիւն մը չունի: Այս համարով Յիսուս մարդկային կեանքին նպատակը եւ առաքելութիւնը կը յայտնէ: Մարդը, ամէն մի անհատը կը ներկայացնէ եւ իր սպաննել ուզած երեւելի մարդն ալ՝ իր «Ես»-ը՝ սատանան: Միթէ ընդհանուր մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իր «Ես»-ին չի՞ ծառայեր: Միթէ աս չէ՞ր, որ Յիսուս բազմիցս մեզի յորդորեց՝ «Ես»-ը ան-տեսել, որպէսզի կարողանանք մեր անհատականու-թիւնը յաւիտենական կեանքին՝ Աստուծոյ թագաւորու-թեան համար պահել: «Ան իր տան մէջ»-ին իմաստ այն է, թէ սատանան դուրսը էութիւն մը չէ, այլ՝ մարդուն իր մէջն է՝ անոր «Ես»-ն է: Միթէ մարմինը Աստուծոյ «տուն»-ը՝ տաճարը չէ՞: Եթէ Յայտնութեան գիրքին մէջ Գլուխ Բ. համար 16-ը կարդանք պիտի տեսնենք թէ սուրը մարդուն «լեզուն», այսինքն անոր ըրած քարոզ-չութիւնն է: Անապատին մէջ Յիսուս նախ խօսքով լռեցուց իր «Ես»-ը՝ սատանան: Յիսուս փաստեց թէ ինք ուժը ունի զայն յաղթելու: Ան, վերջապէս խաչին վրայ ալ զայն մեռցուց: Իր կեանքով մեզի ցոյց տուաւ այն ինչ որ մենք ալ պարտ ենք մեր կեանքին մէջ ընել: Մեզի ալ կը մնայ իրեն նմանիլ եւ նոյնը ընել: Իրեն նման ուժ, մտային կեդրոնացում եւ վճռականութիւն ցոյց տալ:

ՀԱՄԱՐ 98

Աշակերտները անոր ըսին. «Եղբայրներդ եւ մայրդ դուրսը կը սպասեն»: Ան ըսաւ անոնց. «Անոնք որ Հոս են եւ Հօրս կամքը կը կատարեն, անոնք են իմ եղբայրներս եւ մայրս. անոնք են որ պիտի մննեն Հօրս թագաւորութեան մէջ»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ կանոնական Աւետարաններուն մէջ եւս ներկայացուած են: Տես այս գիրքերու Հատոր Գ.-ին մէջ «խաղաղութիւն թէ՞ Սուր ու Բաժանում եւ Աշակերտ ըլլալու գինը» խորագրեալ գրութիւնը, էջեր 227-233 եւ նամանաւանդ էջ 232-233):



Բաշտմբ ողորեն շերեսս թագաւորաժ,
եւ ամենայն ջարապաւ տախաս լիժի մարդպաւ:

Ամենայն որ ասեայ շերալոր տղբաս,
հեռի լիւս եւ 'ի սիրոյ տորա:

Խորհորդ բարի՝

առ որս ճանաջենն շնա, մերձենայ,
եւ իմաստոյն գճձէ շնա:

Որ պար ջար առնէ՝

պասարէ ջարիս,

եւ որ գրգռէ ջբանս՝ ոճ աղորեսձի,
մանախանդ որ վարէ ջբանս որ ոճ իր իձէ:


(Առակք Սողոմոնի ԺԹ:6-7)

ՀԱՄԱՐ 99

Յիսուսին ոսկի դրամ մը ցցուցին եւ ըսին.
«Անոնք որոնք Կեսարին կը պատկանին մեզմէ
տուրք կ'ուզեն»: Ան ըսաւ անոնց. «Ան որ
Կեսարին կը պատկանի, Կեսարին տուէք, ան որ
Աստուծոյ կը պատկանի տուէք Աստուծոյ եւ ան
որ իմն է տուէք ինծի»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ կանոնական
Աւետարաններուն մէջ եւս ներկայացուած են: Տես այս
գիրքերուս Հատոր Գ--ին մէջ «Տուրքի Հարցը» խորա-
գրը եւ գրութիւնը, էջեր 188-189):

Այս համարին մէջ յաւելեալ մաս մը եւս կայ՝ «եւ
ան որ իմն է տուէք ինծի»: Այս մասը անհատին յանձնա-
րարութիւն մըն է, որ անոր անհատականութիւնը դէպի
իր ներքին Քրիստոսին յարի քան թէ՝ իր «Ես»-ին:
Մարդուն ճշմարիտ էութիւնը, ոչ իր մարմինն է, ոչ իր
միտքը եւ ոչ ալ իր իմացականութիւնը, այլ ան իր
հոգին՝ Քրիստոսն է: Այս հիման վրայ անհատը, զանոնք
օգտագործելով եւ խնամելով հանդերձ, պէտք չէ իր
մարմնին, միտքին եւ իմացականութեան կապուի: Ան
պէտք է «Ես»-ը անտեսէ, որովհետեւ անձին անհատա-
կանութիւնը Քրիստոսին կը պատկանի: Ըստ Ծննդոց
(Բ:7) գիրքին մարդուն անհատականութիւնը (Երբե-
րէն «նէֆ» երկու իմաստ ունի, թէ՛ «չունչ» թէ՛ ալ
«անհատականութիւն») Աստուծոյ շունչն է:



Համար 100

Յիսուս ըսաւ. «Ան որ ինծի նման իր հայրն ու մայրը չ'ատեր, չի կրնար իմ աշակերտս ըլլալ եւ ան որ չի կրնար իր հայրն ու մայրը սիրել ինծի նման, չի կրնար իմ աշակերտս ըլլալ, որովհետեւ իմ մայրս ...[՚իւծի մահ տուաւ] իմ ճշմարիտ մայրս ինծի կեանք տուաւ»:

Այս համարին առաջին մասը Ղուկասի Աւետարանին մէջ ալ կրկնուած է (տես Հատոր Գ. էջ 180):

«Եթէ ո՛վ Գա՛յ աս իս, եւ ո՛չ ապեա՛յ պահա՛յ իւր եւ պահա՛յ, եւ պէ՛ն եւ պորթիս, եւ պեղբա՛յս եւ պեորս, նա՛ եւ պա՛նջն եւս իւր, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել»: (Դուստ ԺԴ:26)
«Եթէ մեկը ինծի գայ՝ բայց հասէ իր հայրն ու մայրը, կինը եւ զաւակները, եղբայրներն ու քոյրերը, նաեւ իր անձը, չի կրնար իմ աշակերտս ըլլալ»:

Համար 100-ին մէջ Յիսուսի ըսած առաջին երկու նախադասութիւնները կը թուին իրար հակասել: Եթէ կ'ուզենք Յիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները ըլլալ թէ՛ պէտք է մեր հայրն ու մայրը ատենք թէ՛ ալ պէտք է զիրենք սիրենք: Այս համարին երկրորդ մասը կը թուի անկատար ըլլալ: Այն ինչ որ չակերտի մէջ է բնագիրին մէջի պակաս մասին թարգմանիչին ենթադրութիւնն է: Եթէ զայն ճիշդ նկատենք, անգամ մը եւս Յիսուս կ'ըսէ «մայրը» Իրեն թէ՛ մահ տուած է եւ թէ՛ ալ՝ կեանք: Բայց Յիսուս մին «մայրս», միւսն ալ «ճշմարիտ մայրս» կը կոչէ: Վերելի Ղուկասի Աւետարանի մէջի համարը կը թուի բացայայտ ըլլալ, այն իմաստով, որ մարդ այս աշխարհիկ կեանքին մէջ որեւէ կապաւորութիւն պէտք չէ ունենայ: Ասիկա ընտանեկան բոլոր անդամներուն եւս կը վերաբերի: Աս ըսել է թէ զանոնք պէտք չէ սիրէ կամ խնամէ, ընդհակառակը բոլորին իր լաւագոյնը պէտք է ընէ, որովհետեւ անոնց ճշ-

մարիտ հոլթիւնն ալ Քրիստոսն է: Ուրեմն ինչ որ կ'ընէ, Քրիստոսին կ'ընէ: Ոչ թէ միայն իր հարազատներուն հետ նման սիրոյ յարաբերութիւն պէտք է ունենայ, այլ՝ ընդհանուր ստեղծագործութեան հետ: Միայն թէ այդ պէտք չէ եսասիրութեամբ ըլլայ: Միթէ չէ՞ գրուած.

«Լմէն ասե՛մ յեզ, որովհետեւ արարել է միտմ յեզ-

բարցս այսոցիկ փոշրկանց՝ ինչ արարել է»: (Մատթէոս ԻԵ: 43)

«Ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի. Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք»:

Համար 100-ը ամբողջովին տարբեր հասկացողութիւն մը ունի: «Մայր» եւ «հայր»-ը իրենց բառացի իմաստէն զատ պէտք է փոխաբերական իմաստ մը եւս ունենան: Անտարակոյս մարդ պէտք չէ իր մայրը եւ հայրը ատէ, այլ պէտք է զանոնք սիրէ եւ նոյնիսկ «պաշտէ»: Այդ փոխաբերական իմաստը հասկնալու համար նախ ուսումնասիրենք, թէ ի՞նչ կը նշանակէ «հայր» եւ «մայր»: Աւանդական հասկացողութիւնը այն է, թէ անոնք մեզի՝ մեր Ֆիզիքական մարմնին ծնունդ կու տան, մեզ կը խնամեն ու կը դաստիարակեն: Արդեօք կարելի է, որ Յիսուսի ըսած առաջին «հայրն ու մայրը» փոխաբերաբար մեր ընտրած հոգեկան կեանքին «ծնունդ» տուող պատճառները ներկայացնեն: Եթէ անհատին ընտրած հոգեկան կեանքը սխալ եւ խեղաթիւրուած քարոզչութիւններու վրայ եւ սխալ հասկացողութեան վրայ հիմնուած է, այդ սխալները իր հոգեւոր կեանքին «հայրն ու մայրը» կ'ըլլան, որ ինք պէտք է ատէ, այսինքն փոխէ, եթէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը ըլլալ կը փափաքի: Իսկ եթէ անձը «իր հայրն ու մայրը սիրէ ինծի՛ նման», այս անգամ անոնց փոխաբերական իմաստը Յիսուսի սորվեցուցածներուն ճիշդ հասկացողութիւնն է, այն ատեն անձն ալ Յիսուսի աշակերտ կ'ըլլայ: Յատկանշական բառերը «ինծի՛ նման»

-ն են, այսինքն հոգեկան կեանքի նկատմամբ Յիսուսի ունեցած հասկացողութիւնը ունենալ:

Այս համարին վերջին մասը՝ ենթադրեալ մասը, եթէ համարենք ճիշդ ըլլալ, կը թուի անհատին ընտրած հոգեւոր կեանքին անոր տալիք արդիւնքը ըլլալ: Երբ անձը իր սխալ հասկացողութեամբ կը գոհանայ, ճիշդը գտնելու ջանքը չ'ըներ: Այս անգամ իր «մայրը», որ անհատին հոգեկան կեանքի նկատմամբ անոր հասկացողութեան ծնունդ տուած է, այդ սխալ հասկացողութեամբ «մայր»-ն ալ զինք դէպի հոգեկան մահ կը տանի: Բայց երբ Յիսուս «իմ ճշմարիտ մայրս խնժի կեանք տուաւ» կ'ըսէ, Յիսուսի ակնարկութիւնը իր սորվեցուցածներուն ճիշդ հասկացողութիւնն է եւ այդ հիման վրայ հիմնուած հոգեկան կեանքը անհատը դէպի «կեանք»՝ յաւիտենական կեանք կը տանի:

Արդեօք կարելի է, որ վերելի Ղուկասի Աւետարանէն առնուած համարին իմաստն ալ նման ըլլայ եւ հոն ներկայացուած զանազան ընտանեկան անդամներն ալ բազմաթիւ տարբեր հաւատալիքներ ներկայացնեն, որ կը շրջէին քրիստոնէութեան սկզբնական շրջանին: Նոյնպէս մարդուն «Ես»-ն ալ իր հաւատացածներուն վրայ մեծ ազդեցութիւն ունի: Եսասէրը միայն իր շահը կը խորհի, ոչ իր մէջ Աստուածայայտնութիւնը, ոչ կարեկցութիւն եւ ոչ ալ գութ: Ան այնպիսի հոգեւոր կեանքի մը կը հաւատայ, որ առանց անհանգիստ ըլլալու եւ առանց իրեն ուրախութիւն տուող աշխարհիկ հետապնդումներէն ձերբազատուելու զինք յաւիտենական կեանքի արժանացնէ: Անտարակոյս նման հայեացքի մը իրականացումը անկարելի է: Երբ մարդուն անհատականութիւնը դէպի իր «Ես»-ին կը յարի, «Ես»-ն ալ անհատին հաւատալիքներուն եւ բնութեան «ծնողքը»՝ «հայրն ու մայր»-ը կ'ըլլայ: Իսկ, երբ մարդուն անհատականութիւնը դէպի իր ներքին

Քրիստոսին կը յարի, մարդուն հաւատալիքներուն եւ բնոյթին «ծնողք»-ն ալ Քրիստոս՝ «ճշմարիտ մայրը» կ'ըլլայ: Ուրեմն համարին մէջի առաջին նախադասութեան մէջ՝ «Հայրն ու մայրը ատել»-ը անձին իր «Ես»-ը ատելը կը նշանակէ եւ երկրորդ նախադասութեան մէջի «Հայրն ու մայրը սիրել»-ն ալ Քրիստոս՝ Աստուած սիրելը: Միթէ չէ՞ գրուած.

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ապեայ զանձն իւր յաշխարհիս յայամիկ, 'ի կէանսն յաւի-
րենականս պաշտօնի զնա»: (Յովհաննոս ԺԳ: 25)
«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ ա՛ն որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զայն»:



Թողէք ՉԱՆՉԳԱՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՉՁԻՔ,
ԽՆԴՐԵՉԷՔ ՉԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ
ՉԻ ԱՊՐԵՍՁԻՔ:
ԵՒ ՈՒՊՂԵՉԷՔ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ ՉԱՆՃԱՐ,
ԵՒ ՈՒՊԻՊ ՃԱՆՀԱՊԱՐՀԱՒ ԻՄԱՉԱՐՈՒՔ ՉԽՐԱՏ:

(Առակք Սողոմոնի Թ: 6)

ՀԱՄԱՐ 101

Եւ Յիսուս ըսաւ. «Վայ անոնց՝ Փարիսեցիներուն: Անոնք կը նմանին արջարներու մնուրին մէջ քնացող շունի մը, որ ոչ կ'ուտէ եւ ոչ ալ կ'արտօնէ որ կովերը ուտեն»:

Կանոնական Աւետարաններուն մէջ ալ Յիսուս Փարիսեցիներուն շատ մը «վա՛յ»-եր տուած է: Բայց այս համարին պարունակութիւնը որքան որ նման գաղափարներ կը յայտնէ, տարբեր փոխաբերական օրինակ օգտագործած է: Կարելի է, որ «մսուրը» փոխաբերաբար կրօնքը ներկայացնէ: Նամանաւանդ միջին արեւելքի մէջ «շուն» կոչել նսեմացուցիչ արտայայտութիւն մըն է: Իսկ քնացող շունին իմաստը այն է թէ Փարիսեցիները, որոնք կրօնքին բանալին իրենց ձեռքն էր, հոգեւոր քունի մէջ էին: Կովերուն փոխաբերական իմաստն ալ ընդհանուր ժողովուրդն է, որ անտեղեակ ճիշդ հոգեւոր ճանապարհէն, իրենց հոգեկան սնունդին համար իրենց առաջնորդներուն կը նային եւ անոնցմէ յոյս կը սպասեն: Բայց դժբախտաբար այդ առաջնորդները կը քնանան եւ ոչ իրենք կ'ուտեն՝ հոգեւոր սնունդը կը ստանան, ոչ ալ կ'արտօնեն որ ժողովուրդն ալ ուտէ՝ հոգեկան սնունդ ստանայ:



ՀԱՄԱՐ 102

**Յիսուս ըսաւ. «Օրհնեալ է այն անձը, որ գիտէ
թէ գողը ուրկէ պիտի գայ, որպէսզի կանխաւ
պատրաստուի՝ հաւաքէ իր ստացուածքը եւ ինք
զինք գօտեայնուէ»:**

Գողը, ան է որ մարդուն հարստութիւնը պիտի
գողնայ: Բայց Յիսուսի ըսած հարստութիւնը նիւթակա-
նը չէ այլ՝ «հոգեկան հարստութիւնը»: Առաջին եւ
ամենահոգեկան գողը անձին իր «Ես»-ն է: «Ես»-ը անձին
անհատականութիւնը կը յափշտակէ եւ անձին հոգեկան
կեանքի հարստութիւնը կը գողնայ: «Գողը» նաեւ
խեղաթիւրուած սխալ քարոզչութիւններ կրնայ ըլլալ,
որոնք կը գրաւեն անձին միտքը եւ անհատին հոգեւոր
«հարստութիւնը» կը գողնան: Մարդ չի գիտեր, թէ
անոնք երբ պիտի գան ու զինք գրաւեն, հետեւաբար
անձը պարտ է միշտ աչալուրջ ըլլալ, իր հաւատքին մէջ
հաստատ, առանց վարանումի եւ բացարձակ վստահու-
թեամբ իր ներքին Քրիստոսի յարիւ: «Ինք զինք գօ-
տեայնուէ»-ն ալ Յիսուսի սորվեցուցած իմաստասիրու-
թիւններով եւ անոնց ճիշդ հասկացողութեամբ «զին-
ւած» ըլլալն է:



ՍԿԻՉԲԱ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ՝ ԵՐԿԻՐԻ ՏԵԱՌՆ:

(Առակք Սողոմոնի Թ: 10)

ՀԱՄԱՐ 103

Անոնք ըսին անոր. «Եկուր, այսօր աղօթենք եւ ծով պահենք»: Յիսուս ըսաւ. «Ք՜նչ է իմ մեղքս զորս գործեցի եւ ո՛ր կիւէ նուաճուեր եմ: Բայց երբ փեսան առաքաստէն ելլէ, այն ատեն թող անոնք ծով պահեն եւ աղօթեն»:

Շատ հետաքրքրական համար մըն է: Այս համարին պարունակութիւնը ցոյց կու տայ թէ աղօթքը եւ ծովապահութիւնը մեղաւորներուն համար է, որպէսզի մեղքերու թողութիւն ստանան: Յիսուս անմեղ ըլլալով ոչ աղօթելու եւ ոչ ալ ծով պահելու պէտքը զգաց: Երբ Յիսուս կ'ըսէ «ո՛ր կիւէ նուաճուեր եմ», իր «Ես»-ին դէմ ունեցած յաղթանակին ակնարկութիւն մըն է: Բայց այն անհատը, որ իր «Ես»-էն նուաճուած՝ յաղթուած է, անընդհատ ծովապահութեամբ աղօթելու պէտք ունի: Քրիստոս «փեսան» է եւ մենք Քրիստոսի «հարս»-երն ենք: Երբ «փեսան» առաքաստին մէջ է «հարս»-ին հետ է: Հարսը «փեսան» փնտռելու պէտք չունի: Բայց երբ «փեսան» առաքաստէն ելլէ, «հարս»-ը առանցին կը մնայ եւ «փեսան» կը փնտռէ: Երբ Քրիստոս անձին մէջ կը յայտնուի անհատը Քրիստոսի հետ է եւ այլեւս, ոչ աղօթքի եւ ոչ ալ ծովապահութեան պէտք ունի: Բայց երբ Քրիստոս անձին անհատականութեան հետ չէ, որովհետեւ անհատականութիւնը Քրիստոսի տեղ իր «Ես»-ը ընտրած է, անձը թէ՛ աղօթքի թէ՛ ալ ծովապահութեան կը կարօտի, որպէսզի ինք Քրիստոսի իր մէջ յայտնութեանը արժանի ըլլայ:



ՀԱՄԱՐ 104

Յիսուս ըսաւ. «Ա՛ն, որ ճանչնայ իր Հայրն ու մայրը, պիտի կոչուի պոռնիկի որդին»:

Այս համարին մէջ ալ Յիսուս «Հայր» եւ «մայր» բառերը անոնց փոխաբերական իմաստով կ'օգտագործէ: Յիսուս, անգամ մը եւս, իր սորվեցուցած իմաստասիրութիւններուն խեղաթիւրուած ու սխալ հասկացողութեան ծնունդ տուողները որպէս «Հայր» եւ «մայր» կը նկարագրէ: Երբ անձը «ճանչնայ իր Հայրն ու մայրը»՝ խեղաթիւրուած եւ սխալ քարոզչութիւնները հասկնայ, պիտի հասկնայ թէ իր հոգեկան կեանքին ծնունդ տուողը «պոռնիկ» մըն է: Այս հանգրուանին Յայտնութեան Գիրքին ԺԸ. գլխուն մէջ համարներ 2-4 կարդալ յարմար կը նկատուի: Այդ երկու համարները Յիսուսի վերեւի համարին մէջ ըսածին իմաստը բացայայտ կ'ընեն:



ԵՒ ՏԵՍԻ ԵՍ ԵԹԷ Է
ԱՊԱԿԵԼՈՒԹԻՒՄ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ
ՔԱՆ ԱՆՄՏՈՒԹԵԱՆ
ՈՐՊԷԱ Է ԱՊԱԿԵԼՈՒԹԻՒՄ
ԼՈՒՈՂ ՔԱՆ ՉԽԱԽԱՐԻ:

(Բանք Ժողովողին Բ: 13)

ՀԱՄԱՐ 105

Յիսուս ըսաւ. «Երբ երկուքը մէկ ընէք, մարդու որդի պիտի ըլլաք եւ եթէ ըսէք. «լեռ տեղափոխուէ, պիտի տեղափոխուի»:

Ինչպէս Հաւատամքին մէջ կ'ըսենք, Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր, թէ՛ մարդկայինը թէ՛ ալ Աստուածայինը: Յիսուսի մէջ Քրիստոս լրիւ յայտնուած էր: Յիսուս Քրիստոս կը ներկայացնէր այդ երկու բնոյթներու միացումը մէկ անհատի մէջ: Մեր մէջ Աստուածային բնոյթին հունարը գոյութիւն ունենալով հանդերձ մենք չենք կարողացած Զայն մեր մէջ յայտնաբերել: Հետեւաբար մարդ միայն իր մարդկային բնոյթով եւ այդ բնոյթին համաձայն կ'ապրի: Այս համարին մէջ Յիսուսի ըսածը այն է, թէ եթէ անհատը Քրիստոս իր մէջ յայտնաբերել յաջողի եւ երկու բնոյթները՝ մարդկայինը եւ Աստուածայինը, անձին մէջ միասին իբրեւ մէկ գործեն, անձն ալ գերմարդկային կարողութիւններ պիտի ունենայ ինչպէս Յիսուս ունէր:

Այս համարին վերջին նախադասութիւնը «լեռ տեղափոխուէ, պիտի տեղափոխուի»-ն կարելի է մեկնաբանել վերեւի գերմարդկային կարողութեամբ: Բայց արդեօք կարելի է, որ ան ամբողջովին տարբեր փոխաբերական իմաստ մըն ալ ունենայ: Արդեօք կարելի է, որ լեռը մեր բոլոր հաւատալիքներուն հսկայական հաւաքականութիւնը ներկայացնէ: Երբ Քրիստոս մեր մէջ կը յայտնուի մեր հաւատացածները, կենցաղը, հայեացքը, հասկացողութիւնը բոլորն ալ կը փոխուին: Արդեօք լեռան տեղափոխուիլը այս փոփոխութիւնն է՞:



ՀԱՄԱՐ 106

Յիսուս ըսաւ. «Թագաւորութիւնը նման է հովիւի մը, որ հարիւր ոչխար ունէր: Անոնցմէ ամէնէն ուշիմը ճամբան կորսնցուց: Ան խնդիր սունկնը թողուց եւ այդ մէկուն ետեւէն գնաց ու զայն գտաւ: Երբ տքնած էր, ոչխարին ըսաւ. «Քեզ խնդիրսունիննէն աւելի կը սիրեմ»»:

Յիսուսի այս խօսքերը նոյնութեամբ կանոնական Աւետարաններուն մէջ եւս ներկայացուած են: Տես այս գիրքերուս Հատոր Բ.-ի մէջ «Կորսուած Ոչխարին Առակը» խորագրեալ գրութիւնը, էջ 61-64):

Այս համարին մէջ Յիսուսի պատմած առակը թէ՛ Ղուկասի եւ թէ՛ Մատթէոսի Աւետարաններու մէջ ներկայացուած ձեւին, ի բացառեալ վերջին մասէն, յար եւ նմանն է: Ղուկասի Աւետարանին մէջ հովիւը բարեկամները կը կանչէ եւ խնճոյք մը սարքելով զանոնք իր ուրախութեան բաժնեկից կ'ընէ: Ինչպէս Հատոր Բ.-ի երկրորդ մեկնաբանութեան մէջ շեշտուած է խնճոյքին մասնակցիլ յաւիտենական կեանքի արժանաւ կը ներկայացնէ: Մատթէոսի Աւետարանը առակը մեկնաբանութեամբ մը կը վերջացնէ՝ ամէն անձի փրկութիւնը Հայր Աստուծոյ փափաքն է: Այս գաղափարն ալ ներկայացուած է Հատոր Բ.-ի մեկնաբանութեան մէջ: Այս վերեւի համարին մէջ Յիսուսի ըսած վերջին նախադասութիւնը առակին ընդհանուր մեկնաբանութեան նկատմամբ լրջօրէն խորհիլ կու տայ: Այդ նախադասութիւնը հետեւեալն է. «Քեզ խնդիրսունիննէն աւելի կը սիրեմ»: Եթէ ոչխարները, «Կորսուած» կամ ոչ, մարդկութիւնը կը ներկայացնեն, միթէ կարելի է⁶, որ Աստուած կորսուածը, հոգ չէ թէ գտնուի՝ դարձի գայ աւելի սիրէ, քան թէ՝ այն բոլորը, որոնք կորսուած չէին: Կարելի է ըսել թէ անոր «գտնուած» ըլլալուն համար աւելի ուրախանայ, բայց ոչ զայն աւելի սիրէ:

Աստուած խտրութիւն չ'ըներ:

Արդեօք կարելի է⁶, որ այս առակը, գոնէ անոր հոս ներկայացուած ձեւը ամբողջովին տարբեր իմաստ մը ունենայ: Ենթադրենք թէ այս գաղափարը ճիշդ է եւ այդ հիման վրայ առակը մեկնաբանենք:

Այսօր աշխարհի վրայ բազմաթիւ կրօնքներ կան եւ նոյնիսկ քրիստոնէութեան մէջ՝ բազմաթիւ յարան-
ւանութիւններ: Անոնք բոլորն ալ իրենց ուրոյն տեսակէտները եւ հաւատալիքները ունին: Պէտք է նաեւ մոռնալ թէ քրիստոնէութեան սկզբնաւորութեան առաջին եւ երկրորդ դարերուն բազմաթիւ տարբեր քրիստոնէական տեսակէտներ եւ հաւատալիքներ գոյութիւն ունէին: Եթէ Նոր կտակարանը ուսումնասիրենք պիտի տեսնենք թէ ինչպէս ժամանակի ընթացքին հաւատալիքները փոխուած են: Տիեզերական ժողովին ներկաներուն «Մեծամասնութիւնը» կայսրի ճնշումով որոշուած իրենց հաւատացածէն տարբեր հաւատացողները հերետիկոս հռչակած եւ անտեսած են: Նախ Քրիստոնէութիւնը բերանացի կը քարոզուէր: Ամենահին գրութիւնները Պողոսի նամակներն են, մօտաւորապէս Յ.Ք. 40-50 թուականներուն գրուած: Պողոս իր բոլոր նամակներուն մէջ միայն Յիսուսի խաչելութիւնը եւ յարութիւնը շեշտած է: Քրիստոնէութեան այդ հանգըր-
ւանին մեծամասնութիւնը կը հաւատար թէ Յիսուս մարդը իր յարութեամբ Աստուածացաւ: Անտարակոյս այսօր մեզի այս գաղափարը որպէս հերետիկոսական կը թուի: Ճիշդ ասոր համար Պողոս իր գրութիւններուն մէջ Յիսուսի ծնունդին կամ մկրտութեան կարեւորութիւն չէ տուած: Առաջին Աւետարանը՝ Մարկոսի Աւետարանը, մօտաւորապէս Յ.Ք. 60-70 թուականներուն գրուած է: Եթէ ուշադրութիւն ընենք, պիտի տեսնենք որ Մարկոսի Աւետարանը գրողը Յիսուսի մկրտութեամբ կը սկսի: Ան Յիսուսի ծնունդին մասին ոչինչ կը

գրէ: Որովհետեւ այդ շրջանին կը կարծէին թէ Յիսուս մարդը մկրտութեան միջոցին Ս. Հոգիին Իր վրայ իջնելովը Աստուածացաւ: Անտարակոյս նման հայեացք մըն ալ այսօր մեզի հերետիկոսութիւն կը համարուի: Աւելի ուշ, մօտաւորապէս Յ.Ք. 80-90 թուականներուն, թէ՛ Մատթէոսի եւ թէ՛ ալ Ղուկասի Աւետարանները գրուած են: Ջարմանալիօրէն երկուքն ալ Յիսուսի ծնունդի պատմութեամբ կը սկսին: Այդ շրջանին, ընդհանուր առմամբ, կը հաւատային թէ Յիսուս, իր անարատ յղութեան հետեւանք, ծնունդով Աստուածացած էր եւ ծնունդէն առաջ գոյութիւն չունէր: Այսօր այս տեսակէտն ալ մեզի հերետիկոսութիւն կը թուի: Իսկ Յ.Ք. 100-110 թուականներուն Յովհաննու Աւետարանը գրուած է: Այս Աւետարանը հետեւեալ ձեւով կը սկսի:

«Ի սկսեանէ էր Բանն, է- Բանն էր առ-
Ասրո-առ է- Ասրո-առ էր Բանն. Սա էր
'ի սկսեանէ առ Ասրո-առ: Ամենայն ինչ
նովա- էղէ-, է- առանց նորա էղէ- է-
ոչինչ որ ինչ էղէ-ն: Սովա- կեանի էր է-
կեանի էր լոյս մարդկան է- լոյսն 'ի խա-
ւարի անդ լո-սա-որէ է- խա-ւար մնա ոչ
էղէ- Հասո- . Էր լոյսն ճշմարիտ որ լո-սա-
որ առնէ պամենայն մարդ որ Բաւոյ է
յաշխարհ, Յաշխարհի էր է- աշխարհ
նովա- էղէ- է- աշխարհ պնա ոչ Ժան-
էա-.... Ե- Բանն մարմին էղէ- է- Բնակ-
էաց 'ի մեզ է- Կեանի պատ- նորա, պատ-

— Ես ի՞նչ եմ գնահատում առ ի Հօրեմ, լի շնորհ-
Ըօժեմ Զճմարարութեան »: (Յովհաննուս Ա: 1-14)

«Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուծոյ հետ: Աստուծոյ քովն էր: Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զանիկա չհասկցաւ: Աստուծոյն ղրկուած մարդ մը կար, որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա վկայութեան համար եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի ամէնքը անոր միջոցով հաւատան: Ինք չէր այն Լոյսը, հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ: Ճշմարիտ Լոյսը ան է, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ: Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհ անով եղաւ, բայց աշխարհ զանիկա չհասկցաւ:... Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (եւ անոր փառքը տեսանք, Հօրմէն միածնի փառքին պէս), չնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

Ժամանակի այս հանգրուանին հաւատացեալներուն կարծիքը, կամ աւելի ճիշդ է ըսել, հաւատացածներն այն էր, թէ Քրիստոս սկիզբէն նոյնիսկ ստեղծագործութենէն առաջ Աստուծոյ էր: Հետեւաբար Քրիստոս էր, որ Յիսուսով մարդացաւ:

Կը տեսնենք թէ քրիստոսէութեան սկզբնական շրջանին հաւատացեալներուն հաւատացածը շարունակ փոփոխութեան ենթարկուած է: Զարմանալին այն է, թէ այդ շրջանին շատ աւելի յարանուանութիւններ գոյութիւն ունէին քան թէ այսօր: Եւ մենք ներկայ հաւատալիքներու բազմազանութենէն կը գանգատինք:

Եթէ վերելի Համար 106-ի մեկնաբանութիւնը այս տեղեկութեան եւ համարին վերջին նախադասութեան լոյսին ներքեւ ընենք, կարելի է ամբողջովին տարբեր եզրակացութեան մը յանգինք: Այս հիման վրայ կորսուած ոչխարը շատ հաւանական է Յիսուսի սորվեցուցած ճիշդ իմաստասիրութիւնները ներկայացնէ, որոնք կատարելութեան ուղին կը ներկայացնեն: Դժբախտա-

բար, մարդիկ բազմաթիւ այլազան հաւատալիքներով
զբաղ, ճշմարիտ ուսուցումը կորսնցուցած են:
Իննսունինը ոչխարները, որոնք անապատին մէջ կը
ձգուին, այդ խեղաթիւրուած հաւատալիքներն են:
Իմաստուն մարդը՝ ճշմարիտ հովիւը, մինչեւ որ
կորսուած ոչխարը՝ Յիսուսի սորվեցուցած եւ
կորսուած բուն իմաստասիրութիւնները գտնէ, ջանք չի
խնայեր: Երբ ան վերջապէս փնտռածը գտնէ, զայն
բոլոր միւսներէն աւելի կը «սիրէ»՝ կը հաւատայ եւ իր
անձին՝ կեանքին մէջ զանոնք կը կիրարկէ:

Վերեւի գաղափարը որպէս հիմք, կարելի է ըսել,
թէ իննսունինը ոչխարները մարդկային կեանքի
զանազան զբաղմունքները կը ներկայացնեն եւ կոր-
սըւած մէկ ոչխարն ալ՝ մարդուն իր ճշմարիտ էու-
թիւնը՝ Քրիստոս, որ մարդուն գիտակցութենէն կը
վրիպի: Բայց մարդ մինչեւ «կորսուած ոչխարը»
Քրիստոսը գտնէ, պէտք է ամէն ջանք ի գործ դնէ: Երբ
Զայն գտնէ ամէնէն շատ Զայն կը սիրէ եւ իր կեանքին
մէջի միւս բոլոր անպէտ զբաղմունքները կ'անտեսէ:



ԶԻ ՍԱՐԴՈՂ ԲԱՐԻՈՂ՝ ԵՏ ՉԻՄԱՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ՉԳԻՏՈՒԹԻՒՆ՝ ԵՒ ՉՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ:
ԵՒ ՄԵՂԱՆՉԱԿԱՆԻՆ ԵՏ
ՉԲԱՉՈՒՄՆ յԱՃԱԽԵԼ ԵՒ ԺՈՂՈՎԵԼ,
ԵՒ ՏԱԼ ԲԱՐԻՈՂՆ ԱՌԱՋԻ ԵՐԵԱՆՉ ԱՍՏՈՒԾՈՂ:
(Բանք Ժողովողին Բ: 26)

ՀԱՄԱՐ 107

**Յիսուս ըսաւ. «Ան որ իմ բերնէս կը խմէ, ինծի
պէս պիտի ըլլայ: Ես ալ ան պիտի ըլլամ եւ
թափնուած բաները իրեն պիտի յայտնուին»:**

Դարձեալ շատ հետաքրքրական եւ լուսաբանիչ
համար մը: Յիսուս իր այս խօսքով՝ «Ան որ իմ բերնէս
կը խմէ», կ'ականարկէ բոլոր անոնց, որոնք Իր խօսքերը
կ'իւրացնեն եւ իրենց կեանքի ընթացքին կը կիրար-
կեն: Եւ եթէ Իր ըսածները յաջողին կատարել, Իրեն
պիտի նմանին: Մարդ ի՞նչպէս Յիսուսի կը նմանի:
Յիսուսի նմանիլ Քրիստոս մեր մէջ յայտնաբերելն է,
աւելի բարձր գիտակցութեան մակարդակ կերտելն է,
Ս. Հոգիէն յաւելեալ զօրութիւն ստանալն է, աւելի
բարձր իմաստութեան տէր ըլլալն է: «Ես ալ ան պիտի
ըլլամ»-ին իմաստն ալ Քրիստոսի այդ անձին մէջ
յայտնուելով անհատին հետ մէկ ըլլալն է: Միթէ
Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած.

«Ո՛չ է աշակերդ լա՛ւ – չան պլարդապետ իւր,
ամենայն կադարեալն՝ եղիցի իշրեւ պլարդապետ՝ որ
իւր»: (Դ.աւսա .9:40)

«Աշակերտը իր վարդապետէն գերիվեր չէ. բայց ամէն
կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի
ըլլայ»:

**Երբ անհատը գիտակցութեան բարձր մակարդակի
կը հասնի Աստուածաշունչին մէջ թափնուած բոլոր
իմաստասիրութիւններն ալ իրեն կը յայտնուին:**



ՀԱՄԱՐ 108

Յիսուս ըսաւ. «Թագաւորութիւնը նման է մարդու մը, որ իր դաշտին մէջ պահուած գանձ մը ունէր, որուն ինք տեղեակ չէր: Իր մահէն յետոյ զայն իր որդւոյն թողուց: Որդին ալ չէր գիտեր եւ երբ դաշտին տիրացաւ զայն ծախեց: Դաշտը գնողը հողը հերկեց եւ գանձը գտաւ: Տոկոսով դրամ փոխ սուսաւ անոր, որ ընտրեց»:

Յիսուսի այս առակը մօտաւորապէս նոյնութեամբ կանոնական Մատթէոսի Աւետարանին մէջ եւս ներկայացուած է: Տես գիրքերու Հատոր Բ.-ի մէջ «Պահուած Գանձին Առակը» խորագրեալ գրութիւնը, էջեր 82-84):

Ներկայացուած առակներուն մէջի փոփոխութիւնները, որոնք անկարելորդ ըլլալ կը թուին, շատ անգամ ամբողջովին տարբեր մեկնաբանութեան ծնունդ կու տան: Մատթէոսի Աւետարանին մէջ անհատը ինք գանձը կը գտնէ եւ զայն կը ծածկէ մինչեւ որ արտը ծախու առնէ: Վերելի համարին մէջ, անհատը գանձի գոյութենէն տեղեակ չէ եւ արտը մէջի գանձով իր տղուն կը ձգէ: Տղան ալ գանձէն անտեղեակ, արտը կը ծախէ եւ ծախու առնողը գանձը կը գտնէ:

Այս տարբերութեան հետեւանք առակին իմաստը եւ մեկնաբանութիւնն ալ ամբողջովին կը փոխուի:

Անտարակոյս, գանձը անձին մէջ Քրիստոսի ներկայութիւնն է եւ Անոր յայտնութիւնը իրականացընելու համար ալ միանգամայն Յիսուս Քրիստոսի ստրկեցուցած բոլոր իմաստասիրութիւնները կը ներկայացնէ: Մարդիկ զանազան կրօնքներու կը պատկանին եւ անոնց մակերեսային հասկացողութեան կը հետեւին, որովհետեւ անոնք դիւրին են եւ անձին ապրելակերպի փոփոխութեանը չեն կարօտիր: Արտին տէրը կը ներկայացնէ անոնք, որոնք կը հետեւին կրօնքի մը որուն մէջ թագնուած իմաստասիրութիւն-

ները յայտնի չեն: Որդին կը ներկայացնէ անոնք, որոնք տարբեր կրօնք կամ յարանուանութեան մը կը հետեւին եւ անոնք ալ տեղեակ չեն անոր մէջ թագնուած ճշմարտութենէն: Իսկ այն անձը որ արտը ծախու կ'առնէ, անտարակոյս արտին համար կը վճարէ: Այդ «վճարելը» իր կրօնքներուն եւ յարանուանութիւններուն հաւատացածներուն մէջ թագնուած ճշմարտութիւնը գտնելու ջանքը կը ներկայացնէ: Երբ ան այդ իմաստասիրութիւնները կը գտնէ հոգեպէս կը հարստանայ եւ ուրիշներուն ալ օգտակար կ'ըլլայ:



Տես եւ ՁԱՄԵԱՅՆ ՉՔԱՉՈՒՄՆ ՉՈՐ ԵՏ
ԱՍՏՈՒԱԾ ՈՐԴԻՈՅ ՄԱՐԴԿԱՆ ՉՔԱՂԱՈՒՂ 'Ի ՆԱՎ:

ԱՄԵԱՅՆ ԻՆՉ ՉՈՐ ԳՈՐԾԵԱԾ՝
ԲԱՐԻ Է 'Ի ԺԱՄԱՆԱԿԻ ԻՐՈՒՄ:

ՆԱ՝ ԵՒ ՁԱՄԵԱՅՆ յԱԻՏԵԱՆԱ ԵՏ 'Ի ՍԻՐՏԱ
ՆՈՅԱ.

ՉԻ ՄԻ ԳՏՅԷ ՄԱՐԴ ՉԱՐԱՐԱԾՆ
ՉՈՐ ԱՐԱՐ ԱՍՏՈՒԱԾ
'Ի ԱԿՉՔԱՆԷ ՄԻՆՉ ԺԿԱՏԱՐԱԾ:

(Բանք Ժողովողին Գ: 10-11)

ՀԱՄԱՐ 109

Յիսուս ըսաւ. «Ան որ աշխարհը գտաւ եւ
Հարստացաւ, թող աշխարհը ուրանայ»:

Այն անձը որ աշխարհիկ հետապնդումներէն տար-
ուած է, շատ հաւանաբար, նիւթապէս կը հարստանայ:
Բայց շատեր ալ, որոնք նոյնպէս աշխարհիկ հետապն-
դումներէ տարուած, նիւթական աղքատութեան մէջ կը
տառապին: Հետեւաբար այս համարն ալ պէտք է
փոխաբերական իմաստ մը ունենայ: Անոնք, որոնք
աշխարհիկ հետապնդումներով զբաղ են, իրենց կրօնքի
հասկացողութեան մակերեսային ըլլալը բացայայտ
կ'ընեն: Հետեւաբար, անոնք նիւթապէս հարուստ ըլլա-
լով հանդերձ, հոգեպէս աղքատ են: Բայց երբ անոնք
հոգեպէս «Հարստանան», այսինքն իրենց կրօնքին մէջ
թազնուած ճշմարտութեան անդրադառնան, իրենք
զիրենք աշխարհիկ բոլոր հետապնդումներէ պէտք է
ձերբազատեն՝ «Թող աշխարհը ուրանան»:



ԳԻՏԱՅԻ՝ ԹԷ ՈՉ ԳՈՂ ԲԱՐԻ՝ Ի՛ ԼՈՍԱՎ՝
ԵԹԷ ՈՉ ՈՒՐԱԽ ԼԻՆԵԼ՝
ԵՒ ԳՈՐԾԵԼ ԲԱՐԻՍ Ի՛ ԿԵԱՆԱ ԻՒՐՈՒՄ:

(Բանք Ժողովողին Գ: 12)

ՀԱՄԱՐ 110

Յիսուս ըսաւ. «Երկինք եւ երկիր պիտի փակ-
ւին ձեր առջեւ» եւ ան, որ կ'ապրի կենդանի
Մեկին մէջ, ոչ պիտի վախնայ եւ ոչ ալ մահը
պիտի տեսնէ: Զի կ'ըսէ Յիսուս. «Ան, որ ինք
զինք կը գտնէ, աշխարհը անոր արժանի չէ»»:


Այս համարը հասկնալու համար նախ վերլուծենք
յաճախ իմացուած ասացուածք մը. «Միակ ձգմարտու-
թիւնը Աստուած է»: Երբ վերեւի ասացուածքը թէ
քրիստոնեաներուն թէ ալ այլ կրօնքներու պատկանող-
ներուն ներկայացուի, անոնք մեծամասնութեամբ կը
վկայեն ու կը հաւատան, թէ այդ ճշմարտութիւն է:
Բայց դժբախտաբար, մարդ արարած «կը հաւատամ»
ըսելով հանդերձ, այնպէս մը կ'ապրի, որ կարծէք թէ իր
ըսածին ինք չի հաւատար: Այդ ասացուածքին իմաստը
այն է թէ «աշխարհի վրայ»՝ տիեզերքի մէջ, բոլոր
զանազանութիւնները, որ կը տեսնենք եւ զանոնք
ճշմարտութիւն կը համարենք, չեն կրնար ճշմարտու-
թիւն ըլլալ, որովհետեւ միակ ճշմարտութիւնը Աստ-
ուած է: Հետեւաբար այդ բոլոր զանազանութիւնները
միայն պատրանքային են նման երազի, որով ճշմար-
տութիւն չեն: Բայց մարդ իր խաւարամտութեամբ
կարող չէ ամէն ինչի միակնութիւնը տեսնել եւ
ճշմարտութիւնը ճանչնալ, հետեւաբար պատրանքը
ճշմարտութիւն կը կարծէ: Այս սխալ հասկացողութեան
հետեւանք ստեղծագործութիւնը կը թուի երկուու-
թեան վրայ հիմնուած ըլլալ՝ բարի-չար, մեծ-պզտիկ,
երջանիկ-ապերջանիկ, եսասէր-մարդասէր, խաղաղու-
թիւն-տառապանք ...:

Ուրեմն վերեւի համարը այս տեղեկութեան
հիման վրայ պէտք է մեկնաբանենք: Երբ անհատը
Յիսուսի ըսածներուն բուն իմաստը հասկնայ, Անոր
բոլոր սորվեցուցածները իւրացնէ, զանոնք իր կեան-

քին մէջ կիրարկէ եւ կատարելութեան ուղիին վերջա-
ւորութեան յաջողի հասնիլ, այն ատեն ան կրնայ
Քրիստոս իր մէջ յայտնաբերել եւ բարձր գիտակցու-
թեան արժանանալ: Անոր ստացած այդ բարձր գիտակ-
ցութիւնն ալ իրեն ճշմարտութիւնը տեսնել կը շնորհէ:
Այդ ճշմարտութիւնն ալ կարծեցեալ զանազանութիւն-
ներուն միականութիւնը իրեն կը յայտնէ: Ահա՛,
Յիսուսի ըսած «Երկինք եւ երկիր պիտի փակուին ձեր
առջեւ»-ին իմաստը աս է: Երբ մարդ իր խաւարամտու-
թեամբ պատրանքը ճշմարտութիւն կը կարծէ, ան
երկուութեան ենթակայ կ'ըլլայ: Հետեւաբար ան նաեւ
երկիրը եւ երկինքը իրարմէ անջատ՝ իբրեւ երկու կը
«տեսնէ»: Բայց երբ ան բարձր գիտակցութեան կ'արժա-
նանայ, կը հասկնայ, որ թէ՛ երկինք թէ՛ ալ երկիր մէկ
են եւ ոչ իրարմէ տարբեր: Ուրեմն իրեն համար
երկնքի եւ երկրի երկուութիւնը կը «փակուի»: «Եւ ան,
որ կ'ապրի կենդանի Մեկին մէջ»-ին իմաստը այն է, թէ
անհատը իր մէջ Քրիստոսի յայտնութեամբ ինք ալ կը
գոյատեւէ՝ «կ'ապրի» «Միականութեան» մէջ, որ միակ
ճշմարտութիւնն է: Իսկ եթէ միակ ճշմարտութիւնը
Աստուած է, անհատն ալ Աստուծոյ մէջը եւ հետը
կ'ըլլայ, ինչ որ ճշմարիտ՝ յաւիտենական կեանքն է:
Միթէ Քրիստոս չէ՞ ըսած «Ես եմ կեանքը»: Արդեօք
Աստուծոյ հետ եղող, ճշմարտութիւնը հասկցող անձ մը
որեւէ բանէ կը վախնայ՞: Մարդուն վախուն պատճառ
ամէն ինչ պատրանքին կը պատկանի: Երբ այլեւս
պատրանքը գոյութիւն չունենայ, արդեօք առանց
պատճառի կարելի է վախնալ: Արդեօք յաւիտենական
կեանք ունեցող անձ մը երբեք մահ կրնայ «համտեսել»:

Այս համարին վերջին նախադասութիւնը ամէն
անհատի ճշմարիտ էութեան Քրիստոս ինքն ըլլալը
բացայայտ կ'ընէ: Այն անձը որ իր ներքին Քրիստոսը
կը գտնէ եւ իր մէջ կը յայտնաբերէ , ան ինք զինք՝ իր

ճշմարիտ էութիւնը գտած կ'ըլլայ: Ահա՛, «Ան, որ ինք
զինք կը գտնէ»-ին իմաստն ալ աս է: Այն անձը որ
Քրիստոսի յայտնութեամբ իր մէջ միականութեան
փորձառութիւնը ունեցած է, ինք այլեւս երկուութեան
ենթակայ չէ: Քանի որ աշխարհը երկուութեան մաս կը
կազմէ եւ պատրանքային է, աշխարհը այլեւս անոր
արժանի չէ: Աշխարհը միայն անոնց համար է, որոնք
տակաւին Քրիստոսի յայտնութեան արժանի չեն: Այն
անձը, որ Քրիստոսի յայտնութեան արժանացած է,
այլեւս «աշխարհը անոր արժանի չէ»:



Որ ինձ եղեմն այն ազա պալ,
եւ որ ինձ լինելո՞ւն էր՝
ազա եղեմ.

Եւ

Աստուծո ինդրեմնով շահաւծեալն:

(Բանք Ժողովողին Գ: 15)

ՀԱՄԱՐ 111

Յիսուս ըսաւ. «Վա՛յ այն մարմինն, որ կախեալ է ոգիէն. վա՛յ այն ոգիին, որ կախեալ է մարմինէն»:

Մարմինը ֆիզիքականը՝ մարդուն աշխարհի վրայ գործունէութիւնը եւ իր կենցաղը կը ներկայացնէ: Իսկ ոգին (անգլերէնի մէջ soul եւ ոչ spirit) անձին հոգին է, որ իր մէջ անձին կողմէ դրուած տեղեկութիւն կը պարունակէ: Մարդուն ոգին անոր զօրութեան «մարմին»-ն է եւ անհատին կենցաղին համաձայն իր ուրոյն թրթռացումի յաճախականութիւնը ունի: Այդ թրթռացումի յաճախականութեան փոփոխութեամբ է որ անհատին կենցաղին արդիւնքները իբրեւ ոգիին պարունակած տեղեկութիւնները հոն «կարձանագրուին»: Մարդուն հոգիին մէջի տեղեկութիւններուն համաձայն մարդուն բնութիւնն ալ կ'որոշուի:

Վերելի համարին մէջի Յիսուսի տուած վա՛յը անոնց համար է, որոնց բոլոր գործունէութիւնները իրենց բնոյթին համապատասխան են: Անոնք ընդհանրապէս եսասէր կ'ըլլան:

Յիսուս վա՛յ կու տայ նաեւ այն ոգիին, «որ կախեալ է մարմինէն»: Ասոր իմաստը այն է թէ վայ այն անձին որ միայն իր ֆիզիքական փորձառութիւնը ճշմարտութիւն կը նկատէ եւ ըստ այնմ իր հոգիին մէջ տեղեկութիւններ կը դնէ :

Այս նոյն գաղափարը շատ պարզ եւ հասկնալի ձեւով Յակոբոս Առաքեալի ընդհանրական նամակին մէջ ներկայացուած է:

«Ո՛վ իցէ իմաստոսն էւ Ըանճարեղ՝ ի Յեզ ցոոցե՛
'ի Բարոո՛ւ Գնացից իւրոց զԳործա իւր Ըեզոո--
թեա՛մք իմաստոսութեան: Լալա թէ նախ՛նջ՝ էւ
դառնոսութիւն էւ Ըակաստոսութիւն ունիցի ի՛

«Իրոքս յէր, մի՛ պարտիշ աոգո առնել զճշմարտո-
ւիւնն: Ո՛չ է իմաստութիւնն այս իջեալ 'ի վե-
րոսոյ այլ երկրասօ՛ր շնչաւոր՝ եւ դիւանայն: Ջի-
ւոր Հեռ եւ նախանշ, անդ է անկարգութիւն՝
եւ ամենայն իրիշ շարի: Իսկ վերին իմաստո-
ւիւննն, նախ՝ զի սո՛ւրբ է, եւ ապա խաղաղա-
րա՛ր, Հե՛ւ, դիւրաւասան, լի՛ ողորմութեամբ
եւ պարտիշ Բարեաց, անխի՛ղճ, ասանց կեղծաւո-
րութեան, պրո՛ւզ արդարութեան խաղաղութեամբ
սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւնն» :

(Թողլն Յակովբայ Գ:13-18)

«Ո՛վ որ իմաստուն ու խելացի է ձեր մէջ, բարի վարքով
թող ցոյց տայ իր գործերը՝ իմաստութեան հեզութեամբ:
Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունենաք
ձեր սիրտերուն մէջ, ճշմարտութեան դէմ մի՛ պարծենաք
ու մի՛ ստէք: Այս իմաստութիւնը չ'իջնէր վերէն, հապա՛-
երկրային, չնչաւոր եւ դիւական է: Որովհետեւ ո՛ւր կայ
նախանձ ու հակառակութիւն, հո՛ն կայ խառնակութիւն
եւ ամէն տեսակ չար բան: Բայց վերէն եղող իմաստու-
թիւնը՝ նախ անկեղծ է, յետոյ՝ խաղաղարար, ազնիւ, Հլու,
լի ողորմութեամբ ու բարի պտուղներով, անկողմնակալ
եւ անկեղծ: Արդարութեան պտուղը խաղաղութեամբ կը
սերմանուի անոնց միջոցով որ խաղաղութիւն կ'ընեն»:

**Անհրաժեշտ է, որ մարդ արարած իր աշխարհիկ
հասկացողութիւնը եւ իր մարդկային բնոյթը գերա-
զանցէ: Ան պէտք չէ իր իմացականութեան վստահի, այլ
Աստուածային՝ վերին իմաստութիւն ջանայ ստանալ եւ
ըստ այնմ գործել: Ըստ Յակոբոսին իմացականութիւնը
երկրային իմաստութիւն է եւ «վերէն» չէ իջած: Մար-
դուն կենցաղը անոր հոգիի զօրութեան թրթռացումի
որակը եւ անոր բնոյթը կը ցոլացնէ:**

* * *

ՀԱՄԱՐ 112

Աշակերտները անոր հարցուցին. «Արքայութիւնը
Էրբ պիտի գայ»: Յիսուս ըսաւ. «Ան չի գար
սպասելով: Պիտի չ'ըսեն ահա՛ Հոս է, կամ Հոն:
Բայց Հօր արքայութիւնը սփռուած է երկրի
վրայ եւ մարդիկ չեն տեսներ զայն»:

Յիսուսի այս խօսքը, գրեթէ նոյնութեամբ, կանո-
նական Աւետարաններէն Մատթէոսի գրածին մէջ ալ
ներկայացուած է: Տես գիրքերուս Հատոր Գ.-ին «Աւե-
րումներ եւ Քրիստոսի Յայտնութիւնը» խորագրեալ
գրութեան մէջ, էջեր 215-217):

Նախորդ հատորին (Գ.) մէջի գրութեան առընթեր
յաւելեալ տեղեկութիւն մը տալ պատշաճ է, որովհետեւ
այս վերելի համարին պարունակութիւնը կը թուի
Ղուկասի Աւետարանին Ժէ. 20-21 համարներուն մէջի
տեղեկութեան նոյնը ըլլալ, կան մանր տարբերութիւն-
ներ, որ հսկայական յաւելեալ հասկացողութիւն կու
տան: Նախ Յիսուսի հետեւեալ խօսքը նկատողութեան
առնենք. «Ան չի գար սպասելով: Մարդիկ, ընդհանուր
առմամբ, աշխարհի վերջին կը սպասեն, որպէսզի
Աստուծոյ թագաւորութիւնը գայ: Պօղոս իսկ կը կար-
ծէր, թէ այդ իր կեանքի ընթացքին պիտի պատահէր,
որով իր նամակներուն մէկուն մէջ կիներուն համուս-
նանալ եւ Աստուծոյ թագաւորութեան սպասել կը յանձ-
նարարէ: Եթէ Աստուծոյ թագաւորութիւնը սպասումով
պիտի չգայ, ուրեմն ի՞նչպէս պիտի գայ: Մարդուն
ինքզինք փոխելովը: Հետեւաբար, մարդ, երբ տակաւին
աշխարհի վրայ է, այսինքն կ'ապրի, Զայն իր մէջ
յայտնաբերելու համար պէտք չէ որեւէ ջանք խնայէ:
Իսկ Յիսուսի յաջորդ խօսքը. «Բայց Հօր արքայութիւնը
սփռուած է երկրի վրայ եւ մարդիկ չեն տեսներ զայն»
ամբողջովին բացայայտ կ'ընէ, թէ Աստուծոյ թագաւո-
րութիւնը արդէն եկած է, ընդհանուր ստեղծագործու-

Թիւնը միականութիւն է եւ Աստուծոյ թագաւորութիւնը: Մարդ իր խաւարամտութեամբ այդ անդրադարձը իր մէջ կը խափանէ: Ան միականութիւնը չի տեսներ եւ միայն զանազանութիւնը կը տեսնէ: Ամէն անհատ, փոխանակ խեղաթիւրուած, մակերեսային հասկացողութեամբ քարոզուած Յիսուսի բուն եւ թագուն սորվեցուցածներուն հետ կապակցութիւն անգամ չունեցող հաւատալիքներով լեցուն կրօնքի մը հետեւելու տեղ, եթէ Յիսուսի սորվեցուցածներուն ճշմարտութիւնը հասկնայ, իւրացնէ եւ կիրարկէ, մարդկութիւնն ալ կարող կ'ըլլայ աշխարհը դրախտի վերածել եւ Աստուծոյ թագաւորութիւնը վայելել:



ՈՐՊԷՍ ԵՂ յՈՐՈՎԱՅՆԷ ՄՕՐ ԻՒՐՈՅ ՄԵՐԿ,
ԴԱՌՆԱՅ ԵՐԹԱՂ՝
ՈՐՊԷՍ ԵՒ ԵԿԵԱՂՆ ԵՐ՝
ԵՒ ՈՉԻՆՉ ԱՌՉԷ՝ Ի ՎԱՍՏԱԿՈՅ ԻՒՐԱԷ,
ԵԹԷ ԵՐԹԻՉԷ՝ Ի ՁԵՌՆԻՆ ԻՒՐՈՒՄ:

(Բանք Ժողովողին Ե: 14)

ՀԱՄԱՐ 113

Սիմոն Պետրոս անոնց ըսաւ. «Թող Մարիամ՝ մեզմէ հեռանայ, քանզի կիները արժանի չեն կեանքի»: Յիսուս ըսաւ. «Տեսէք, ես զայն կ'առաջնորդեմ, որպէսզի զինք այր ընեմ, որպէսզի ան ալ կենդանի Հոգի դառնայ նման ձեզի՝ այրերուդ: Քանզի ամէն կին, որ ինքզինք այր կ'ընէ, կը մննէ երկնային արքայութիւն»:

Առաջին հերթին այս համարին պարունակութիւնը, նամանաւանդ Պետրոսի խօսքը, կիներու դէմ ահռելի խտրութիւն մը կը թուի ներկայացնել: Յիսուսի պատասխանն ալ կարծես Պետրոսի տեսակէտը կը թուի վաւերացնել: Արդեօք կարելի է՞, որ Յիսուս Քրիստոս արու եւ հգի միջեւ խտրութիւն դնէ:

Այս համարին թագուն իմաստը հասկնալու համար նախ հասկնանք թէ Մարիամ ի՞նչ եւ ո՞վ կը ներկայացնէ: Միթէ ասկէ առաջ չէինք նշած թէ Քրիստոս «փեսան» է եւ ամէն մարդ արու կամ հգ Քրիստոսի «հարսն» է: Ուրեմն համայն մարդկութիւնը՝ ան ըլլայ արու կամ հգ, կնոջ միջոցաւ՝ Մարիամով ներկայացուած է: Բոլորս ալ իբրեւ «հարսնցու»՝ «կին» յաւիտենական կեանքի արժանի չենք: Ահա՛, «կիները արժանի չեն կեանքի»-ին իմաստը աս է: Ուրեմն պատշաճ չէ՞ որ Պետրոս այս անարժանելիութեան մարդոցմէն հեռանալը փափաքի: Յիսուսի տուած պատասխանը հրաշալի յայտնութիւն մըն է: Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Տեսէք, ես զայն կ'առաջնորդեմ, որպէսզի զինք այր ընեմ»: Այս հիման վրայ Քրիստոս, ամէն մարդու ճշմարիտ էութիւնը, մինչեւ որ մարդը «մարդ» ըլլայ, կամաց-կամաց զայն կ'առաջնորդէ: Եթէ ամէն մարդ Քրիստոսի «հարսնցուն»՝ «կին» է, միայն Քրիստոսի հետ միանալով եւ անոր մէջ լուծուելով է, որ կրնայ «մարդ»-ու փոխուիլ: Յիսուսի հետեւեալ

խօսքը՝ «Որպեսզի ան ալ կենդանի Հոգի դառնայ նման ձեզի՝ այրերուդ»-ը յայտնի կ'ընէ, թէ ինչ է «կին»-ը եւ ինչ է «այր»-ը: Կինը այն է, որ Ֆիզիքականին եւ իր մարմնին հետ նոյնացած, աշխարհին կապուած է: Իսկ այրը, այն է, որ Ֆիզիքականը անտեսելով հոգեկանին, իր ներքին Քրիստոսին կապուած է: Միթէ կինը մարմնին ծնունդ տուողը չէ՞: Հետեւաբար իրենց փոխաբերական իմաստներով օգտագործուած «կին» եւ «այր» բառերը պատշաճ են: Համարին վերջին նախադասութեան «Քանզի ամէն կին, որ ինքզինք այր կ'ընէ, կը մոնտէ երկնային արքայութիւն» իմաստը այն է, թէ անոնք որոնք «կին» են՝ Ֆիզիքականին կապուած, երբ կը կարողանան անկէ ձերբազատուիլ «այր» կ'ըլլան: Անոնք, որոնք «այր» են՝ հոգեկան արթնութիւն ունին եւ Քրիստոս իրենց մէջ յայտնաբերել կը յաջողին, յաւիտեանական կեանքին կ'արժանանան:




ԲԱՐԻ Է ԱՆՈՒՆ ԲԱՐԻ՝
ՔԱՆ ՉՈՂՈՐԱՌՈՒԹԻՒՆ ԲԱՐԻ,
ԵՒ ՕՐ ԱՎՀՈՒԱՆ ԻՒՐՈՂ՝ ՔԱՆ ՉՕՐ ԾԱՆԴԵԱՆ ԻՒՐՈՂ:

(Բանք Ժողովողին է: 2)



INTELLECT
&
WISDOM
ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝
ՈՒՇԻՄՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ



Հմտութիւնը վիճաբանութեան կ'առաջնորդէ,
Իմաստութիւնը՝ համաձայնութեան:
Հասկացողութիւնը կամ քի ոյժն է:
Իմաստութիւնը ոյժն է ընդդէմ կամ քի:
Հմտութիւնը այրող ջերմութիւն է:
Իմաստութիւնը տաքուկ է, կը հանդարտեցնէ:
Հմտութիւնը գիտութիւն կը տենչայ՝ փնտռողը կը յողնեցնէ:
Իմաստութիւնը ճշմարտութեան կը տենչայ, փնտռողը կ'ողբերէ:
Ուշիմ է ան, որ կը կառչի:
Իմաստուն է ան, որ կը թողու:
Գիտութիւնը մեզ կը կառավարէ
Իմաստութիւնը՝ կ'առաջնորդէ:
Ուշիմ մարդը կը կարծէ, թէ ամէն ինչ գիտէ:
Իմաստուն մարդը գիտէ, թէ տակաւին սորվելիք շատ բաներ կան:
Ուշիմ մարդը միշտ կ'աշխատի իր տեսակէտի ճշգրտութիւնը փաստել:
Իմաստուն մարդը գիտէ, թէ փաստուելիք կէտ չկայ:
Ուշիմ մարդը չթախանցուած խորհուրդ կու տայ:
Իմաստուն մարդը բոլոր հաւանակութիւնները նկատողութեան
առնուելէ յետոյ իր գաղափարը կու տայ:
Ուշիմ մարդը ըսուածը կը հասկնայ:
Իմաստուն մարդը կը հասկնայ այն ինչ որ չէ ըսուած:
Ուշիմ մարդը կը խօսի երբ պէտք է խօսի:
Իմաստուն մարդը կը խօսի միայն երբ ըսելու բան մը ունի:
Ուշիմ մարդը ամէն ինչ կը նկատէ յարաբերական:
Իմաստուն մարդը ամէն ինչ կը նկատէ յարաբերեալ:
Ուշիմ մարդը կը ջանայ ամէն ինչի ընթացքը կառավարել:
Իմաստուն մարդը ընթացքը կը նաւարկէ:
Ուշիմ մարդը կը քարոզէ:
Իմաստուն մարդը կը համակէ:
Ուշիմութիւնը լաւ է,
սակայն իմաստութիւնը աւելի լաւ արդիւնք ձեռք կը ձգէ:
Թարգմանուած



-Դ-

ԱՒԵՏԱՐԱՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ



ԱՒԵՏԱՐԱՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Աւետարաններու մէջի գրութիւնները կը ներկայացնեն Աստուծոյ նկատմամբ Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցուցածները: Պէտք է հասկնալ, թէ մարդկային միտքը իմացականութեամբ Աստուած հասկնալու կարողութիւնը չունի: Հակառակ այս իրողութեան մարդուն ունեցած իմացականութիւնը, որ կը գերազանցէ անասուններունը, նոյնիսկ սկիզբնական շրջանէն սկսեալ, անոր տուած է Աստուծոյ գոյութեան գաղափարը եւ հաւատալիքը: Այս գաղափարը շատ հաւանական է հիմնուած ըլլայ այն իրողութեան վրայ, թէ ամէն արդիւնք պատճառ մը պէտք է ունենայ: Հետեւաբար եթէ տիեզերքը ներառեալ մենք, գոյութիւն ունինք, պէտք է «բան»-ի մը արդիւնքը ըլլանք: Այդ «բան»-ը անոր գոյութեան պատճառն է: Կարեւոր է գիտնալ այդ պատճառը կամ անոր բնոյթը, կարեւոր է միայն գիտնալ թէ պատճառ մը պէտք է ըլլայ: Մարդ արարած այդ պատճառը կոչած է «Աստուած»:

Ինչպէս վերեւ գրուած է մարդ իր իմացականութեամբ Աստուած հասկնալու կամ գիտնալու կարողութիւնը չունի: Բայց Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց, թէ մարդ ոչ իմացականօրէն այլ փորձառականօրէն Աստուած «գտնելու»՝ ճանչնալու կարողութիւնը ունի: Յիսուս Քրիստոս նաեւ մեզի սորվեցուց Աստուծոյ շատ մը յատկութիւնները:

Առաջին հերթին Յիսուս տուաւ երրորդութեան գաղափարը: Երրորդութիւնը կազմուած է Հայր Աստուծմէ, Ս. Հոգիէն եւ Որդին՝ Քրիստոսէն: Հայր Աստուած ամէն ինչի ալն է: Մարդ արարած ամենեւին չի կրնար հասկնալ Հայր Աստուծոյ բնոյթը: Հետեւաբար նոյնիսկ աւելորդ է որեւէ բան գրել այդ մասին: Ըստ Աւետարանի սորվեցուցածներուն Ս. Հոգին Հայր Աստուծմէ բղխած է եւ կը ներկայացնէ Աստուծոյ

գորութիւնը: Նոյնիսկ այսօր գիտուններ կ'ըսեն, թէ Ս. Հոգին, որ իրենք «մութ գորութիւն» կը կոչեն, մէկ «կէտ»-է մը բղխած է: Այդ «կէտ»-ը անոնք միականութիւն կոչած են: Հետեւաբար ամէն ինչի միականութիւնը պէտք է ներկայացնէ Հայր Աստուած: Մարդիկ տակաւին չեն գիտեր Ս. Հոգիի գորութեան բնոյթը: Ընդհանուր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի գորութեամբ գոյացած է: Պէտք չէ մոռնալ, թէ նիւթը միայն գորութեան խտացած մէկ երեւոյթն է: Այդ գորութեան յայտնութիւնը իբրեւ նիւթ Աստուծոյ Որդին Քրիստոսըն է: Ճիշդ ասոր համար Աւետարանը կը գրէ. «Դուք Աստուծոյ տաճարներ էք»: Քրիստոս մեր մէջ կը բնակի մեր ճշմարիտ էութիւնն է, մեր հոգին է: Միթէ Յիսուս չէ ըսած. «Աստուած հոգի է»:

Երրորդութիւնը երեք զանազան «անձնաւորութիւն»-ներ չեն այլ մէկ ճշմարտութեան երեք տարբեր երեւոյթները: Այս գաղափարը հասկնալու համար հետեւեալ օրինակը կրնայ օգտակար ըլլալ: (Տես նաեւ «Զարթօնք» գիրքիս մէջ էջեր 76-80) Երեք կոյրեր կը ջանան շօշափելով նկարագրել փիղ մը: Առաջինը, որ անոր պոչը բռնած է, կ'ըսէ. «Փիղը մագոտ չուանի կը նմանի»: Երկրորդը, որ անոր կնճիթը բռնած է, կ'ըսէ. «Փիղը երկար խողովակի կը նմանի»: Իսկ երրորդը, որ փիղին մարմինը շօշափած է, կ'ըսէ. «Փիղը պատի կը նմանի»: Փիղը մէկ է, բայց կոյրերուն համար տարբեր «երեւոյթներ» ունի: Նմանապէս Աստուած մէկ է, բայց մեզի պէս խաւարամիտներուն համար, որ կարող չենք միականութիւնը տեսնել, Աստուած զանազան երեւոյթներ ունի: Ճիշդ ասոր համար Քրիստոս յաճախ ըսած է. «Ես Հօրս մէջ եմ եւ Հայրս իմ մէջ», ինչպէս նաեւ. «Ես ձեր մէջն եմ եւ դուք ալ իմ մէջ»:

Այս տեղեկութեան լոյսին տակ, որքան որ ալ կարող չենք Աստուծոյ բնոյթը գիտնալ կամ հասկնալ,

ըստ Աւետարանէն մեր սորվածներուն կարելի է Աստուծոյ մի քանի յատկութիւնները գիտնալ:

Նախ գնենք թէ Քրիստոս Աստուծոյ նկատմամբ ինչ սորվեցուց մեզի: Քրիստոս ըսաւ. «Աստուած Սէր է»: Ան նաեւ ըսաւ. «Ես եմ Ճշմարտութիւնը, Ես եմ Կեանքը, Ես եմ Դուռը, Ես եմ աշխարհի Լոյսը»: Եթէ լաւ մը հասկնանք Քրիստոսի այս խօսքերուն բուն իմաստները, կը հասկնանք նաեւ Աստուծոյ մի քանի յատկութիւնները:

Ա- Աստուած սէր է.

Քրիստոսի սորվեցուցած այս տեղեկութեան համաձայն Աստուած ամենեւին մեզ չի պատժեր, որովհետեւ բացարձակ սէրը ներողամիտ է: Աւետարանին մէջ նաեւ գրուած է, թէ Ս. Հոգիի շնորհները կը տեղան բոլորին վրայ թէ՛ բարիին եւ թէ՛ չարին անխտիր: Հետեւաբար պէտք է խորհինք թէ Աստուած մեզ կը պատժէ: Բայց Աւետարանին մէջ յաճախ կը հանդիպինք մեղքի գաղափարին եւ անոր յառաջ բերած անբաղձալի պատահարներուն, որոնք պատիժ կը համարենք, որ սխալ է: Այս կէտը լաւ հասկնալու համար յարմար է հետեւեալ պատմութիւնը պատմել. Հայր մը իր երեք զաւակները կը կանչէ, դուրս պտոյտի երթալու համար: Տղոցմէն երկուքը անմիջապէս կօշիկնին կը հագուին եւ իրենց հօր կ'ընկերակցին: Երրորդը, զբաղ իր խաղալիքներով խաղալով, հօրը երեք-չորս անգամ ուտան կանչերը կ'անտեսէ եւ չ'երթար: Պտոյտէն վերջ երբ եղբայրները տուն կը վերադառնան երրորդին կ'ըսեն թէ պաղպաղակ կերած էին եւ շատ հաճելի շարժանկար մը դիտած: Երբ անոնք կը ջանային շարժանկարին նիւթը պատմել, ան կը սկսի լալ եւ ըսել թէ հայրը զինք չի սիրեր: Յանցաւորը ո՞վ էր: Արդեօք հայրը զինք պատժեց, ապա թէ ոչ ինք իր հօրը կանչը անտեսեց: Նմանապէս մեր կեանքին մէջ ալ մենք մեր

երկնաւոր Հօր կանչը կ'անտեսենք եւ կ'ըսենք թէ մեզ կը պատժէ: Մեզմէ կախեալ է ինչ որակով Ս. Հոգիի զօրութիւն կ'արտօնենք որ մեր մէջ ներգործէ: Կը խափանենք զօրութեան հոսքը մեր մէջ եւ կը զարմանանք, թէ ինչու վատ պատահարներու կ'ենթարկուինք: Աստուծոյ յաջորդ յատկութեան մեկնաբանութենէն պիտի տեսնենք, թէ մեր աշխարհիկ կեանքը, որ ճշմարտութիւն ըլլալ կը համարենք, միայն երազ մըն է: Երբ անհատը իր քունի ընթացքին վախազդու երազ մը կը տեսնէ, յանցաւորը ո՞վ է, երազողը, թէ անոր ենթագիտակցութեան մէջ դրուած զանազան անպէտ եւ սխալ տեղեկութիւնները:

Բ- Ես եմ ճշմարտութիւնը.

Յաճախ կ'իմանանք, որ մարդիկ կ'ըսեն. «Միակ ճշմարտութիւնը Աստուած է»: Մարդիկ այս առածը կ'ըսեն առանց հասկնալու անոր բուն իմաստը: Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուած է, կը նշանակէ թէ այն բոլոր զանազանութիւնները որ մենք ճշմարտութիւն կը նկատենք, ճշմարտութիւն չեն: Իսկ եթէ ճշմարտութիւն չեն պէտք է պատրանքային ըլլան՝ նման երազի մը: Հետեւաբար մեր աշխարհի՝ ստացուածքներուն, ընտանեկան անդամներուն, բարեկամներուն եւ ընկերներուն, մեր ազգին, մեր կրօնքին ... կապուածութիւնը սխալ է: Մենք կապուած ենք պատրանքի՝ երազի մը: Ինչպէս վերեւ գրուած է մենք կը կարծենք, թէ երազը ճշմարտութիւն մըն է: Անտարակոյս երազին մէջի ամէն ինչ ճշմարտութիւն կը թուի, այնքան ատեն որ մենք կ'երազենք: Բայց երբ արթննանք, միայն այն ատեն կը հասկնանք թէ ան ճշմարտութիւն չէր, այլ երազ էր եւ կ'անտեսենք անոր մէջի բոլոր լաւ ու վատ պատահարները: Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուած է, ուրեմն ի՞նչ է ընդհանուր տիեզերքը եւ ի՞նչ է մեր ամէն մէկուն կեանքը: Անոնք

միայն երազ են: Ընդհանուր տիեզերքը ճշմարտութիւն
չէ, այլ՝ Հայր Աստուծոյ երազը: Ս. Գիրքին մէջ գրուած
է. «Դուք աստուածներ էք» ինչպէս նաեւ «Դուք Աստու-
ծոյ որդիներ էք»: Առաջին նախադասութիւնը կը յայ-
տարարէ թէ ամէն ինչ Աստուծոյ մէկ արտայայտու-
թիւնն է: Իսկ երկրորդ նախադասութիւնն ալ՝ անհատի
ճշմարիտ էութեան իր հոգին՝ Քրիստոսը ըլլալը: Մար-
դուն սխալը այն է, թէ ինք տարուած երազէն մոռցած
է իր ճշմարիտ էութիւնը: Ամէն անհատի կեանքը իր
ներքին Քրիստոսի երազն է: Քրիստոս պատասխանա-
տու չէ երազին պարունակութենէն, ինչպէս անկողինին
մէջ քնացող անհատ մը չ'ուզեր վախազդու երազ մը
տեսնել, բայց իր ենթագիտակցութեան մէջի տեղեկու-
թիւնը կ'որոշէ երազին բովանդակութիւնը: Մեր ենթա-
գիտակցութեան մէջի տեղեկութիւններն ալ հոն գրուած
են ուրիշներու կողմէ մեզի տրուած հաւատալիքներով:
Ներքին Քրիստոս, որ մեր կեանքը կ'երազէ չուզեր
վատ պատահարներ իր երազին մէջ: Բայց ան կ'երազէ
ըստ զօրութեան մարմնին մէջ տեղաւորուած տեղեկու-
թեան համաձայն: Այդ տեղեկութիւնը մենք հոն կը
դնենք մեր խորհուրդ, խօսք ու արարքներով: Հետեւա-
բար ինչ որ մեզի կը պատահի մեր այս «երազական»
կեանքի ընթացքին, պատճառը մենք ենք: Այս հիման
վրայ ալ Աստուած արդար է:

Յիսուս մեզի սորվեցուց նաեւ երազէն արթննա-
լու միջոցը: Յիսուս չսորվեցուց միայն խօսելով, այլ
Ան սորվեցուց գործնականօրէն՝ իր կենցաղով ցոյց
տալով: Նախ ինք յաջողեցաւ յետոյ մեզի ըսաւ Իրեն
հետեւիլ:

Գ- Ես եմ կեանքը.

Փորձառութեամբ շատ լաւ գիտենք թէ երբ անհա-
տը իր հոգին աւանդէ մարմինը պարզապէս կ'ըլլայ
առանց կեանքի գիակ մը, որ կը փտի եւ ժամանակի

ընթացքին կ'անհետանայ: Մական Նոյնիսկ դիակին մէջ կեանքը տակաւին շատ աւելի ցած մակարդակի վրայ ներկայ է: Բայց ան բջիջներուն եւ հիւլեներուն կեանքն է, եւ ոչ անհատին: Կեանքը նկարագրուած է որպէս առանց արտաքին ոյժի օգնութեան շարժումի կարողութիւն: Մարդուն մարմինը, ինչպէս նաեւ անասուններ եւ բոյսեր բոլորն ալ այդ կարողութիւնը ունին: Բոյսին շարժումը շատ դանդաղ է, որով այդ տեսնել միայն ժամանակի անցքով նկարուած (time lapse photography) ժապաւէնով կարելի է: Նոյնիսկ, ան ինչ որ կը նկատենք անզգամ նիւթ, ունի իր հիւլեներուն շարժումը, որ մեզի տեսանելի չէ: Քանի որ ամէն ինչ Աստուծոյ արտայայտութիւնն է, ինչպէս վերեւ նշուած է, պէտք է ունենայ կեանք: Անտարակոյս, այդ կեանքը կը յայտնուի զանազան մակարդակներու վրայ: Ոմանք մեր գիտակցութեան մակարդակին համար «տեսանելի» են եւ ոմանք ալ՝ ոչ: Քանի որ կեանք ունինք եւ կ'ապրինք, կը նշանակէ թէ Աստուած՝ Քրիստոս մեր մէջ ներկայ է: Երբ մարդ կը կարողանայ իր մէջ Քրիստոսի բարձր գիտակցութիւնը յայտնաբերել, ինք կը տեսնէ ճշմարտութիւնը եւ կեանքը ամենուրեք: Ան կը տեսնէ թէ ամէն ինչ՝ ընդհանուր տիեզերքը ողջ է՝ կեանք ունի եւ կ'անտեսէ կամ աւելի ճիշդ է ըսել կը մոռնայ զանազանութիւնը եւ կը լուծուի ընդհանուրին՝ կեանքին մէջ: Ահա՛, աս է Քրիստոսի սորվեցուցած յաւիտենական կեանքը:

Դ- Ես եմ դուռը

Երբ Քրիստոս կ'ըսէ «Ես եմ դուռը», ակնարկութիւնը այն է, թէ Ս. Հոգիի կենսատու զօրութեան ներգործումը անհատէն ներս կախեալ է իր ներքին Քրիստոսէն: Անհատը ինչ աստիճանով հաղորդութեան մէջ կ'ըլլայ ներքին Քրիստոսի հետ այն աստիճանով ալ յաւելեալ Ս. Հոգիի զօրութեան կ'արժանանայ:

Ե- Ես եմ աշխարհի Լոյսը.

Ի՞նչ կը նշանակէ աշխարհի Լոյսը ըլլալ: Այս պարզ նախադասութիւնը հսկայական տեղեկութիւն եւ հասկացողութիւն կու տայ: Նախ նկատողութեան առնենք մեր գիտցած լոյսը՝ բնագիտութեան մէջ ելեկտրամագնիսական ճառագայթներուն որոշ թրթռացումի յաճախականութիւն ունեցող «տեսանելի» զօրութիւնը՝ լոյսը: Բնագիտութեան մէջ գիտցուած լոյսի յատկութիւնները կը համապատասխանեն նաեւ Աստուծոյ յատկութիւններուն: Հետեւաբար զարմանք պէտք չէ պատճառէ, թէ Քրիստոս ըսաւ. «Ես եմ աշխարհի Լոյսը»: Այս յատկութիւններն են.

ա- Լոյսը թէ՛ նիւթ է՝ «Ֆօթօն», թէ՛ ալ ալիք՝ «զօրութիւն»: Նմանապէս Աստուած ալ ունի թէ՛ զօրութեան երեւոյթ՝ Ս. Հոգին, թէ՛ ալ՝ նիւթեղէն՝ Քրիստոս: Այս հիման վրայ տիեզերքը Աստուծոյ «մարմին»-ը՝ Որդին է: Հետեւաբար Աստուած ամենակարող է: Հակառակ ընդհանուրի կարծիքին լոյսը տեսանելի չէ, բայց անոր ցոլացումը ամէն ինչ տեսանելի կ'ընէ: Նմանապէս Աստուած տեսանելի չէ, բայց անոր «ցոլացումը»՝ ներկայութիւնը ամէն ինչ «տեսանելի»՝ գոյ կ'ընէ (Տես նաեւ ստորեւ (գ-) Լոյսին փոխաբերական իմաստը):

բ- Լոյսը լոյսի արագութեամբ կ'ընթանայ: Այսօր փաստուած է, թէ երբ լոյսի արագութեամբ ընթանանք ժամանակը չ'անցնիր: Հետեւաբար Աստուծոյ համար ժամանակը գոյութիւն չունի: Ինչպէս լոյսին ֆօթօնը, որ լոյսի արագութեամբ կ'ընթանայ, տիեզերքի մէջ միանգամայն ամենուրեք կրնայ ըլլալ, Աստուած ալ միանգամայն ամենուրեք է:

գ- Յիսուսի ըսած Լոյսը նաեւ ունի փոխաբերական իմաստ: Ինչպէս «տեսանելի» լոյսը ամէն ինչ տեսանելի կ'ընէ, Աստուծոյ Լոյսը, որ Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ, մեզի համար ամէն ինչ «տեսանելի»

կ'ընէ: Յիսուսի ըսած այդ փոխաբերական իմաստը մեր գիտակցութիւնն (consciousness) է: Թմբերի մէջ եղող մէկը ոչ աշխարհէն տեղեակ կ'ըլլայ եւ ոչ ալ ինք իրմէն: Ինչպէս լոյսը ինք տեսանելի չէ, բայց ամէն ինչ տեսանելի կ'ընէ, նոյնպէս գիտակցութիւնը, որ Քրիստոսի մեր մէջ ներկայութիւնն է, թէեւ ինք «տեսանելի» չէ, բայց ամէն ինչ մեզի «տեսանելի» կ'ընէ: Ընդհանուր տիեզերքի մէջ միայն մէկ գիտակցութիւն կայ, ան ալ Աստուծոյ գիտակցութիւնն է: Ամէն անհատ անոր փոքր մէկ մասնիկը կարող է յայտնաբերել եւ կը կարծէ թէ ամէն գիտցածը ճիշտ է: Ինք ձգմարտութիւնը շատ սահմանափակ կերպով կը «տեսնէ»՝ կը հասկնայ: Ամէն անհատի գիտակցութիւնը մաս եւ բաժինն է Աստուածային գիտակցութեան, որով այն բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները, որոնց ամէն մի անձ գիտակից է, Աստուած ալ գիտակից է: Հետեւաբար Աստուած ամենագէտ է:

Մարդկային եւ Աստուածային գիտակցութեան տարբերութիւնը հասկնալու համար նկատողութեան առնենք հետեւեալ բաղդատականը: Ենթադրենք թէ կէսօրուայ փայլուն արեւին լոյսը կը ներկայացնէ Աստուծոյ գիտակցութիւնը, իսկ մարդուն միտքն ալ՝ պատուհանը ուրիշ լոյսը՝ ներս՝ սենեակ կը մտնէ եւ սենեակին մէջ ամէն ինչ տեսանելի կ'ընէ: Եթէ պատուհանին ապակին երանգուած (tinted) ըլլայ եւ վարագոյրներն ալ գոցուած, արեւէն սենեակ մտած լոյսը շատ տկար կ'ըլլայ եւ սենեակին մէջի առարկաները հազիւ տեսանելի կ'ըլլան: Այդ տկար լոյսով անձը շատ դիւրութեամբ կրնայ սխալիլ եւ գետինի հաստ չուանի կտորը օձ կարծել ու վախնալ: Ասոր հակառակն ալ կարելի է, օձը չուան կարծել եւ խայթուիլ: Այս բոլոր սխալներուն պատճառը յստակ չտեսնելու՝ չհասկնալու հետեւանքն է: Նմանապէս մարդուն միտքն ալ միշտ եւ

ընդհանուր առմամբ անպէտ խորհուրդներով «երանգուած» է: Մարդուն «Ես»-ն ալ միշտ մարդուն միտքին «վարագոյրները կը գոցէ» զգացումներով, յուզումներով եւ ցանկութիւններով, ինչպէս նաեւ այն որ պիտոյ է, զայն գիտցած ըլլալու համոզումով, այսինքն զանազան հաւատալիքներով, որոնք ճշմարտութեան հետ որեւէ կապակցութիւն չունին: Մարդն ալ «արեւին փայլուն լոյսը»՝ Քրիստոսի բարձր գիտակցութիւնը, իր մէջ ունենալով հանդերձ անկէ չի կրնար օգտուիլ: Իր ստացած գիտակցութեամբ ալ յաճախ ճշմարտութիւնը սխալ կը տեսնէ՝ կ'ըմբռնէ եւ այդ սխալ հասկացողութեամբ ալ սխալ կը գործէ: Աստուած տեսնելու համար, ըստ Յիսուսի սորվեցուցածին պէտք է «Սուրբ սիրտ» ունենանք: Այդ ալ մտքին ապակին մաքրել, առանց երանգի ապակի դնել եւ վարագոյրները բանալն է: Եւ աս է ամենավեհ աղօթքին՝ խոկումին նպատակը՝ մաքրել միտքը եւ անտեսել «Ես»-ը: Երբ անհատը իր ներքին Քրիստոսին կը յարի մաքրուած միտքով մը, ան Քրիստոսէն, որ «դուռն է», կը ստանայ յաւելեալ բարձր որակով Ս. Հոգիի զօրութիւն: Աս Ս. Հոգիի շնորհն է, որ անձին կու տայ շատ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ: Շնորհիւ այս բարձր գիտակցութեան ալ անձը կը «տեսնէ» ճշմարտութիւնը: Երբ կ'ըսենք բարձր որակով զօրութիւն, ակնարկութիւնը անհատին ստացած զօրութեան թրթռացումի բարձր յաճախականութեան համար է: Այս ուղղութեամբ տեղին է հետեւեալ մէջբերումը:

Այս վերեւի գրութենէն օր մը վերջ համացանցէն ստացայ գիտական դասախօսութիւն մը, որ տեղեկութիւն կու տար մարդուն ուղեղային ալիքներու (brain waves) թրթռացումի զանազան յաճախականութիւններուն մասին եւ անոնց փոխյարաբերութիւնները մարդուն գիտակցութեան մակարդակին հետ: Դասախօսին

եզրակացութիւնը այն էր, թէ երբ մարդուն գիտակցութեան մակարդակը կը փոխուէր, անոր ուղեղային ալիքներուն յաճախականութիւններն ալ կը փոխուէին: Արդեօք կարելի չէ՞, որ երբ թրթռացումի յաճախականութիւնը փոխուի պատճառ կ'ըլլայ գիտակցութեան մակարդակի փոփոխութեան: Ո՞րը առաջ եկած է. հաւը թէ հաւկիթը: Ստորեւ թարգմանաբար պիտի ներկայացնեմ Բժշ. Ժօ Տիսպենզաի (Dr. Joe Dispenza) դասախօսութիւնը:

Հետաքրքրական է, թէ ան իր դասախօսութիւնը կը սկսի հետեւեալ հարցումով. «Ի՞նչ է «գերմարդկային»-ին (supernatural) իմաստը եւ կու տայ հետեւեալ պատասխանները.

ա- Միայն խորհուրդով կարենալ մարմինը փոխել:
բ- Կարենալ մարմինը գերազանցել:

գ- Արտաքին միջավայրի ներկայացուցած կացութիւնները եւ դժուարութիւնները գերազանցել: Մեծամասնութեամբ մարդիկ կարող չեն այս ուղղութեամբ յաջողիլ:

դ- Կարողանալ ապագայի վիճակ կամ կացութիւն մը գուշակել: Աս նշան մըն է ժամանակը գերազանցելու:

Ան նաեւ կ'ըսէ, թէ ամէն անհատ այս բոլորը ընելու կարողութիւնները ունի, եթէ ինք իր մտքին, սրտին եւ մարմնին իրարու հետ ունեցած յարաբերութիւնը փոխէ (rewiring):

Այս հանգրուանին դասախօսութիւնը ուղղութիւն կը փոխէ եւ ան կը նկարագրէ ուղեղը եւ կ'ըսէ, թէ ուղեղը անհատին երեք կարողութիւններ կու տայ՝ խորհիլ, գործել եւ ըլլալ, հետեւաբար երեք զատ ուղեղներ ունենալու տպաւորութիւնը: «Ճակտի բլթակ»-ը (frontal lobe) մարդու ուղեղին 40%-ը կը կազմէ: Իսկ կապիկի ուղեղին միայն 17%-ը, շունին 7%-ը եւ կատուին 3%-ը:

Շնորհիւ ուղեղի այս մասին մարդ կարող է՝ ազատ կամ-
քը օգտագործել, դիտաւորութիւն (intension) ունենալ,
սորվիլ, ստեղծիչ ըլլալ, ուշադիր ըլլալ, հայեցողութիւն
ունենալ, կեդրոնանալ, իր կենցաղին ընթացքին վրայ
իշխել եւ զայն ղեկավարել, զգացումները զսպել եւ
որոշում տալ: Ան նաեւ խղճին բնավայրն է:

Ուղեղին ուրիշ զանազան մասերը մարդուն կու
տան հետեւեալ կարողութիւնները. յիշողութիւն ունե-
նալ, շարժիլ՝ Ֆիզիքապէս գործել եւ ինքնագիտակցու-
թիւն՝ ինքզինք ուրիշներէ զանազանել:

Դասախօսը յաջորդաբար տեղեկութիւն կու տայ
ուղեղին գործառնութեան մասին եւ կը շեշտէ կարելի-
ութիւնը եւ նոր փորձառութիւններ ունենալու միջոցը:
Ան կ'ըսէ, թէ միայն մէկ նիւթին վրայ մէկ ժամուայ
մտային կեդրոնացումը, ուղեղային բջիջներու միջեւ
գոյացած յարաբերական կապերը կը կրկնապատկէ: Ան
նաեւ կը խօսի ուղեղին աշխատելու ձեւին եւ մարդուն
համար փորձառութիւն մը ունենալու միջոցին մասին:
Ան կ'ըսէ. Փորձառութիւնը հիմնուած է գիտութեան
(knowledge) վրայ:

ա- Երբ կենցաղը կը համապատասխանէ դիտաւո-
րութեան (intension),

բ- Երբ գործունէութիւնը կը համապատասխանէ
խորհուրդին եւ

գ- Միաքը ու մարմինը կը գործեն համերաշխա-
բար, անձն ալ կը կարողանայ նոր փորձառութիւններ
ունենալ:

Յաջորդաբար ան կը նկարագրէ «ստնաւորային»
(mammalian-imbic) ուղեղը: Մարդուն հինգ զգայարան-
ներէն եկած տեղեկութիւնները կը գրգռեն նաեւ «սըտ-
նաւորային» ուղեղը, որ կ'արտադրէ քիմիական բաղադ-
րութիւններ՝ գրգռանիւթեր (hormones) որ անհատին կու
տան զգացումներ եւ յուզումներ: Այդ բաղադրութիւն-

ները կարող են անհատին անհունութեան, լիութեան եւ ազատութեան զգացումները տալ: Ուղեղին այս մասը մարմինն կը սորվեցնէ կամ փորձառութիւնը կու տայ այն ինչ որ միտքը իմացականութեամբ հասկցած է: Գիտութիւնը մտքին համար է, իսկ՝ փորձառութիւնը մարմինն: Նման փորձառութիւններ կարողութիւնը ունին ծինները (gene mutation) փոխելու, հետեւաբար փոխելու նաեւ անհատին ծինային ճակատագիրը (genetic destiny): «Ստնաւորային» ուղեղը նաեւ ինքնավարական ջղային դրութեան (autonomic nervous system) կեդրոնն է: Այս ջղային դրութիւնը մարմինն բոլոր մասերուն կեանք կու տայ առանց մեր գիտութեան:

Յաջորդաբար դասախօսը ուղեղային պայմանաւորման մասին կը զրուցէ: Ան կ'ըսէ, թէ փորձառութիւնները տեղի կու տան քիմիական բաղադրութիւններու արտադրման, որոնք կու տան զգացումներ եւ պատճառ կ'ըլլան Ֆիզիքական փոփոխութիւններու: Եթէ անհատը շարունակաբար եւ բազմիցս կ'ենթարկուի նոյն փորձառութեան իր միտքը եւ մարմինը այդ ուղեղային քիմիական բաղադրութիւններուն ազդեցութեան տակ կը պայմանաւորուին եւ միտքը ու մարմինը իրարու հետ համերաշխաբար կը գործեն: Եւ ահա այս է «կազմուած բնաւորութիւն»-ը (second nature), երբ միտքը ինքնաբերաբար կը խորհի եւ մարմինն ալ ինքնաբերաբար կը գործէ՝ առանց անհատին գիտակցութեան: Մարդ արարած իր ուղեղը կը պայմանաւորէ արտաքին աշխարհը որոշ կերպով մը տեսնել: Մարդ կարող է իր ուղեղի գործելու ձեւը փոխել իր ուշադրութեանը կեդրոնացումովը: Այս ուղեղային գործելու փոփոխութիւնն ալ անհատին աշխարհը ամբողջովին տարբեր կերպով ըմբռնելու ու ճանչնալու կարողութիւնը կու տայ: Աս ալ կը պարտի գիտակցաբար վերհսկելու եւ որոշելու ուղեղային ալիքները: Բոլոր ջղա-

յին՝ ուղեղային գործառնությունները յառաջ կը բերեն ելեկտրոմագնիսական շողացումներ զանազան թրթռացումի յաճախականութեամբ: Բժիշկներ կարող են այդ ուղեղային ալիքները (brain waves) եւ անոնց թրթռացումի յաճախականութիւնները ելեկտրաուղեղագիծի (EEG -electrencephalogram) միջոցով արձանագրել:

Դասախօսը ուղեղային ալիքներուն զանազան յաճախականութիւնները եւ անոնց համապատասխանող անհատին գիտակցութեան մակարդակներուն մասին տեղեկութիւն կու տայ: Այս ալիքներուն, իրենց յաճախականութեան համապատասխան տարբեր անուններ (Յունական այբենարանէն զանազան տառերու անուններ) տրուած են:

ա- Պէթա (β) ալիքները (12-32Hz) կը նկատուին բարձր յաճախականութիւն ունեցող ալիքներ: Անոնք ներկայ են երբ անհատին գիտակցութեան մակարդակը արթուն՝ բարձր մակարդակի վրայ է: Այս հանգրուանին անհատին ուշադրութիւնը արտաքին աշխարհին վրայ է եւ ան նաեւ կ'ունենայ տրամաբանելու կարողութիւն, գործելու եւ ընկերակցելու կարողութիւն: Այս հանգրուանին ուղեղը կ'իմաստաւորէ, ուղղակարգ կու տայ եւ կը միաբանէ արտաքին աշխարհի անցողաբարձր անհատին ներքին կացութեան հետ: Արթուն եւ գիտակից մարդուն ուշադրութիւնը ընդհանրապէս արտաքին միջավայրին վրայ կ'ըլլայ: Հինգ զգայարաններէն եկած բոլոր տեղեկութիւնները ուղեղին մէջի տեղեկութիւնները կ'ամբողջացնեն:

բ- Ալֆա (α) ալիքները (8-12Hz) կը գոյանան երբ ուղեղը հանգարտ է եւ չ'աշխատիր: Անհատը կարելի է հանգիստ նստած երաժշտութիւն մը մտիկ կ'ընէ: Այս հանգրուանին անհատին համար իր ներքին «աշխարհը» աւելի կարեւոր է, քան թէ արտաքինը: Ինք կը սկսի անդրադառնալ իր ունեցած խորհուրդներուն: Ան կ'ան-

տեսէ արտաքին աշխարհը: Ան կամաց-կամաց իր գիտակցութեամբ կ'իջնէ իր ենթագիտակցութեան մակարդակին, ուր կը գտնուին իր բնոյթին տուեալները: Այս հանգրուանին խորհուրդներու «ձայն»-ը կը դադրի բայց «պատկեր»-ներ կը յայտնուին: Առանց քնանալու մարդ կարող է այս մակարդակին հասնիլ: Ասոր մէկ օրինակը ինքնաշարժ վարելն է՝ շատ ապահով կերպով, բայց անգիտակցաբար: Աս կը կոչուի անուրջք (day-dreaming): Աս գիտակցութեան մակարդակի յափշտակութիւն մըն է: Այս հանգրուանին անհատը իր զգայարաններէն որեւէ փորձառութիւն չ'ունենար: Ան չ'իմանար, չի զգար, չի համտեսեր, չի հոտոտեր նոյնիսկ չի տեսներ: Կարելի է այս բոլորը տեղի կ'ունենան, բայց իր գիտակցութեան մէջ չեն արձանագրուիր: Անհատին գիտակցութիւնը զբաղ է երեւակայութիւններով:

դ- Թէյթա (Թ) ալիքները (4-8Hz) կը գոյանան երբ ուղեղը քուռի մէջ է, ինչպէս նաեւ քնածութեան դրութեան (hypnotic state) մէջ: Այս հանգրուանին շատ դիւրութեամբ կարելի է որոշ տեղեկութիւններ տեղադրել անհատին ենթագիտակցութեան մէջ: Հոգեբոյժերը երբեմն կ'օգտագործեն նման միջոցներ հիւանդը որոշ անձկութիւններէ եւ խուճապէ բուժելու համար: Այս հանգրուանին անհատը քննելու եւ տրամաբանելու կարողութիւնը կը կորսնցնէ: Մարմինը կը հանգչի: Անհատը մտայնօրէն կը գործէ իր ենթագիտակցութեամբ եւ իր անհատականութիւնը եւ իր ինքնագիտակցութիւնը ջնջուած են: Այս հանգրուանին քնացող անհատը նաեւ կ'երագէ:

դ- Տէլթա (Ծ) ալիքներու (0.5-4Hz) գոյութիւնը կը նշանակէ խորունկ քուռը: Այս հանգրուանին ուղեղը կը վերանորոգուի եւ մարմինն ալ անշարժ (catatonic) է:

Շատ հետաքրքրական է դասախօսին ներկայացուցած յաջորդ ուղեղային ալիքներու յաճախականութիւնը:

Ե- Կամա (γ) ալիքները (32-100Hz եւ աւելի ...) շատ հագուագիւտ կը գտնուին: Այս գիտակցութեան մակարդակին անհատը կը հասնի իմացողութեան եւ ընթոնումի գագաթնակէտը՝ շնորհիւ իր յայտնաբերած անհուն գիտակցութեան: Այս «արթնութիւն»-ը արտաքին պարագաներու հետեւանք չէ այլ ներքին գրգռանիւթերու (hormones) արդիւնք: Այս հանգրուանին մարմնի մէջի զօրութիւնը կը բարձրանայ մինչեւ ուղեղ եւ անհատին համար իր ներքին աշխարհն է, որ կը ներկայացնէ ճշմարտութիւնը, քան թէ արտաքին աշխարհը:

Դասախօսութիւնը հոս կը վերջանայ: Ուղեղային այդ «կամա» ալիքներու գոյութիւնը Աւետարանին մէջ գրուած եւ Յիսուս Քրիստոսի սորվեցուցած յափշտակութիւնն է: Երբ դասախօսը կ'ըսէ. «Ներքին աշխարհը կը ներկայացնէ ճշմարտութիւնը քան թէ արտաքին աշխարհը» կը նշանակէ անհատին մէջ Քրիստոսի յայտնութիւնը եւ անհատին միանալը Քրիստոսի: Անհատը կը գիտակցի ճշմարտութեան եւ կը հասկնայ աշխարհի զանազանութեան պատրանքային ըլլալը:

Այս մէջբերումի տուած տեղեկութեան համաձայն գիտութիւնը եւ Աւետարանը իրար չեն հակասեր այլ կը հաստատեն:


Եթէ Աւետարանին սորվեցուցածը այս վերելի Աստուծոյ յատկութիւններն են եւ Աստուծոյ եւ ստեղծագործութեան իրարու հետ ունեցած յարաբերութիւնը, մարդ ինչո՞ւ որեւէ բանէ, ներառեալ մահէ, վախնայ: Ահա՛ աս էր, որ Յիսուս իր խօսքերով եւ իր կենցաղով մեզի սորվեցուց: Մեզի սորվեցուց, ըլլալ այն ինչ որ արդէն ենք: Նոյնիսկ «ըլլալ» ըսելը սխալ է, որովհետեւ արդէն Ան ենք, բայց անգիտակից ենք այդ ուղղութեամբ՝ այդ ճշմարտութեան: Ան միայն անգրագարձ մըն է: Պէտք է անդրառնանք եւ գիտակցինք թէ

Ան ենք: Յիսուս սորվեցուց այդ անդրադարձը իրականացնելու միջոցը: Դժբախտութիւնը այն է թէ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, կապուած երազին, չ'ուզեր «հոգեկան» քունէն արթննալ, չ'ուզեր պատուհանին ապակին մաքրել եւ վարագոյրը բանալ: Պարտ ենք մենք զմեզ արժանի ընել աւելի բարձր գիտակցութեան, որ մեզի կու տայ ճշմարտութիւնը տեսնելու կարողութիւնը, որովհետեւ աս է մարդուն տրուած պարտականութիւնը այս աշխարհիկ կեանքի ընթացքին:

Մարդուն համար այս վերելի Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները յաջողութեամբ կատարելը անկարելի է իր հետապնդած ներկայ հասկացողութեամբ եւ կենցաղով: Ան նախ պէտք է ինքզինք արժանի ընէ: Այս արժանելիութիւնն ալ կը կարօտի «վերստին ծնունդի»՝ ամբողջովին տարբեր խորհեակերպի եւ կենցաղի: «Վերստին ծնունդ»-ը երկրորդ անգամ մկրտուիլ եւ վերստին ծնունդ ունեցած եմ ըսել չէ, այլ՝ ուղեղի գործառնութիւնը ամբողջովին փոխել է: Յիսուս թէ՛ իր խօսքերով եւ թէ՛ օրինակ ըլլալով մեզի նաեւ սորվեցուց կատարելութեան ուղին, որպէսզի ընթանալով այդ ուղիէն մենք զմեզ արժանի ընենք Աստուածայայտնութեան մեր մէջ:

Ահա՛, աս է Աւետարաններուն մէջ գրուած Յիսուս Քրիստոսի մեզի սորվեցուցածները:

Ջարմանալին այն է, թէ նոյնիսկ առաքեալները չէին հասկցած Յիսուսի սորվեցուցածներուն թաղուն իմաստները մինչեւ Պենտեկոստէի օրը, երբ անոնք ստացան Ս. Հոգիի զօրութիւնը հրեղէն լեզուի կերպարանքով: Պէտք է հասկնանք թէ «հուր»-ը զօրութիւն կը ներկայացնէ: Անոնք Ս. Հոգին ստացան իրենց ներքին Քրիստոսէն: Միթէ, Յիսուսի խաչելութենէն առաջ, Քրիստոս չէր ըսած. «Ես եմ դուռը» եւ դարձեալ «Ես



ձեզի Մխիթարիչը՝ ձշմարտութեան Հոգին (Ս. Հոգին) պիտի ղրկեմ»։ Անոնք ունեցան բարձր գիտակցութեան տուած զանազան գիտութիւնները եւ գերմարդկային կարողութիւններ։ Ս. Հոգիին շնորհքները կը տրուին բոլորին, որ անոնց կու տայ զանազան կարողութիւններ՝ յօգուտ հանրութեան։

«Եւ նա՛ իր պոմանս առաջեալս, պոմանս մարգարէ՛ս, պոմանս աւերարանիշս, պոմանս Հովիւս եւ վարդապետս. ՚ի Հասարակութիւնս սրբոց ՚ի Գործ պաշտաման, ՚ի շինոսած մարմնոյն Քրիստոսի. Սինշեւ Հասցոտ ամենեկեան ՚ի մի միաբանութիւնս Հասարոց՝ եւ Գիրութեան որդւոյն Լսորոշոյ. յայր կարարեալ ՚ի շափ Հասակի կարարման Քրիստոսի»։ (Եփեսացիս Դ։11-13)

«Եւ ինք տուաւ ոմանք՝ առաքեալներ ըլլալու, ոմանք՝ մարգարէներ, ոմանք՝ աւետարանիչներ, ոմանք՝ հովիւներ ու վարդապետներ, սուրբերուն կատարելութեան համար, սպասարկութեան գործին համար, Քրիստոսի մարմնին շինութեան համար. մինչեւ որ բոլորս հասնինք հաւատքին եւ Աստուծոյ Որդին ճանչնալու միաբանութեան, կատարեալ մարդու վիճակին, Քրիստոսի լիութեան հասակի չափին»։

Ասոնց բոլորին նպատակը ներկայացուած է այս մէջբերումին վերջին տողերուն մէջ։ Այդ նպատակը սրբանալ, հանրութեան ծառայել՝ սպասարկել եւ «Քրիստոսի մարմինը» շինելն է։ Քրիստոսի մարմինը ընդհանուր ստեղծագործութիւնն է եւ համայն մարդկութիւնը։ Քրիստոսի մարմնին շինութիւնն ալ բոլորին սրբանալը, եւ ընդհանուր ստեղծագործութեան մէջ Աստուծոյ Որդին Քրիստոս տեսնելն է, ինչ որ միականութիւնը տեսնել՝ հասկնալն է։ Երբ ամէն անհատ կը հասնի նոյն գիտակցութեան մակարդակին, բոլորը կը հասնին ձշմարտութիւնը ճանչնալու համա-

միութեան եւ կ'ըլլան լիացած՝ Քրիստոսի հետ մէկ, հետեւաբար կատարեալ: Ահա', աս է մարդկային կեանքին նպատակը, որ ընդհանուր մարդկութիւնը միասնաբար փորձառութիւնը ունենայ Աստուծոյ՝ Քրիստոսի միականութեան:

Առաքեալներն ալ հնազանդ Յիսուսի յորդորներուն, մասնաւորաբար. «ձեր մարգարիտները խոգերուն առջեւ մի նետէք»-ին, իրենք ալ, ոչ մէկ բան բացայայտ քարոզեցին եւ միայն խօսեցան համաձայն ժողովուրդին հասած գիտակցութեան մակարդակին: Անտարակոյս անոնք ալ թազնուած շատ մը տեղեկութիւններ տուին: Թէ՛ Հին եւ թէ՛ Նոր կտակարաններուն մէջ յաճախ շեշտուած է գիտութեան (knowledge) կարեւորութիւնը: Յաճախ կ'իմանանք քարոզչութիւններ, որոնք կը յայտարարեն թէ գիտութեամբ մարդ չի կրնար փրկուիլ, այլ միայն հաւատքով: Ընդհանրապէս անոնք կ'արհամարհեն այն մարդիկը, որոնք կը պրպտեն՝ հասկնալ եւ սորվիլ կ'ուզեն: Անտարակոյս այդ քարոզիչներուն ըսածին մէջ որոշ իրողութիւն մը կայ բայց անոնց հասկացողութիւնը սխալ է: Առանց գիտութեան մարդ ոչինչ կրնայ ընել: Նոյնիսկ մանուկ մը, որ քալել կը սկսի, քալելը կը սորվի որովհետեւ քալելու գիտութիւնը կ'իւրացնէ: Նոյնիսկ Աստուծոյ գոյութիւնը գիտնալը գիտութիւն մըն է: Եթէ անհատը այդ գիտութիւնը չունենայ, արդեօք Աստուած կը պաշտէ⁶: Հետեւաբար պէտք չէ գիտութիւնը արհամարհել, այլ, ըստ Ս. գիրքի, ճշմարիտ գիտութիւնը ամբարել եւ սորվածներն ալ կիրարկել է:

Սաղմոսերգուն իր հիացումը կը յայտնէ բարձր գիտակցութեան իրեն տուած գիտութեան՝ հասկացողութեան վրայ, որ չի համապատասխաներ իր սովորական ըմբռնումին:

«Ափանշելի եղեւ գիտութիւնն է՝ յինն, պօրապա»

Է- ոչ Հանդարտեմ նմա» : (Սաղմոս ՃԼԸ:6)

«Այս գիտութիւնը յոյժ սքանչելի է ինծի Համար-
Այնչափ բարձր է՝ որ չեմ կրնար զայն Հասկնալ»:
(Սաղմոս ՃԼԹ:6)

Մարդ պէտք չէ գիտութիւնը անտեսէ կամ արհա-
մարհէ, որովհետեւ գիտութիւնը մարդուն Աստուծոյ
տրուած է: Հետեւաբար Աստուծոյ տուածը արհամար-
հել մեղք է: Սաղմոսերգուն դարձեալ կ'ըսէ.

«Ինչն ո՞չ տեսնիցէ. Որ խրատէն զաշխարհս
որպէս թէ ոչ յանդիմանեացէ. ո՞ր սասանցանէ

մարդոց Գիտութիւն» : (Սաղմոս ԴԳ:10)

«Միթէ ազգերը խրատողը չի՞ յանդիմաներ. Միթէ մար-
դուն գիտութիւն սորվեցնողը չի՞ գիտեր»:(Սաղմոս ԴԴ:10)

Գիտութիւնը իմաստութեան արգիւնքն է եւ իմաս-
տութիւնն ալ՝ Ս. Հոգիի շնորհքներէն մին: Գիտութեան
նպատակը անհատին իր կեանքի նպատակին հասնելու
միջոցն է: Եթէ անհատը այդ նպատակին չծառայէ,
կրնայ աւելի վիշտի՝ ցաւի պատճառ ըլլալ: Ժողովողին
մէջ գրուած է.

«Զի Բազմութիւն իմաստութեան Բազմութիւն
Գիտութեան. Է- որ յուզեաց 'ի Գիտութիւն
յաւելցէ 'ի ցաւս» : (Ժողովողի Ը:18)

«Արդարեւ շատ իմաստութեան մէջ շատ վիշտ կայ, եւ
իր գիտութիւնը աւելցնողը՝ իր կոտորանքը կ'աւելցնէ»:

Հետաքրքրական է գրաբարի եւ աշխարհաբարի
տարբերութիւնը: Շատ հաւանական է աշխարհաբարը
սխալ թարգմանուած ըլլայ, որովհետեւ իմաստութեան
մէջ վիշտ չի կրնար ըլլալ, որովհետեւ ան Ս. Հոգիի
շնորհքն է: Գրաբարին մէջ գրուած է. «Շատ իմաստու-
թիւնը շատ գիտութիւն կու տայ»: Հետեւաբար ինչպէս
կ'ըլլայ, որ գիտութիւնը ցաւի պատճառ ըլլայ: Այս
տուեալներուն համաձայն պէտք է հասկնանք, թէ
գիտութիւնը ինք ցաւ չի տար այլ առանց իմաստու-

Թեան գիտութիւնն է, որ ցաւի եւ վիշտի պատճառ
կ'ըլլայ: Այժմէական օրինակ մըն է հիւլէական զօրութիւնը: Այս զօրութեան գիտութիւնը տրուեցաւ գիտնականներուն, որոնք երկար ժամանակ իրենց միտքերը կեդրոնացուցած այդ նիւթին վրայ (խոկալով) արժանացան անոր: Իմաստուն անձեր այդ գիտութիւնը օգտագործեցին հանրութեան օգտին համար, ելեկտրականութիւն հայթայթելով, ինչպէս նաեւ բժշկութեան մէջ զայն օգտագործելով: Բայց, երբ այդ գիտութեան տեղեակ եղան անոնք, որոնք իմաստութիւն չունէին զայն օգտագործեցին հիւլէական ռումբի համար: Մէկ ռումբով հազարներ մեռցուցին: Ճիշդ այդ պատճառով, ո'չ Յիսուս եւ ո'չ ալ առաքեալները Աստուծոյ Թագաւորութեան գիտութիւնը բացայայտ ձեւով տուին հանրութեան այլ տուին միայն Թագուն ձեւով, որպէսզի ան յայտնուի միայն անոնց, որոնք կը յաջողին իմաստութեան տէր ըլլալ եւ կերտել բարձր գիտակցութիւն: Միթէ չէ՞ գրուած.

«Կի Լսարուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
Հայրն փառաց՝ Կայէ՛ յէջ Կենդին Իմաստութեան
Եւ յայրանութեան՝ Գործութեամբն Իւրով»: (Եփեսացիս Ը:17)

«Որպէսզի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Աստուածը,
փառքի Հայրը, տայ ձեզի իմաստութեան եւ
յայտնութեան հոգին՝ իր գիտակցութեամբ»:

Նման գիտութիւն միայն Աստուծմէ կը տրուի, որովհետեւ ան ճշմարտութեան գիտութիւնն է: Անտարակոյս մարդ կարող է գիտութիւն ամբարել նաեւ առանց իմաստութեան: Բայց մարդ կարող չէ իր այդ ամբարած գիտութեամբ ճշմարտութիւնը հասկնալ՝ տեսնել:

«Որ յամենայն ժամ ուսանին, Եւ երբեք՝ ի
Գործութեան ճշմարտութեան ո'չ Հասանէն»: (Բ.
Թողբաւ Սիմոնէոս Գ:7)

«Որոնք միշտ կը սորվին բայց բնաւ չեն կրնար հասնիլ ճշմարտութեան գիտակցութեան»:

Անոնք որոնք գիտութիւն կ'ամբարեն, իրենք զիրենք «գիտուն» եւ իմաստուն կը համարեն: Աս ոչինչի կը ծառայէ, այլ միայն հպարտութեան յայտնութեան: Միթէ հպարտութիւնն ալ մահացու մեղքերէն մին չէ՞: Այս ուղղութեամբ նաեւ գրուած է.

«Զնո՞յն միմիանց խորհիջի՛ք, մի՛ ամբարբանե՛ք՝
այլ ընդ խոնարհս քիջանիցի՛ք: Մի՛ լինի՛ք իմաս-
տունի յանձինս յեր»»: (Հոգեմայեցիս ԺԲ:16-17)

«Իրարու հանդէպ միեւնո՛յն մտածումը ունեցէք: Բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա խոնարհեցէ՛ք դէպի նուաստները. դուք ձեզ իմաստուն մի՛ սեպէք»:

Անոնք, որոնք առանց իմաստութեան կը սորվին, նոյնիսկ իրենց ներկայացուած «կրօնք»-ը, հոն ներկայացուած բոլոր իմաստասիրութիւնները կը խեղաթիւրեն: Կարծելով թէ գիտեն ճշմարտութիւնը, իրենց սխալ հասկացողութիւնները ուրիշներուն ալ կը քարոզեն: Ահա՛, Յիսուսի ըսած «կոյրը կ'առաջնորդէ կոյր»-ին իմաստը աս է: Ճիշդ այս գաղափարով է, որ առաքեալը գրած է.

«Զի ծանեանս պէտքո՞ւս, եւ ո՛չ իբրեւ պատ-
րաստ փառասորեցին՝ կամ Գոճացան այլ նանրա-
ցան՝ ի խորհուրդս իրեանց եւ խաւարեցան ան-
մտութեամբէ՛ք սիրելի նոցա. պանծինս աս իմաստու-
նըս ունեւին՝ յիմարեցան: Եւ փոխեցին պատ-
անշտին Լսորո՞ւս՝ ի նմանութիւն պարկէրի
եղածանելի՛ մարդոյ եւ թռչնոց, եւ շորեղորան-
եաց եւ սողնոց»: (Հոգեմայեցիս Լ:21-23)

«Թէպէտ իրենք կը ճանչնային Աստուած, Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան. հապա ունայնա-
ցան իրենց մտածումներուն մէջ, եւ իրենց սիրտը անխել-
քութեամբ խաւարեցաւ: Հաւաստելով թէ իրենք իմաստուն

են՝ յիմարացան, ու փոխեցին անեղծ Աստուծոյ փառքը՝ նմանցնելով եղծանելի մարդու, թռչուններու, չորքոտանիներու եւ սողուններու պատկերին»:

Անհատը, որպէսզի խտացեալ գիտութիւնը կարենայ պատշաճ կերպով օգտագործել, նախ պարտ է Ս. Հոգիէն իմաստութեան շնորհքը ստանալ: Ս. Հոգիի շնորհքը ստանալու համար ալ անձը պէտք է արժանի ըլլալ: Մարդ այդ արժանելիութեան համար պարտ է ինքզինք պատրաստել: Այս ուղղութեամբ առաքեալը կը յանձնարարէ հետեւեալը.

«Եւ ամեն այսմիկ պամենայն փոյն 'ի մէջ առեալ՝ յերո՛վէն Հաւարոյն վ՛ մարակարարիջն՛ է պառաւելնոս-
թիւնն եւ առաւելնոս-թեամբն պիտոս-թիւն, եւ
Գիտոս-թեամբն պժոս-թկալոս-թիւն եւ ժոս-թկալոս-
թեամբն պՀամբերոս-թիւն եւ Համբերոս-թեամբն
պասրոս-աշաշրոս-թիւն եւ ասրոս-աշաշրոս-
թեամբն պեղբայրսիւրոս-թիւն եւ պեղբայրսիւրոս-
թեամբն պաւ՛ր»: (Բ. Թոռն Պիտրոսի Լ: 5-7)

«Ասոր համար ալ՝ ամբողջ փութաջանութեամբ աւելցուցէ՛ք ձեր Հաւատքին վրայ առաքինութիւն, առաքինութեան վրայ՝ գիտութիւն, գիտութեան վրայ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեան վրայ՝ Համբերութիւն, Համբերութեան վրայ՝ Բարեպաշտութիւն, Բարեպաշտութեան վրայ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան վրայ՝ սէր»:

Հետեւաբար ի՞նչ է բարձրագոյն գիտութիւնը, որ ճշմարտութիւնը գտնելու համար մեզի օգտակար պիտի ըլլայ: Ան սիրոյ գիտութիւնն է: Այս սէրը պարզ մեր ամէնօրեայ զգացած սէրը չէ: Անտարակոյս նոյնիսկ այդ սէրը անգամ բարձրագոյն սիրոյ փոքր մէկ մասնիկն է: Բարձրագոյն սէրը որուն մասին Աւետարանին մէջ գրուած է Քրիստոսի սէրը գիտնալն է: Նման սէրը գիտութիւնն ալ կը գերազանցէ: Այս ուղղութեամբ առաքեալը կը գրէ.

«Ճանաչել՝ զառաւելութիւնն Գիրքութեան սիրո՛յն
Քրիստոսի՝ զի Լոջի՛ն ամենայն լիութեամբն
Լսարանոյ» : (Եփեսացիս Գ:19)

«Այսինքն գիտնալ Քրիստոսի սէրը, որ գիտութեանն
գերազանց է, որպէսզի լեցուիք Աստուծոյ ամբողջ
լիութեամբ»:

Հետեւաբար մեր ստացած գիտութիւնը Աստուծոյ
մեզի տուած շնորհքն է: Թէ ինչ կերպով եւ ինչ նպա-
տակներով զայն կ'օգտագործենք, այդ կ'ըլլայ մեր կող-
մէ Աստուծոյ տրուած նուէրը: Եթէ նոյնիսկ աշխարհի
ամենամեծ հանճարը ըլլանք, մեր բոլոր ամբարած
գիտութիւնները մեզի չեն սորվեցներ սիրոյ արժէքը:
Բոլորն ալ անօգուտ են, որովհետեւ սէրը Աստուծոն է:
Միթէ այս գլխուն սկզբնաւորութեան որպէս Աստուծոյ
առաջին յատկութիւն «Աստուած սէր է» չէ՞ր գրուած:
Մարդուն բոլոր կարողութիւնները եւ գիտութիւնները
պէտք է օգտագործուին սիրոյ «Լոյս»-ին տակ, ապա թէ
ոչ ոչինչ կ'արժեն, որովհետեւ առանց սիրոյ մարդ
կարող չէ ձգժարտութիւնը ըմբռնել: Միակ ձգժարտու-
թիւնն ալ Աստուած է: Ճիշդ աս գիտնալուն համար ալ
առաքեալը գրած է.

«Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւնն եւ
Գիրքիցե՛մ զխորհուրդս ամենայն եւ զամենայն
Գիրքութիւնն եւ եթէ ունիցիմ զամենայն Հաւարս՝
մինչեւ զլեւրինս փոփոխելոյ եւ սէր ոչ ունիցիմ.
ո՛չ նշն էմ» : (Լ. Կորնթացիս ԺԳ:2)

«Ու եթէ ունենամ մարգարէութեան պարգեւը, Հասկնամ
բոլոր խորհուրդները եւ ամբողջ գիտութիւնը, ու եթէ
ունենամ ամբողջ հաւատքը՝ որ կարենամ լեռներ
տեղափոխել, բայց սէր չունենամ, ես ոչինչ եմ»:

Իսկ եթէ Քրիստոսի սէրը ունենանք ամէն ինչ ենք:

Այս գլխուն մէջ, մինչեւ հոս, ներկայացուած է
Յիսուսի սորվեցուցածներուն ամփոփումը՝ Երրորդու-

Թեան գաղափարը, Աստուծոյ որոշ յատկութիւնները, իմաստութեամբ եւ փորձառութեամբ ամբարուած գիտութեան անհրաժեշտութիւնը եւ օգուտները, գիտակցութեան մակարդակին Ֆիզիքական ուղեղին գործառնութեան հետ ունեցած յարաբերութիւնը, ճշմարիտ «վերստին ծնունդի» անհրաժեշտութիւնը, որ անձին մէջ Աստուածային սիրոյ արտայայտութեան ճամբան կը բանայ:

Բայց այս բոլորը ի՞նչպէս իրականացնել մեր կեանքին մէջ:

Յիսուս Քրիստոս իր կենցաղով, առականերով եւ խօսքերով մեզի սորվեցուց ոչ միայն մեր կեանքին նպատակը, այլ նաեւ զայն իրականացնելու միջոցը:

Մարդ արարած ստեղծուած է անհուն կարողութիւններով, որովհետեւ ան Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է եւ Քրիստոս՝ Աստուծոյ որդին, իր ճշմարիտ էութիւնը՝ իր հոգին է: Բայց մարդ իր ազատ կամքով կ'անտեսէ իր էութիւնը՝ Քրիստոս, եւ փարած իր «Ես»-ին, կ'ըլլայ խաւարամիտ եւ նոյնիսկ իր ունեցած կարողութիւնները չի գիտեր, հետեւաբար չի կրնար զանոնք պատշաճ կերպով օգտագործել: Ան կ'օգտագործէ իր ուղեղային կարողութիւններուն միայն 5%-10%-ը: Վերեւ ներկայացուած ուղեղային ելեկտրոմագնիսական շողարձակումներու թրթռացումի գանազան յաճախականութիւնները կը թուին պատճառը ըլլալ անհատին գիտակցութեան մակարդակին: Այս ընթերցումը սխալ է: Մարդու գիտակցութեան մակարդակն է, որ կ'որոշէ ուղեղին յառաջ բերած գանազան յաճախականութեամբ շողարձակումները:

Յիսուս Քրիստոս նաեւ մեզի յորդորեց իրեն նմանիլ՝ Ան ըսաւ «աշակերտը պէտք է իր վարդապետին նման ըլլայ»:

Ըստ մեր հաւատքին, որ ներկայացուած է մեր Ս.

Եկեղեցւոյ «Հաւատամք»-ին մէջ, Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր, մին «մարդկային» եւ միւսն ալ՝ «Աստուածային»: Իսկ մենք քանի՞ բնոյթ ունինք: Վերեւ հարց տրուած էր թէ ինչպէս մարդուն համար կարելի էր «վերստին ծնունդ» ունենալ: Ասոնց բոլորն ալ կարելի է երբ մարդ կը կարողանայ իր բնոյթը փոխել: Նախ քան բնոյթը փոխել ան պէտք է հասկնայ թէ ինք քանի զանազան բնոյթներու տէր է եւ անոնցմէ որոնք կ'օգտագործէ:

Մարդուն ունեցած բնոյթները լաւ հասկնալու համար յանձնարարելի է նախ կարդալ «Լոյս ի Լուսոյ» գիրքիս մէջ «Յաւելուածական» կոչուած գլուխ ԺԵ-ի տակ գտնուող երկու յօդուածները, մին «Ի՞նչ են խակրաները» (Էջեր 439-451) եւ միւսը «Ի՞նչ է «գունտալինի»-ն» (Էջեր 453-462), ինչպէս նաեւ «Լոյս ի Լուսոյ Բ - Զարթօնք» գիրքիս «Եօթը» խորագրեալ Բ. գլխուն տակ «Զօրութեան կեդրոններ» մասը (Էջեր 100-105):

Ուրեմն մարդուն յայտնաբերած բնոյթը սերտօրէն կապուած է իր խակրաներու՝ զօրութեան կեդրոններուն արտօնած զօրութեան թրթռացումի յաճախականութեան որակէն: Արեւելքի մէջ այդ խակրաները կը նմանցնեն ջրաշուշան ծաղիկին եւ ամէն մէկ խակրայ ալ ներկայացուած է իրեն թիւին համապատասխանող ջրաշուշանով: Առաջին խակրան՝ «հիմնական»-ը կը ներկայացուի միայն չորս թերթ ունեցող ծաղիկով, իսկ եօթերորդը՝ «գանկի վերելի»-նը կը ներկայացուի հազար թերթով: Այս նկարագրութեան նպատակը ցոյց տալ է թէ «վար»-էն դէպի «վեր» խակրաներուն ընդունած եւ յայտնաբերած զօրութեան թրթռացումի յաճախականութիւններն ալ հետզհետէ կը բարձրանան:

Աւետարանին մէջ յստակ գրուած է, թէ Ս. Հոգիի շնորհները անխտիր կը տեղան թէ՛ բարիներուն, թէ՛ ալ չարերուն վրայ: Ս. Հոգիի զօրութիւնը իր մէջ կը

պարունակէ թէ՛ ցած եւ թէ՛ բարձր թրթռացումի յաճախականութեամբ զօրութիւններ: Անոնցմէ որոնք կ'օգտագործենք մեզմէ կախեալ է եւ մեր ստացած այդ զօրութիւնն է, որ կ'որոշէ մեր գիտակցութեան մակարդակը, հետեւաբար՝ մեր բնոյթը:

Ընդհանուր տիեզերքը Աստուծոյ արտայայտութիւնն է, հետեւաբար ունի կեանք: Նոյնիսկ անզգամ նիւթը ունի առաջին խակրան, որովհետեւ գոյութիւն ունի: Միաբջիջ էակները, որոնք կարող են բազմանալ, ունին երկրորդ խակրան ալ: Բոլոր անասունները, որոնք գոյ են, կ'ապրին, ունին բազմանալու կարողութիւն, նաեւ զգացում, ունին լրիւ կազմուած առաջին երեք խակրաները: Անոնցմէ ոմանք նաեւ ունին նախնական չորրորդ խակրան, նոյնիսկ հինգերորդն ալ: Անասունները, համաձայն առաջին երեք խակրաներէն իրենց ստացած զօրութեան թրթռացումի յաճախականութեան, կարող են իրենց կեանքը շատ լաւ ապրիլ՝ ըստ իրենց տրուած բնազդին:

Անոնց բնազդը անոնց բնոյթն է: Անոնք կ'ուտեն, կը խմեն, կը քնանան, կը բազմանան եւ զանազան զգացումներ կ'արտայայտեն, բայց, ընդհանուր առմամբ, ոչ աւելին: Ուրեմն առաջին երեք խակրաները «անասնական» բնոյթ ունենալու կարողութիւնը կուտան: Մարդ արարած ունի նաեւ յաջորդական երեք խակրաներ թիւ 4, 5 եւ 6: Այս խակրաներուն արտօնած զօրութեան թրթռացումի յաճախականութիւնները շատ աւելի բարձր որակ ունին: Անոնք մարդուն կու տան անասուններէ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը՝ կարողութիւն յայտնաբերելու սէր, խիղճ, ազատ կամք, կարեկցութիւն, եսասիրութեան տեղ աշխատիւն, դատելու, զատելու եւ սորվելու կարողութիւն, իմաստութիւն եւ ներհայեցողութիւն ...: Ահա աս է, որ տեղի կու տայ մարդկային բնոյթին:

Մարդ արարած նաեւ ունի եօթերորդ խակրան, որ «դուռն» է շատ բարձր թրթռացումով զօրութեան ներգործման: Մարդ ինք կ'որոշէ թէ ինչ որակով զօրութիւն պիտի ստանայ: Ան կը գոհանայ իր առաջին երեք խակրաներէ ստացած զօրութեամբ եւ կ'ապրի անասուններուն նման՝ կ'ուտէ, կը խմէ, կը քնանայ, կը բազմանայ եւ օր մըն ալ կը մեռնի, կ'երթայ: Համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, Յիսուսի նմանելու կարելիութիւնը ունենալով հանդերձ, անասուններու նման կ'ապրի:

Այո՛, կան ոմանք, որոնք կը յայտնաբերեն իրենց մարդկային բնոյթը եւ շնորհիւ անոնց, այսօր համայն մարդկութիւնը կը վայելէ արուեստագիտութեան մեզի տուած շատ մը բարիքները եւ նաեւ մարդասիրական արարքներ:

Յիսուս բոլորովին անտեսեց իր անասնական բնոյթը եւ լրիւ օգտագործեց իր եօթերորդ խակրան: Երբ անձը կը կարողանայ այդ բարձր որակով զօրութիւնը ստանալ, Քրիստոսն է որ կը գործէ անոր մէջ: Ահա՛, աս է անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնը: Հետեւաբար, Յիսուս Քրիստոսի համար կ'ըսենք, թէ ան ունէր թէ՛ մարդկային, թէ՛ ալ Աստուածային բնոյթ: Ան անտեսած էր իր անասնական բնոյթը: Ոչ չարաչար աշխատեցաւ՝ իր ապրուստին համար, ոչ սերնդագործեց: Ան բացարձակ իշխանութիւն ունէր իր զգացումներուն վրայ: Միայն երկու անգամ լացաւ, մին Ղազարոսի յարութենէն առաջ, իսկ միւսը՝ Երուսաղէմի ճակատագրին վրայ: Ան մէկ անգամ ալ բարկացաւ, որպէսզի մեզի կարենայ ցոյց տալ միակ արտօնուած բարկութիւնը, որ է բարկութիւն մեր անձին՝ մեր «Ես»-ին հանդէպ, որպէսզի Աստուծոյ տաճարը, որ մեր մարմինն է, չպղծենք:

Իսկ մենք Յիսուսի նմանելու եւ իր սորվեցուցածները

կիրարկելու համար որքա՞ն ջանք կը թափենք: Զբաղ ենք ապրուստ հոգալու, նաեւ ուտելու, խմելու եւ բազմանալու ցանկութիւններով: Ինչպէս նաեւ այդ ցանկութիւններուն յառաջ բերած մտահոգութիւններուն տուած խորհուրդներով մեր միտքերը զբաղ, կարող չենք «սուրբ սիրտ» կերտել եւ բարձր գիտակցութեան տիրանալ: Յիսուս նաեւ սորվեցուց թէ ինչ պէտք է ըլլայ մեր կենցաղը: Ան մարդկային կեանքը նմանցուց աղօթքի: Հետեւաբար ամէն անհատի կեանքը պէտք է ըլլայ անընդհատ աղօթք մը: Յիսուս նաեւ մեզի սորվեցուց ճշմարիտ աղօթքին ի՞նչ ըլլալը եւ ի՞նչպէս աղօթելը, ցոյց տալով յաջող աղօթքին մեզի տալիք արդիւնքները: Ան յորդորեց աղօթքի ատեն հեթանոսներուն պէս շատախօս չըլլալ: Մտնել մեր ներքին սենեակը, դուռը գոցել ու աղօթել: Ուրեմն ճշմարիտ աղօթքը լուութեան միջոց մըն է: Ան ներհայեցողութեան վերապահուած ժամանակ մըն է: Ան միտքին անհատին իր ներքին Քրիստոսին վրայ կեդրոնացումն է: Ահա՛, «ներքին սենեակդ մտիր»-ին իմաստը աս է: Իսկ, «դուռդ գոցէ»-ին իմաստն ալ արտաքին աշխարհէն եկած եւ մեր հինգ զգայարանքներու միջոցով մեզի հասած տուեալները անտեսել է: Այլ խօսքով աշխարհիկ հետապնդումներէ ձեռքազատուիլ եւ զանոնք անտեսել է: Այսպիսի աղօթք, աղօթելու ամենէն վեհ ձեւն է, ինչ-որ խոկումն է: Խոկումը պարզապէս լուռ նստիլ չէ, այլ ան միտքը մաքրելու՝ «սուրբ սիրտ» կերտելու եւ միտքը կեդրոնացնելու միջոց մըն է: Երբ մարդ աշխարհի վրայ կը գործէ միտքը կեդրոնացած ներկային վրայ, կեդրոնացած կ'ըլլայ նաեւ Քրիստոսի վրայ, որովհետեւ Աստուած միայն ներկային մէջ է եւ ժամանակի ենթակայ չէ: Նման կեանք մը կ'ըլլայ շարունակական աղօթք՝ խոկում մը: Մարդ ֆիզիքապէս իր կեանքին

ամէն մի ըրպէն միայն ներկային մէջ կ'ապրի: Անկարելի է ռեւէ մէկու համար ապրիլ անցեալի կամ ապագայի մէջ: Բայց մարդ արարած մտայնօրէն իր կեանքի 99%-ը կ'ապրի անցեալի յուշերով կամ ապագայի ցանկութիւններու իրականացման յոյսերով: Մարդ իր բոլոր պարտականութիւնները լաւագոյնս ընելով հանդերձ, կարողութիւնը ունի նաեւ մտայնօրէն ապրիլ իր կեանքը ներկային մէջ: Յիսուս նաեւ սորվեցուց թէ ինչ պէտք է ըլլայ աղօթքը: Իսկ մենք իր սորվեցուցածը կը կրկնենք որպէս աղօթք, փոխանակ հասկնալու անոր մէջ թագնուած ճշմարտութիւնները եւ այդ հասկացողութեամբ ալ աղօթենք: Այն ինչ որ Յիսուս սորվեցուց եւ մենք յաճախ կը կրկնենք որպէս «Տէրունական աղօթք», կը ներկայացնէ յաջող աղօթքին յայտնաբերած արդիւնքը, այդ արդիւնքին հասնելու միջոցը եւ անհատին կերտելիք պատշաճ կենցաղը: Յիսուսի այս սորվեցուցածները կարելի է նոյնիսկ իմացականօրէն լաւ ըմբռնել, բայց Յիսուսի սորվեցուցածը փորձառականօրէն իւրացնել է, որ արդիւնքն է յաջող աղօթքին՝ խոկումին:

«Հայր մեր որ յերկին»: Ու՞ր է երկինքը: Շատեր կը կարծեն թէ երկինքը ամպերէն վեր տեղ մըն է, ուր Աստուած կը գտնուի: Անտարակոյս, նման հայեացք մը սխալ է: Ծիշդ է թէ Աստուած երկինքի մէջ է: Աստուած նաեւ իր թագաւորութեանը մէջն է: Ըստ Յիսուսի սորվեցուցածին Աստուծոյ թագաւորութիւնը մեր ներսդին է: Քրիստոս ամէն անհատի էութիւնն է: Հետեւաբար Աստուած ընդհանուր ստեղծագործութեան մէջ է եւ այս հիման վրայ ալ ընդհանուր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ երկինքը: Դժբախտաբար մարդ իր խաւարամտութեամբ կարող չէ այս իրողութեան փորձառութիւնը ունենալ, հետեւաբար կը կարծէ թէ երկինքը ուրիշ վայր մը պէտք է

ըլլայ: Ուրեմն Յիսուսի սորվեցուցածը այն է թէ յաջող աղօթքին արդիւնքը այս ճշմարտութեան փորձառութիւնը ունենալն է: Հասկնալ թէ ընդհանուր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ միականութեան զանազան արտայայտութիւնները: Յաջող աղօթքին արդիւնքն ալ այդ միականութեան փորձառութիւնը ունենալն է:

«Առաջ եղիցի անուն խո:» Աս ալ նախորդ սորվեցուցածը կը լրացնէ: Եթէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Աստուծոյ մէկական արտայայտութիւններն են, ուրեմն յաջող աղօթքի արդիւնք, անհատը աւելի բարձր գիտակցութեան տիրացած, կը տեսնէ ճշմարտութիւնը եւ փորձառութիւնը կ'ունենայ զանազանութեան միականութեանը: Այս հիման վրայ ալ, այն բոլոր անունները որ տրուած են այդ զանազանութիւններուն իրեն համար սուրբ կ'ըլլան, որովհետեւ ինք հասկցած է, թէ անոնք բոլորն ալ Աստուծոյ՝ Քրիստոսի զանազան արտայայտութիւններն են:

«Եկեացէ՛ր արչայո՛րն խո:» Յաջող աղօթքի հետեւանք անհատը նաեւ կ'անդրադառնայ, թէ իր ճշմարիտ էութիւնն ալ Քրիստոսն է եւ իր յայտնաբերած բարձր գիտակցութեամբ՝ Քրիստոսի գիտակցութեան մակարդակով, կը յայտնաբերէ նաեւ Քրիստոս իր անձին մէջ: Ահա՛, աս է Վերստին գալուստը եւ անձին միջոցով Քրիստոսի յայտնութիւնը: Քրիստոսի վերստին գալուստը անհատական է եւ ոչ հաւաքական: Դուրսէն երեւցած բաներով չի գար: Քրիստոսի յայտնութիւնն ալ անձին համար Աստուծոյ թագաւորութեան գալուստն է: Միթէ Յիսուս, Քրիստոսի յայտնութիւնը չէ՞ր: Միթէ Յիսուս չըսա՞ւ, որ աշակերտը պէտք է իր վարդապետին նման ըլլայ եւ կարող է Իր ըրած բաներէն աւելի մեծ բաներ ընել:

Յիսուսի սորվեցուցած «Տէրունական Աղօթք»-ին

առաջին մասը կը ներկայացնէ մեր կեանքին նպատակը, որ է փորձառութիւնը ունենալ միականութեան, Աստուած՝ Քրիստոս տեսնել ամենուրեք, ինչպէս նաեւ մեր մէջ եւ Ձայն յայտնաբերել մեր մէջ եւ ծառայել Աստուածայայտնութեան:

Յաջորդ մասը կը ներկայացնէ պատշաճ միջոցառումները որպէսզի վերոյիշեալ աղօթքին արդիւնքները յաջողութեամբ պսակուին:

«Եղիցին կամէ ի՞նչ որպէս յերկինս եւ յերկրի:» Աստուծոյ կամքը կատարել անձին համար կարելի է, եթէ ան գիտնայ այդ կամքը: Երբ «Աստուծոյ կամքը» կ'ըսենք կը կարծենք թէ Աստուած որոշումներ կ'առնէ եւ կը փափաքի որ մենք այդ որոշումները կիրարկենք: Անտարակոյս, նման հայեացք մը սխալ է: Վերել յիշեցինք, թէ ընդհանուր ստեղծագործութիւնը երկինքը կը ներկայացնէ եւ ընդհանուր ստեղծագործութիւնը կ'ընթանայ ըստ Աստուծոյ կամքին: Միթէ Մենդոց գիրքին մէջ ստեղծագործութեան ամէն մի հանգրուանի վերջաւորութեան՝ օրուայ համար, չէ՞ գրուած. «եւ Աստուած տեսաւ որ բարի է»: Բարի էին որովհետեւ ամէն ինչ կ'ընթանար ըստ Աստուծոյ կամքին: Ահա՛, աս է իմաստը «որպէս յերկինս»-ին: Ի՞նչ է իմաստը «Աստուծոյ կամքին»: Ստեղծագործութիւնը յառաջ եկաւ Հայր Աստուծմէ բղխած Ս. Հոգիի զօրութեամբ: Ամէն զօրութիւն ենթակայ է այդ զօրութիւնը կառավարող օրէնքներու: Աստուծոյ կամքը կատարել այդ օրէնքներուն հետ ներդաշնակ ընթանալ՝ խորհիլ, խօսիլ ու գործելն է: Մարդ արարած նոյնիսկ չի գիտեր թէ հոգեկան աշխարհը զինք կառավարող իր ուրոյն օրէնքները ունի, ինչպէս Փիզիքական աշխարհը: Ս. Աւետարանին մէջի գրութիւնները ցոյց կու տան նաեւ Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղին, որ կը ներկայացնէ կենցաղ մը, որուն բոլոր խորհուրդ,

խօսք ու արարքները ներդաշնակ են Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն: Այս հիման վրայ է, որ Յիսուս ըսած է, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Այդ մեղքերը կը ներկայացնեն բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները որ մարդ կը կատարէ այդ օրէնքներուն աններդաշնակօրէն: Որեւէ օրէնքի դէմ գործուած արարք կը ստեղծէ հակազդեցութիւն, որ ճակատագիր կը կոչենք: Հետեւաբար ինչ որ ցանենք, նոյնն ալ կը հնձենք: Մարդ, ընդհանուր առմամբ եսասէր է եւ կը գործէ հակառակ այդ օրէնքներուն:

Յաջող աղօթքի հետեւանք անհատը կ'անտեսէ իր «Ես»-ը եւ կը կերտէ բարձր գիտակցութիւն, հետեւաբար կը հասկնայ Յիսուսի սորվեցուցածներուն բուն իմաստները եւ նաեւ կատարելութեան ուղին: Ան զանոնք կ'իւրացնէ եւ ըստ այնմ կը խորհի, կը խօսի ու կը գործէ իր կեանքի ընթացքին: Բայց երբ անհատը կատարելութեան ուղիէն կը շեղի, Ս. Հոգիի դէմ մեղանշած կ'ըլլայ: Ահա, աս է իմաստը «Եւ յերկրի»-ին: Մարդուն գործունէութիւնը երկրի վրայ է:

ԶԷՆՆՆԻՆ ԴԵՐ ՀԱՆՈՒՄԱԿԱՆՈՐԴ ԳՐՈՐԴ ԴԵՐ ԱՅՈՐ: Շատեր կը կարծեն թէ այս բառերով անհատը Աստուծմէ կը խնդրէ որ Աստուած իր մարմինը սնուցանող բոլոր պէտքերը իրեն համար հոգայ՝ հայթայթէ: Այս հասկացողութիւնն ալ սխալ է: Հացը, որուն մասին Յիսուս կը զրուցէ, Ս. Հոգիի զօրութիւնն է: Ան մեր հոգիին սնունդն է: Ան Քրիստոսի անձին մէջ յայտնութեան մակարդակը որոշող զօրութիւնն է: Ան անձին գիտակցութեան մակարդակը բարձրացնող զօրութիւնն է: Ան անձին իմաստութիւն տուող Ս. Հոգիի զօրութիւնն է:

Հացը՝ Ս. Հոգիի յաւելեալ զօրութեան ներգործումը անհրաժեշտ է, որ անձը կարողանայ այս «աղօթքին»

առաջին մասին մէջ գրուածներուն փորձառութիւնները ունենալ:

Քրիստոս, մեր էութենէն ներս, «դուռն» է Ս. Հոգիի զօրութեան ներգործման: Անձին ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, որ «կը բանայ», ընդունակ կ'ընէ անհատին զօրութեան կեդրոնները՝ խակրաները, ուրկէ կը ներգործէ բարձր որակով զօրութիւն: Պէտք է մոռնալ, թէ Քրիստոս՝ անհատին էութիւնը, գիտէ անհատին բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները, հետեւաբար ըստ այնմ կը բանայ խակրաները: Անհատն ալ ստացած կ'ըլլայ իր «ԶԼ՝ ց մէր Լանապաշտոյ»-ը:

Ուրեմն, անհատը, իր անձին մէջ, պարտ է աղօթքին այս երկրորդ մասին մէջլինները իրականացնել որպէսզի կարողանայ փորձառութիւնը ունենալ այն ինչ որ վերեւ առաջին մասին մէջ յիշուած էր: Աղօթքին այս երկրորդ մասը արդիւնքն է յաջող խոկումին՝ լուծեան եւ մտքի կեդրոնացման, վեհ աղօթքին: Իսկ «աղօթքին» երրորդ մասը կը շեշտէ այն ինչ որ անհատը պէտք է կիրարկէ իր կեանքի ընթացքին որպէս իր կենցաղը: Այսինքն հետապնդէ կատարելութեան ուղին: Աս ալ կը ներկայացնէ անհատին ընդհանուր կեանքին շարունակական աղօթքի մը դառնալը: Այս հանգրուանը կը կարօտի անհատին դատելու եւ զատելու կարողութեան եւ ազատ կամքին պատշաճ օգտագործման:

Եւ ըստ մէկ շարքի մեր, որպէս եւ մեծ թողութիւն մերոյ պարտապահաց: Առաջին հերթին այս նախադասութեան պարունակութիւնը կը թուի սակարկութիւն մը ըլլալ: Անտարակոյս, նման հայեացք մը սխալ է: Այս նախադասութեան բուն իմաստը կը ներկայացնէ մեր կեանքի բոլոր պատահարներուն ընդունելութիւնը իբրեւ Աստուծոյ կամքը: Նման հասկացողութեամբ

արդեօք կարելի է^օ, որեւէ անձ, որ մեզի դէմ վատ արարք մը ունեցած է, դատել ու յանցաւոր համարել: Ան միայն միջոցն է կատարման այն ինչ որ մենք կերտած էինք իբրեւ մեր ճակատագիրը: Իսկ եթէ չդատենք եւ յանցաւոր չհամարենք, արդեօք կարիքը կը մնայ ներելու: Եթէ կը տեսնենք ուրիշներու յանցանքները եւ զանոնք կը դատենք, պարտ ենք նաեւ տեսնել մեր յանցանքները: Իսկ եթէ մեր հասկացողութեամբ եւ կենցաղով կարենանք հասնիլ այդ մակարդակին՝ ընդունելու մեր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները իբրեւ «Աստուծոյ կամքը», այն ատեն նաեւ հասած կ'ըլլանք բարձր գիտակցութեան մակարդակի: Այն ատեն կը վարուինք հանդէպ բոլորին ինչպէս որ կ'ուզենք անոնք վարուին մեզի հանդէպ: Միթէ Յիսուս, Իր բացայայտ խօսքերով, աս չէ^օր որ մեզի սորվեցուց:

Եւ մի՛ գանիր զմեզ 'ի վարչութիւն: Մարդուն փորձութիւնը կը ծագի իր ազատ կամք ունենալուն պատճառով: Ազատ կամքը կարող է անհատին «Ես»-ը զատել եւ ըստ այնմ խորհիլ, խօսիլ ու գործել, եւ կամ զատել իր ներքին Քրիստոսը եւ ըստ այնմ ապրիլ: Մարդ արարած, իր խորամանկութեամբ, երբեմն կը զատէ իր ներքին Քրիստոսը, բայց ընդհանուր առմամբ կը զատէ իր «Ես»-ը: Յիսուս մեզի սորվեցուց, թէ մարդ չի կրնար երկու տիրոջ ծառայել: Մարդուն այս սխալ կենցաղը անտարակոյս արդիւնքն է իր խաւարամտութեան: Աստուած ամենեւին մարդը փորձութեան չի տանիր: Ճիշտ է թէ Աստուած, երբեմն, անհատը կը փորձէ, որպէսզի անհատը իր հոգեւոր կեանքի մէջ հասած մակարդակը հասկնայ: Աղօթքին մէջի փորձութիւնը այդ չէ: Մարդուն փորձութեան պատճառն ալ իր խաւարամտութիւնն է: Հետեւաբար, «մեզ փորձութեան մի տանիր»-ին իմաստը այն է, թէ անհատը իր

կենցաղով՝ իր կեանքը շարունակական աղօթքի մը վերածելով արժանանալ աւելի բարձր գիտակցութեան, փարատելով խաւարամտութիւնը:

Այլ փրկեա՛ զմեզ ՚ի շարէն: Տէրունական աղօթքին այս վերջին նախադասութեան իմաստը կը թուի շատ պարզ ըլլալ: Վերեւ արդէն անոր մասին տեղեկութիւն տրուած էր: Յիսուս արդէն քանիցս շեշտած է «Ես»-ը անտեսել: Անհատը իր ազատ կամքով եւ վճռականութեամբ պարտ է իր «Ես»-ը անտեսել, ինչպէս Յիսուս ըրաւ անապատին մէջ: Յիսուս, նոյնիսկ, իր հասած բարձր գիտակցութեան մակարդակով, ենթարկուեցաւ փորձութեան, իր «Ես»-էն՝ սատանայէն: Տարակոյս չկայ, մենք ալ յաճախ նման փորձութիւններու պիտի ենթարկուինք:

Չենթարկուիլ այդ փորձութիւններուն մեր դատողութեան եւ զատողութեան պատշաճ արդիւնքն են: Աս կը կարօտի սիրոյ արտայայտութեան, զօրաւոր հաւատքի, յարատեւութեան եւ համբերութեան, նա մանաւանդ վճռականութեամբ ապաւինիլ Աստուծոյ եւ ձերբազատուիլ «Ես»-ին յառաջ բերած բոլոր աշխարհիկ հետապնդումներէն: Այդ աշխարհիկ հետապնդումները բոլորն ալ պատրանքային են եւ մենք մեր խաւարամտութեան հետեւանք կը կարծենք թէ անոնք բոլորն ալ ճշմարտութիւններ են:

Պատշաճ է այս գլուխը վերջացնել Յիսուս Քրիստոսի սորվեցուցած եւ Քրիստոսի շնորհած յաւիտենական կեանքի պարզեւորով: Քրիստոս, բոլոր անոնց, որոնք իրենց մարդկային կեանքին նպատակին մէջ կը յաջողին եւ Աստուծայայտութիւնը իրենց մէջ կ'իրականացնեն, յաւիտենական կեանք պիտի տայ: Ըստ Աւետարանին Քրիստոս ըսած է. «Ինծի եկէք եւ Ես ձեզի յարութիւն պիտի տամ եւ յաւիտենական կեանք»: Շատեր կը կարծեն թէ յաւիտենական կեանքը մահէ

դարեր վերջ, աշխարհի վերջաւորութեան, Քրիստոսի երկրորդ գալուստով բարիները յարութիւն պիտի առնեն եւ «վերը»՝ երկինքը, անվերջ ժամանակ, երջանիկ պիտի ապրին: Անտարակոյս, նման հասկացողութիւն մը սխալ է: Նախ հասկնանք թէ ի՞նչ է յաւիտենականութիւնը:

Ընդհանուր ստեղծագործութեան մէջ ի՞նչ բան յաւիտենական է: Միայն Աստուած է որ կը թուի յաւիտենական ըլլալ, որով Աստուած ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վախճան: Հետեւաբար Աստուած ժամանակի ենթակայ չէ: Բոլոր անոնք եւ բոլոր այն բաները որոնք ժամանակի մէջն են, ունին սկիզբ, նաեւ վախճան, հոգ չէ թէ որքան կարճ կամ երկար ըլլայ անոնց գոյատեւումը: Նոյնիսկ Ս. Գիրքին մէջ Աստուած ըսած է. «Ես եմ որ է»: «է» գիրը հական բային ներկայ ժամանակ երրորդ դէմքն է եւ մեր Եկեղեցւոյ մէջ ալ կը ներկայացնէ Աստուած: Ընդհանուր տիեզերքի մէջ, Աստուծոյ գառ, ի՞նչ բան յաւիտենական է: Քանի որ Աստուած ժամանակին ենթակայ չէ եւ ժամանակին մէջն ալ չէ, ուրեմն ժամանկը պէտք է Աստուծոյ մէջ ըլլայ: Հետեւաբար, չենք կրնար ըսել «Աստուած էր» կամ պիտի ըլլայ, որովհետեւ անցեալ եւ ապագայ երկուքն ալ ժամանակին մաս կը կազմեն, Աստուած միայն ներկային մէջն է: Իսկ եթէ Աստուած միայն ներկային մէջն է եւ Աստուած ալ յաւիտենական, ուրեմն ներկան պէտք է ըլլայ յաւիտենական:

Յաւիտենական կեանքը Աստուծոյ հետ ըլլալն է: Հետեւաբար յաւիտենական կեանքն ալ պէտք է ըլլայ ներկային մէջ եւ ոչ մահէ դարեր վերջ: Եթէ մարդ չկարողանայ իր այս ներկայ աշխարհիկ կեանքին ընթացքին յաւիտենական կեանքի արժանանալ, իր մարմնին մահէն վերջ ամենեւին պիտի չտեսնէ յաւիտենական կեանքը: Անտարակոյս, իր հոգին, իր

մէջ, Քրիստոսի ներկայութիւնն է որ անմահ է, բայց անձին անհատականութիւնը կը մեռնի իր մարմնոյն հետ: Ահա, աս էր Յիսուսի սորվեցուցածը երբ ան ըսաւ. «Զի Խոշակն մեղաց մահ է»: Քրիստոսի տալիք յարութիւնը անհատականութեան յարութիւնն է եւ ոչ ֆիզիքական մարմնին:

ԱՀԱԿԵՐՏԻՆ ԱՂՕԹՔԸ

Աստուած իմ ամենագէտ,
Տուր ինձ իմաստութիւն,
Որպէսզի ճանչնամ ու կիրարկեմ Քու կամքդ միայն:

Աստուած իմ ողորմած,
Տուր ինձ սէր,
Որպէսզի կարողանամ փոխել բնոյթս վատ:

Աստուած իմ ամենաարդար,
Տուր ինձ արդարութիւն,
Որպէսզի վճարեմ «պարտքերս» ու արժանանամ Քեզի:

Աստուած իմ ամենակարող,
Տուր ինձ կարողութիւն,
Որպէսզի ձերբազատուիմ իմ «Ես»-էս ու յարիմ Քեզի:

Աստուած իմ ամենուրեք,
Յայտնուէ ինձի,
Որպէսզի փորձառութեամբ վայելեմ փառքդ անհոն:

Աստուած իմ յաւիտենական,
Տուր ինձ երանութիւն,
Որպէսզի վայելեմ կեանքը յաւիտենական:

Ամէն



**ՍՈՐԿԻՆ ԱՊԱՆՅ ԽՈՐՀՐԴԱԾԵԼՈՒ
ԱՆՕԳՈՒՏ Է:
ԽՈՐՀՐԴԱԾԵԼ ԱՊԱՆՅ ՍՈՐԿԵԼՈՒ
ՎՏԱՐԳԱԽՈՐ Է:**

ԿՈՆՖՈՒՅԻՐՈՍ



ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ

Հայրն իմ՝ Երկնաւոր,
Որդի մըն եմ յանցաւոր:

Պաշտօնիչ ամենակարող,
Եմ օգնութեանդ կարօտող:

Տեր իմներդդ ես մանաւանդ,
Ծառայ մըն եմ անհնազանդ:

Սիրէ զիս Էութեամբդ բոլոր,
Որով սիրաւորուած եմ՝ Անոր:

Գիտակից ես Դուն ինծի,
Գիտցուելու չեմ արժանի:

Տէր եւ տիրական ամէն ինչի,
Կը պատկանիմ ես Քեզի:

Կապն ես դուն մէջ բոլորին,
Կապուելու եմ Քու չուանին:

Հոգին ես Դուն տաճարին,
Տաճարը մէջ իմ մարմնին:

Ներկայութիւնդ Հաճոյալի,
Վայելեմ Քեզ անբաւելի:

ՓՈԽԱՆ ՎԵՐՋԱԲԱՆԻ՝ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ «ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՐԺԱՆԱՆԱԼ» (ԳԻՏՈՒԹԻՒՆԸ, ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ԵՎ ԱՂՕԹՔԸ)

Յաւիտենականութեան եւ յաւիտենական կեանքի մասին «Հոգեւոր Խորհրդածութիւններ» վերնագրեալ գիրգիս մէջ լայնածաւալ բացատրութիւն տրուած էր (էջ 371): Այս գրութեան մէջ անտարակոյս կան կրկնութիւններ նախորդ գրութիւններուս մէջ ներկայացուած, նոյնիսկ այս գիրգին վերջին գլխուն մէջ եւս: Կրկնութիւնները օգտակար են իւրացնելու համար տրուած գաղափարները: Այս գրութեան բուն նպատակը այդ յաւիտենական կեանքի արժանանալու միջոցներն են: Այդ միջոցներու նկատմամբ նկատողութեան առնուելիք կէտերը հետեւեալներն են.

ա- Հասկնալ գիտութիւնը եւ անոր կարեւորութիւնը:

բ- Հասկնալ «Աստուծոյ կամքը»:

գ- Հասկնալ աղօթքը եւ անոր կարեւորութիւնը:

Աստուածաշունչի թէ՛ Հին Կտակարանին, թէ՛ ալ Նոր Կտակարանին մէջ, թէ՛ գիտութեան թէ՛ ալ իմաստութեան մասին բազմաթիւ համարներ կան: Սակայն անոնցմէ ոմանք կը թուին հակասական ըլլալ: Այս պատճառով պատշաճ է երկու համարներ ներկայացնել, որոնք կը թուին հակասական ըլլալ: Հին Կտակարանէն առնուած հետեւեալ երկու մէջբերումները կը թուին իրարու բացայայտօրէն հակասական ըլլալ:

«Եւ պարտաւորեաց Տէր Աստուած Աղօթայ՝ եւս
ասէ. Յամենայն Ժառոց որ է՝ ի դրախտիդ ուրե-
ւում կերիցես: Բայց ի Ժառոց գիտութեան Բար-
ոց եւ շարի՝ մի ուրիցէի, զի յորում ասոր ու-
րիցէի ի նմանէ մաւոս մեռանիցի» : (Մեկոն. Ի՛:16-17)
«Տէր Աստուած մարդուն պատուիրեց. «Պարտէզին բոլոր

ծառերէն Համարձակ կեր, բայց բարիին ու չարին
գիտութեան ծառէն մի՛ ուտեր. որովհետեւ այն օրը երբ
անկէ ուտես, անշո՛ւշտ պիտի մեռնիս»:

«Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. . . . Եւ
լցոոցից զնա ասորոսաթեղէն Ըոգոոլ իմասորոս-
թեան եւ Հանճարոյ եւ Գիորոթեան ամենայն
Գործոյ»: (Եւրեյ ԼԸ:Ի-3)

«Տէրը խօսեցաւ Մովսէսի՝ ըսելով. ... եւ Աստուծոյ
Հոգիով լեցուցի զայն՝ իմաստութեամբ, Հանճարով ու
գիտութեամբ, ամէն տեսակ գործի Համար»:

**Վերեւի Մոնղոց գիրքի մէջբերումը բացայայտ-
օրէն մարդը կը գզուչացնէ գիտութեան դէմ, թէ
գիտութիւնը զինք մահ պիտի տանի: Իսկ Եւրեյ գիրքէն
մէջբերումը ցոյց կու տայ թէ Տէրը ինք գիտութիւն
կու տայ մարդուն: Նման հակասական համարներ կան
նաեւ Նոր կտակարանին մէջ:**

«Յայնմ Ժամանակի պարասխանի Եր Յիսուս՝ եւ
ասէ. Գոհանամ զէն Հա՛յր՝ որեւ երկնի՛ եւ երկ-
րի. զի Ժաշկեցեր զայս յիմաստնոց եւ՝ ի Գիորոսոց
եւ յայրնեցե՛ր որչայոց»: (Մարթէոս ԺԷ:25)

«Այդ ատեն Յիսուս ըսաւ. «Կը ներբողեմ քեզ, ո՛վ
Հայր, Տէր երկինքի ու երկրի, որ այս բաները ծածկեցիր
իմաստուններէն եւ խելացիներէն, ու յայտնեցիր
երախաներո՛ւն»:

(Տես նաեւ Ղուկաս Ժ:21)

«Ումեմն ՚ի Ըոգոոյն րոսեալ է Բա՛ն
իմասորոթեան այլոմ Բա՛ն Գիորոթեան ըսոր
նմին Ըոգոոյ»: (Ը. Կորնթացիս ԺԲ:8)

«Մէկուն տրուած է իմաստութեան խօսք՝ Հոգիով.
ուրիշին՝ գիտութեան խօսք, նոյն Հոգիով»:

**Այս վերեւի Նոր կտակարանի մէջբերումներն ալ
կը թուին իրարու հակասական ըլլալ: Առաջինին մէջ
Յիսուս Հայր Աստուծոմէ կը գոհանայ, թէ ան յաւիտե-**

նական կեանքի գաղտնիքները իմաստուններէ եւ գիտուններէ պահած է ու յայտնած «տղայոց»։ Իսկ երկրորդ մէջըբերումին մէջ թէ՛ իմաստութիւն եւ թէ՛ գիտութիւն Աստուծոմէ՝ Ս. Հոգիէն տրուած շնորհքներ են։ Եթէ գիտութիւնը օգտակար եւ լաւ բան մը չէ եւ մարդը յաւիտենական կեանքէն կը հեռացնէ եւ մահուան կը տանի, Աստուած ինչո՞ւ մարդուն կը չնորհէ գիտութիւն։ Նախքան, այս հարցումին պատասխանելու պէտք է հասկնանք, թէ սերտ կապ մը կայ թէ՛ իմաստութեան եւ թէ՛ գիտութեան միջեւ։

Ս. Գիրքին մէջ կան նման շատ համարներ, որոնք կը թուին գիրար հակասել։ Ս. Գիրքին մէջ ոչինչ հակասական է։ Հետեւաբար, պարտ ենք հասկնալ թէ օգտագործուած «գիտութիւն» բառը պէտք է ունենայ գոնէ երկու տարբեր իմաստներ, կամ աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, երկու տարբեր գիտութիւններ։ Եթէ կան երկու տարբեր գիտութիւններ, ուրեմն ի՞նչ է անոնց տարբերութիւնը։ Նախ ուսումնասիրենք այդ տարբերութիւնը։

Մարդ արարած որոշ գիտութեան մը ի՞նչպէս կը տիրանայ։ Կայ գիտութիւն մը, որ մարդ կը սորվի դպրոցի մէջ՝ դաստիարակուելով։ Նման գիտութեան մը տէր ըլլալու համար անձը պէտք է որոշ չափով իմացականութիւն մը ունենայ։ Անոնք, որոնց իմացականութիւնը դասաւանդուած նիւթը ըմբռնելու բաւարար չէ դպրոցական ուսում չեն հետապնդեր եւ ֆիզիքական գործով կը զբաղին։ Բայց, անոնք ալ որոշ գիտութիւն մը կ'ամբարեն։ Երկու պարագաներուն ալ մարդուն ստացած գիտութիւնը իրեն կու գայ իր հինգ զգայարանքներուն միջոցաւ։ Ինք իր գիտութիւնը կը սորվի իր տեսածներէն, իր լսածներէն ինչու չէ նաեւ իր միւս մնացեալ երեք զգայարանքներէն հաւաքած տեղեկութիւններով։ Իր ամբարած այս գիտութիւնները կը վե-

րաբերին միայն արտաքին աշխարհին, որովհետեւ անոնք իր հինգ զգայարանքներուն պարզեւած արդիւնքներն են: Պէտք է մոռնալ, թէ մարդուն հինգ զգայարանքները միայն արտաքին աշխարհէն իրեն տեղեկութիւններ կու տան: Մարդը նաեւ իր միտքը՝ իմացականութիւնը կ'օգտագործէ այդ գիտութեան տիրանալու համար: Նոյնիսկ աշխարհի վրայի ամենագիտուն մարդուն ունեցած գիտութիւնը ճղճիմ գիտութիւն մըն է նկատմամբ ճշմարտութեան: Որովհետեւ անիկա միայն մէկ փոքր տեսանկիւնէ ստացուած գիտութիւն մըն է: Նմանապէս զանազան անասուններ՝ միջատներ, ձուկեր եւ սողուններ աշխարհը իրարմէ բոլորովին տարբեր կ'ըմբռնեն ինչպէս նաեւ մարդուն ըմբռնածէն տարբեր, որովհետեւ բոլորին զգայարանքները իրարմէ կը տարբերին: Անոնց բոլորին տեսակէտները կը տարբերին իրարմէ եւ նաեւ մարդոց տեսակէտներէն: Մարդ ընդհանուր առմամբ իր այս ամբարած գիտութեամբ կը կարծէ թէ ինք ամէն ինչ գիտէ: Հետեւեալ համարին իմաստն ալ ճիշդ աս է.

«... Գիտութիւնն Հոգարարացոյցանէ այլ «էր շինէ՛»: (Լ: Առնշապիւ Ը:1)

«Գիտութիւնը կը հպարտացնէ՝ բայց սէրը կը շինէ»:

Նաեւ պէտք է մոռնալ, թէ հպարտութիւնը մահացու մեղքերէն մին է: Ս. Գիւրքի մէջի գիտութեան նկատմամբ ժխտական համարները մարդու հպարտութիւն տուող այս սահմանափակ գիտութեան համար են: Անտարակոյս նոյնիսկ մարդուն այս ամբարած գիտութիւնն անգամ Աստուծոյ շնորհքն է: Բայց մարդ անկարող է այդ ճղճիմ գիտութեամբ ճշմարտութեան ամբողջութիւնը հասկնալ: Արտաքին տեղեկութեամբ իր ամբարած գիտութեամբ մարդ կը կարծէ թէ ինք իր մարմինը եւ իր միտքն է եւ չի հասկնար թէ ինք զանոնք գործածողն է:

«Զի Տէր Կայ, զիմաստոյն-ն. եւ յերեւոյն նորա
Գիրոյն-ն եւ Հանճար: ... Զի երբեք եկեացե
իմաստոյն-ն 'ի միտս ին. եւ զհանճար անշին
ին-մ Բարի Համարեացիս լինել: Խորհոյրդ
Բարեաց զԳոշացին զիւ-՝ եւ միտքս սորբի
պահեացեն զիւ-» : (Լուսնայ Բ:6, 10-11)

«Արդարեւ իմաստութիւնը Տէ՛րը կու տայ՝ գիտութիւնն
ու հանճարը անո՛ր բերանէն են: ... Երբ իմաստութիւնը
քու սիրտիդ մէջ մտնէ եւ գիտութիւնը քու անձիդ
հաճելի ըլլայ, մտախոհութիւնը քեզ պիտի պահէ ու
հանճարը քեզ պիտի պաշտպանէ»:

**Ս. Գիրքին մէջ դրական ձեւով ներկայացուած
գիտութիւնը, որ Աստուած կը շնորհէ, զգայարանքներէ
եկած եւ միտքին եւ իմացականութեան կողմէ վերլուծ-
ուած արտաքին աշխարհի վերաբերեալ տուեալները
չէ: Այս գիտութիւնը կը պատկանի մարդուն ներքին
«աշխարհին»: Անիկա իր ճշմարիտ էութեան գիտու-
թիւնն է: Անիկա մարմինը եւ միտքը գործածողին
գիտութիւնն է: Ոչ մէկ զգայարանք կարող է այս
գիտութիւնը մարդուն տալ, ոչ ալ միտքը կամ իմացա-
կանութիւնը կարող է զայն հասկնալ: Այս գիտութիւնը
փորձառական գիտութիւն մըն է: Անձը կարող է միայն
ու միայն անձնական փորձառութեամբ այդ գիտու-
թեան հասնիլ: Մարդուն իր կողմէ որեւէ ջանք ի գուր է
այդ գիտութիւնը գիտնալը: Ան Աստուծոյ շնորհքն է,
որ մարդուն կը յայտնուի առանց ջանքի, ըստ
Աստուծոյ կամքին: Բայց աս չի նշանակեր, թէ մարդ
պէտք չէ ջանք ընէ կատարելութեան ուղիէն ընթանա-
լու եւ ի վերջոյ արժանի ըլլալու այս շնորհքին: Այս
գիտութիւնը արդիւնքն է կերտուած բարձր գիտակցու-
թեան, որ ճշմարտութիւնը կը «տեսնէ»՝ կը հասկնայ իր
ամբողջութեամբ «360°» տեսանկիւնէ, քան թէ զայն
տեսնէ միայն մէկ կէտէ: Այն ատեն մարդ կը հասկնայ**

ամէն ինչի միականութիւնը, այն ինչ որ ինք առաջուց զանազանութիւն կը համարէր: Միթէ մարդ ինքզինք չի⁶ սիրեր: Երբ ան փորձառութիւնը կ'ունենայ միականութեան, զինք կը տեսնէ ամէն բանի մէջ եւ ան կը մոռնայ իր «Ես»-ը, իր անհատականութիւնը եւ կը նոյնանայ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ եւ իրեն համար ստացած այս գիտութիւնն ալ իր մէջ կը յայտնուի իբրեւ սէր՝ հանդէպ բոլորին: Այդ սէրը Աստուածային սէրն է: Ընդհանուր մարդկութեան Ֆիզիքական փորձառութեան մէջ եղող եւ ճշմարտութիւն կարծած զանազանութիւնը պատրանքային է: Մարդուն պատրանքը ճշմարտութիւն կարծելու սխալը կը խափանէ իր մէջ սիրոյ արտայայտութիւնը եւ զայն կը խեղաթիւրէ: Մարդ ալ կը կարծէ թէ ինք սէր ունի: Խենդի պէս կը սիրահարուի առանց հասկնալու ճշմարիտ սիրոյ տուած երանութիւնը: Ինք կը գոհանայ անոր ճղճիմ մէկ արտայայտութեամբը: Ինք կը կարծէ, թէ իր այդ յայտնաբերած սէրն ալ իրեն «մեծ երջանկութիւն» կու տայ եւ անով կ'ուրախանայ եւ կը բաւարարուի, որովհետեւ ինք տակաւին երանութեան փորձառութիւնը բնաւ չէ ունեցած:

Աստուածային այդ գիտութիւնը եւ սէրը կը թուին նոյն բանը ըլլալ: Նոյնիսկ «փորձառութիւն ունենալ» ըսելն անգամ սխալ է, որովհետեւ մարդ ինք արդէն Այդ է, բայց ինք իր ձեռքով կը խափանէ այս իրողութեան յայտնութիւնը՝ գիտութիւնը: Երբ «փորձառութիւն» բառը կը գործածենք մեր ըսել ուզածը պարզապէս «անդրադաձ» մըն է:

«Եւ ելիւ ունիցիմ պարգաբուիւն, եւ
Գիցիցիմ պարգաբուիւն ու ամենայն, եւ պամենայն
Գիցիուիւն. եւ ելիւ ունիցիմ պամենայն
Լաւարս՝ մինչեւ պլեբինս փոփոխելոյ, եւ սեր ոչ

«—նիցիմ, «շինչ Էմ» : (Լ Կորնթացիս ԺԳ:2)

«Եւ եթէ մարգարէութիւն ունենամ ու հասկնամ ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը եւ եթէ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու ու սէր չունենամ, ոչինչ եմ»:

Ուրեմն ի՞նչպէս արժանանալ այս Աստուածային գիտութեան, որ նաեւ սէր է: Ասոր համար պէտք է կատարելութեան ուղիէն ընթանալ, այսինքն կատարել միայն Աստուծոյ կամքը եւ անընդհատ աղօթել: Այս երկուքին նպատակն ալ բարձր գիտակցութիւն կերտել է: Այս հարցով կան մարդիկ որոնք կ'ըսեն. «Ի՞նչպէս անընդհատ աղօթեմ, ես պատասխանատուութիւններ ունիմ, ընտանիք ունիմ, պէտք է գործի երթալ, դրամ չահիլ ..., կարող չեմ անընդհատ աղօթել» ինչպէս նաեւ կ'ըսեն. «Ի՞նչպէս գիտնամ Աստուծոյ կամքը»: Այս երկու միջոցները, իրարու հետ սերտ կապ ունին: Զանոնք մէկ առ մէկ ուսումնասիրենք:

Նախ հասկնանք իմաստը «Աստուծոյ կամքին»: Մարդ կը կարծէ թէ Աստուած մարդու «պատկերով» ծերունիի մը նմանութեամբ անձնաւորութիւն մըն է «վերը»՝ «երկինք»-ը նստած աշխարհ կը դիտէ եւ իր կամքին համաձայն զանազան փափաքներ ունի, որ մարդիկ պէտք է իրականացնեն: Երբ անոնք Աստուծոյ այդ կամքը կը կատարեն Աստուած ալ զիրենք կը վարձատրէ, իսկ երբ մարդ Աստուծոյ կամքը կ'անտեսէ եւ միայն իր կամքը կը կատարէ, Աստուած ալ զայն կը պատժէ: Անտարակոյս այս տեսակէտը սխալ է: Աստուած ոչ նստած է, ոչ ալ ոեւէ մէկը կը դիտէ, ոչ ալ ոեւէ մէկը կը վարձատրէ կամ կը պատժէ: Ուրեմն ի՞նչ է իմաստը Աստուծոյ պատիժին եւ վարձատրութեան, որոնց մասին յաճախ կը խօսինք եւ Ս. Գիրքի թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ բազմիցս գրուած է: Ասոր պատասխանը Յիսուս տուաւ.

«Եւ ամենայն որ ասէ Բան Կորդոյ մարդոյ,

Թողցի նմա՝ Բայց որ սԷոգին սուրբ ԼայԼոյիցէ,
մի Թողցի նմա: (Դու-Լաւ ԺԲ:10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր»:

Ս. Հոգիին Աստուծոյ բղխած «Աստուծոյ զօրութիւն»-ն է: Ամէն զօրութիւն զինք կառավարող օրէնքներ ունի: Աստուծոյ զօրութիւնն ալ Հայր Աստուծոյ դրած օրէնքներուն համաձայն կը գործէ: Այդ օրէնքները կ'ըլլան Աստուծոյ կամքը, որովհետեւ բոլոր տիեզերքը կառավարող Ս. Հոգիին զօրութեան օրէնքները ինք որոշած է: Երբ մարդ կը գործէ Ս. Հոգիի օրէնքներուն ներդաշնակ ամէն ինչ լաւ կ'ընթանայ եւ կ'ըսենք Աստուծոյ զինք վարձատրեց: Իսկ երբ մարդ կը գործէ Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն դէմ, ինք յաճախ կը ձախողի եւ կ'ըսենք Աստուծոյ պատիժին ենթարկուեցաւ: Դժբախտութիւնը այն է, թէ մարդ իր խաւարամտութեան հետեւանք տեղեակ չէ այդ օրէնքներուն մեծամասնութեան: Ան երբեմն կը գործէ այդ օրէնքներուն ներդաշնակ եւ երբեմն ալ հակառակ: Այս հիման վրայ ինք ալ իր կեանքի ընթացքին յաճախ կ'ենթարկուի լաւ եւ վատ պատահարներու՝ երջանկութեան եւ տխրութեան պահերու (Տես նաեւ «Հոգեւոր Խորհրդածութիւններ» վերնագիրով գիրքիս մէջ «Աստուծոյ կամքը եւ ձակատագիրը» խորագրեալ գրութիւնը): Եթէ ըստ Աստուծոյ կամքին ապրի, Ս. Հոգիի տիեզերական օրէնքներուն ներդաշնակ ապրիլն է, ի՞նչպէս գիտնանք այդ օրէնքները: Այդ օրէնքները կը յայտնուին այն մարդոց, որ բարձր գիտակցութիւն կը կերտեն իրենց մէջ: Պէտք չէ մոռնալ, թէ մարդուն գիտակցութիւնը, իր մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութիւնն է: Իսկ իր կերտած բարձր գիտակցութիւնն ալ իր մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի յայտնութիւնն է: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ ինչն զվարդապետի իւր,
ամենայն կադարեալն՝ եղիցի ի Թեւ- զվարդապետի
իւր» : (Ղուկաս 9 : 40)

«Աշակերտը իր վարդապետին գերիվեր չէ. բայց ամէն
կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի
ըլլայ» :

«Լըդ եղեր՝ ո՛ւր դո՛ւ ինչ կադարեալ չի, որպէս եւ Լայ-
րըն յետ երկնաւոր կադարեալ չ է » : (Մարգեհոն 17 : 48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր
հայրը կատարեալ է» :

Ուրեմն մեր պարտականութիւնն է նմանիլ մեր վար-
դապետին՝ Յիսուս Քրիստոսի եւ մեր երկնաւոր Հօր
նման կատարեալ ըլլալ, որ կարելի է միայն բարձր
գիտակցութեամբ : Իսկ բարձր գիտակցութիւն կերտե-
լու միջոցն ալ անընդհատ աղօթելն եւ կատարելու-
թեան ուղիէն ընթանալն է :

Այս երկու միջոցները, որոնք կը թուին
ամբողջովին իրարմէ զատ եւ անկապակից ըլլալ,
խակութեան մէջ նոյն բանն են :

Նախ ուսումնասիրենք, թէ ի՞նչ է աղօթքը (Տես նաեւ
«Լոյս Ի Լուսոյ (Ա.)» գիրքիս մէջ «Ի՞նչ է Աղօթքը» խորագրեալ է.
գլուխը, էջ 159 : Տես նաեւ «Խոկում» վերնագրեալ գիրքս) :
Ճշմարիտ աղօթքը մի քանի վայրկեան կամ նոյնիսկ
ժամերով ծունկի գալ երկու ձեռքերը միացնել եւ Աս-
տուծմէ այս կամ այն խնդրել չէ : Ան նաեւ եկեղեցական
արարողութիւններու մասնակցիլն ալ չէ : Անտարակոյս
անոնք բոլորն ալ իրենց արժէքը ունին եւ կարեւոր են
անհատը փոխելու եւ ձեւակերպելու համար : Բայց
ճշմարիտ աղօթքը կենցաղ մըն է, ապրելակերպ մըն է,
մտածելակերպ մըն է : Անիկա միշտ դրական խորհուրդ-
ներ ունենալ եւ ուրիշներու բարելաւումը ցանկալ եւ
փափաքիլն է : Անիկա, բարեկամի մը կամ օտարի մը
տրուած սիրոյ արտայայտութեան ողջագուրումն է :
Անիկա, ընտանեկան անդամ մը կամ օտար մը կերակ-

ընլու համար սիրով ճաշ մը եփելն է: Անիկա, ճամբորդողի մը «բարի ճանապարհ» մաղթելն է: Անիկա, կարօտեալին օգնել՝ ժամանակդ եւ տաղանդդ տալն է: Անիկա, ընդհանուր ստեղծագործութիւնը խնամելն է: Անիկա բոլորին կարեկից ըլլալն է: Անիկա, ուրիշին տխրութիւնը կիսել եւ ուրախութիւնը բազմապատկելն է: Անիկա, ամբողջութեամբ ներողամիտ ըլլալն է: Աղօթքը քու զօրութեան «մարմնիդ» թրթռացումի յաճախականութիւնն է: Անիկա, զգացում մըն է: Անիկա, խորհուրդ մըն է: Անիկա, սիրոյ ձայնն է: Անիկա, անկեղծ ընկերութեան վերաբերմունքն է: Աղօթքը մեր լուռ էութեան արտայայտութիւնն է: Երբ Քրիստոսը կը տեսնենք որպէս ամէն անձի, ներառեալ մեր թշնամիներուն, ճշմարիտ էութիւնը, բոլորին հետ նման հայեացքով վարուելն ալ կ'ըլլայ մեր աղօթքը:

Միթէ աս չէ՞ր, որ Յիսուս մեզի սորվեցուց իբրեւ կատարելութեան ուղի: Միթէ աղօթքը եւ կատարելութեան ուղին նոյնը չէ՞ն: Եթէ նման հայեացքով եւ հասկացողութեամբ կերտենք մեր կենցաղը մեր ընդհանուր կեանքն ալ կ'ըլլայ շարունակական աղօթքի պահ մը: Մարդ կարող է հրաշքներ գործել, ուրեմն կարող է նաեւ թէ՛ աշխատիլ իր մարդկային պարտականութիւնները կատարել եւ նաեւ կարող է անոնց բոլորը աղօթքի վերածել: Միտքը անընդհատ ներհայեցողութեամբ կեդրոնացած իր ներքին Քրիստոսի վրայ՝ խոկումով, կը կարողանայ բարձր գիտակցութիւն կերտել:



ՀԵՏԱՔՐԵՐԱԿԱՆ ԿԱՅԱԹԻ (constant) յը «6174»

Որեւէ չորս թուանշանէ բաղկացեալ տարբեր-տարբեր թիւեր (պայմանով որ չորս թուանշաններն ալ նոյնը չըլլան), եթէ նախ անոնք նուազական շարքի դնենք, յետոյ նոյն թիւը այս անգամ ալ վերելական շարքով, նուազական շարքով դրուածէն հանենք եւ արդիւնքներն ալ նոյն գործողութիւններու ենթարկենք, ի վերջոյ բոլորին արդիւնքը կ'ըլլայ 6174: Երբ չորս թիւերն ալ նոյնը ըլլան, թէ՛ վերելական եւ թէ՛ նուազական շարքերը նոյնը կ'ըլլան եւ երկուքին հանումի արդիւնքն ալ կ'ըլլայ «0»:

Որպէս օրինակ մի քանի որեւէ թիւեր նկատողութեան առնենք (մին կայաթիւր ինքը զատենք):

Որեւէ չորս թիւ.-	1112	5832	1738	1945	6174
Նուազական շարուած.-	2111	8532	8731	9541	7641
Վերելական շարուած.-	<u>-1112</u>	<u>-2358</u>	<u>-1378</u>	<u>-1459</u>	<u>-1467</u>
Հանումին արդիւնքը.-	0999	<u>6174</u>	7353	8082	<u>6174</u>
Արդիւնքը՝ վերելի տողը					
Նուազական շարուած.-	9990	7641	7533	8820	
Վերելական շարուած.-	<u>-0999</u>	<u>-1467</u>	<u>-3357</u>	<u>-0288</u>	
Հանումին արդիւնքը.-	8991	<u>6174</u>	4176	8532	
Արդիւնքը՝ նախորդ տողը					
Նուազական շարուած.-	9981		7641	8532	
Վերելական շարուած.-	<u>-1899</u>		<u>-1467</u>	<u>-2358</u>	
Հանումին արդիւնքը.-	8082		<u>6174</u>	<u>6174</u>	
Արդիւնքը՝ նախորդ տողը					
Նուազական շարուած.-	8820				
Վերելական շարուած.-	<u>-0288</u>				
Հանումին պատասխանը.-	8532				
Արդիւնքը՝ նախորդ տողը					
Նուազական շարուած.-	8532				
Վերելական շարուած.-	<u>-2358</u>				
Հանումին պատասխանը.-	<u>6174</u>				

Այսօր գիտնականները շատ լաւ գիտեն, թէ բնութեան մէջ ամէն ինչ կարելի է նաեւ մաթէմատիկի հաւասարութիւններով արտայայտել եւ անոնց օրէնքները յայտնաբերել: Մաթէմատիկի մէջ ամէն մի կայաթիւ շատ կարեւոր եւ սերտ կապ ունի բնութեան օրէնքներուն հետ: Այս ուղղութեամբ տես «Լոյս ի Լուսոյ (Ա)» գիրգիս «Ի՞նչ է թուագիտութիւնը» խորագրեալ գլուխը (էջ247):

Ուրեմն այս հիման վրայ ի՞նչ է կարեւորութիւնը այս կայաթիւին:

Թուագիտութեան մէջ Թիւ «6»-ը կը ներկայացնէ մարդը: Ան նաեւ կը ներկայացնէ Աստուծոյ յատկութիւնները: Անոնք են. ա- Յաւիտենական, բ- Ամենուրեք, գ- Ամենակարող, դ- Ամենաարդար, ե- Ամենագէտ, զ- Ողորմած՝ Սիրոյ շտեմարան:

Թիւ «1»-ը կը ներկայացնէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչի միականութիւնը եւ Աստուծոյ հետ մէկ ըլլալը, ինչպէս նաեւ Աստուծոյ մէկ ըլլալը:

Թիւ «7»-ը կը ներկայացնէ Աստուծոյ թիւը: Մարդ ունի եօթը զօրութեան կեդրոններ: Երբ իր ամբարած զօրութիւնը հասնի եօթներորդ կեդրոն, Աստուածայայտնութիւնը իր մէջ կ'իրականանայ եւ ինք ալ Յիսուսի նման կ'այլակերպի: Աստուած տիեզերքը ստեղծեց «եօթ»-ը օրէն եւ եօթերորդ օրը «հանգչեցաւ»:

Թիւ «4»-ը կը ներկայացնէ Աստուծոյ մարմինը՝ ընդհանուր ստեղծագործութիւնը: (Տես «Լոյս ի Լուսոյ (Ա)» գիրքիս մէջ էջեր 261-262)

Երբ թուագիտութեան օրէնքներու համաձայն չորս թիւերը միականի վերածենք ($6+1+7+4=18$, $1+8=9$), թիւը կ'ըլլայ «9»: Ինը թիւն ալ կը ներկայացնէ մարդը եւ անոր դատելու եւ զատելու կարողութիւնը՝ Աստուածայայտնութեան միջոցը: «Լոյս ի Լուսոյ (Ա)» գիրքին մէջ էջ 267:





-Ե-

ՅԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ

- Ա - Նստի եւ Առաջ Մարդ Եղոր,
- Բ - Հորէն Առնուեցար..., Հորին Նայէ
- Գ - Աղքատ Կրնս ու Աթիստ
- Դ - Աստուծոյ Կայ...
- Ե - Ոչ Ոչ Զաստուծոյ Կը Ծարրէ
- Զ - Հիւանդին Զոքուան Արժէր
- Է - Գիտութիւն եւ Կրօնը
- Ը - Բնաշի
- Թ - Միութար Հերմիտի Կեանքէն
- Ժ - Ճշմարտութեան Տեսնը
- ԺԱ - Աստուծոյ Մարդը
- ԺԲ - Վառը

ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ ՄԱՐԴ ԵՂԻՐ, ՆԱԽՔԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՆԱԼ ԽՆԴՐԵԼԴ

Ինչպե՞ս, ուրեմն, աստուած պիտի ըլլաս, երբ քեզ մարդ չեն ըրած տակաւին:

Ինչպե՞ս կատարելութեան կը ձգտիս, մինչ տակաւին նո՛ր սկսած ես:

Ինչպե՞ս անմահութիւն կը խնդրես, մինչդեռ մահկանացու բնութեամբդ չինազանդեցար Արարիչին:

Քեզի համար անհրաժեշտ է նախ եւ առաջ մարդ ըլլալու մակարդակը ապահովես, ապա՝ մասնակցիս Աստուծոյ փառքին. որովհետեւ, դուն չէ որ զԱստուած ստեղծած ես, այլ՝ Աստուած է, որ քեզ ստեղծած է: Արդարեւ, եթէ դուն Աստուծոյ գործն ես, ապա պետք է Աստուծոյ ձեռքին սպասես, որ ամէն ինչ իր յարմար ժամանակին կրնէ, յարմար ժամանակին՝ քեզի համար, դուն՝ որ կը շինուի ու կը ձեւաւորուի: Անոր սիրտդ տո՛ւր, փափուկ եւ ճկուն, եւ պահէ այն ձեւը, որ ձեւաւորիչ Արարիչը քեզ ստեղծած է, քու մէջդ պահելով այն ջուրը՝ որ Իրեն կը պատկանի, որպէսզի չոր անձի մը չփոխուիս, որմէ ետք կորսնցնես Անոր մատներուն հետքերը: Այս կազմաւորման գործողութիւնը պահպանելովդ, կատարելութեան պիտի բարձրանաս: Տեխը, որ մէջդ է, Աստուծոյ վարպետութեան ու արուեստին շնորհիւ պիտի վերցուի մէջէդ:

Անոր ձեռքը քեզի յատուկ նիւթը ստեղծած է, եւ ներսէն ու դուրսէն պիտի ներկուիս՝ ոսկիով ու արծաթով, որով պիտի գեղեցկանաս, ու թագաւորն անգամ պիտի ցանկայ վայելչութիւնդ ու գեղեցկութիւնդ: Սակայն, եթէ սիրտդ կարծրացնես ու մերժես Աստուծոյ արուեստի գործը, առանց երախտապարտ ըլլալու Անոր՝ որ քեզ մարդ ըրաւ, ուրանալով այդ լաւութիւնը, միաժամանակ կորսնցուցած կ'ըլլաս, ո՛չ միայն Անոր արուեստի գործը, այլ՝ նոյնինքն

կեանքը: Արդարեւ, ստեղծելու գործողութիւնը Աստուծոյ արդարութեան յատուկ է, սակայն քեզ ստեղծելն ու ձեւաւորելը, յատուկ է մարդկային բնութեան:

Այդ պատճառով, եթէ Անոր տաս այն ինչ որ քուկդ է, այսինքն Անոր հաւատալն ու Անոր ենթարկուիլը, ապա պիտի ստանաս Անոր արուեստի գործը եւ Աստուծոյ գործին տիպար կտոր մը պիտի ըլլաս: Սակայն, եթէ չես հաւատար Անոր, եւ կը ջանաս Անոր ձեռքերէն փախչիլ, պակասութեան եւ անկատարութեան պատճառը քեզի պիտի վերագրուի, որովհետեւ չինագանդեցար, եւ ո՛չ թէ Անոր՝ որ քեզ հրաւիրեց: Որովհետեւ, Ան առաքեալներ ուղարկեց, որպէսզի մարդիկ խնջոյքին հրաւիրեն, սակայն անոնք որոնք չինագանդեցան, իրենք զիրենք զրկեցին Թագաւորական խնջոյքէն:

Սուրբ Երանոս, Լիոնի Եպիսկոպոս



ՀՈՂԷՆ ԱՌՆՈՒԵՑԱՐ..., ՀՈՂԻՆ ՆԱՅԷ

Քաղաքին [Եդեսիոյ] մօտենալով, Եփրեմը Աստուծմէ խնդրեց, որ Ան իրեն հանդիպեցնէ այնպիսի մարդու մը, որուն հետ կրնայ զրուցել Սուրբ Գիրքի թեմաներով՝ իր հոգիին փրկութեան համար: Սակայն, քաղաքի դարպասներուն մօտ, ան հանդիպեցաւ կնոջ մը, որուն արտաքինը կը մատնէր անոր չարական կեանքը եւ ամօթալի վարքը:

Այդ հանդիպումէն շփոթած, Եփրեմը մտածեց, որ Աստուած չլսեց իր աղօթքները: Այդ ընթացքին, իր դիմացէն եկող կինը կեցաւ եւ սեւեռուն աչքերով նայեցաւ անոր: Այդ բանը Եփրեմին ստիպեց դիմել անոր կշտամբիչ խօսքերով. «Ինչո՞ւ ամօթը մոռցած, գլուխդ գետին կախած չես նայիր, ինչպէս որ կը վայելէ ամօթխած կնոջ»: Կինը պատասխանեց, որ ինք [կինը] պէտք է նայի իրեն [Եփրեմին], որովհետեւ կինը տղամարդէն առնուած է, իսկ ան ո՛չ թէ իրեն պէտք է նայի, այլ՝ գետնին, որովհետեւ ան որպէս տղամարդ, հողէն առնուած է:

Եփրեմը կնոջ տուած պատասխանին համար զարմացաւ եւ զԱստուած փառաբանեց, որ մեղաւոր կնոջ շուրթերով խրատեց զինք եւ սորվեցուց, որ պէտք չէ քամահրել նաեւ մեղաւորը:

(Անյայտ հեղինակ)



ԱՂՔԱՏ ԿԻՆՆ ՈՒ ԱԹԷԻՍՏԸ

Աղքատ կին մը ռատիոկայանի մը կազմակերպած հաղորդումի մը ընթացքին կը զանգահարէ՝ Աստուծմէ օգնութիւն խնդրելով:

Աթէիստ մը այդ հաղորդումը կը լսէր եւ որոշեց այդ կնոջ վրայ խնդալ: Ապահովելէ ետք այդ կնոջ տան հասցեն, իր քարտուղարուհին կը կանչէ ու կը հրամայէ անոր մեծ քանակութեամբ սննդեղէն գնել ու տանիլ այդ կնոջ: Սակայն, իր քարտուղարուհին հետեւեալ թելադրութեամբ կ'ուղարկէ. կ'ըսէ, երբ այդ կինը հարցնէ, թէ ո՞վ դրկեց այս ուտելիքները, ըսէ անոր, թէ սատանան դրկեց:

Քարտուղարուհին երբ այդ կնոջ տուն կը հասնի, կինը շատ կ'ուրախանայ եւ երախտագիտութիւն կը յայտնէ իր ստացած օգնութեան համար, եւ կը սկսի իր ստացած ուտելիքները իր փոքր տան մէջ դասաւորել:

Քարտուղարուհին ստիպուած կը հարցնէ անոր, չէ՞ս ուզեր գիտնալ, թէ ո՞վ դրկեց այս ուտելիքները:

Կինը կը պատասխանէ, հոգս չէ, որովհետեւ երբ Աստուած բան մը կը նախախնամէ, սատանաները անգամ կը հնազանդին Անոր:

(Արաբերէնէ թարգմանուած)



ԱՍՏՈՒԱԾ ԿԱՅ...

Մարդ մը սափրիչի մօտ եկաւ: Մազերը կտրած ժամանակ, սափրիչը կը խօսէր Աստուծոյ մասին:

Սափրիչը ըսաւ.

-Ինչ ալ ըսէք ինծի, միեւնոյնն է, ես չեմ հաւատար թէ Աստուած կայ:

-Ինչո՞ւ, կը հարցնէ այցելուն:

-Բաւարար է փողոց ելլել, որպէսզի համոզուիս, թէ Աստուած չկայ: Կը խնդրեմ, ըսէք, եթէ Աստուած կայ, ինչո՞ւ այսքան հիւանդ մարդիկ կան, այսքան անտուն ու փողոցային երեխաներ ու ծերեր: Եթէ իրապէս Աստուած գոյութիւն ունենար, ապա այսքան ցաւ ու տառապանք չէր ըլլար: Դժուար է պատկերացնել սիրող Աստուածը, որ թոյլ կու տայ, թէ այս ամէնը կատարուին:

Այցելուն մտահոգուեցաւ:

Երբ սափրիչը աւարտեց աշխատանքը, այցելուն առատօրէն վճառեց: Փողոց ելլելով տեսաւ չսափրուած ու մազերով լեցուն մարդ մը: Այն ատեն այցելուն կրկին վերադարձաւ սափրիչին խանութը, կանչեց սափրիչը պատուհանին մօտ, ցոյց տուաւ այդ մարդը ու ըսաւ.

-Սափրիչներ չկան, ու յարգանքով գլուխը կախեց եւ դուրս ելաւ:

(Անյայտ հեղինակ)



ՈՉ ՈՔ ՉԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԾԱՂԴԷ

Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ հիւանդանոցի մէջ է:

Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ պատերազմի մէջ է:

Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ հրդեհի կամ ջրհեղեղի մէջ է:

Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ օդանաւը զօրաւոր կերպով կը սկսի շարժիլ:

Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ մութ անցքի մը մէջ երկու անծանօթներ իր ճամբան կը փակեն:

Սակայն, երբ պարի սրահներէն մէկու մը մէջ ոեւէ զինով մը կատակ կ'ընէ Աստուծոյ անունով՝ զոր չի՛ ճանչնար, կամ երբ անմիտին մէկը կ'ըսէ, թէ Աստուած կ'ատէ զինք, յաճախ իր եզրակացութիւններով այնպէս կ'ընէ, որ բոլոր ներկաները կը սկսին ծաղրել ու զուարճանալ Աստուծոյ անունով:

Սակայն, Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ իր մահկանացու մարմինին վրայ զգայ մահուան սառն շունչը՝ շատ մօտիկ, թիկունքին ետեւը կամ ալ մահուան դէմքին նայած ժամանակ:

Դատաստանին օրը ոչ որ կը ծաղրէ զԱստուած:

Ոչ որ զԱստուած կը ծաղրէ, երբ Աստուած կը ներէ:

Եկեք մենք ալ չծաղրենք զԱստուած: Աստուած սէր է...:

(Անյայտ հեղինակ)



ՀԻՒԱՆԴԻՆ ԶՂՋՈՒՄԻՆ ԱՐԺԷՔԸ

Հարցում. Ոմանք կը նսեմացնեն հիւանդին զոջումին արժէքը, նկատի ունենալով, որ այն կատարուած է այնպիսի պարագայի մը, որ զինք ստիպած է զոջալու: Այս առումով հետեւեալ արտայայտութիւնը կ'ունենան. «Հիւանդին զոջումը՝ հիւանդագին զոջում է»: Ի՞նչ է Եկեղեցոյ կարծիքը այս արտայայտութեան մասին:

Պատասխան. 1- Ան որ զոջումը կը դատէ, մի՛ միայն սիրտերը քննող Աստուածն է:

Աստուած -եւ ոչ թէ մենք-, Ինք միայն գիտէ եթէ հիւանդին զոջումը իրական ու սրտանց է, կամ առ երեւոյթ եւ ժամանակաւոր զոջում է, եւ արդեօք հիւանդը իր զոջումին մէջ պիտի մնա յ իր առողջանալէն ետք, թէ՞ պիտի փոխուի:

Իսկ մենք երբ ընդհանուր կերպով կը դատենք՝ բոլոր հիւանդներուն ըսելով, թէ անոնց զոջումը հիւանդագին է, ասիկա անարդար դատաստան է, եւ չենք գիտեր, թէ ի՞նչ զգացումներ կան անոնց սիրտերուն մէջ, ինչպէս նաեւ այդպէսով կը խառնենք ճշմարիտ եւ կեղծ զոջացողին միջեւ:

2- Կրնայ ըլլալ, որ Աստուած թոյլ կու տայ հիւանդութեան, որպէս առիթ՝ որ Աստուծոյ կը մօտեցնէ:

Մարդ երբ ծանր հիւանդութեամբ կը հիւանդանայ, կամ կարիք կ'ունենայ վտանգաւոր գործողութիւն մը կատարելու, կրնայ ըլլալ որ իր վրայ աւելի ազդէ քան տասնեակ քարոզները, ինչպէս նաեւ քան զանազան հոգեւոր գիրքեր կարդալը, որովհետեւ [այդ գործողութիւնը] կը յիշեցնէ իրեն մահուան գոյութեան մասին եւ անոր պատրաստ ըլլալուն, որով զոջումին կը դիմէ, խնդրելով [Աստուծմէ] ողորմութիւն, քաւութիւն եւ բժշկութիւն: Այս բոլորը անկեղծ սիրտով եւ իրական զգացումներով:

3- Եթէ ըսուած է, թէ նեղութեան մէջ կատարուած զոջումն է այդ, արդարեւ Աստուած Ի՛նք կըսէ.

«Ու նեղութեան օրը Ինծի կանչէ, Ես քեզ պիտի ազատեմ ու

Դուն զիս պիտի փառաւորես» (Մղ 50.15):

Հետեւաբար, Աստուած նեղութեան ժամանակուան աղօթքը կընդունի, եւ Ի՛նքն իսկ աստոր կը հրաւիրէ: Չըսեր, թէ հիւանդագին աղօթք է, կամ մերժելի, կամ ստիպողական: Ո՛չ..., այլ թէ Աստուած կ'ատօնէ նեղութիւնները -որոնցմէ են հիւանդութիւնները-, որպէսզի անոնց միջոցով մեզ Իրեն մօտեցնէ:

Եւ ինչքա՛ն շատ է թիւը անոնց, որոնք իրենց նեղութիւններուն մէջ Աստուծոյ աղօթեցին:

Աստուած պատասխանեց այդ աղօթքներուն ու չըսաւ, թէ նեղութեան պատճառով են, կամ սիրոյ պատճառով: Ատոր օրինակները չեն հաշուուիր եւ բաւարար է յիշել սաղմոսերգուին ըսածը.

«Իմ նեղութեանս մէջ Տիրոջ աղաղակեցի ու Անիկա ինծի պատասխան տուաւ» (Մղ 120.1):

Ինչպէս նաեւ ըսելը՝ **«Իմ նեղութեանս մէջ Տիրոջը կանչեցի ու իմ Աստուծոյս աղաղակեցի. Անիկա Իր տաճարէն իմ ձայնս լսեց ու իմ աղաղակս Անոր առջեւ՝ Անոր ականջը հասաւ»** (Մղ 18.6), տե՛ս նաեւ (Մղ 77.2, 86.7):

4- Չմոռնանաք Յովնան մարգարէին աղօթքը կէտի փորին մէջ:

Մարդու մը աղօթքը չէ, որ հիւանդ է եւ հաւանական է, որ առողջանայ, այլ՝ մարդու մը, որ մահուան դատապարտուած է: Այդ բոլորով հանդերձ՝ ըսաւ. **«Իմ նեղութենէս Տէր, Քեզի աղաղակեցի եւ Դուն ինծի պատասխան տուիր: Գերեզմանին փորէն կանչեցի ու իմ ձայնս լսեցիր»** (Յվն 2.2): Տէրը չըսաւ, թէ հիւանդոտ աղօթք է, կամ հիւանդագին զղջում է, երբ Յովնան ըսաւ, թէ **«Երբ հոգիս իմ մէջս մարեցաւ, Տէ՛ր Քեզ յիշեցի ու իմ աղօթքս Քեզի՝ Քու սուրբ տաճարդ հասաւ»** (Յվն 2.7). այլ՝ Տէրը պատասխանեց անոր ու օգնեց եւ հանեց զինք կէտի փորէն, հակառակ անոր, որ Տէրը գիտէր, թէ այս փրկութենէն ետք, Յովնան պիտի վշտանար ու նեղուէր, երբ Տէրը նիւնուէացիներուն զղջումը

ընդունեց (Յվն 3.10, 4.1):

Տէրը խաչին վրայի աւագակին զոջումն ալ ընդունեց:

Սովորական զոջում մը չէր, նման այն հիւանդներուն, որոնց եւ մահուան միջեւ ամիսներ, տարիներ կամ նոյնիսկ մի քանի օրեր կայ, կամ այն հիւանդներուն զոջումին նման, որոնք կրնան առողջանալ, այլ՝ աւագակին զոջումը մարդու մը զոջում էր, որու եւ մահուան միջեւ միայն երեք-չորս ժամ կայ... Ատով հանդերձ, երբ իր զոջումին մէջ ըսաւ՝ **«Տէ՛ր, յիշե՛ զիս, երբ Քու թագաւորութեամբդ գաս»** (Ղկ 23.42), Տէրը ընդունեց անոր զոջումը եւ պատասխանեց անոր՝ ըսելով. **«Այսօր Ինծի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»** (Ղկ 23.43). եւ երբեք չըսաւ անոր, թէ հիւանդագին զոջումը է [կատարածդ]:

5- Իրապէս մարդիկ Աստուծոյ նման չեն, Անոր՝ բարութեամբ, քնքշութեամբ եւ մեղաւորներուն զոջումը ընդունելուն մէջ:

Այս առումով, լա՛ւ ըսաւ Դաւիթ մարգարէն. **«Աւելի լաւ է Տիրոջ ձեռքը իյնալ, քանզի Անոր գթութիւնը շատ է, քան մարդու ձեռք իյնալը»** (Բ. Թգ 24.14):

Եթէ զոջացող հիւանդ մը խստասիրտ մարդու մը ձեռքը ինկաւ՝ կըսէ, թէ այս հիւանդին զոջումը հիւանդագին է: Սակայն Աստուծոյ մօտ, այդ հիւանդին զոջումը՝ ընդունելի է:

6- Այս մասին բաւարար է Տիրոջ ըսածը.

«...Ինծի եկողը պիտի չմերժեմ» (Յհ 6.37):

Ով որ կը դիմէ Անոր ցանկացած ժամանակ, եւ ինչ պարագաներու բերումով ալ ըլլայ, նոյնիսկ մետասաներորդ ժամուն դիմողները, նոյնիսկ անառակ որդին՝ որ իր հօր մօտ վերադարձաւ, երբ աղքատութիւնը, կարօտութիւնն ու կարիքը նեղացուցին զինք, անօթեցաւ եւ խոզերուն տրուած կերը փափաքեցաւ, եւ ոչ ոք տուաւ անոր (Ղկ 15.16)..., ու հայրը չըսաւ անոր, թէ իր զոջումը հիւանդագին է, որովհետեւ անոր դրդապատճառը անօթութիւնն էր, այլ՝ ընդունեց զինք ու անոր համար պարարտ եզր մորթեց ու

ուրախացաւ անոր զոջումով...

7- Հետեւաբար, կարելի չէ արհամարհել ոեւէ մէկուն զոջումը, կամ թերագնահատել այն, կոշտ ու կոպիտ դատաստանով: Եւ եթէ Աստուած զոջացողներուն զոջումով կ'ուրախանայ, ինչպէս նաեւ Անոր հետ երկինքին հրեշտակները կ'ուրախանան (Ղկ 15.7, 10). արդարեւ, մենք ինչպէ՞ս կը համարձակինք այս աստիճանի հասնիլ. դատապարտելու հիւանդներուն զոջումը, առանց գիտնալու անոնց սիրտերուն վիճակը, եւ ընդհանուր կերպով՝ որով բոլորը կը պարփակէ:

8- Հետեւաբար ինչո՞ւ կը հաղորդենք հիւանդին Սուրբ Խորհուրդով:

Ո՛չ միայն երբ եկեղեցի կու գայ ու Պատարագին ներկայ կ'ըլլայ, այլ՝ ատկէ աւելին, քահանան կ'երթայ անոր քով տունը կամ հիւանդանոցը ու կը մատակարարէ անոր Սուրբ Հաղորդութիւնը: Գիտելի է, որ [Սուրբ Հաղորդութիւնը] միայն զոջացողներուն կը տրուի: Ասոր իմաստը, ուրեմն, անոր զոջումին ընդունուիլն է, ո՛չ թէ դատապարտել զայն, ըսելով՝ թէ հիւանդագին զոջում է:

9- Մենք հիւանդին կը մատակարարենք եկեղեցական այլ խորհուրդ մըն ալ, որն է հիւանդներուն օծում:

Սուրբ ձեռով կ'օծենք զինք ու անոր համար եօթը աղօթքներ կ'աղօթենք: Ու չենք հարցնէր անոր իր զոջումի իրաւացիութեան մասին, այլ՝ բաւարար է, որ զոջացած է...:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆՔ

Հարցում. Գիտութիւնը կը հակառակի՞ կրօնքին:

Պատասխան. Իսկական գիտութիւնը չի՝ հակառակիր իսկական կրօնքին հետ:

Եթէ հակառակեցան, անպայման որ անոնցմէ մէկուն մէջ սխալ մը կայ, կամ անոնցմէ մէկը հասկնալուն մէջ: Կրօնքը կրնայ ըլլալ հակառակի կեղծ գիտութեան հետ, որ

իրականանին մեջ գիտություն չէ: Կամ, կրնայ ըլլալ, որ կրօնքը հակառակի պարզապէս որոշ տեսություններու կամ ենթադրություններու հետ, որոնք չեն բարձրացած իսկական գիտութեան մակարդակին:

Կրնայ ալ ըլլալ, որ գիտութիւնը հակառակի կրօնքի սխալ հասկացողութեան հետ կամ կրօնքի մը հետ՝ որ Աստուծմէ չէ....:

ԲՆԱԶԴ

Հարցում. **Կրնա՞յ ըլլալ, որ մարդ ձերբազատուի բնագոյէ մը, որով ծնած է:**

Պատասխան. Մարդ չոչնչացներ իր բնագոյները, այլ՝ **գիտակցութիւնը ունենայ ինչպէս ուղղել զանոնք:**

Սեռական բնագոյը, օրինակ, ներուժի, սիրոյ եւ քնքշանքի արտայայտութիւն է: Եւ եթէ մարդը յաջողի ուղղել իր ունեցած ներուժը, սէրը ու քնքշանքը՝ լաւ կերպով, այդ ատեն չի՛ յոգնիր սեռական բնագոյէն:

Որովհետեւ, այն ինչ որ կը յոգնեցէ մարդուն բնագոյը չէ, այլ՝ անոր մոլորիլը:

Բարկութիւնը, օրինակ, կարելի է զայն բարիին ուղղել, առանց բարկութեան, որով շինիչ ներուժի կը վերածուի եւ ո՛չ թէ կործանումի, որմէ ազնւութիւնն ու արիութիւնը կը բխին, ինչպէս նաեւ արդարութիւնը պաշտպանելը եւ անիրաւուածին յաղթութիւնը: Այս բոլորը հոգեւոր կերպով, առանց մեղքին մեջ իյնալու ու ճիշդ եւ զգոյշ կերպով արտայայտուելով: Ինչպէս Սուրբ Գիրքը կըսէ. «**Բարկացեք, բայց մի՛ մեղանչեք**» (Սղ 4.4):


Հետեւաբար, փնտռէ այն սխալները, որոնք պատճառ կը դառնան քեզի բնագոյի մը մեջ մոլորելու եւ աշխատէ՛ բուժել զայն: Գիտցի՛ր նաեւ, որ Աստուած մեր բնութեան մեջ սխալ բան մը չէ դրած, երբ մեզ ստեղծեց: Այլ՝ մեր մեջ ներուժեր դրաւ, որպէսզի բարութեամբ օգտագործենք:

Վաղարշապատ

Շաբաթ, Մայիս 9, 2020

ՎԱՐԱՆԴ ՔՈՐԹՍՈՍԵԱՆ

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ



Մխիթար Հերացի (1110 - 1200) հայ բժշկութեան հիմնադիր, հայ մեծ գիտնական եւ ԺԲ դարու մեծ մարդասէր մըն է։ Ծննդեան եւ մահուան թուականներու մասին յստակ տեղեկութիւն չկայ, թէեւ 1110, բայց 1120, կամ նոյեմբեր 11, 1118։ Ծննդավայրն է՝ Խոյ։ Իսկ մահուան թուականը՝ 1200 կամ 1173։ Ան եղած է բժիշկ, բնագէտ եւ փիլիսոփայ։

Մխիթար Հերացիի տան դուռը միշտ բաց էր հիւանդին եւ կարօտեալին առջեւ, իր լոյսը միշտ անմար կը մնար սեղանին վրայ՝ մինչեւ առաւօտ։

Ան ապրած եւ գործած է ԺԲ դարուն, լուսաւոր դէմք մը՝ հայ ժողովուրդի հոգեւոր մշակոյթը ստեղծողներու երկնակամարին վրայ։ Ան պատմութեան էջերուն մէջ աստղի մը նման փայլուն եւ պատուաւոր տեղ մը կը գրաւէ։

Մխիթար Հերացի հայկական դասական բժշկութեան մեծ ծառայութիւններ մատուցած է։ Եւ ահաւասիկ, իր կեանքէն հետաքրքրական եւ նոյնքան օրինակելի դրուագ մը։

Գիշեր մը, երբ մեծ բժշկապետը Մխիթար Հերացի իր

սենեակին առանձնութեան մէջ ինքնամոռացութեամբ կուտումնասիրէր զանազան բոյսեր, որոնց օգտագործումը բժշկութեան մէջ «կենսական» կը համարուէր, յանկարծ դուռը թակուեցաւ: Հերացին անմիջապէս կանթեղը առաւ եւ դուռը բացաւ: Դրան սեմին կեցած էր օտարական մը:

Օտարականը. «Ներէ՛, բժի՛շկ, որ այսպիսի անպատեհ ժամու մը քեզ կանհանգրստացնեմ: Հեռո՛ւ ներէն կու գամ եւ քու բարի, օգտաշատ խորհուրդներուն պէտք ունիմ», կըսէ: Միւրեք Հերացին նախ կը կարծէ, թէ եկողը սովորական հիւանդ մըն է եւ անմիջապէս ներս կը հրամցնէ օտարականը: Երբ կը նստի օտարականը, Հերացին կը սկսի հարցուփորձել անոր առողջութեան մասին:

–«Ես հիւանդ չեմ, բժի՛շկ, ես մօտդ եկած եմ քեզի երէք հարցում ուղղելու համար: Եթէ թոյլ տաս՝ հարցնեմ», կըսէ օտարականը:

–«Պատրաստ եմ լսելու», կը պատասխանէ բժշկապետը, եւ կը շարունակէ. «Խօսէ՛ եւ հարցուր ի՛նչ որ կը փափաքիս»:

Առաջին հարցումը կուղղէ օտարականը.

–«Ըսէ՛ ինծի, բժի՛շկ, ինչի՞ մէջ կը կայանայ քու բժշկութեանդ գաղտնիքը»:

–«Իմ բժշկութիւնս ոչ մէկ գաղտնիք ունի», կը պատասխանէ Հերացին. «Իմ բժշկութիւնս սէ՛ր է, սէ՛ր՝ մարդոց հանդէպ»:

Օտարականը երկրորդ անգամ կը հարցնէ.

–«Ըսէ՛ ինծի, դժուա՞ր է բժիշկի մը պարտականութիւնը»: Հերացին կը պատասխանէ.

–«Բժիշկներուն աշխատանքը դժուա՛ր է, երբեմն չափազանց դժուա՛ր: Բայց բժշկութիւնը պարտականութիւն չէ, զաւա՛կս, բժշկութիւնը ամենէն առաջ ԿՈՉՈ՛ՒՄ է եւ ԽԻ՛ՂՃ»:

–«Վերջին հարցում մըն ալ, բժի՛շկ», ըսաւ օտարականը.

–«Զիս քովդ չե՞ս առներ որպէս աշակերտ»:

–«Քու երրորդ հարցումիդ ես չեմ կրնար պատասխանել,

մինչեւ որ դուն չպատասխանես իմ սա հարցումիս: Ըսէ ինծի. հիւանդի մը համար դուն կրնա՞ս ամէն ինչէ զրկել ինքզինքդ: Կրնա՞ս հանապազօրեայ հացի փոխարէն հիւանդի մը համար դեղ գնել, կրնա՞ս անքուն գիշերներ անցընել անոր անկողինին քով՝ մոռնալով քու մերձատրդ: Եւ վերջապէս դուն կրնա՞ս միանգամ ընդմիշտ ընդունիլ որ բժիշկի մը աշխատանքը միայն պարտականութիւն չէ՝, այլ անհո ւն սէր մարդոց հանդէպ, համակ նուիրում եւ սրբազան գործ: Եթէ ազնիւ մարդ ես, ըսէ՛ ինծի ճշմարտութիւնը»:

Օտարականը շփոթեցաւ.

-«Ես... ես ազնիւ մարդ եմ, բժիշկ», ըսաւ ան, «ես չեմ կրնար խաբել քեզ: Աւելի լա՛ւ է որ ես շարունակեմ զբաղիլ իմ արհեստովս՝ տակառագործութեամբ»:

Մխիթար Հերացին, մեծ մարդասէրը եւ բժիշկը, մօտեցաւ եւ գրկեց օտարականը եւ ըսաւ.

-«Ապրի՛ս, զաւա՛կս, դուն այս վայրկեանիս ապացուցիր, որ խղճամիտ մարդ ես, հրաժարեցար ապագային յանցագործ դառնալէ»:

Օտարականը ներողութիւն խնդրեց եւ մեկնեցաւ, իսկ Մխիթար Հերացին որ իրապէ՛ս ամբողջ նուիրում եւ սէր էր մարդոց նկատմամբ, նորէն խորասուզուեցաւ իր ուսումնասիրութիւններուն մէջ:

Օր մը, աստուածաբանական ուսանողի մը իր բարեկամներէն մին կը հարցնէ.

-«Միրելի՛ս, ուրախ եմ, որ Աստուծոյ ծառայութիւնը որպէս դաշտ եւ ասպարէզ ընտրած ես դուն քեզի: Կրնա՞ս ըսել ինծի, թէ զայն ինչո՞ւ ընտրեցիր»:

-«Զայն ընտրեցի որպէսզի մուճակագործ չդառնամ», կը պատասխանէ ան:

Մխիթար Հերացիին այցելող տակառագործը շատ աւելի ազնիւ մարդ է եղեր քան այս ուսանողը: Կան ծառայութիւններ, որոնք իրապէ՛ս կոչում կը պահանջեն եւ ո՛չ թէ՛

ապրուստի միջոց եւ ոչ ալ համբաւ շահելու, հոշակաւոր ըլլալու եւ կամ ուրիշներու վրայ հիացում ստեղծելու առիթ: Ծառայութիւնը, ծառայասիրութիւնը ինքնին կազնուացնէ, կը բարձրացնէ մարդը արդէն: Սիրել մարդոց հոգիները եւ ծառայել անոնց փրկութեան ի խնդիր, շա տ աւելի վեհ գաղափար է քան գործ մը կատարել մեքենաբար:

Մխիթար Հերացիին հարցուցած հարցումները օտարականին, համազօր են պայմանի:

«Եթէ ձեզմէ մէկը ուզէ մեծ ըլլալ՝ պէտք է ձեր սպասաւորը ըլլայ, եւ եթէ ձեզմէ մէկը ուզէ առաջին ըլլալ՝ պէտք է ձեր ծառան ըլլայ, որովհետեւ Մարդու Որդին, ինքն ալ, չեկաւ ուրիշներու կողմէ սպասաւորութիւն ընդունելու, այլ սպասաւորելու եւ իր կեանքը շատերու համար որպէս փրկագին տալու», կըսէ Յիսուս Քրիստոս. (ՄԱՏԹ. ԻԱ 26-28):

Արդարեւ, գոհողութիւնը վեհ հոգիներու յատուկ առաքիւնութիւն մըն է՝ ազնիւ մարդու ցուցանի՛շն է ան: Զէ՞ որ «Աւելի երջանկաբեր է տալը, քան առնելը» (ԳՈՐԾ. Ի 35):

Աստուծոյ կատարելութիւնը Իր անսակարկ սիրոյն մէջն է, որ սիրելով «մեղաւոր աշխարհ»ը Իր միաձին Որդին տուաւ, որպէսզի փրկէ: Յիսուսի կատարելութիւնն ալ Իր անսակարկելի սիրոյն մէջն է. Ան սիրեց մարդը եւ Իր Անձը գոհեց անոր փրկութեանը համար:

Մարդուն կատարելութիւնն ալ այդ նո՛յն սիրոյն մէջն է: Մերը կարտայայտուի անձնուրացութեամբ եւ գոհողութեա՛մբ: Այո՛, տալը միշտ աւելի աստուածահաճո՛յ է՝ քան՝ առնելը...:

ՄԱՇՏՈՅ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

Յունիս 16, 2020, Իսթանպուլ

Չորեքշաբթի, Յունիս 17, 2020

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՆՉԸ

Ճշմարտություն»ը, իբրեւ մարդու խօսքի եւ գործի միջեւ ճշդություն, կը կոչուի «ճշմարտախօսություն», անկեղծություն կամ ուղղամտությի՛ն: Գոյութեան ճշմարտությունը կամ ճշմարտախօսությունը այն առաքինությունն է, որ կը կայանայ իր արարքներուն մէջ ինքզինք ուղիղ պահելու եւ ճիշդը ըսելու մէջ, զգուշանալով երկդիմութենէն, ձեւացումէն եւ կեղծաւորութենէն:

Մարդը բնականաբար կը ձգտի ճշմարտութեան: Ան պարտի յարգել եւ պատուել զայն եւ վկայել անոր: Մարդիկ իրենց արժանապատուութեան զօրութեամբ, քանի որ «անձ»եր են, իրենց բնութեան կողմէ մղուած են եւ բարոյական ստիպողութեամբ պարտաւորուած են փնտռելու ճշմարտությունը եւ ամենէն առաջ ա՛յն «ճշմարտություն»ը՝ որ կը հայի կրօնին: Անոնք նաեւ պարտաւոր են փարիլ ճշմարտութեան, հազիւ թէ ճանչնան զայն եւ պարտին իրենց ամբողջ կեանքը կանոնաւորել ըստ ճշմարտութեան պահանջածներուն:

Հին Կտակարանը կը վկայէ՝ թէ «Աստուած ակունքն է ամէն ճշմարտութեան»: Անոր Խօսքը ճշմարտությի՛ն է: Անոր Օրէնքը ճշմարտություն է. «Դարե դար է Քու ճշմարտությինդ» (ՍԱՂՄ. ԸԺԸ 90): Քանի որ Աստուած «ճշմարտախօս» է, (ՀՌՈՄ. Գ 4) Իր Ժողովուրդին անդամներն ալ կոչուած են ապրելու ճշմարտութեան մէջ:

Արդարեւ, Աստուծոյ ճշմարտությունը Յիսուս Քրիստոսի մէջ ամբողջովին յայտնուեցաւ:

Լի շնորհքով եւ ճշմարտութեամբ Ի՛նքն է «լոյսն աշխարհի» (ՅՈՎՀ. Ը 12), Ինք «ճշմարտություն»ն է: Ո՛վ որ հաւատայ Անոր, չի մնար խաւարին մէջ: Յիսուսի աշակերտը կը մնայ Անոր խօսքին մէջ, որպէսզի ճանչնայ «ճշմարտություն»ը, որ կ'ազատագրէ եւ կը սրբացնէ: Հետեւիլ Յիսուսի՝ ապրի՛լ է ճշմարտութեան Հոգիով, զոր Հայրը

կ'առաքէ Իր անունով, եւ Ան կ'առաջնորդէ «դէպի բովանդակ ճշմարտութիւնը» (ՅՈՎՀ. ԺԶ 13):

Յիսուս Իր աշակերտներուն կ'ուսուցանէ ճշմարտութեան անպայմանաւոր սէրը. «Ձեր խօսքը թող ըլլայ այո՛ն այո, եւ ո՛չը՝ ոչ» (ՄԱՏԹ. Ե 37):

Սուրբ Թովմաս Աքրօինացի կ'ըսէ. «Մարդիկ պիտի չկարենային միասին ապրիլ եթէ փոխադարձ վստահութիւնը չունենային, այսինքն եթէ ճշմարտութիւնը իրարու չյայտնէին»:

Ճշմարտութեան առաքինութիւնը կը վերադարձնէ ուրիշին ի՛նչ որ անորն է: Գոհութիւնը միջին ճամբան կը յարդէ «ըսուելիք»ին եւ «գաղտնի պահուելիք»ին միջեւ: Ան կենթադրէ պարկեշտ եւ գաղտնապահ ըլլալ: Ըստ արդարութեան՝ «մարդը մարդուն պարկեշտօրէն պարտական է ճշմարտութիւնը յայտնել», ինչպէս Սուրբ Թովմաս Աքրօինացի կ'ըսէ դարձեալ: Եւ այս իմաստով, Քրիստոսի աշակերտը կ'ընդունի «ապրիլ ճշմարտութեան մէջ», այսինքն Տիրոջ օրինակին համանման կեանքի մը պարզութեան մէջ եւ մնալ Անոր ճշմարտութեան մէջ: «Եթէ ըսենք, թէ հաղորդութիւն ունինք Անոր հետ եւ խաւարին մէջ կը շրջինք, կը ստենք եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր» (Ա ՅՈՎՀ. Ա 6):

Պիղատոսի առջեւ Քրիստոս կը յայտարարէ, թէ Ինք «եկած է աշխարհ, վկայելու համար ճշմարտութեան» (ՅՈՎՀ. ԺԸ 37) եւ քրիստոնեան «Տիրոջ վկայութիւնը ամօթ չի համարիր». (Բ ՏԻՄ. Ա 8): Հաւատքին վկայութիւնը պահանջող կացութիւններուն մէջ քրիստոնեան պարտի անսերէւեթ դաւանիլ զայն, ըստ օրինակին Պօղոս Առաքեալի՝ յանդիման իր դատաւորներուն: Ուստի, հարկ է պահել «խիղճ մը անբասիր՝ Աստուծոյ եւ մարդոց առջեւ» (ԳՈՐԾ. ԻԴ 16):

Աստուծոյ Խօսքը, որ աստուածային ուժ մըն է ամէն հաւատացեալի փրկութեան համար, ներկայ է Նոր Կտա-

կարանին գրութիւններուն մէջ եւ անոր զօրութիւնը մասնայատուկ կերպով մը կը յայտնուի հոն: Այս գրութիւնները կու տան մեզի աստուածային Յայտնութեան վերջնական ճշմարտութիւնը: Անոնց կեդրոնական առարկան է Յիսուս Քրիստոս, Աստուծոյ մարդացեալ Որդին, Անոր արարքները, Անոր ուսուցումները, Անոր մահուան չարչարանքը եւ Անոր փառաւորութիւնը, ինչպէս նաեւ Անոր Եկեղեցիին՝ սկզբնաւորութիւնը Սուրբ Հոգիին ներգործութեան տակ՝ որոնք կը վկայեն ճշմարտութեան:

Աւետարանները սի՛րտն են ամբողջ Աստուածաշունչին, քանի որ մարդացեալ-մարմնացեալ Բանին. մեր Փրկչին կեանքին եւ վարդապետութեան գերազանց վկայութիւնը կը բովանդակեն:

Հաւատքը մարդուն նախ «անձնական փարումն է Աստուծոյ հետ»: Ան միաժամանակ եւ անբաժանելիօրէն «ազատ հաւանութիւնն է Աստուծոյ յայտնած ամէն ճշմարտութեան»: Քրիստոնեայ հաւատքը իբրեւ անձնական փարում Աստուծոյ եւ հաւանութիւն՝ Անոր յայտնած ճշմարտութեան, տարբեր է մարդկային անձի մը ընծայուած հաւատքէն: Արդար եւ բարի է լիովի վստահիլ Աստուծոյ եւ բացարձակօրէն հաւատալ Անոր ըսածին: Ընդունայն պիտի ըլլար եւ թիւր՝ նման հաւատք մը դնել արարածի մը վրայ:

Քրիստոսի աշակերտները զգեցած են «նոր մարդ»ը որ ստեղծուած է ըստ Աստուծոյ արդարութեան եւ սրբութեան մէջ, որոնք կու գան ճշմարտութենէն (ԵՓՄ. Դ 24): «Ձերբազատուած սուտէն» (ԵՓՄ. Դ 25), անոնք պարտին «մերժել ամէն չարութիւն եւ ամէն նենգութիւն, կեղծաւորութիւն, նախանձ եւ չարախօսութիւն» (Ա ՊԵՏԸ. Բ 1):

Մարդ ստեղծուած է ճշմարտութեան մէջ եւ կոչուած է ճշմարտութեան...:

ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

Օգոստոս 20, 2020, Իսթանպուլ

Շաբաթ, Օգոստոս 22, 2020

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՄԱՐԴԸ

Անձ մը իր կեանքի վատ մէկ պահուն Աստուծոյ հետ
հետեւեալ խօսակցութիւնը կ'ունենայ:

Մարդը - Ողորմեա Տէր:

Աստուած - Օրհնեալ ըլլաս:

Մարդը - Աստուած իմ կը թափթփիմ, կը բշտուիմ,
կտոր կտոր կ'ըլլամ, կը կործանիմ: Կրնա՞ս
զիս շտկել (լիացնել):

Աստուած - Ոչ, կը նախընտրեմ չընել:

Մարդը - Ինչո՞ւ:

Աստուած - Որովհետեւ դուն հանելուկ մը չես:

Մարդը - Ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ իմ կեանքս որ
կործանուծի ճամբուն, փշոր փշոր գետին կը
թափի:

Աստուած - Զգէ, թող միջոց մը հոն մնան: Անոնք
նպատակի մը համար թափեցան: Միջոց մը
խորհրդածէ, թէ այդ թափածներէն որեւէ
մէկ կտորին իսկապէս պէտք ունի՞ս:

Մարդը - Աստուած իմ Դուն չես հասկնար, ես կը
կործանիմ՝ կտոր-կտոր կ'ըլլամ:

Աստուած - Ոչ, դո՛ւն չես հասկնար: Քու սահմանաբա-
կումներդ են որ կը փշրուին եւ կտոր-կտոր
գետին կ'իյնան: Դուն վերստին կը ծնիս եւ
կ'աճիս: Այն ինչ որ կը զգաս, աճելու ցաւերդ
են: Դուն կը թօթափես բոլոր այն բաները
ինչպէս նաեւ այն մարդիկը որոնք քու
աճումդ կը կասեցնէին: Դուն չես կործանիր,
այլ՝ ճիշդ ճանապարհը կը գտնես: Մի քանի
խորունկ չունչ առ եւ ձգէ որ անպէտ բաները,
որոնց այլեւս պէտք չունիս, վրայէդ թափին,
իյնան:

Մարդը - Եթէ ըսածդ ընեմ, ինձմէ ի՞նչ պիտի մնայ:

Աստուած - Միայն ամենակենսականը եւ լաւ մասերը:

Մարդը - Փոփոխութենէ կը վախնամ:

Աստուած - Ձեռն հասկնար: Ոչ թէ կը փոխուիս այլ կ'ա-
ծիս:

Մարդը - Եթէ աճիմ ի՞նչ կամ ո՞վ պիտի ըլլամ:

Աստուած - Պիտի ըլլաս այն ինչ որ ես քեզ ստեղծեցի
որ ըլլաս: Լուսոյ մարդ մը սէրով լի եւ
ողորմած, յոյսով լեցուն եւ քաջ, ինչպէս
նաեւ գթասիրտ, շնորհալի եւ կարեկից: Քեզ
ստեղծեցի մեծ գործերու համար եւ ոչ այդ
խեղճուկրակ կտորուանքներուն համար,
որոնցմով դուն քեզ զարդարած ես եւ անոնց
փարած ծակաչքութեամբ եւ վախով: Ձգէ,
թող այդ բոլորը թափթփին վրայէդ եւ
իյնան: Ես քեզ կը սիրեմ այն ինչ որ ես, մի
փոխուիիր...: Եղի՛ր այն, ինչ որ ես ստեղծեցի
որ ըլլաս: Ասոնք յաճախ պիտի կրկնեմ քեզի
մի՞նչեւ որ յիշես:

Մարդը - Ահա՛, կտոր մը եւս ինկաւ:

Աստուած - Այո, ձգէ թող իյնայ:

Մարդը - Ուրեմն ես «կոտորած»՝ կործանելու վտանքի
մէջ չեմ:

Աստուած - Անտարակոյս Ո՛չ: Ընդհակառակը դուն կը
ծագիս արեւածագին պէս: Քեզի համար նոր
օր մըն է: Ծագէ՛ ու Աճի՛ր:

Ճոհն Րօմէյլ (John Roedel)
Ազատ թարգմանութիւն վ. Ս.



ՎԱԽԸ

Կ'ըսուի, թէ նախքան ծովն իր մուտքը
Գետ մը կը դողդղայ սարսափով:

Նայելով ետին կտրած միջոցին իր,
Լեռներու կատարներէն,
Ոլորապտոյտ ճամբաներէն կտրելով անտառներ ու գիւղեր:

Եւ իր առաջ
Ան կը տեսնէ ովկիանոս մ'ընդարձակ,
Ուր մտնելն այնտեղ
Կը թուի կորսուիլ յաւիտեան:

Բայց այլ ելք չկայ:
Գետը ետդարձ չի կրնար:

Ոչ մէկը կրնայ ետ երթալ:
Ետ երթալը անկարելի է, գոյութիւն չունի:

Գետը պէտք է վտանգը յաղթահարէ,
Ովկիանոս մուտք գործէ,
Որովհետեւ միայն այն ատեն վախն իր պիտի փարատի,
Որովհետեւ այն ատեն է որ գետը պիտի գիտնայ
Թէ հարցը ովկիանոսին մէջ անյետանալը չէ,
Այլ նոյնինքն ովկիանոս դառնալը:

Խալիլ Ճըպրան
Թարգ. Անդրանիկ Չիլինկիրեան





ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Եթե կրնամ՝ բարձրացի՛ր, բայց գիտե՛ս ո՛ր, մինչև ո՛ր,
Եւ քեզի հետ ուրիշներն՝ եթե կրնամ՝ բարձրացո՛ւր,
Բայց մինչև ո՛ր, մինչև ո՛ր...:


Հաւատալով թե կրնամ՝ օ՛հ, բարձրացի՛ր, քա՛ջ տղաս,
Սակայն քանի վեր ելլես՝ պիտի մնիս ու դողաս,
Մընաս մինա՛կ, խե՛ղճ տղաս...:

Կարենայի՛ր դուն եթե բարձրացընել քեզի հետ
Սիրուած քանի մը հոգի մինչև գագաթն արփաւետ,
Մինչև սէ՛րը քեզի հետ...:

Կարելին այդ է միայն, անըրջական կարելին,
Բարեկամնե՛ր՝ որ մեկտեղ կ'ուզեն, կ'զգան, կը խորհին
Անկարելին, կարելին...

Միմիայն ա՛յս, մընացեալն ամբողջ պատրանք է, հոգի՛ս,
Միմիայն ա՛յս, ու անոր գուցէ երբե՛ք չհամնիս,
Անոր իղձո՛վը մեռնիս...:

Վահան Թեքեան



**«ԳԵՏԵՐԸ ԻՐԵՆՉ ՁՈՒՐԸ ՉԵՆ ԽՈՒՐ:
ԾԱՌԵՐԸ ԻՐԵՆՉ ՊՏՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ՈՒՏԵՐ:
ԱՐԵՒԻՆ լՈՒԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆ ՀԱՄԱՐ ՉԷ:
ԾԱՊԻԿՆԵՐԸ ԻՐԵՆՉ ՀԱՄԱՐ ՉԵՆ ԲՈՒՐԵՐ:
ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԻԼԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆ Է:
ԲՈՂՈՐԱ ԱՂ ԻՐԱՐՈՒ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԾ ԵՆՔ:
ԹԷՒՒ ԿԵԱՆՔԸ ՏԱԺԱՆԵԼԻ ԿԸ ԹՈՒԻ,
ԲԱՅՉ ԼԱՒ Է՝ ԵՐԲ ՈՒՐԱԽ ԵՆՔ,
ԵՒ ԿԵԱՆՔԸ ՇԱՏ ԱԲԵԼԻ ԼԱՒ Է,
ԵՐԲ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՄ ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՄ ԿԸ ՊԱՏՃԱՌԵՆՔ»:**

ՊԱՊ ՖՐԱՆՍԻՍԿՈՍ



**ԵՈՒՔԱԹԱՆԻ ՆԱԽԱԲՆԻԿՆԵՐՈՒ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ
(Mayan Civilization)
ԱՍՏՈՒԾՈՅ ՆԿԱՏՄԱՄԲ
ՈՒՆԵՅԱԾ ՀԱՒԱՏՔԸ.**

**Քարին մէջ Աստուած
Կը քանանայ**

**Բոյսին մէջ Աստուած
Կ'անճի**

**Անաստիւնին մէջ Աստուած
Կը շարժի**

**Մարդոցին մէջ Աստուած
Կը տնայարանէ:**

ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ՊԱՅՄԱՆ ՉԷ, ՈՐ ԹԵԻՒԵՐ ՈՒՆԵՆԱՅ

Դոկտ. Արել Քինյ. Մանուկեան
(Ժընեւ)

«...Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ»:
(Ս. Գր. Նարեկացի)

Մեր մանկութեան օրերէն իսկ լսած ենք հրեշտակներու մասին: Քանի՛-քանի անգամ մեր մայրերը, հակած մեր սնարներուն վրայ, մեր նիրհուն ականջներուն որքան անձկագին աղօթած են «Հրեշտակ գուարթուն»-ը՝ այդ գերբնական ու սուրբ էակին պահպանութիւնը եւ մեզ փորձանքներէ պահելու զօրութիւնը խնդրելով մեր ազագուն անձերուն համար:

Պատանեկութեան տարիներուն, դպրոցական գրասեղաններու ետին, կրօնի դասերու ընթացքին ինչքա՛ն հրահրած է մեր երեւակայութիւնը լուսաւոր այն հրեշտակին կերպարը, որ նստած Յիսուսի թափուր գերեզմանին, իւղաբեր կանանց աւետիս տուաւ՝ ըսելով. «Այստեղ չէ՛, այլ յարութիւն առաւ»(1):

«Հազարք հազարաց եւ բիրք բիրոց» աստղաբաշխական թիւի մը կը վերագրէ կրօնը՝ անդրադառնալով հրեշտակներու թիւերուն, եւ զանոնք կը բաշխէ հիմնականօրէն երեքական դասերու՝ Աթոռքի, Քերովբէներու եւ Սերովբէներու: Տերութիւններու, Զօրութիւններու եւ Իշխանութիւններու: Պետութիւններու, Հրեշտակապետերու եւ Հրեշտակներու:

Որքան ալ մարդուս երեւակայութիւնը նուիրապետական ձեւ մը տուած ըլլայ հրեշտակներու դասակար-

գումներուն եւ պաշտօններուն, միեւնոյնն է, անոնց գոյութիւնը կը կազմէ մեր հաւատքին բաղկացուցիչ եւ էական մէկ մասը: Հրեշտակապետաց ընդհանրացած անունները, զոր օրինակ՝ Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ եւ Ուրիէլ, ինչպէս նաեւ ասոնց կարգին շարք մը ուրիշ անուններ, իրենց «էլ» վերջածանցով, յղացք մը եբրայերէն «էլոհիմ» բառի արմատէն՝ որ Աստուած կը նշանակէ, կու գան մատնացոյց ընելու, թէ անոնք ուղղակի առնչուած են Աստուծոյ հետ:

Հայկազեան Բառագիրքը հրեշտակ բառին հետեւեալ բացատրութիւնները կու տայ. «պատգամաւոր երկնային», «դեսպան Աստուծոյ՝ զուարթուն երկնից», «սուրհանդակ», ելն.: Յունարէն՝ «անգելոս», որմէ լատիներէն՝ «անգելուս», հայերէնի նման նոյնիմաստ նշանակութիւնն ունին: Հրաչեայ Աճառեանի «Հայերէն Արմատական Բառարան»-ը վերոյիշեալ «հրեշտակ» հասկացութիւնը լաւագոյնս կը ստուգաբանէ, զայն առնչելով պահլաւերէնի «ֆրէշտակ» բառին, «ֆրա» բառարմատով եւ «էշ» մասնիկով կազմուած բառակապակցութիւն մը, որ «շտապել, շարժումի մէջ դնել եւ ուղարկել», այսինքն՝ «պատգամաւոր, առաքեալ կամ ուղարկուած» կը նշանակէ:

Հրեշտակները Աստուծոյ անմիջականութեան մէջ գտնուող գերբնական էակներ, Տիրոջ կամքը հիմնականօրէն մարդուն փոխանցող պատգամաբերներ կամ միջնորդներ են, որոնք Ս. Գրոց պատմութեան մէջ, տարբեր ժամանակաշրջաններուն, հանդէս եկած են զանազան դրսեւորումներով ու պաշտօններով:

Աբրահամ, երբ իր ամուլ կնոջ՝ Սառայի խնդրանքով անոր եգիպտացի ստրկուհին՝ Հագարը ճանչցաւ, իսկ

Հագար Աբրահամէ յղացաւ, մայր դառնալու իր ունեցած առաւելութեան համար իր տիրուհին արհամարել սկսաւ: Սառա, որ Աբրահամի առաջին կինն էր եւ իշխանութիւն ունէր իր ստրկուհիին վրայ, չարչրկեց զայն: Հագար ճարահատելով՝ փախուստի դիմեց, եւ մինչ անապատին մէջ աղբիւրի մը քով կը գտնուէր, հրեշտակ մը երեւցաւ անոր, որ յորդորեց զինք վերադառնալ ու իր տիրուհիին մօտ շարունակել ծառայութիւնը(2): Նախախնամութիւնը յատուկ ծրագիր մը ունէր նաեւ Հագարին համար, քանի որ Ան տեսած էր ստրկուհիին տառապանքը, հետեւաբար՝ զայն պիտի դարձնէր մայրը հսկայ սերունդի մը: Հետաքրքրական է, որ հոս, Ս. Գրոց պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Հագար պատահած եղելութեան համաձայն ինքնութիւն կու տայ հրեշտակին՝ զայն անուանելով «Դուն այն Աստուածն ես, որ ինձի հոգացիր»(3):

Յերեկուան տօթին, Աբրահամ, երբ նստած իր վրանի մօտքին հեռուն կը դիտէր, նշմարեց, որ երեք անձեր իրեն կը մօտենային: Ան իսկոյն ընդառաջ գնաց, մինչեւ գետին խոնարհելով երկրպագեց անոնց, ընդիուպ մինչեւ այդ անձանօթ մարդոց Մամբրէի կաղնիներու շուքին տակ ընտիր հիւրասիրութիւն մը պատրաստեց: Անոնք Տիրոջ պատգամաբեր հրեշտակներն էին, որոնք եկած էին Աստուծոյ յաւիտենական ուխտը փոխանցելու անոր, թէ իր կինը՝ Սառան, նոյնիսկ յառաջացեալ տարիքին մէջ, պիտի յղանայ, որդի մը պիտի ծնի եւ Աբրահամ պիտի դառնայ հաւատքի սերունդներուն հայրը(4):

Սոդոմի ու Գոմորի կործանման եղելութիւնը մեզի դիտել կու տայ, թէ Տիրոջ հրեշտակը ոչ միայն աւե-

տաբեր, այլ՝ կրնայ աղետաբեր առաքելութիւն մըն ալ ունենալ, երբ մարդ արարածը իր մեղքերով ոչ միայն իր անձին, այլ՝ միաժամանակ իր նմանին ու շրջա-խարհի այլասերումին պատճառ կը դառնայ:

Զառամած Սառայի յղանալու աւետիսը փոխանցող աւետաբեր հրեշտակները Աբրահամէն բաժնուելով՝ միանգամայն ուրիշ առաքելութիւն մը ստանձնեցին Սոդոմի ու Գոմորի ճամբուն: Անոնց ուղին հետզհետէ սահմոկեցուցիչ եւ կործանարար դիտաւորութիւն մը առաւ, երբ քաղաքի մուտքին կարծէք իրենց ժամանումին սպասող Ղովտէն դիմաւորուեցան, բայց շուտով զիրենք հիւրընկալող տան յարկին մէջ մեղքի բիրտ ուժին բախեցան: Հրեշտակները մէկ կողմէն հանդէս կու գային փրկարար դերով մը՝ դեռ տատամսկոտ Ղովտն ու իր կինը իրենց դուստրերուն հետ փութով մը քաղաքէն հեռացնելու, միւս կողմէն՝ ծծումբի կործանարար կրակներուն մէջ կը բնաջնջէին մեղքի աղտեղութենէն այլասերած քաղաքը՝ բոլոր բնակիչներով (5): «Ետ մի՛ նայիր, կեանքը առջեւդ է, որ Աստուած շնորհեց քեզի»։ այս էր հրեշտակին պատգամը ստոյգ մահէ ազատած Ղովտին, կնոջն ու անոնց դուստրերուն: Եղով, Ղովտին կինը փախուստի ճանապարհին աղէ արձան դարձաւ(6), քանի որ չկրցաւ ձերբազատիլ անցեալէն ու ապագային բարիքը չտեսաւ:

Մանուկներուն քովն ալ երբեմն մրցակցութիւնը շեշտուած կ'ըլլայ: Մառա, անդրադառնալով, որ Իսմայէլ՝ Հագարի տղան կրնայ իր զաւակէն՝ Իսահակէն աւելի առաջատար դիրքերու ձգտիլ, Աբրահամին աղերսեց՝ Հագարն ու Իսմայէլը ընդհանրապէս հեռացնել իրենց շրջապատէն: Սոյնը որքան ալ խորունկ ցաւ դարձաւ

Աբրահամի սրտին, այսուամենայնիւ ան ստիպուեցաւ օրուան մը պաշարով ճամբել իր եգիպտացի աղախինն ու անկէ ծնած իր Իսմայէլ զաւակը: Չկայ աւելի սոսկալի բան՝ քան մօր մը համար տեսնել իր ծոցածին եւ սիրասուն զաւկին մահը: Բերսաբէի անապատին մէջ անջրդի, Հագար մացառներէն մէկուն տակ թողուց սովէ ու ծարաւէ հիւծած իր զաւակը, եւ ինք նետընկեցի մը չափ հեռանալով՝ դառնօրէն ողբաց որբուկին ու իր դառն ճակատագրին վրայ: Հոս ալ Աստուծոյ ողորմութիւնը իր լայն արտայայտութիւնը գտաւ հրեշտակին միջոցով, որ յայտնուելով այդ տարաբախտ կնոջ, թէկուզ անապատի կիզիչ աւազներուն վրայ, անոր կեանքին աղբիւրը տուաւ ու խոստացաւ զայն դարձնել հզօր ազգի մը մայրը(7):

Աբրահամ հաւատքին մարդը կոչուեցաւ: Հայրը՝ միաստուածեան խոշոր կրօններուն՝ Հրէութեան, Քրիստոնէութեան եւ Մահմետականութեան, նաեւ իր աննկուն հաւատքին համար, որ ան ունեցաւ ճշմարիտ Աստուծոյ նկատմամբ. չերկմտեցաւ զոհաբերելու իր մէկ հատիկ զաւակը՝ Իսահակը, երբ արդէն Հագարի հետ հեռացուցած էր նաեւ Իսմայէլը եւ իր ցեղին շարունակութիւնը ամբողջապէս կախեալ էր առաջնոյն անվտանգութենէն: Աբրահամ համակ եւ անմնացորդ հաւատացած էր, թէ Նախախնամութիւնը սուրբ ծրագիր մը ունէր իր հետ եւ պիտի կատարէր այն ուխտը, որ տուած էր իրեն: Ճիշդ այն պահուն երբ այս հաւատքի հսկան իր դանակը կը բարձրացնէր զոհաբերելու համար իր որդին, իսկոյն Տիրոջ փրկարար հրեշտակը կը յայտնուի ու քիչ մը անդին՝ թաւուտին մէջ եղջիրներէն բռնուած խոյ մը կը ցուցնէ, խնայելով

զակին կեանքը՝ զայն պատարագելու զոհասեղանին վրայ(8):

Յակոբ, որ Իսրայէլի տասներկու ցեղերուն հիմնադիրն է, իր եղբօր՝ Եսաւի վրէժխնդրութենէն հալածական, մահուան սարսափէն տագնապած, օրուան վերջալոյսին քար մը իբրեւ սնար դրած գլխուն տակ, Խառանի ճամբուն խոնջած կը ննջէր: Խորունկ քունին մէջ ան արտասովոր երազ մը տեսաւ. ահա սանդուխ մը դրուած էր երկրի վրայ, որուն գագաթը երկինք կը հասներ, եւ որուն վրայէն հրեշտակներու բազմութիւն մը կը բարձրանար դէպի վեր, մինչ ուրիշ մը կ'իջներ դէպի վար: Լոյսերու այդ ահեղ շարժումին մէջ Աստուած կը յայտնուի Յակոբի, միակողմանի անոր հետ կնքելու համար Իր ուխտը. «Ահա ես քեզի հետ եմ, եւ ամէն տեղ՝ ուր որ ալ երթաս, քեզի հետ պիտի ըլլամ»(9):

Երկու մակարդակ կը ներկայացուի հոս. մին՝ որ Աստուած իսկապէս կը յայտնուի ու կը խօսի մարդուն, իսկ միւսը՝ երազը միջոցն է, որուն ընդմէջէն խօսքը բովանդակութիւն եւ ձեւ, գոյն կամ պատկեր կը ստանայ: Յակոբ այդ վայրը օծելով իւղով՝ կը սրբագործէ ու հոն խորան մը կը կանգնէ եւ զայն «Բեթէլ» կը կոչէ, այսինքն՝ «Աստուծոյ տուն»: Բնականաբար, Աստուծոյ տան բնակիչներ եւ սպասաւորներ են հրեշտակները, եւ ուր որ Աստուած է, հոն ներկայ են նաեւ հրեշտակները: Այս իմաստով՝ հրեշտակի մը ներկայութիւնը միաժամանակ Աստուծոյ յայտնութիւն կամ մօտութիւն կը խորհրդանշէ: Հրեշտակներու երեւումներուն առթիւ որքան ալ Հին Ուխտին մարդը «Աստուած տեսայ եւ ապրեցայ» կ'եզրակացնէ, միեւ-

նոյնն է, կարելի չէ հրեշտակ մը Աստուծոյ հետ նոյնացնել: Աստուած «Անհաս եւ անսկիզբ Խորին Խորհուրդ» է, Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին գեղեցիկ բացատրութեամբ՝ «Ինքն անպատճառ պատճառն է ամենայն պատճառաց»: Աստուած գերազանցապէս Արարիչն է ու միակը, մինչդեռ անգամ իր անմիջական մօտութեան մէջ եղող հրեշտակները՝ բոլոր միւս գոյերուն նման արարածներ են:

Շարունակելով նիւթը՝ հրեշտակներու եւ մարդոց միջեւ հանդիպումներուն, նուազ հետաքրքրական չէ անդրադառնալ նաեւ Յակոբի մենամարտին, որ ունեցաւ Աստուծոյ հրեշտակին հետ: Փաստօրէն սոյն տեղեկութիւնը կը հանդիսանայ Հին Կտակարանի այն վերջին նկարագրութիւնը, ուր հրեշտակ մը ուղղակի եւ ֆիզիքապէս առնչութիւն կ'ունենայ մարդուն հետ: Յակոբի անձին վերագրուած պատիւ մը, անշուշտ, որ իրենց առաջնորդական, մարգարեական եւ թագաւորական ամբողջ փառքին մէջ ո՛չ Մովսէսի եւ ո՛չ ալ Դաւիթի շնորհուեցաւ:

Յակոբ Լաբանի երկար տարիներ ծառայելէ ետք, որոշեց գաղտնաբար Միջագետքէն հեռանալ եւ վերադառնալ Քանանու երկիրը: Ռաքել, Յակոբի կինը, գողցած եւ իր հետ վերցուցած էր իր հօր՝ Լաբանի կուռքերը: Յաբոկի կիրճէն ու գետէն իր ընտանիքն ու ինչքերը անցնելէ ետք, երբ Յակոբ դեռ առանձին ափին միւս կողմը կը գտնուէր, մարդ մը սկսաւ իր հետ մարտնչիլ: Ըմբշամարտը երկարեցաւ ու արշալոյսը ծագելուն՝ այդ մարդը տեսաւ, թէ կարելի չեղաւ զգետնել Յակոբը, անոր զիստի ամուլաջիղին հարուածեց եւ զայն ընդարմացուց: Ախոյեանը Յակոբէն

խնդրեց, որ զինք արձակել, քանզի արշալոյսը կը ծագէր ու ինք պէտք է շտապ հեռանար: Յակոբ դեռ եւս ամուր բռնած էր իր հակառակորդը ու անոր օրհնութիւնը ստանալու պարագային միայն կը համաձայնէր ազատ արձակել զինք: Յակոբի հետ մարտնչող այդ անծանօթը Տիրոջ հրեշտակն էր, որ անոր անձին մէջ օրհնեց մարդու անկոտորում կամքը, պայքարելու անվեհեր ոգին ու նպատակին հասնելու աննահանջ ձգտումը, վերանուանելով զինք «Իսրայէլ»(10), այսինքն՝ «աստուածամարտ»: Արդարեւ, այս միջադէպէն սկսեալ, մարդ արարածը կարծէք ոչ միայն Աստուծոյ մարտակից՝ այլ նաեւ գործակից ըլլալու կոչումն ընդունեց:

Բաղաամ Աստուծոյ կամքին հակառակ ընթացք մը որդեգրեց ու Մովսիսի թագաւորի պնդումներուն տեղի տալով՝ ստիպուեցաւ երթալ Յորդանանի միւս կողմը՝ Մովսիսի դաշտերուն մէջ բնակութիւն հաստատած իսրայէլացիները անիծելու: Առտու մը ան իր էշը թամբեց ու հեծնելով վրան երկու սպասաւորներու ուղեկցութեամբ ճամբայ ելաւ: Սակայն Աստուծոյ բարկացած հրեշտակը, մահաբեր սուրը ձեռքին, կանգնած՝ ճամբուն մէջտեղ կը սպասէր Բաղաամի անցնելուն, որպէսզի զայն պատժէ: Բաղաամի էշը վտանգը տեսնելով՝ ճամբէն շեղեցաւ ու դէպի արտը գնաց: Բաղաամ սկսաւ էշը ծեծել՝ վերադարձնելու համար զայն բուն ճամբուն: Քիչ ետք, Տիրոջ հրեշտակը, նոյնքան սպառնալից, երկու կողմերէն ցանկապատուած այգիներու արահետին մէջ կեցաւ: Այս անգամ ալ էշը փորձեց շրջանցել՝ ինքզինք ու Բաղաամի ոտքը սեղմելով ցանկապատին: Բաղաամ

ուտքին ցաւէն ալ աւելի զայրացած՝ ճիպոտի ուժգին հարուածներ հասցուց խեղճ իշուն: Երբ նորէն փորձեցին ճամբորդութիւնը շարունակել, Տիրոջ հրեշտակը կանգնելով՝ այս անգամ ալ փակեց այն նեղ անցքը, ուրկէ անոնք ստիպուած էին անցնիլ: Եւ քանի որ ո՛չ շրջանցելու, ո՛չ շրջուելու եւ ո՛չ ալ աջ ու ձախ կողմերէն շեղելու կարելիութիւն կար, էշը աբմողջապէս գետին կքեցաւ ու անշարժ իր տեղը մնաց: Բաղաամ զայրանալով իր իշուն յամառութեան վրայ, սկսաւ զայն սաստիկ ծեծել: Ահա Աստուած ճիպոտի հարուածներու ցաւէն չարչրկուած իշուն բերանը բացաւ, որ Բաղաամի ըսաւ. «Ի՞նչ ըրի քեզի, որ այս երեք անգամ է որ զիս կը ծեծես: Միթէ ես նոյն էշդ չե՞մ, որուն վրայ կը հեծնէիր մանկութենէդ մինչեւ այսօր. քեզի այսպէս ընելու սովորութիւն ունէի »(11): Բաղաամի աչքերը իսկոյն բացուեցան եւ Տիրոջ հրեշտակը անոր հաւաստիացուց, թէ ան ստոյգ պիտի մեռնէր, եթէ իր գրաստը չզգաստանար ու զինք չպահէր վտանգէն(12):

Ի տարբերութիւն բանականութիւն չունեցող կենդանիին, մարդ արարածի աստուածատուր առաւելութիւնն է տեսնել ու ճանչնալ ճշմարտութիւնը: Առաւելութիւններուն զուգահեռ, նոյն գիտակցական մարդը ունի սակայն թերութիւն մը՝ սխալականութիւնը, կրօնական բառով՝ մեղանչականութիւնը, որ իր ամէնէն մեծ տկարութիւնն է: Բաղաամի պերճախօս օրինակը ցոյց կու տայ, թէ էշն անգամ ատակ դարձաւ տեսնելու մարդուն մեղքը, իսկական յամառութիւնը անոր, որ չանսաց Աստուծոյ ձայնին եւ չուզեց ճանչնալ Անոր ճշմարտութիւնը:

Վերոյիշեալ միջադէպին հետ կապուած հրեշտակին ներկայութիւնը, որ աղետալի ու մահաբեր բնոյթ ունէր, Երից Մանկանց(13) եւ Դանիէլի պատմութեան(14) մէջ կենսաբեր պաշտօն մը կ'առնէ: Ուրեմն հոն, ուր մարդը ճշմարիտ Աստուծոյ մասին հաւատքին վկայութիւնը կու տայ, թէկուզ հուրի ու սուրի, օդի մէջ թէ ցամաքի վրայ, կեցած նոյնիսկ մահուան ուժերուն դէմ յանդիման, անպայման Աստուծոյ փրկարար ու կենսատու միջամտութիւնն է որ կը գտնէ:

Մոյն առումով, քաջ յանձնարարելի է ծանօթանալ Տովբիթի(15) փորձառութեան հետ, որ հակառակ ճակատագրին հասցուցած ծանր հարուածներուն, կեանքի բաւիղներուն վրայ ունեցած իր վտանգաւոր խարխափումներուն, դէպի ճշմարիտն Աստուած տաժած իր աննկուն հաւատքին համար է, որ Ռաֆայէլ հրեշտակը ուղեկից կ'ուղարկուի իրեն՝ մահուան ստուերներուն ընդմէջէն տեսնելու լոյսը եւ վերագրտնելու նաեւ իր անձնական երջանկութիւնը:

Հին Կտակարանի պատմութիւնը լեցուն է այս եւ նման տեղիքներու բազմազանութեամբ, բայց, միեւնոյնն է, այդ ամէնուն ընդմէջէն կարմիր թելի պէս կը վկայուին Աստուծոյ հետ յարաբերող մարդուն ունեցած փորձառութիւնները՝ հաւատքի մեծ թռիչքներու, միաժամանակ՝ սոսկալի անկումներու առթիւ: Հոն, ուր ուղղակի Աստուած Ինքզինք չի յայտնէր, չի խօսիր օրէնքին ու մարգարէներուն, այլապէս՝ նիւթողէն խորհրդանշաններու միջոցով, միշտ հրեշտակներն են, որ հանդէս կու գան իբրեւ միջնորդներ, պատգամաբերներ կամ Տիրոջ անունով ուղարկուած գերբնական էակներ՝ Արարիչին կամքը փոխանցելու համար

մարդ արարածին:

Թէպէտ սոյն գրութիւնը դիտաւորութիւն չունի ներկայացնելու համապարփակ հրեշտակաբանութիւն մը, ոչ ալ կը միտի մեկնաբանելու Աստուածաշունչ մատենին մէջ տեղ գտած հրեշտակներու բոլոր երեւումները, այսուամենայնիւ, բուն միտք բանիս բացայայտելէ առաջ, անտեղի պիտի չնկատէի համառօտ անդրադառնալ նաեւ Նոր Կտակարանի մէջ յիշատակուած քանի մը հիմնական դէպքերու:

Աւետաբեր Գաբրիէլ հրեշտակին յայտնութեամբ է, որ կը սկսի Նոր Կտակարանի երրորդ գիրքը՝ Ղուկասու Աւետարանը: Զաքարիա(16) ծերունագարդ քահանան, որ ըստ կարգի Տիրոջ խորանին կը խնկարկէր, տեսաւ Նախակարապետին ծնունդը աւետող հրեշտակը, բայց տարակուսեցաւ՝ մնալով մարդուն համար բնորոշ միայն տեսանելիին եւ շօշափելիին հաւատալու սահմանափակումին մէջ: Ուստի, իր թերահաւատութեան պատճառով ան հրեշտակէն համութեամբ պատժուեցաւ՝ մինչեւ իր որդիին ծնունդը, որուն անուն տալու համար ան ստիպուած եղաւ խնդրելու տախտակ մը, որուն վրայ արձա-նագրեց՝ «Յովհաննէս» անունը:

Ո՞ր հաւատաւոր քրիստոնեային սիրտը չի խայտարբերկրանքին խորհրդաւոր զօրութեամբ, երբ կրկին ու կրկին հաղորդակից կը դառնայ աւետաբեր այն ողջոյնի բովանդակութեան, որ հրեշտակապետը՝ Գաբրիէլ տուաւ Մարիամ մանկամարդ կոյսին. անոր, որ մեր հաւատքի ընկալման մէջ ու պաշտամունքի խորանին վրայ Աստուածածին կը կոչուի: Ոչ միայն մարդեղացած Աստուածորդիին, այլ՝ Անոր ընդմէջէն

ու Անոր շնորհիւ գերազանցապէս ու միաժամանակ մայրը՝ մարդկային ցեղի փրկութեան:

«Ուրախ լե՛ր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ»(17): Ահա-ւասիկ հրեշտակին ողջոյնը, որով սուրբ կոյսը յօժա-րեցաւ իր կուսական արգանդը ընդունիլ Աստուած Բանը. Անոր, որ անսկիզբ էր ու անժամանակ, ան-ըմբռնելի էր ու անհասանելի, զոր երկինքն ու երկիրը չէին կրնար պարփակել իրենց մէջ, խոնարհեցաւ, փոքրացաւ, դարձաւ ընդամենը պարզ մանուկ մը, որ-պէսզի իրմէ իսկ գոյաւորուած մարդը զԻնք կարենայ ըմբռնել, գրկել, գգուել ու սիրել: Երբ Ան իր աչքերը լոյսին բացաւ կենդանիներուն իբրեւ զոմ ծառայող Բեթղեհէմի քարայրի կիսամութին մէջ, Տիրոջ հրեշ-տակն էր, որ Անոր սուրբ ծնունդը հովիւներուն յայտնեց, ու երկնային զօրքերու բազմութիւն մը աստուածային սիրոյն աշխարհի վրայ զեղումին ցնծութիւնը աւետեց փառաբանելով. «Երկնքի բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն»(18):

Հրեշտակը, որ տարհամոզած էր Յովսէփը չարձա-կելու իր նշանուհին քանի որ ան Ս. Հոգիէն յղացած էր, եւ ինչքան ալ եղելութիւնը սուրբ մինչեւ վերջ անըմբռնելի մնաց այդ արդար մարդուն, միեւնոյնն է, ան ենթարկուեցաւ Տիրոջ կամքին՝ անսալով ոչ այն-քան իր տրամաբանութեան թելադրանքներուն, որ-քան իր հաւատքի հզօր ձայնին(19): Այդ նոյն հրեշ-տակը, ահաւասիկ, նորէն երեւցաւ Յովսէփի, ու յանձնարարեց անոր Հերովդէսի մահահոտ չարու-թենէն հեռացնել նորածին մանուկը»(20): Երբ ոճրա-գործ արքան մահացաւ եւ Յիսուսի ուղղակի սպառ-

նացող վտանգը վերացաւ, Յովսէփ ու Մարիամ գտնայնդուած միեւնոյն հրեշտակին քաջալերական խօսքերէն, իրենց մանկան հետ Եգիպտոսէն հայրենիք վերադարձան՝ օտարութեան մէջ երկար չդեգերելու եւ Աստուծոյ նախախնամական տնօրինումը իրագործելու համար(21):

Անապատին մէջ փորձութեան ժամանակ, երբ Յիսուս մեր նախահայր Ադամին տկարութիւնը երիցս յաղթահարեց, ու հեռացուց փորձիչը հրամայելով «Ետիս գնա՛», հրեշտակներն էին, որ անմիջապէս մօտենալով Իրեն ծառայեցին(22):

Ո՛հ, սոսկալի է այն պահը, երբ ձերբակալուելու սեմին Յիսուս իւրայիններէ լքուած եւ Յուդայէ մատնուած, Գերսեմանիի մութ գիշերուան իր մահասարսուռ տենդին մէջ՝ «Հա՛յր, եթէ կ'ուզես, հեռացուր ինծմէ այս բաժակը»(23) կ'աղերսէր, մինչ քիրտը արեան կաթիլներու նման կը հոսէր, հոն պահապան հրեշտակ մը միայնակ զինք կը զօրացնէր՝ տնօրինական խորին խորհուրդը իրագործելու որոշումին մէջ(24):

Ինչքա՛ն դիւթիչ եւ վեհաշուք հզօրութիւն մը ունի հրեշտակներուն երեւումը Յիսուսի թափուր գերեզմանին վրայ: Երկիւղ, բայց միաժամանակ անասելի ցնծութիւն մը կը խայտայ հոն գերեզմանի կիսամութին մէջ՝ մահուան դէմ յաղթանակող կեանքին աւետիսով պարուրուած: Համատես աւետարանիչներ՝ Մատթէոս եւ Մարկոս թափուր գերեզմանին վրայ յայտնուող՝ մէկ(25), իսկ Ղուկաս եւ Յովհաննէս զոյգ(26) մը հրեշտակներու մասին կը վկայեն: «Անոր տեսքը փայլակի պէս էր, եւ անոր հագուստը՝ ձիւնի պէս ճերմակ»(27), կ'ըսէ Մատթէոս Աւետարանիչ:

Մարկոս նոյնպէս սպիտակաթոյր տեսք մը կը վերագրէ հրեշտակին(28): Ղուկաս Աւետարանիչ լուսափայլ(29) կերպար մը կու տայ անոնց, եւ Յովհաննէս նմանապէս գերեզմանին ներսը Մարիամ Մագթաղէնացիին երեւցող հրեշտակները սպիտակ(30) հանդերձներով կը նկարագրէ: Լոյսը կեանք է եւ ճշմարտութիւն. հրեշտակին ներկայութիւնը՝ ստոյգ մասնիկ մը Աստուծմէ, որ բովանդակ կեանքն իսկ կը խորհրդանշէ:

Ի դէպ, նաեւ պէտք չէ մոռնալ Յիսուսի ազդարարութիւնը՝ չգայթակղեցնել ու չարհամարհել իր հետեւորդները, այսինքն՝ բոլոր անոնք, որոնք մանուկի մը համակ ու անկաշկանդ պատրաստակամութեամբ կ'ընդունին փրկութեան աւետիսը, արդարեւ՝ «Երկնքի մէջ անոնց հրեշտակները միշտ Հայր Աստուծոյ երեսը կը տեսնեն»(31):

* * *

Հրեշտակներ, հրեշտակներ, գուարթուն, պահապան հրեշտակներ, ով դուք երկնաճեմ թելաւոր էակներ, գոյութիւն ունի՞ք արդարեւ մեր այսօրուան կեանքին մէջ:

Մարդիկ կան, որոնք կը հաւատան, մարդիկ ալ կան՝ չեն հաւատար. եւ անոնցմէ եմ, որ կը հաւատայ ու աներկբայ համոզուած եմ, թէ դուք ներկայ էք մեր կեանքի բոլոր հանգրուաններուն մէջ, եւ մեր ստուերախառն օրերուն՝ ձեր անուշձիծաղ ժպիտն է, որ կը ցոլայ մեր շատ դիւրաբեկ գոյութեան վրայ:

Քանի՜-քանի անգամ, վտանգի պահուն թէ տխրութեան մէջ, զգացած եմ հրեշտակի մը բարի ներկայութիւնը երբեմն ինծի այնքան անընդմիջելիօրէն մօտիկ,

որ ան կարծեք նստած ըլլար մերթ աջ եւ մերթ ձախ ուսիս վրայ: Ջորօրինակ, պատահած է՝ երբ ինքնաշարժ վարելու ընթացքին յանկարծ սթափած եմ ծանր թմրութենէ մը, հակակշիռէ դուրս՝ անտնօրինելի պահէ մը, որ այլապէս կրնար անձիս համար ճակատագրական հետեւանքներ ունենալ: Անդրադարձած եմ, որ աներեւոյթ մէկը զգաստացուցած, ցնցած կամ ետ պահած է զիս ստոյգ չարիքէն: Տեսնելու անձկագին ցանկութեամբ շուրջս նայած եմ, ու ինքզինքիս հարցուցած՝ ո՞վ փրկեց զիս, ո՞վ մխիթարեց նեղութեանս մէջ՝ ցոյց տալով հեզ գոյութեանս առջեւ լայն բացուած լուսանցքը յոյսին:

Կրօնական խորունկ զգացողութիւն մը միշտ եկած է զիս համոզելու, թէ ան մեր պահապան հրեշտակն է, եւ գուցէ Աստուած մեզմէ ամէն մէկուն քով նման հրեշտակ մը կանգնեցուցած է՝ իր թելերը սուրբ իբրեւ պահպանութեան հովանի տարածելու համար մեր գլխուն վրայ:

* * *

Սակայն պայման է հրեշտակ մը թելեր ունենայ՝ մեզ հաղորդակից դարձնելու Աստուծոյ կենսաբաշխ եւ փրկարար սիրոյն: Տե՛ս այն մարդիկը, որոնք երկրագունդի տարբեր ցամաքամասերուն վրայ, աղէտեալ գօտիներուն մէջ, երաշտէ ու սովէ, բնական աղէտներէ ու պատերազմներու սփռած արհաւիրքներէն զարնուած եւ զրկուած բիւրաւոր թշուառներու օգնութեան կը փութան: Նայէ՛ ինքզինք զոհաբերող այդ երիտասարդին, որ ձեռք կու տայ ապաստանարաններու եւ ճամբարներու ժխտին մէջ ընկճուած վատուծ տղուն: Նայէ՛ տոհմիկ իր

առաւելութիւններն ու բոլոր բարիքները մէկդի թողած աղջկան, որ հասեր է համաճարակէ ու մահացու ախտերէ վարակուած հիւանդին, զայն դարմանել փորձելու կամ ուղեկցելու մեռնողին՝ ապահովելու համար անոր արժանավայել մահ մը ունենալու իրաւունքը: Նայէ՛ այն գոհաբերուող ուսուցչին, որ կեանքի տարրական պայմաններէ գոհանալով՝ եկեր է իր գիտելիքը բաշխելու փողոցի տղոց ու աղջիկներուն՝ զանոնք հաւաքելով բացօթեայ դասարաններու, վրաններու տապին կամ քանի մը փայտէ ու թիթեղէ յարմարցուած փոքր ու անշուք հիւղակին մէջ:

Անոնք պարզ մարդիկ են մեզի պէս. ո՛չ սրընթաց, ո՛չ երկնաճեմ, ո՛չ լուսափառ, ո՛չ լայնալիճ ճերմակ խոշոր թելեր եւ ո՛չ ալ հրեղէն սուր ունին բռնած իրենց ձեռքին մէջ: Բայց անոնք ամէն տեղ են, երբեմն դանդաղ ու տատամսոտ, նոյնիսկ՝ կարճ ու տգեղ: Ահա մէկն անոնցմէ իր ձեռքը տուաւ ու զիս բարձրացուց, երբ ինկած էի: Ան քովս գաղտնաբար, սենեակիս պատին միւս կողմը գուցէ, ականջ դրած զիս կը լսէր, երբ առանձնութեանս ճնշող բեռին տակ օգնութիւն կ'աղերսէի: Ան էր, որ իր հացը հետս կիսեց, իր հիւրընկալ յարկին դուռը բացաւ, երբ պանդուխտ էի, ու առաջարկեց տաք անկողին մը, երբ ցուրտէն պաղած խուժդուժ հազ մը կուրծքս կը պատռէր:

Արդարեւ, չկա՞յ արդեօք մեզմէ ամէն մէկուն մէջ թաքուն հրեշտակ մը, որ բարիին ու լաւին նախագգացումը կ'առթէ մեր ներսիդին: Զա՛յն պետք է կանչել մեր էութեան խորքէն, մեր նմանին՝ մարդուն հանդէպ ըլլալու համար կարեկցանքի, սիրոյ եւ

խաղաղության աստաբեր մը:

Բարիք գործելու համար՝ պայման չէ, որ թելեր ունենանք:

1 Տե՛ս, Մտ. ԻԸ, 6:

2 Տե՛ս, Ծն. ԺԶ, 1-16:

3 Ծն. ԺԶ, 13:

4 Տե՛ս, Ծն. ԺԸ, 1-10:

5 Տե՛ս, Ծն. ԺԹ, 1-25:

6 Տե՛ս, Ծն. ԺԹ, 26:

7 Տե՛ս, Ծն. ԻԱ, 9-21:

8 Տե՛ս, Ծն. ԻԲ, 1-13:

9 Տե՛ս, Ծն. ԻԸ, 15:

10 Տե՛ս, Ծն. ԼԲ, 24-30:

11 Հմմտ, ԹՒ. ԻԲ, 28-30:

12 Հմմտ, ԹՒ. ԻԲ, 21-35:

13 Տե՛ս, Դն. Գ, 19-30:

14 Տե՛ս, նոյնը, Զ, 1-28:

15 Տե՛ս, Տովբիթ, Ա-ԺԴ:

16 Տե՛ս, Ղկ. Ա, 5-25, 57-63:

17 Հմմտ, Ղկ. Ա, 28:

18 Հմմտ, Ղկ. Բ, 14:

19 Հմմտ, Մտ. Ա, 18-22:

20 Հմմտ, Մտ. Բ, 13-15:

21 Հմմտ, Մտ. Բ, 19-23:

22 Հմմտ, Մտ. Դ, 1-11:

23 Տե՛ս, Ղկ. ԻԲ, 42:

24 Հմմտ, Ղկ. ԻԲ, 41-44:

25 Հմմտ, Մտ. ԻԸ, 2, Մկ. ԺԶ, 5:

26 Հմմտ, Ղկ. ԻԴ, 4, Յով. Ի, 12:


27 Հմմտ, Մտ. ԻԸ, 3:

28 Հմմտ, Մկ. ԺԶ, 5:

29 Հմմտ, Ղկ. ԻԴ, 4:

30 Հմմտ, Յով. Ի, 12:

31 Տե՛ս, Մտ. ԺԸ, 10:





ՅԱԿՈԲ ԿԸ ՄԱՐՏՆՉԻ ՀՐԵՇՏԱԿԻՆ ՀԵՏ



**ԳՈՒՅԷ ԵՐԲԵՔ ԿԱՐԵԼԻ
ՉԸԼԼԱՅ ԻՐԱՋԵԿ ԸԼԼԱԼ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ԻՐՈՂՈՒԹԵԱՆ, ԱԱԿԱՅՆ
«ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ»-Ը
յԱՅՏԱՐԱՐԵԼԷ ԱՌԱՋ
ՀԱՐԿԱԽՈՐ Է ԿԱՐԵԼԻ ՉԱՓՈԿ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՒԱՔԵԼ:**

ՏԷՐ ՀՈՎՈՒԵԱԾԷ ՁԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻԾ ԵԱ Ի ՄԷՁ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԺ
Ի ՉԱՐԷ ՁԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

